

<< ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՏԵՆԱՇԱՐ >> ԹԻԻ 23

ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ

ԵԸԼՏԸԶԻ

ՊՕՄՊԱՆ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ)

Տպագրիչ- Հրատարակիչ Վաղինակ Ս. Բիրատ

Կ. Պոլիս ՊԱՊԸ ԱԼԻՃԱՏՏԷՍԻ ՕՐԽԱՆ ՊԷՏ ԽԱՆ ԹԻԻ 25

1912

ԲԱՌ ՄԸ
ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՄ

ԵԸԼՏԸԶԻ ՊՕՄՊԱՆ, ահա՛ նոր պատմական վեպիս անունը:

Սակայն, պետք է կանխեմ ըսել, վեպ մը չէ ասիկա, ո՛չ ալ մասալ մը. իրական պատմություն մըն է Դեպքի մը. որ տիեզերական պատմության մեջ գրաւած է իրեն յատուկ էջը. դեպք մը որ ժամանակին, ապշեցուց բովանդակ աշխարհը, իրբեւ աներեւակայելի, հերոսային ու գերմարդկայի յանդգնության արարք մը, որ դերագտնցօրէն պատուաբեր եղաւ ընդհանրապէս հայ ցեղին և մասնաւորապէս Հայ Յեղափոխական Դաշնակցության համար:

Եւ կարդալով ներկայ պատմական վեպս, կարդացած պիտի ըլլաք բոլոր մանրամասնութիւնները դժիսային ոռմբին, որ պայթեցաւ Երլտըզի մզկիթին առջեւ, 1905 Յուլիս 21ի Ուրբաթի Սելամըզի պահուն. պիտի ծանօթանաք թէ ի՛նչպէս և ո՛ւր յղացուեցաւ, թէ ի՛նչպէս պատրաստուեցաւ, և ի՛նչպէս գործադրուեցաւ Ապտիւլ Համիտի Մահափորձը:

ՀԵՂԻՆԱԿԸ

ԵԸԼՏԸԶԻ ՊՕՄՊԱՆ

Ա

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻԻՐ ՉՈՐՍ

Յունվարին էր:

Պուլկարիոյ մայրաքաղաքին ոստիկանութիւնը տենդոտ գործունէութեան մը մէջ էր, ամէն օր նոր դէմք մը կը զարներ աչքի Սօֆիայի փողոցներուն մէջ:

Արտասովոր եռուզեռ մը գրեթէ բոլոր շրջանակներում մէջ:

Արտասովոր եռուզեռ մը գրեթէ բոլոր շրջանակներուն մէջ:

Տուները՝ խանութները՝ սրճարանները՝ բոլոր հաւաքոյթներուն մէջ՝ նոյն խօսակցութիւնը՝ նոյն նիւթի վրայ:

Սօֆիայի Օսմանեան գործակատարին բնակարանին մէջ ա՛լ աւելի մեծ գործունէութիւն մը, Պոլսէն նոր լրտեսներ եկած էին:

Ինչո՞ւ այս անսովոր շարժումները, ինչո՞ւ այս իրարանցումը, ոստիկանութեան թէ բնակչութեան բոլոր խաւերուն մէջ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովը պիտի գումարուէր Սօֆիա:

Դաշնակցութեան պատգամաւորները՝ կարելոր գործիչներուն հետ՝ հետզհետէ կը հասներին Սօֆիա, զանազան վայրերէ: -

Քրիստափոր Միքայէլեան և

Միսօն Զաւարեան, Ժընէվէն, իբրև ներկայացուցիչներ՝ Արեւմտեան Բիւրօյին. Ֆլէի Ջոջ Ադա՝ պատգամաւոր և

Շահպազ գործիչ, Վապուրականէն.

Վարդօ, Իզմիրէն.

Աշոտ, Եգիպտոսէն.

Թորգոմ, իբրև գործիչ.

Երկաթ և Մշեցի մը, Լեռնավայրէն՝ (Սասուն).

Ռահվիր և Յարութիւն Գալֆայեան (երկու ձայնով) Կիլիկիայէն.

Մարթին, ինքնակոչ.

Կարապետ Պիօնեան, Պայքանեան գօմիթէի կողմէն.

Սաֆօ- Ջալլատեան և Համամճեան (Ատրբպատականի պատգամար).

Ուսանող մը, Երեսանէն.

Աղասէր, Երոպայի Ուսանողական Միութենէն.

Տոգթ. Լօրիս Մելիքօֆ և

Տոգթ. Զավրիէվ- Երոպայի քանի մը կեզրոններէն:

Ասոնց ներկայութիւնը Պուլկարիոյ Մայրաղաքին մէջ, մեծ հաճոյք կ'առթէր Մակեդոնացի յեղափոխականներուն:

Այս վերջինները- Սօֆիա ապաստանած, հեռուէն կը վարէին Մակեդոնիոյ յեղափոխութիւնը, հսկելով Երոպական Թուրքիոյ զանազան քաղաքներուն ու գիւղերուն մէջ ի գործ դրուած դաւադրական գործողութիւնները- ինչպէս նաև լեռներուն մէջ գործող հրոսախումբներուն ապստամբական շարժումները: Օգտուելով իրենց եղբայրակից Դաշնակցական պատգամաւորներուն ներկայութենէն, ամէն օր խնջոյքներ կը սարքէին և չքասեղաններ կուտային ի պատիւ Հայ Յեղափոխութեան զինուորներուն, և աւելի կ'ամրապնդէին եղբայրակցութեան ներքին կապերը, որոնք արդէն գոյութիւն ունէին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ու Մակեդոնական Կազմակերպութեան միջև:

Երկու կարեւոր կեդրոններու պատգամաւորները միայն դեռ չէին հասած, Ամերիկայի պատգամաւորը, և Արեւելեան Բիւրօյի (Կովկաս) ներկայացուցիչները:

Ներկայ պատգամաւորներուն թիւը կը հասներ արդէն քսանը հինգի, ինչ որ օրինաւոր մեծամասնութիւն մըն էր:

Պուլկար կառավարութիւնը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և Մակեդոնական Գօմիթէին միջև կնքուած եղբայրական դաշինքը նկատի ունենալով միշտ, մասնաւոր համակրանք մը կը տածէր հայ յեղափոխական պատգամաւորներուն հանդէպ, որոնք ամէն տեղ ջերմ ընդունելութիւն և անկեղծ ասպնջականութիւն կը գտնէին:

Սակայն ներկայ պատգամաւորները կըսկսէին տակաւ տաղտուկ զգալ և կը տրտնջային բացակայող պատգամաւորներուն դէմ:

Ինչո՞ւ դեռ չէին հասներ, ինչո՞ւ կուշանային արդեօք Արեւելեան Բիւրօյի ներկայացուցիչը՝ Աւետիք Սահակեան, Ամերիկայի պատգամաւորը Պարզև ու գործիչը՝ Վրամեան:

Արեւմտեան Բիւրօյի ներկայացուցիչներէն Քրիստափոր Միքայէլեան, պատգամաւորներուն դժգոհութիւնը քիչ մը մեղմելու համար, քանի մը նախնական նիստեր գումարեց - թէ և ո՞չ- պաշտօնական- որոնց մէջ պատգամաւորները գիրար աւելի լաւ ճանչցան և ճանչեցան և իրարու գաղափարները չօջափեցին մօտէն:

Բնականաբար երկար չի պիտի կրնար տևել իրերու այս վիճակը, պատգամաւորները, հեռաւոր վայրերէ եկած, ձիւնին ձմեռին, իրենց վառարաններէն հեռու, գանգատները կը շեշտուէին ամէն կողմէ. անհամբերութիւն մը, տենդագին աճապարանք մը կը նկարուէր բոլորի դէմքերուն վրայ:

Վերջապէս, հիւծիչ ու ընդվզեցուցիչ սպասումներէ վերջ, որոշուեացաւ գումարել Ընդհանուր Ժողով, առանց այլէս սպասելու Արեւելեան Բիւրօյի ներկայացուցիչներուն և Ամերիկայի պատգամաւորներուն:

Եւ ահա՛ ժամանեցին ասոնք ալ:

Սօֆիայի կեդրոնը, ծանոթ հիւրանոց մը գումարուեցաւ Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովին Ա. Նիստը, որուն նախագահ կարգուեցաւ Քրիստափոր Միքայէլեան, կովկասահայ մեծանուն յեղափոխականը, Հայ Յեղ. Դաշնակցութեան հիմնադիրներէն մին, կազմակերպութեան բոլոր շարքերէն առհասարակ յարգուած ու պաշտուած անձնաւորութիւն մը:

Նախագահը նախ ողջունեց պատգամաւորները Կազմակերպութեան անունով և համառոտ- խտացած տեսութամբ մը պարզեց Ընդհանուր Ժողովի գումարման նպատակը- միննույն ժամանակ շեշտելով անոր օգտակարութիւնը:

Յետոյ ձեռնարկուեցաւ Մասնախումբերուն ընտրութեան, որոնց պաշտօնը պիտի ըլլար պատրաստել զանազան հարցերու վերաբերեալ զեկուցումները:

Չը մոռանանք յիշել, իւրաքանչիւր նիստի, նախագահը կը փոխուէր: Առաջին նիստը շատ խաղաղ անցաւ, ո՛չ մէկ լուրջ վիճաբանութիւն, ո՛չ ալ գաղափարներու կամ կարծիքներու բաղխումներ, այդ նիստը գրեթէ ամբողջովին գրաւուած ըլլալով ընտրական գործողութիւններէ:

Յաջորդ նիստերը կանոնաւորապէս գումարուեցան նոյն հիւրանոցին ընդարձակ սրահը- բոլոր պատգամաւորները ներկայ կ'ըլլային առանց բացառութեան:

Նիստերուն մէջ, երբ կարդացուեցան մասնախումբերան պատրաստած զեկուցումները, մերկապարանոց եղան շատ մը տխուր իրողութիւններ, որոնք մինչեւ այն օրը մնացած էին վարագոյրի տակ...:

Հասկցուեցաւ թէ, կարգ մը գործիչներ հարստահարուած ժողովուրդին միամիտ հաւատքը շահագործելով, անիրագործելի յոյսերով օրորած էին անոք երեւակայութիւնը- այնպէս որ, ի վերջոյ, շարունակ դրսէն օգնութիւն ու պաշտպանութիւն սպասող, ողորմելի մուրացկաններու դասկարգ մը ստեղծած էին:

Եւ ասիկա երեւան եկաւ նիստերուն մէջ, երկրի գործերու վիճաբանութեան ընթացքին: Կովկասի և արտասահմանի միւս պատգամաւորները, մեծ մասը մտաւորականներէ բաղկացած, յաճախ առանց վիճաբանութեան ենթարկելու քուէարկել կուտային մէկէ աւելի կենսական խնդիրներ, այսպէսով թրքահայ պատգամաւորները դնելով կրաւորական դերի մը մէջ...:

Խեղճ ողորմելի թրքահայ պատգամաւորները, պարզ գործիքներ, լոկ թիւեր էին հին, երբէ՛ք ապացոյց մը չը տուին արժանիքի, և ընդհակառակն, անգամ մըն ալ հաստատեցին թէ իրենք չէին գտնուեր իրենց վստահած գործին մակարդակին վրայ և թէ՛ իրենց անճարակոնքենէն դառնապէս տուժած էր երկրին ժողովուրդը:

Շատ մը խնդիրներ լուծուած և կազմակերպութեան ծրագրին մէջ հարկաւոր նկատուած փոփոխութիւններն ալ մտցուած էին արդէն, կը մնար կատարել Պատասխանատու Մարմնի անդամներուն ընտրութիւնները:

Այդ նիստին վերստին կը նախագահէր Քրիստափոր Միքայէլեանը:

Բուն, ուժգին, կրակոտ խօսքեր՝ փոխանակուեցան պատգամաւորներուն միջև, ծանր ակնարկութիւններ՝ իրարու հասցէին. և նիստը շատ աղմկալից եղաւ:

Վերջապէս այդ նիստն ալ փակուեցաւ, առանց ցաւալի միջադէպի մը, և ընտրութիւններ կատարուեցան հետևեալ անձներուն վրայ:

Քրիստափոր, Սաֆօ, Աշոտ և Թորգոմ, անդամներ ընտրուեցան Վիշապի- Պոլսոյ կեղծ անունը- Պատասխանատու Մարմինին:

Երկաթ, Վահան, Հրայր և Թուման՝ Լեռնավայրի (Սասուն) :

Վասպուրականը տեղական Կեդրոնական գօմիթէով մը կը կառավարուէր. իսկ Կիլիկիոյ համար ո՛չ ոք կ'ուզէր ստանձնել Պատասխանատու Մարմնի անդամակցութիւն. այդ կողմերէն հասած տեղեկութիւնները բնաւ վստահութիւն չէին ներշնչեր, յեղափոխական գործունէութեան համար խիստ աննպաստ պայմաններով:

Սիմոտ Զաւարեան, Ժընէվի Արևմտեան Բիւրօյի ներկայացուցիչներէն, ինքզինք առաջարկեց անդամ Կիլիկիոյ Պատասխանատու Մարմինին, ուրիշ երկու ընկերներու հետ, Աղասէր և Առանձար, որոնք, իրենց բանաւոր պատճառները յայտնելով, հրաժարեցան և Զաւարեան, ինք առանձին մնաց և դարձեալ շարունակեց իր անդամակցութիւնը Մարմնի մը, որ ինքնին անդամալուծուած էր, չունենալով ուրիշ անդամներ:

Ու երբ աւարտեցան Պատասխանատու Մարմնի անդամներուն ընտրութիւնները, Ընդհանուր Ժողովը, իր վերջի նիստերուն մէջ, զբաղեցաւ ուրիշ կազմակերպական խնդիրներով և յետոյ, երկու ամիսներ տևելէ վերջ, նիստերը փակուեցան:

Գ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի նիստերը դեռ չը վերջացած, Բրօ Արմէնիաի մեծանուն խմբագրապետ, հայասեր Բիւռ Քիյեարը Սօֆիա եկած էր և իջած՝ այն հիւրանոցը, ուր կը գումարուէին Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին նիստերը:

Քիյեար, Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանին մէջ փիլիսոփայութեան ուսուցիչ ըլլալով ժամանակին, մօտէն կը ճանչնար ու կը սիրէր արդէն Հայերը, մանաւանդ Հայ Յեղափոխականները, մասնաւորապէս Դաշնակցութիւնը, որուն ծրագիրը գնահատողներէն մին եղած էր ինքը, իբրև լաւագոյնը որ քիչ թէ շատ կը յարմարէր և կը հաշտուէր միջավայրի պայմաններուն ու պահանջներուն հետ:

Քրիստափոր Միքայէլեան շատ համակրած էր Քիյեարի, ուզեց հաւաքոյթ մը կազմակերպել իր հայասեր հիւրին ի պատիւ:

Ուստի արտակարգ նիստի մը հրաւիրեց բոլոր պատգամաւորները, որոնք որոշեալ ժամուն ներկայ գտնուեցան:

Բիւռ Քիյեար, ամբողջ նիստի մը ներկայ ըլլալէ վերջ, ոտքի ելաւ և իր մայրենի լեզուով արտասանեց յուզիչ ճառ մը, որ խիստ քաղցր ու խոր տպաւորութիւն մը թողուց ներկաներուն վրայ:

Յետոյ, երբ նիստը փակուեցաւ, չքասեղան մը տրուեցաւ յեղափոխական բանաստեղծին, որուն շուրջը բոլորուեցան բոլոր պատգամաւորները:

Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ շատ խօսուեցաւ այդ խրախճանքներուն վրայ:

Գարնան սկզբները, պատգամաւորները դեռ չէին վերադարձած, Մակեդոնական Յեղափոխական Գօմիթէի պետ, պարոն Սարաֆօֆ, իր ընկերներով միասին, ելեկտրական թրամվայի մասնաւոր կառքով մը, քաղքէն դուրս, Քինեաժօվա կոչուած մօտակայ մէկ զբոսավայրին մէջ խնջոյք մը սարքեց ի պատիւ Դաշնակցութեան:

Չափազանցութիւն մը չպիտի ըլլար, եթէ ըսենք թէ այդ օրը, Քինեաժօվան ժամադրաւայր եղած էր Սօֆիայի մտաւորական դասակարգի ամենէն ցայտուն ու կարկառուն դէմքերուն: որոնց մէջ կը փայլէին նաև նախկին նախարարներ, բոլորը՝ Մակեդոնիոյ ազատագրութեան ջերմ կուսակիցները:

Խանդավառ ծափերով ու կեցցէներով յաճախ ընդմիջուած ազատաշունչ ու մարտագոռ ճառեր խօսուեցան հոն:

Մակեդոնական Գօմիթէի պետը Սարաֆօֆ, խուռներամ բազմութեան մը մէջ, բեմ բարձրացած, ցնցող ճառով մը դրուատեց Բաբկէն Միւնին, որուն հետ ծանօթացած էր Պոլոյ մէջ. հայ ազգի տոկուն, մաքառող, աննուաճելի նկարագիրը՝ և Բոնութեան, Հալաճանքի ու

Սարսափի դարերուն մէջ, իր գոյութիւնը պահպանելու համար մղած անհաւասար կռիւր յիշելով, Պուլկարիոյ բաղդը մաղթեց անոր և Մակեդոնիոյ սրտագին ողջոյնը դրկեց Խաչեցեալ Հայաստանին: Այս ճառը, Սարաֆօֆի բոցալեզու բերնին մէջ, շանթի մը փոխաւ, յեղափոխութեան սրբազան հուրը վառեց ունկնդիրներու սրտերուն մէջ:

Քրիստափոր Միքայէլեան, ռուսերէն պատասխանով մը, անգամ մըն ալ ցնցեց հողիները, Հայկական Կոտորածներուն սարսափովը, խարազանեց շահամու, մեղսակից Եւրոպան, որ չուզեց կեցնել Մարդասպան Ձեռքը, Հասարակաց Աղէտի մը դէմ՝ հասարակաց Վրէժխնդրութեան մը հրամայողական պահանջը դրաւ, Հայ-Մակեդոնական միահամուռ ընդվզումով մը, սասանեցնելու համար Կարմիր Սուլթանը՝ իր գահին վրայ, զոր անմեղ զոհերու դիակներուն վրայ հաստատած է...: Քրիստափոր, յուզեալ շեշտով մը գոչեց. կեցցէ՛ զինեալ Մակեդոնիան, անկցի՛ բռնապետութիւնը...:

Յետոյ կարգով խօսեցան Սիմօն Զաւարեան՝ ռուսերէն և Վռամեան՝ հայերէն. երկուքն ալ երկու հարըստահարուած, միեւնոյն լուծին տակ տառապող երկու ազնիւ ժողովուրդներուն դաշնակցութիւնը ջատագովեցին, յեղափոխութեան- թէ՛ հայկական և թէ՛ մակեդոնական- վերջնական յաղթանակին համար բաղձանքներ յայտնեցին:

Բոլոր այս ճառերը շառաչուն ծափերով ու խանդավառ աղաղակներով ողջունուեցան:

Բանախօսութիւնները վերջացած, Սարաֆօֆի և իր ընկերներուն կողմէն համակրանքի և հիացումի խանդավառ ցոյցեր եղան Դաշնակցական պատգամաւորներուն: Յետոյ, հսկայ թափոր մը կազմուեցաւ հոն, Քինեաժօվա զբօսավայրը, ուրկէ մեկնեցու ան դէպւ Սօֆիա:

Բովանդակ մայրաքաղաքը դորդեցու այն օրը- փողոցները- հրապարակները- հանրային հաստատութիւնները- տօնական օրերու տեսարանները կը պտրդէին:

Թափորը, կառավարական պալատին առջև կանգ առած, գոչեց.-

Կեցցէ՛ Յեղափոխութիւնը,

Անկցի՛ Ապտիւլ Համիտ...:

Յետոյ, թափորը դարձաւ եկաւ քաղաքապետութեան պալատը, ուր երկսեռ ամբոխ մը կ'աղաղակէր.-

Կեցցէ՛ հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

Ուրիշ աղաղակներ կը յաջորդէին... Կեցցէ՛ Մակեդոնական Կազմակերպութիւնը...:

Եւ Սօֆիայի Օսմանեան գործակատարի ապարանքին շուրջը նորեկ լրտեսներ կը սլքտային նոյն պահուն:

Ապտիւլ Համիտ հիւանդ էր, աղիքներու բորբոքումով մը պառկած, ամբողջ գիշերը տառապած էր:

Արքունի բժիշկներ, բժշկապետ Մավրոյէնի բաշայէն սկսեալ, ամէնքը բռնադատուած էին այն գիշեր ինչ լուսցնել, Երլտըզի մէջ, առանց վայրկեան մը բաժնուելու Վեհափառ Հիւանդին սենեակէն:

Շշուկը շուտով շրջան ըրած էր պալատի բոլոր յարկաբաժիններուն, մանաւանդ Հարէմին մէջ, ուր անհուն անձկութիւն մը կը տիրէր, սև նախագգացումներ, Փատիշահի թանկագին կեանքին համար, որուն դժբաղդ, մօտալուտ վերջաւորութիւնը կը խօսուէր արդէն բերնէ բերան:

Ներքինապետը, սենեկապետները, կայսերական երկու սիրական քարտուղարները- Գարա Թահսին և Իզզէթ Ապիտ- Մեծ Եպարքոսը, նախարարները, բոլորը վազած եկած էին Երլտըզ:

Տօքթօր Մավրոյէնի բաշան, ուրիշ քանի մը բժիշկներէ շրջապատուած, դուրս կելլէր Օգոստափառ Հիւանդին սենեակէն, մտատանջ, թախծալից և յուսահատ դէմքով մը, երբ հանդիպեցաւ սենեկապետ Արիֆ պէյի:

-Տօքթօ՛ր բաշա, հարցուց Ապտիւլ Համիտի սիրական սենեկապետը, ի՞նչպէս գտաք:

ՆԿԱՐ- ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

- Է՛հ.:պատասխանեց բժշկապետը, թօթվելով ուսերը, և յոնքերը պոստելով, դէռ յայտնի չէ՛.

-Ի՞նչպէս, ի՞նչպէս, կրկնեց Արիֆ պէյ տենդոտ շարժումով մը.

-Տագնապը դէռ չանցա՛ւ, յարեց արքունի բժշկապետը:

Յետոյ, դառնալով իր քովի բժիշկներուն.

-Այնպէս չէ՞, ընկերնե՛ր, ըսաւ:

Բժիշկները գլուխնին ճօճեցին, տրտում համակերպութիւն մը յուսահատ դէմքերնուն վրայ.

-Տօքթօ՛ր բաշա, ըսաւ բժիշկներէն մէկը, այս գիշերուան նօպան եթէ կրկնուի, վերջացած է...:

Պալատականներուն մէջ փափսութիւններ կը շատանային: Շատերը, Ապտիւլ Համիտի արարածներ, ասոր մահովը կերելակայէին ահաւորութիւնը նոր կացութեան, որ անխուսափելիօրէն պիտի ստեղծուէր իրենց համար: Նոր գահակալը, կը մտածէին անոնք սոսկումով, բնականաբար ունի իր մարդիկը, իր արբանեակները, իր պէնտէկեանները. ան, իր գահակալութեան վաղորդայնին, պիտի ալէ սրբէ իրենց երամակը, Երլտըզի շրջափակէն դուրս պիտի նետէ զիրենք, իբրեւ անպէտ, և թերեւս վնասակար առարկաներ և թերեւս

վնասակար առարկաներ, և նորեր պիտի բերէ կարգէ իրենց տեղը, իրեննէ՛րը, իր ծառաները: Օ՛, ի՛նչ սոսկալի, ի՛նչ դժոխային կեանք մը պիտի յաջորդէ այս ատեն իրենց հիմակուան փոքրիկ...թագաւորութեան, այն ատեն, կը խորհէին պալատականներէն շատերը, մանաւանդ անոնք, որ աչքի կը զարնէին իրենց բացառիկ դիրքով, անոնք որ Պատիշահին մենաշնորհեալ, ընտրեալ պաշտպանեալները, բարերարեալները կը ճանչցուէին համիտական բոնապետութեան հովանիին տակ....:

Հարեմին մէջ, կայրսութեան զանազան անկիւններէն բերուած և հոն, Երլտըզի ոսկեզօծ վանդալափեղկերուն ետին թօշնելու դատապարտուած այդ փոքրիկ թագուհիները- որոնք, տարիներէ ի վեր, այդ անէծքի... դրախտին մէջ բանտարկուած, արգիլուած պտուղին դէմ հառաչելով, Հիւնքեարի մէկ քմահաճոյքի թուլէին կը սպասէին, արժանանալու համար կայսերական համակրանքի ցոյցի մը-, սրտի անբացատրելի հրճուանքով մը, իրենց ոսկեձէղուն ու թաւապատ մահճակալներուն մէջ նստած, իրարու քովիկ, իրարու կը պատմէին բոլոր հաւանականութիւնները, որոնք կրնային իրագործուիլ Հիւնքեարին մահովը: Եւայի այս տարաշխարհիկ աղջիկները, դժբաղդուհիներ, կեանքի գեղեցիկ գարունին մէջ լո՛կ բացուած ու խամրած ծաղիկներ բոլորը, սրտատրոփ, կըսպասէին օրերու ամենէն երջանիկին ու ամենէն գեղեցիկին, երբ պիտի գոռային թնդանօթի հարիւր մէկ հարուածները, լուծերուն է՛ն անարգին տակ հիւծած ժողովուրդներուն աւետելու համար նոր Փատիշահին՝ վշտաչարչար Բէշատի գահակալութիւնը....:

Հարեմի գեղուհիներէն շատերը չէին գիտեր թէ ի՛նչ կ'անցներ կը դառնար դուրսը, Երլտըզի շուրջը. անոնք իրենց երկինքը միայն կը տեսնէին ոսկի վանդակներու մէջէ, և, հեռուէ հեռու, աղօտակի կը լսէին դուրսի դէպքերէն մէկ քանիներուն արձագանգը միայն: Անոնք անտեղեակ էին, օրինակի համար, Հայկական Զարդերուն, որոնք տիեզերքը սարսափեցուցին ու բովանդակ Մարդկութիւնը լացուցին. միայն կ'իմանային երբեմնակի թէ՛ իրենց Ահռելի Տէրը՝ անթիւ անմեղ մտաւորականներու արիւնը մտեր է, Երիտասարդ Թուրքերէն քանի՛ քանիներ ծովը նետել տուեր է, գիտէին նաև թէ՛ ամէն գիշեր մէկ երկու բնակիչ կը պակսէր իրենց մէջէն, ո՛վ գիտէ ո՛ր անծանօթ կամ հեռաւոր նահանգի մը ծոց աքսորուած և կամ- Երլտըզի դամբանակերպ նկուղներում մէջ խեղդամահ եղած ըլլալով....:

Շէ՛ք գերուհիներ, գիտէին այս բոլորը, բայց բա՛ռ մը չէին կրնար արտասանել բարձրաձայն, խաւարադէմ ներքինները հոն էին- իրենց քովիկը, իրենց ճերմակ ժանիքներով ու դաժան աչքերո՛վը....:

Այս յուսախար ու հիասթափ դժբաղդուհիներուն մէջ կային յամառ յուսացողներ ալ, որոնք Ապտիւլ Համիտի օրերը կը համրէին. ասոնք դիտէին թէ պիտի վերջանայ օր մը չէ օր մը...: Մէկը մանաւանդ, երադուն ու մարմարուն աչքերով Ալպանուհի մը, Հիւնքեարին հիւանդութեան բարի (՞) լուրը առնելէն ի վեր կը խայտար ու կը կայտոէր. ինքզինք կերևակայէր ազատագրուած, ոսկի վանդակը կոտրած, պիտի թռչէր, պիտի երթար գտնել իր սիրականը որ- իր բնավայրի սարերուն վրայ կը թափառի տակաւին, սրինգը բերնին կ'երգէ, հովիտներու պատանի հովիւր, որուն հետ ինք, թերևս օրօրոցէն, պէչիկքերթմէ նշանուած էր...: Ուրիշ մը, Սիւրիոյ անապատի ծաղիկ մը, հազիւ քսան քսանըմէկ գարուններով, կըսպասէր ու կը յուսար, իր վանդակափեղկին ետին կեցած, կ'երագէր տեսնել անցնիլը

դագաղին, որ իր անխիղճ, զինքը նաժ սիրող, յետոյ լքող հրէշը պիտի փոխադրէր իր վերջին...տունը: Ուրիշ մը դարձեալ Հարէմէն, գեղեցիկ հիւծախտաւոր մը, թօշնած ծաղիկ մը, իր տառապանքի քոյրերուն կը պատմէր իր հոգեվարքները, Ապտիւլ Համիտի կմախացած բազուկներուն մէջ...: Եւ այսպէս, Հարէմի երջանիկ թէ ապերջանիկ աղջիկները, Հիւնքեարին հիւանդութենէն հազար ու մէկ հետևութիւններ կը հանէին և, երագներու վերնաշխարհին մէջ յափշտակուած, կը յուսային ապրիլ նոր կեանքը, որ պիտի սկսէր իրենց համար, Երլտըզի Տիրոջ մահուան վաղորդայնին, Երլտըզի շրջափակէն դուրս...:

Միայն երկու պալատականներ կային- երկուքն ալ արաբ- Գարա Թահսին ու Իզզէթ Ապիտ- երկու շնորհալի (. °) քարտուղարները, որոնք, Վեհափառ Հիւանդին վիճակը ծանրանալէն ի վեր, սոսկալի մտատանջութեան մատնուած, կ'աշխատէին կամաց կամաց համակերպիլ ու գլուխ ծռել նոր վիճակին, որուն պիտի ենթարկուէին իրենք, իրենց ամենագոր Տիրոջ անհետացումին հետեւանքովը:

Եւ այս գոյգը, Կայսերական Քարտուղարութեան դիւանին մէջ առանձնացած, գլուխ գլխի, կը վշտակցէին իրարու հետ:

Իզզէթ Ապիտ պէյը, որ ընթերցողներու ծանօթ է արդէն <<Արապ Իզզէթ>> անունով, թէն Գարա Թահսին բաշայէն ետքը կուգար Պալատի նուիրապետութեան կարգին մէջ, ըլլալով կայսերական Երկրորդ Քարտուղարը, սակայն, Առաջին Քարտուղարէն աւելի ազդեցիկ էր, մանաւանդ Երլտըզի ներաշխարհին մէջ, ուր իր խօսքը պատգամի մը պէս կ'ընդունուէր, տեսակ մը կայսերական իրատէ:

Գարա Թահսին բաշան ալ գիտէր թէ՝ Իզզէթ Ապիտ պէյին ազդեցութիւնը կ'աւելնար երթալով և զարհուրելի համեմատութիւններ կ'առնէր. քանի՛ քանի պալատականներ, նույնիսկ կայսերական թիկնապահներէն, յանկարծ, գիշերով, կը վերցուէին մէջտեղէն- կ'աքսորուէին, կամ, երբեմն ալ, Երիասասարդ Թուրքերու բաղդին կ'արժանանային (. °), Մարմարայի կամ Վոսփարի ալիքներուն մէջ քաւելու համար իրենց ազատական ձգտումները: Եւ այս գոհերուն մէջ խստելի թիւ մը չէին կազմեր Հարէմին մէջէն անհետացած կիները, Իզզէթ Ապիտ պէյի մէ՛կ բառովը:

Ծիծաղելի՞ թէ արգահատելի՞՝ համիտական բռնապետութեան շուքին տակ բուսած փոքրիկ թագաւորութիւնները, Երլարզի շրջափակէն ներս, որոնք յաճախ, առանց կանխաւ Ապտիւլ Համիտի տեղեկութիւն տալու խոշոր գործեր կը կարգադրէին, բաւական է թէ ստացած ըլլային Իզզէթ Ապիտի- կամ իրենց բառովը, երկրորդ Հիւնքեարին անհրաժեշտ հաւանութիւնը...:

Այս ամէնը գիտէր Գարա Թահսին բաշան, բայց երբէք չէր զգացներ, ո՛չ մէկ տրտունջ, ո՛չ մէկ դժգոհութեան ցոյց, կը զգուշանար այդ մասին կասկածներ արթնցնելէ. ա՛յնքան կը վախնար Արապ Իզզէթի հակառակութենէն:

Իսկ Իզզէթ Ապիտ- իր ցեղին յատուկ բոլոր ձիրքերն ու բոլոր մոլութիւնները կը կրէր իր մէջ. նենգամիտ, կեղծաւոր, երբէք չէր մատնէր իր ներքին մարդը, երբ կը հանդիպէր հակառակորդի մը, որուն գոյութիւնը վտանգ մը կը նկատէր իր առաջացման ու մեծացման

դէմ, կը սկսէր անոր հետ բարեկամութիւններ մշակել, գաղտնիքներ առնել տալ, մտերմանալ, մինչև իսկ իր Վեհափառ Տէրոջը շնորհներովը կը լիացնէր զանի, մինչև որ, օրին մէկը, գահավէժ գլորէր զանի ահագին բարձրութենէ մը:

Աւելին կայ, Երրորդի մէջ, Իզգէթ Ապիտէն զատ, չը կար ուրիշ մէկը, որ խորապէս ուսումնասիրած ըլլար Ապտիւլ Համիտի հոգեբանութիւնը. ի՛նք միայն, Իզգէթ Ապիտ պէյը զիտէր Հիւնքեարին բարկութիւնը մեղմելու կերպը, միջոցը: Շատ անգամ, երբ ո՛չ ոք կը համարձակէր մօտենալ անոր, ոչ իսկ Մեծ Ներքինապետը, որ Օսմանեան կայսրութեան Առաջին Անձը կը համարուէր Ապտիւլ Համիտէն ետքը, Իզգէթ Ապիտ պէյ, կը ներկայանար, բան մը կը գլտորցնէր, ծիծաղաշարժ ձև մը կամ խօսք մը, և ահա՛ կատաղի վագրը մէ՛կ թուպէի մէջ կը փոխուէր հեզուկ գառնուկի մը, եթէ երբեք կարելի է փոքր նմանութեան մը հետքը գտնել Երլտըզի Քանասարին ու իր յօշոտած անմեղ գառնուկներուն միջև...:

Մէկ խօսքով, Ապտիւլ Համիտի երկրորդ քարտուղարը կ'իշխէր Երլտըզէն ներս, երբեմն ալ դուրսը, որովհետև ի՛նքը միայն մտերիմը ճանչցուած էր Հիւնքեարի մը, որ իր մէն մի քայլին, ամէն թուպէ, թշնամի մը ցցուած կը կարծէր իրեն դէմ. Հալածախտէ տանջուող Մենագարի մը մտերի՛ մը...:

Քարտուղարութեան դիւանին մէջ, քով քովի նստած, քիթ քիթ, իրարու մտածումները կը վերլուծէին հիմա:

- Իզգէ՛թ պէյ, ըսաւ Թահսին բաշա- ես դողի մէջ եմ այս անգամ, Վեհափառին հիւանդութի՛ւնը....:

- Բա՛ն մը չունի, ընդմիջեց Իզգէթ Ապիտ, չարաճճի ժղիտով մը, շուտով կ'անցնի, բաշա՛:

- Ի՞նչ կ'ըսէք, Իզգէ՛թ պէյ- շարունակեց Թահսին, բժիշկները պիտի սո՛ւտ ըսեն, կե՞ղծ է կ'ըսէք հիւանդութիւնը::

- Բաշա՛, յարեց Իզգէթ, միեւնոյն ժպիտը շրթունքին, դուք չէ՛ք գիտեր, ես գիտեմ ինչ է Հիւնքեարին հիւանդութիւնը.

- Ի՞նչ է...

- Կարելոյութենէ զո՛ւրկ, շարունակեց Իզգէթ, նօպա մըն է կ'անցնի, դուք մի՛ հաւատաք բժիշկներուն, դերասաննէ՛րը, գօմէտիա՛, կը խաղան, գօմէտիա՛:

- Անկարելի՛ է, Իզգէ՛թ պէյ, առարկեց կայսերական առաջին քարտուղարը. կե՞ղծ է պիտի ըսէք հիւանդութիւնը::

- Ուրի՛շ հիւանդութիւն է, բաշա՛, այս առաջին անգամը չը՛, դիտել տուաւ Իզգէթ Ապիտ:

Խօսակցութիւնը մտերմական էր, երթալով կը տաքնար: Գարա Թահսին անհուն հաւատք մը կը աածէր իր երկրորդին տաղանդին ու կարողութիւններուն վրայ, և համոզուած էր թէ, պարապ խօսքեր չ'ըներ ան.անշուշտ գաղտնիք մը կար Հիւնքեարի հիւանդութեան մէջ- և այդ գաղտնիքը լո՛կ ինքը գիտէր, իր երկրո՛րդը: Ուստի, զայն խլելու համար անոր բերնէն.

- Իզգէ՛թ պճյ, ըսաւ, ի՛նչ հիւանդութիւն է, կ'ըսէիք.

- Հիւանդութի՛ւնը, բաշա՛, ի՞նչ հիւանդութիւն, հեզնեց Իզգէթ Սպիտ...:

Այս պահուն սենեկապետ մը ներկայացաւ և Թահսին բաշային մօտենալով.

- Վեհափա՛ռը կ'ուզէ ըսաւ անոր:

Գարա Թահսին վեր ցատկեց ու սենեկապետին հետ Հինքեարին քով գնաց:

Ապշահար, արձանի մը պէս կեցած մնաց դուռին առջև:

Ապտիւլ Համիտ, հագուած, հանդարտաքայլ ման կուգար դահլիճին մէջ:

Ե՞րբ աղէկցաւ, ե՞րբ հագուեցա՛ւ, կ'ըսէր Թահսին ինքիրեն, կը զարմանար ու կը յիշէր Իզգէթ Ապիտի հետ իր քիչ առաջուան խօսակցութիւնը:

- Թահսի՛ն բաշա, հարցուց Ապտիւլ Համիտ, յանկարծ կանգ առած՝ դահլիճին մէջտեղը, ի՞նչ լուր Գօմիթաճիներէն::

- Ո՞ր գօմիթաճիներէն, Վեհափա՛ռ, պատասխանեց առաջին քարտուղարը շուտրուն դէմքով մը.

- Չէ՞ք գիտեր դուք, կշտամբեց Հինքեարը, ինծի՞ կը հարցնէք, մոռացա՞ք անունը, ին՞չ կը կոչուէր, Դրօշ՞ակ էր, Դաշնակցութի՛ւն էր, ի՞նչ էր.

- Այո՛, Վեհափա՛ռ տէր, յարեց Թահսին, դարձեալ կատղէ՛ր են.

- Ի՞նչ է, ի՞նչ կայ, հարցուց տենդոտօրէն Ապտիւլ Համիտ, պարզ խօսեցէ՛ք, նոր բան մը կա՞յ, ըսէ՛ք.

- Այո՛, Վեհափա՛ռ, կմկմաց Թահսին, Իզգէթ պէյը բաներ մը կը պատմէր.

- Ի՞նչ...

- Նոր խլրտումներ, Վեհափա՛ռ, շարունակեց Թահսին, ինք աւելի լաւ գիտէ.

Առաջին Քարտուղարը կը խրտչէր վրդովիչ լուրեր հաղորդելէ Սուլթանին, որմէ յաճախ ծեծ կերած էր, ամենաչնչին պատճառով մը. խրատուած, ծանրակշիռ լուրերը հաղորդելու հոգը յանձնած էր իր երկրորդին:

- Ո՞ւր է ինքը, հարցուց Հինքեարը- պալատը չէ՞.

- Այո՛, Վեհափա՛ռ, Քարտուղարութեան Դիւա՛նը, պատասխանեց Գարա Թահսին.

- Ի՞նչ կ'ընէ...

- Վեհափա՛ռ, պատասխանեց Առաջին Քարտուղարը, նոր հեռագիրներ հասան, զանոնք աչքէ կ'անցընէ ու կը շարակարգէ, մատուցուելու համար Ձեր Վեհափառութեան.

- Արի՛՛ք պէյ, գոռաց Համիտ դահլիճին դուռը կեցող սենեկապետին, ըսէ՛ք Իզգէթ պէյին, թո՛ղ շուտով գայ քովս, հեռագիրներն ալ չը մոռնա յ...:

Յետոյ, անցավ նստաւ քանափէի մը վրայ, և դառնալով իր առաջին քարտուղարին::

- Թահսի՛ն բաշա, ըսաւ, այս հիւանդութիւնը դիս պիտի տանի՛.

- Քա՛ւ լիցի, Վեհափա՛ռ, բողոքեց Թահսին կեղծաւոր շարժումէնով մը, Ձեր ամենասուրբ Անձին քաջառողջութեան և յաւերժական փառքին համար կ'աղօթեն միլիոններու բերաննէ՛ր.

- Ճի՛շդ է, բերաննէ՛ր, կրկնեց Ապտիւլ Համիտ, ցաւագին շեշտով մը, բերաննէ՛րը միայն կ'աղօթեն, շրթունքնէ՛րը միայն կ'երերան, իսկ սիրտե՛րը...

- Վեհափա՛ռ...

- Օձեր ու կարիճնէ՛ր են, շարունակեց Համիտ, կը խայթեն ուղեղս ու կը թունաւորեն կեանքս, աս ի՞նչ է, ասիկա իշխանութի՛ւն է թէ գերութիւն...:

Նոյն պահուն ներս մտաւ Իզգէթ Ապիր- Համիտի աչքին լոյսը.

- Իզգէ՛թ պէյ, ըսաւ Համիտ ընտանի շեշտով մը, բերէ՛ք նայինք ի՛նչ կայ նոր.

- Ահռելի յայտնութիւն մը, Վեհափա՛ռ, սոսկալի՛, սարսափելի՛:

Ապտիւլ Համիտ ընդոստ ելաւ ու վերստին նստաւ, դիմագծերուն վրայ կը մատնուէր իր ներքին յուզումը:

- Պատմեցէ՛ք նայինք, Հրամայեց Հիւնքեարը, ինքզինք զսպելով, իր քարտուղարներուն ներկայութեան պահած ըլլալու համար իր հեղինակութիւնը:

Իզգէթ պէյ, հատուած մը կարդաց թուրքերէն, ռուսական Նովոյէ Վրէմիա թերթէն մկրտաւորած յօդուածի մը թարգմանութիւնը: Ռուս թերթը, հաւաստի աղբիւրէ մը քաղած տեղեկութիւններու վրայ հիմնուած, կ'ազդարարէր թէ՛ Հայ յեղափոխական Կազմակերպութեան մը կողմէն մեծ դաւադրութիւն մը կը պատրաստուի Արեւելեան Եւրոպայի մէջ, և թէ՛ ան պիտի գործադրուի Սուլթան Աբդուլ Համիտի Անձին դէմ...:

Ապտիւլ Համիտ, որ, մինչև վերջը, շունչը բռնած, անխօսուկ, անշարժ, մտիկ կ'ընէր, յանկարծ գոչեց կատաղի շարժումով մը,

- Անխիղճնէ՛ր, անգութնէ՛ր, կը քնանա՛ք տակաւին, կը քնանա՛ք... ի՞նչ կ'ընեն լրտեսներու երամակները, որոնք ամեն ամիս, հազարաւոր, հազարաւոր ոսկիներ քս կը լափեն, անձնական գա՛նձս կը պարպեն, ինչո՞ւ պահեմ, ինճո՞ւ ապրեցնեմ ես այդ շունները, եթէ իրենք չպիտի կընան պահպանել անձս...:

- Վահափա՛ռ, ընդմիջեց Իզգէթ Ապիր, կ'աղաչեմ, թող չը յուզուի՛ ձեր փափուկ սիրտը, դեռ նո՛ր ապաքինած էք, կարևորութիւն մի՛ տաք այս գրուածներուն, շինծո՞ւ են , յերիւուա՛ծ, ռուսական խաղէ՛ր են...

- Ի՞նչ խաղեր, առարկեց Ապտիլ Համիտ, ո՞ր մէկը հերքուեցաւ.

- Վեհափա՛ռ, շարունակեց Իզգէթ Ապիտ, Նօվօյէ Վրէմիայի հրատարակութիւնները ծայրէ ծայր դիտումնաւոր են, այդ անիծապարտ թերթին նպատակը ծանօթ է մեզի, վրդովել կուղէ Ձեր Վեհափառութեան երկիրներուն խաղաղութիւնը, մենք հոս խրտուիլակներ չե՛նք, աչք ականջ եղած. գիշերը քուն չենք տեսներ, ցերեկն ալ հանգիստ, ամեն վայրկեան կը հսկենք ձեր կեա՛նքը. ո՞վ, ո՞ր յիմարը, ո՞ր խելագարը պիտի յանդըզներ դաւադրութիւն մը լարել ձեր ամենասուրբ անձին դէմ, ո՞ր, ե՞րբ, կարելի՞ րա՞ն է.

- Ի՞նչ կ'ըսէք, կշտամբեց Հիւնքեարը, դաւադրութիւնը թո՛ղ չը սարքուի անգամ մը, պատրաստողները գիտեն իրենց գործելակերպը.

- Վեհափա՛ռ, միջամտեց Թահսին բաշան, համարձակութիւն առնելով, թոյլ տուէք որ Իզգէթ պէյ աւարտէ ընթերցումը.

- Ուրիշ ի՞նչ կայ որ, հարցուց զարմանքով Հիւնքեարը::

- Կարևոր լուրը դեռ չը կարդացի, ըռաւ Իզգէթ Ապիտ, Վեհափա՛ռ, կ'աղաչեմ հանդարտ մտքով և անվրդով սրտով հաճեցէ՛ք մտիկ ընել.

- Է՛, յարեց Համիտ արհամարհոտ դէմքով մը, կարդացէ՛ք նայինք, դեռ ինչե՛ր պիտի տեսնենք.

Իզգէթ պէյ սկսաւ կարդալ, պուկարական մեծ թերթի մը լուրերու բաժին էն մկրատուած- զգայացունց լուրի մը թարգմանաբար ամփոփումը.-

<<Յեղափոխութիւնը չը մեռնիր, միայն կը քնանայ. Ապտիլ Համիտի տնկած դրախտին (.) մէջ ապրող Հայերը, որոնք հարիւր հազարաւոր զոհեր տուին Բռնապետութեան Մոլոքին, այս անգամ, Հայկական Ջարդերուն Արիւնոտ Տասնամեակը տօնելու կը պատրաստին. Սօֆիայի մէջ վերջերս գումարուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովին մէջ գաղտնի որոշումներ տրուեցան, որոնք սերտօրէն կապուած են ընդհանրապէս Թուրքիոյ և մասնաւորապէս Երլտըզի Կարմիր Սուլթանի ճակատագրին հետ...:

- Այդ հատուածը վերստին կարդացէ՛ք, հրամայեց Ապտիլ Համիտ:

Եւ Իզգէթ պէյ կրկնեց ընթերցումը:

- Շարունակեցէ՛ք հիմա, յարեց Հիւնքեարը, մոլորուն աչքերը բացիւփելով ու ընթուինները խաղցնելով աջ ու ձախ:

<<Հայկական արհաւիրքներու արիւնոտ տարիներէն ի վեր կուտակուած վրէժներուն ծրարը պիտի քակուի մօտեր. Աննախընթաց, զարհուրելի տեսարաններու ներկայ պիտի ըլլայ քաղաքակրթեալ աշխարհը. այսուհետև Գիտութիւնը պիտի խօսի տիրականօրէն, իր ուժանակներով և իր ռումբերով...:

- Ի՞նչ..., բացազանչեց Համիտ այլտգունած, դարձեա՛լ ռումբեր, դարձեալ տինամիթնէ՛ր...:

<<Հայ Յեղափոխական Դաշնակցությունը վճռական հրառում մը կը պատրաստէ այդ անգամ. հարում մը, որուն բնութիւնը դեռ գաղտնի կը մնայ: Ինչ որ յայտնի է, ինչ որ ճշմարիտ է, այս վերջին օրերու տենդոտ գործունէութիւնն է, Դաշնակցութեան շարքերուն մէջ. արդէն եւրոպական մեծ տէրութեանց դահլիճներուն ազդարարում է, Պոլսոյ մէջ նոր-, հսկայ, վիթխարի դէպքը մը պիտի պայթի...:

- Հերի՛ք է, հերի՛ք, գոչեց Հիւնքեարը, կարճ կապեցէ՛ք...:

Եւ սկսաւ ման գալ դահլիճին մէջ. երկու ձեռքերը կը շփշփէր ու վագրի նայումքներ կը շանթէր իր դիմացի երկու քարտուղարներուն- որոնք սահմոկած-չէին բանար իրենց բերանը:

Մէկ երկու շրջան ընելէ յետոյ, եկաւ վերստին նստաւ գտնափէին վրայ, և դառնալով Եզզէթ պէյի.

- Չը ըմցաւ, հարցուց.

- Գրեթէ ըմնա՛ւ, վեհափա՛ն, պատասխանեց Իզզէթ պէյ.

- Լմնցուցէ՛ք ուրեմն, հրամայեց Հիւնքեարը.

<<Բարիզի մէջ հրատարակուող ԲՐՕ ԱՐՄԵՆԻԱ թերթին խմբագրապետը պարոն Բիւժ Բիյեար, եւրոպական քանի մը կարեւոր կեդրոնները պտըտելէ յետոյ, Սօֆիա հանդիպելով, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մէկ արտաստովոր նիստին ներկայ եղաւ: Յեղափոխական, ինչպէս նաեւ քաղաքական շրջանակներուն մէջ մեծ կարեւորութիւն մը կը տրուի այս դէպքին: >>

Ընթերցումը վերջացած էր, Ապտիւլ Համիտ դարձաւ ըսաւ իր Առաջին Քարտուղարին.

- Այսօր տեսա՞ք Ոստիկանութեան նախարարը.

- Այո՛, Վեհափա՛ն Տէր, պատասխանեց Թահսին, առտուն կանուխ պալատ եկած էր:

- Ի՞նչ ըսաւ, հարցուց Համիտ.

- Նոր ձերբակալումներու հրամանագրեր, շարունակեց Գարա Թահսին, գլխաւոր խռովարարները բանտարկուած են արդէն:

- Թահսի՛ն բաշա, ըսաւ, շուտով գրեցէ՛ք, պալատը թող գայ Շէֆիզ բաշան, թող չը մոռնայ հետը բերելու երեկուան ու այսօրուան կարևոր տեղեկագիրները, գրեցէ՛ք իրեն:

Յետոյ, դառնալով երկրորդ քարտուղարին.

- Իզզէ՛թ պէյ, ըսաւ, պալատիս մէջ հսկողութիւնը կրկնապատկել պէտք է, լրտեսապետ բաշան ի՞նչ կ'ընէ...:

Քարտուղարները բաժնուեցան Հիւնքեարին քովէն և Գարա Թահսին, դիւանը մտնելուն, անմիջապէս թեզքերէ մը գրեց ոստիկանութեան նախարարին: Իսկ Իզզէթ ապիտ

լրտեսապետ բաշան գնաց գտաւ, իրեն հաղորդելու համար Հիւնքեարին իրատէն, հսկողութիւնը կրկնապատկելու Երլտըզի մէջ:

Ապտիւլ Համիտի բովանդակ էութիւնը կեղծիք մըն էր, և այդ կեղծիքով է որ յաջողած էր տարիներէ ի վեր դարձընել իր կառավարութեան ղեկը, խաբելով նոյնիսկ Եւրոպական դիւանագիտութիւնը, որ կը յաւակնի տիեզերքի քաղաքականութիւնը վարելու: Ինչպէս ուրիշ անգամներ, այս անգամ ալ կեղծ էր իր հիւանդութիւնը, նպատակաւոր, պարզապէս փորձ մըն էր ըրեր, մէկ կողմէ գաղափար կազմելու համար թէ ի՛նչ ազդեցութիւն կընար ունենալ այն՝ ընդհանուր քաղաքականութեան վրայ, և միւս կողմէ, իր շրջապատին հոգեբանութիւնը թափանցելու համար այդ առիթով:

Երկու տեսակէտներով ալ յաջողեցաւ: Հիւանդութեան առաջին շշուկը, Պոլսոյ դիւանագիտական շրջանակներուն մէջ անսպասելի յուզում առաջ բերած էր, ինչ որ կը նշանակէր թէ իր մահուան վաղորդայնին, Արևմուտքը պիտի ցնցուէր, իսկ Արևելքը, իր սեփական կայսրութեան մէջ ահաւոր փլուզումներ ու տակնուվրայութիւններ առաջ պիտի գային:

ՆԿԱՐ (Վռամշապուհ Քէնտիրեան)

Նպատակին հասած էր, ա՛լ աւելորդ էր երկարաձգել կանխամտածուած հիւանդութիւն մը, ուստի, ոտքի ելած էր Ապտիւլ Համիտ, վայրկենապէս առողջացած (°)...:

Դ

Կայծակի արագութեամբ լուրը տարածուեցաւ Երլտըզի մէջ. - Հիւնքեարը բժշկուեցաւ և...

Հակահարուածը սոսկալի եղաւ, դժգոհները վերստին սուգ մտան, Բոնաւորը կ'ապրէր, տակաւին դիտաւորութիւն չունէր, ո՛չ ալ տրամադրութիւն մեռնելու:

Բժշկապետ Մավրոյենի բաշան, որ, մինչեւ Բերա գացած էր խորհրդակցութեան համար իրեն ծանօթ անգլիացի և գերմանացի պաշտօնակիցներ բերելու Երլտըզ, կէս ճամբան պարտաւորուած էր ետ դառնալ, իմացած ըլլալով Հիւնքեարին յանկարծական ապաքինումը:

Այս գաւեշտախաղին գաղնիքը մէ՛կ մարդ միայն գիտէր, Երլտըզի բնակիչներէն, Իզզէթ Ապիտ, Ապտիւլ Համիտի մտերիմը, որ, քիչ առաջ իր տիրոջ քովէն բաժնուելէ յետոյ, վերստին կանչուած էր և անոր կը պատմէր կայսերական հիւանդութեան (°) թողած տպաւորութիւնը թէ՛ ներսը, թէ՛ դուրսը, ինչպէս Բ. Դուրին ու Երլտըզի, նոյնպէս Բերայի դեսպանական շրջանակներուն մէջ:

- Ուրեմն հաւատացին, կ'ըսէր Հիւնքեարը::

- Անշո՛ւշտ, Վեհափա՛ռ, կըսէր Իզգէթ Ապիտ յոխորտալով, գիտե՞ք, ո՛րքան օգտաբեր եղաւ այս հիւանդութիւնը.

- Ի՛նչպէս...

- Բրիտանական մեծ դեսպանը, շարունակեց Իզգէթ Ապիտ- Արտաքին գործերու նախարարին գացած էր ցերեկը.

- Ինչո՞ւ...

- Պիտի պատմե՛մ, վեհափա՛ռ, շարունակեց Երլտըզի երկրորդ քարտուղարը.
Հայկական Խեղիքը դարձեալ յուզուած է եւրոպական Մամուլին մէջ. վերջերս բաւական բուռն յարձակումներ եղան Ֆրանսական Խորհրդարանին մէջ, Սասունի կողմերը տեղի ունեցած վերջին դէպքերուն առթիւ.

- Ո՞ր դէպքերը...

- Սբաղանք ըսուած գիւղին դէ՛պքը, վեհափա՛ռ, հեզնեց Իզգէթ. այդ փոքրիկ, աննշան դէպքը, մէկ քանի հարիւր հայերու սպաննութեան խնդի՛ր մը, չէ՛ք գիտեր, որքա՛ն մեծ աղմուկ հաներ է. մինչնհիմա թերևս հարիւր օխայէն աւելի մելան ապառեցին, ո՛վ գիտէ քանի՛ հազար օխա թուղթերը սնցնելու համար, լրագիրներուն գո՛րծ մը պէկք էր, պատրուա՛կ մը:

- Մեր դեսպաները չե՞ն հերքեր, հարցուց Հիւնքեարը.

- Հերքե՞լ... կրկնեց Իզգէթ, ո՞վ պիտի հաւատայ. Եորոպան շատ լաւ հասկցած է Բ. Դուռի պաշտօնական հերքումներուն նշանակութիւնը (՞.)

- Ի՛նչ ըսել կ'ուզէք հիմա, Իզգէ՛թ պէյ, հարցուց Հիւնքեարը.

- Վեհափա՛ռ. շարունակեց երկրորդ քարտուղարը, ըլել կ'ուզեմ թէ մեր հերքումները զրօ մը չեն արժեր, քանի որ Պոլսոյ մեծ դեսպանները, իրենց հիւպատոսներէն հասած տեղեկութիւնները բառ առ բառ կը հեռագրեն իրենց պատկանած կառավարութեան. գիտե՞ք, ինչո՛ւ չեն հաւատ ընծայեր Բ. Դուռի հերքումներուն.

- Ինչո՞ւ...

- Որովհետեւ, շարունակեց Իզգէթ Ապիտ, Հայկական Ընդհանուր Ջարդերուն յիշատակը գեոթարմ է, եւրոպական քննիչները, տեղին վրայ քննութիւններ կատարեցին այն տարին, երեւան հանեցին ճշմարտութիւնը...:

Ապտիւլ Համիտ յիշեց վայրկենապէս իր կեանքի այդ դժոխային դրուագը:

Այս խօսակցութիւնը յանկարծ ընդհատուեցաւ, սենեկապետ Արիֆ պէյ դահլիճին սեմին վրայ երեցաւ:

- Ի՞նչ կայ, Արի՛ֆ, հարցուց Ապրիւլ Համիտ.

- Ձեր ծառան՝ Ոստիկանության նախարարը, վեհափա՛ռ, պատասխանեց Արիֆ պեյ.

Իզգեթ պեյ կ'ատեր Շէֆիզ Բաշան, որ թէն Սիւրիացի, իր վտանգաւոր մրցակից ախոյեանը կը համարէր: Հիւնքեարին քովէն բաժնուելու ձեռով մը.

- Վեհափա՛ռ տէր, ըսաւ, թերեւս խրտչի ներկայութենէս.

- Ի՞նչ, տւրուա՞ծ էք Շէֆիզ Բաշային հետ, հարցուց Ապտիւլ Համիտ, կասկածոտ դէմքով մը.

- Ո՛չ, վեհափա՛ռ տէր, բողոքեց Իզգեթ Ապիտ, ընդհակառակը, կը սիրեմ ու կը յարգեմ զինքը, վերջապէս հայրենակից ենք, չէ՞.

- Կը հասկնա՛մ, կը հասկնա՛մ, կրկնեց Համիտ չարամիտ ժպիտով մը, գլուխը ճոճելով, սև կատու մը պէտք է անցած ըլլայ ձեր մէջէն:

Եւ ձեռքի ազդանշանովը հրամայեց հեռանալ դահլիճէն:

Շէֆիզ Բաշան, սենեկապետ Արիֆ պեյէն առաջնորդուած, կայսերական դահլիճէն ներս մտաւ և ստրկային թեքթեքումներով առաջացաւ, երկրպագելով ու համբուրելով իր Տէրոջ քղանցքը.-

Ապտիւլ Համիտ ոտքի վրայ ընդունեց Ոստիկանության նախարարը, որ դիմացը դողալով, կայսերական հրամանին կըսպասէր նստելու համար նախարարներու յատուկ քանափէին վրայ:

Յետոյ, ինքը նստելով գահին վրայ.

- Շէֆի՛զ Բաշա, ըսաւ, նստեցէ՛ք նայիմ դիմացս:

Ոստիկանության նախարարը անգամ մըն ծունկերը ծռե՛ց, երկրպագեց ու ետ ետ քաշուելով- երկիւղածօրէն ինքզինք տեղաւորեց քանափէին մէջ.

- Է՛, շարունակեց Հիւնքեարը, խօսեցէ՛ք նայինք, ի՛նչ կայ չըկայ մայրաքաղաքիս մէջ.

- Անգորրթիւնը կատարեա՛լ է, Վեհափա՛ռ տէր, խանութները բաց, ամեն մարդ իր գործին, առուտուրը կանոնաւոր, երթեւեկները սովորական, գինետունները գոց, սրճարանները մախն բաց կը մնան մինչև իրիկուան վերջին աղօթքի ժամը, յետոյ, լռութիւնը, խաղաղութիւնը կը տիրէ. ոստիկան զինուորներս ամբողջ գիշերը փողոցները կը թափառին, կը հետապնդեն կասկածելիները, չարագործները.

- Ուրի՞շ...

- Ուրիշ ոչի՛նչ, շարունակեց Շէֆիզ, Ձեր Վեհափառության ամենասուրբ և գերագնիւ Անձին պահպանութիւնը կը կազմէ իմ մտահոգութիւններուս ծանրագոյնը. բարեբաղդաբար- այդ մասին բոլորովին ապահով և հանդարտ է միտքս.

- Ի՞նչպէս...

- Մայրաքաղաքիս մեջ, շարունակեց Շեֆիգ, Ձեր Վեհափառության շնորհիւ, ո՛չ մէկ խռովարար, ո՛չ մէկ գոմիթաճի մնացած է, մեծ մասը բանտերը, քստրները, փոքր մաս մըն ալ փախստական.

- Իրա՞ւ կըսէք, հարցուց Համիտ կասկածոտ նայուածք մը սահեցնելով և ոտքէն մինչև գլուխը գննելով իր ոստիկանութեան նախարարը, հիմա մայրաքաղաքս զե՞րծ է գոմիթաճիներէ.

- Բացա՛ր ձակապէս, պատասխանեց Շեֆիգ բաշա, վստահ շեշտով մը.

-Շա՛տ աղէկ, Շեֆի՛ք բաշա, հարցուց Ապտիւլ Համիտ, դուրսերէն ի՞նչ կը լսէք.

- Վեհափա՛ռ, պատասխանեց նախարարը, դուրսի աղմուկները մէկ ականջէս կը մտնեն, միւսէն դուրս կելլեն, ստայօղ լուրեր, դիտումնաւոր շշուկներ.

- Օրինակի համա՞ր...- հարցուց Հինքեարը.

- Սօֆիայի մէջ ժողով մը գումարեր են, պատասխանեց Շեֆիգ, այդ ժողովին մէջ որոշեր են բաներ մը, պուլկար թերթերը գրեր էին.

- Որո՞նք գումարեր են այդ ժողովը, հարցուց Համիտ.

- Հայ գոմիթաճիներ՛ը, պատասխանեց Շեֆիգ.

- Ո՞ր մէկը...

- Դրօշակներ՛ը, շարունակեց Շեֆիգ բաշա, բոլոր պետերը Սօֆիա հաւաքուեր, մակեդոն աւագակներուն հետ կերուխում ըրեր են, այսպէս գրած էին թերթերը Վեհափա՛ռ տէր.

- Աղէ՛կ, աղէկ, կրկնեց Հինքեարը, կը տեսնեմ թէ ձեր ականջը ծակ է, ամեն բանէ տեղեկութիւն առեր էք, բայց, միջոցներ ձեռք առա՞ծ էք արդեօք, արգիլելու համար արտասահմանի խռովաարարներուն մուտքը մայրաքաղաքէս ներս.

- Անտարակո՛յս, Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Ոստիկանութեան նախարարը, Միրքէճիի կայարանէն սկսեալ, մինչև Քիւչիւք Չէքմէճէ, բոլոր կայարանները մասնաւոր լրտեսներ նշանակած եմ, նոյնպէս, Ղտլաթիոյ քարափին երկայնքը, սրճարաններուն մէջ, ամեն կէտերու վրայ, լրտեսներ դրած եմ, որոնք շոգենաւներէն դուրս ելլող ճամբորդները կը հետապօղեն.

- Լրտեսները չե՞ն ճանչցուիմ, ընդմիջեց Հինքեարը.

- Ի՞նչպէս պիտի ճանչցուիր, Վեհափառ, առարկեց Շեֆիգ, ամեն տարազի տակ կը գործեն լրտեսներըս, բեռնակիր, նաւավար, կառապան, խանութպան, խմբագիր, տպագրիչ, ներկարար, բժիշկ, փաստաբան, հօճա, իմամ, քահանայ, վարդապետ, գրագիր, վաճառական-արհեստաւոր, մէկ խօսքով, ամեն դասակարգէ մարդիկ, այսօր լրտեսութեամբ կ'ապրին և այդ արհեստը գործադրելով է որ կ'ապրեցնեն իրենց ընտանիքը:

- Աֆերի՛ն, ե աշա՛ պէ՛, բացագանչեց Ապտիւլ Համիտ, դուք Նազըմ բաշա՛ն ալ գերագանցեցիք, Շէֆի՛գ բաշա, անիկա չէր կրնար այդքան բարակները խորհիլ. չըսէ՞ք որ այսօր մայրաքաղաքիս բնակչութեան կէսը լրտես է.

- Կէսէն աւելի՛ն, Վեհափա՛ն տէր, կէսէն աւելի՛ն է, շեշտեց Շէֆիգ հպարտօրէն,

- Երեք քառորդը՞, հարցուց Համիտ.

- Երեք ուռորդէ՛ն ալ աւելին, պնդեց ոստիկանութեան նախարարը, Վեհափա՛ն տէր-երևակայեցէ՛ք, ոստիկանութեան նախարարի պաշտօնիւ անցնելէս ի վեր, առաջին գործս եղած էր ամեն դասակարգէ մարդիկներ ընտրել, ամենէ՛ն ատակները, ընդունակները, յաջողեցայ գտնել այդ մարդիկները, և այսօր, շնորհիւ Ձեր Վեհափառոդթեան, լրտեսներու կազմակերպեալ բանա՛կ մը կը պահեմ մայրաքաղաքին մէջ, մոռցա՛յ յիշելու, հարիւրաւոր լրտեսուհիներ ալ ունիմ ձեռքիս տակ, ամէն ազգէ. կիներ աղջիկներ, որոնք, կեղծ աղեծարկուներ, դատարաններու պատերուն տակ կը սլքտան, աղերսագիր մը ձեռքերնին, իւղձ, որք և այրի, անտերունչ ձևացած կիներ, որոնց բուն, իսկական պաշտօնը կը կայանայ կասկածելի մարդիկներ հետապնդելու մէջ...:

- Օ՛ր բացագանչեց Համիտ խիստ գոհ ու զուարթ դէմքով մը, արհեստը կատարելագործեր էք դուք.

- Վեհափա՛ն տէր, շարունակեց Սիւրիացին, Հիւնքեարին գնահատականներէն աւելի շփացած, այս կարգադրութիւնները մէկ ամսուան, կամ մէկ տարուան մէջ չեն իրագործուած. այս քանի՛ տարի է, զիշեր ցերեկ, քունս ու հանգիստ ծախած, Եւրոպայի և Ամերիկայի գաղտնի ոստիկաններուն կեանքէն քաղուած վկայեր աչքէ կ'անցնընեմ, ամեն օր կը կարդամ զանոնք և կ'ընդօրինակեմ, մեր երկրի բարքերուն ու սովորոյթներուն վարյ կը ձեւեմ, վերջապէս, ամբողջ կեանքս ուսումնասիրութիւններու շարք մըն է.

-Ապրի՛ք, ապրի՛ք, կրկնեց Ապտիւլ Համիտ անկեղծ ու սրտագին շեշտով մը, կը տեսնեմ թէ հարամ վաստակ չէ՛ք կերեր. հալա՛լ է, հալա՛լ, ձեր ստացած դրամը.

- Ծառա՛յ եմ, Վեհափա՛ն տէր, յարեց Շէֆիգ բաշա, խոնարհելով մինչև գետին.

- Ուրեմն, շարունակեց Հիւնքեարը, կընաք ամեն կերպով երաշխաւորել թէ՛ մայրաքաղաքիս անդորրութիւնը խանգարող ո՛ր և է ցոյց մը կամ դէպք մը չպիտի տեղի ունենայ, չէ՞.

Յորչափ Ձեր Շէֆիգ տրուպը, պատասխանեց ոստիկանութեան եռանդուն նախարարը, կը վայել Նորին Կայս, վեհափառութեան ա՛յնքան թանկագին վստահութիւնը.

- Շէֆի՛գ բաշա, Շէֆիգ բաշա, կրկնեց Համիտ, դուք ոստիկանութեան նախարար էք, և պիտի մնաք նախարար, ցորչափ ես ողջ եմ.

- Յաւիտեա՛ն ապրի Օսմանեան Վեհափառ Խալիֆան, բացագանչեց Սիւրիացի նախարարը, խնդումէն արցունքոտած աչքերը սրբելով ձեռքի թաշկինակովը...:

Շէֆիզ երջանիկ էր, անսպասելի յաջողութիւն մըն էր իրեն համար կայսերական գնահատման այդ հաւաստիքը:

- Շէֆի՛զ բաշա, ըսաւ Հինքեարը, մայրաքաղաքս պաշտպանված է ուրեմն.

- Ամէն կողմէ, վեհափա՛ն, պատասխանեց Շէֆիզ բաշա.

- Շա՛ր լաւ, շարունակեց Համիտ, Գում Գաբուի թաղին վրայ ի՞նչպէս է հսկողութիւնը.

- Սքանչելի՛, վեհափա՛ն, պատասխանեց նախարարը- բոլոր փողոցներու գլուխները, կարեւոր շէնքերու անկիւնները, լրտեսներ դրուած են, որոնք յաճախ կը փոխեն իրենց տեղերը. ուրիշ լրտեսներ ալ դրած են սրճաններուն մէջ. ուր սովորաբար կը հաւաքուին թաղին երիտասարդները. դեռ երկու օր առաջ երեք կասկածելի տղաքներ ձերբակալել տուի, Եգիպտոսէն եկած էին, հիմա բանտը նետուած են. հարցաքննութիւնները պիտի ե՛ս կատարեմ անձամբ, տեսնենք ի՛նչ կընանք ձեռք բերել...:

- Հայոց պատրիարքարանին փողոցը լաւ կը հըսկըւի՞, հարցուց Հինքեարը.

- Վեհափա՛ն, առարկեց Շէֆիզ բաշան ժպտելով, այն փողոցը պէտք չունի հսկողութեան, մայրաքաղաքիս ապահովագոյն փողոցներէն մէկը կը նկատուի.

- Ինչէ՛ն...

- Վեհափա՛ն, շարունակեց Շէֆիզ բաշան, Օրմանեան Պատրիարքին շնորհիւ, մէկ թռչուն չը կրնար անցնիլ այդ սահմաններէն.

- Ի՞նչպէս, ի՞նչպէս, ընդմիջեց Ապտիւլ Համիտ, Օրմանեան պատրիարքին անունէն դիւթուած.

- Օրմանեան պատրիարքը, շարունակեց ոստիկանութեան նախարարը, ժամանակին յարմարագոյն, միա՛կ անձնաւորութիւնը կը նկատեմ, որուն ծառայութիւնները կարելի չէ ուրանալ.

- Այդչափ հաւատարի՞մ է Օրմանեան պատրիարքը, կրնա՞ք թուել իր ծառայութիւնները, հարցուց Ապտիւլ Համիտ, հետաքրքիր և անհաւատալիօրէն միամիտ դէմքով մը.

- Ո՞ր մէկը թուեմ, Վեհափա՛ն, իր ծառայութիւններէն, հաւատացե՛ք, անուրանալի՛ն անոնք. երախտապա՛րտ են իրեն. Ձերբակալումներու, մանաւանդ խուզարկութիւններու համար ամէն դիւրութիւն կընծայուի Գում Գաբուի պատրիարքերանէն. առանց աղմուկի, առանց այլեւայլի, լռիկ մնջիկ կը կատարին այդ կարգի գործողութիւնները, ամէնը մէկդի, դեռ քանի՞ տարի անցաւ, հազիւ հինգ տարի է, Լահէյի մէջ գումարուած խաղաղութեան Համաժողովին քաշած հեռագիրը կը յիշէք անշուշտ, Վեհափա՛ն տէր.

- Այդ հեռագիրը, ընդմիջեց Հինքեարը ժպտելով, Օրմանեան պատրիարքին գործը չէր.

- Ի՞նչպէս. Վեհափա՛ռ, ինք չէ՞ր ստորագրողը- ինք չէ՞ր քաշողը, դիտել տուաւ Շէֆիգ քաշան, ուզելով ի վեր հանել Հայոց պատրիարքին- որ միեւնոյն ժամանակ իր բարեկամութիւնը կը վայելէր, վարչալամ (.) առաքինութիւնները (.)...

- Ի՛նք էր, ստորագրողը, շարունակեց Հիւնքեարը, և ինք էր քաշողը, բայց գիտէ՞ք, ո՛վ էր թաղրիչը, ո՛վ էր խմբագրողը, տուն տուողը....:

- Ներեցէ՛ք, Վեհափա՛ռ տէր, յարեց ոստիկանութեան նախարարը, այդ կէտը չէի գիտեր.

- Եթէ չէք գիտեր, շարունակեց Հիւնքեարը, մեր Իզգէթ պէյին հարցուցէ՛ք, անիկա ձեզի կը պատմէ այդ հեռագրին բոլոր մարնամասնութիւնները. դուք ուրիշ մէկ ծառայութիւնը գիտէ՞ք, անիկա՛ յիշեցէ՛ք.

- Վեհափա՛ռ տէր, յարեց Շէֆիգ, խիղճս ու հոգի՛ս կը վկայէ թէ՛ Օրմանեան պատրիարքը կայսերական կառավարութեան, մասնաւորապէս Ձեր Վեհափառութեան ամենասուրբ Անձին հանդէպ անկեղծ հաւատարմութեան ու խորին երախտագիտութեան զագցումներ կը տածէ, ինչպէս որ քանիցս առիթներ ունեցած եմ հաստատելու:

- Շէֆի՛ք քաշա, դիտել տուաւ Ապտիւլ Համիտ դժգոհ դեմքով մը, ես կը ճանչնամ Հայոց պատրիարքը, գիտե՛մ, գիտեմ թէ ի՛նչ ճիգմիթ է ան, լարադախա՛ց մըն է, որ քե՛զ ալ կը խաղցնէ, միւս նախարարնէ՛րն ալ, նո՛յն իսկ Մեծ Եպարքոսը. դիտէ՞ք ան ի՛նչ հինաւորաց գայլ է, կեղծաւո՛ր, ո՛չ ոք կընայ թափանցել անոր ներքինը.

- Վեհափա՛ռ տէր, ըսաւ Շէֆիգ, շա՛տ ճարպիկ մարդ մըն է Օրմանեան պատրիարքը, ես յաճախ օգտուած եմ իր խորհուրդներէն, փորձառո՛ւ է, փորձառո՛ւ.

- Ինչո՞ւ չըլլայ, ընդմիջեց Հիւնքեարը, գօմիթաճիներուն բոլոր գաղտնիքները գիտէ, չէ՞.

- Այո՛, այո՛, հաստատեց Ոստիկանութեան նախարարը, Եւրոպայի թէ Ամերիկայի մէջ, երկրագնտիս ամէն կողմերը տարտղնուած Հայերուն հետ յարաբերութեան մէջ է. բոլոր գօմիթաճիներուն պետերը կը ճանչնայ, բոլոր գօմիթէներուն ծրագիրները գիտէ. ամէն տեղ լրտեսներ դրած է, ամէն բանի տեղեակ է, ես կը վախնամ այդ մարդէն.

- Աղէ՛կ ըսիք, Շէֆի՛գ քաշա, ընդմիջեց դարձեալ Հիւնքեարը, այս օրերս իմացա՞ք բան մը Հայոց պատրիարքի մասին:

- Ինչպէ՞ս, Վեհափա՛ռ տէր, հարցուց Շէֆիգ զարմացական շեշտով մը.

- Եւրոպական դեսպաններուն դիմումներ ըլած է, իմացայ, շարունակեց Ապտիւլ Համիտ- դուք բան մը չէ՞ք գիտեր այդ մասին.

- Վեհափա՛ռ տէր, առարկեց Ոստիկանութեան նախարարը, վաղնջական սովորոյթներու համաձայն, որոնք ծանօթ են՝ ձեր Օգոստոսիաո Տէրութեան, բոլոր տէրութեանց ներկայացուցիչները, ըլլա՛յ դեսպան, ըլլա՛յ դեսպանի թարգման, այցելութեան կերթամ պատրիարքներուն, կընա՞նք արգիլել այդ այցելութիւնները. բնականաբար,

պատրիարքներն ալ կը պարտաւրուին փոխադարձ այցելութիւններ տալ անոնց, Վեհափա՛ռ տէր.

Ապտիւլ Համիտ զայրացաւ Սիւրիացի նախարարին դէմ և երեսին գոչեց.

- Ապո՛ւշ, ես այցելութիւններո՞ւն ականարկեցի, ձեզի ըսի թէ՛ Հայոց պատրիարքը, դեսպաններուն դիմումներ ըլած է այս օրերս, բան մը ըսա՞ծ էք դուք այդ մասին, արիկա՛ կը հարցընեմ.

- Վեհափա՛ռ տէր, թոթովեց Շէֆիզ դողդալով, իր Տիրոջ դաժան նայուածնին շանթէն ջախջախուած, բնաւ տեղեկութիւն մը չունիմ. Արտաքին գործերու նախարարը պէտք է գիտնայ:

- Ա՛ն ալ չի գիտեր, շարունակեց Հինքեարը.

- Հաճեցէ՛ք, Վեհափա՛ռ տէր, հրամայել, մինչև վաղը կը հասկնամ եղելութիւնը, և կը փութամ տեղեկագրել.

- Ճուռնա՛լ մը, ընդմիջեց Հինքեարը, ճուռնա՛լ մը դրկեցէք հոս,

- Վեհափա՛ռ տէր, յարեց Շէֆիզ յոխորտացող ու յանձնապաստան դէմքով մը, պատրիարքը կը տեսնեմ, իրմէ՛ կը տեղեկանամ.

- Ո՛րքան միամիտ էք, Շէզի՛զ բաշա, յարեց Հինքեարը, մե՛ղք որ Սիւրիացի էք.

- Ինչպէ՛ս, Վեհափա՛ռ տէր...

- Օրմանեան պատրիարքը, շարունակեց Ապտիւլ Համիտ, ձեզի պիտի խոստովանի՞ իր արարքները, պիտի յայտնէ՞ ձեզի թէ ինքը դիմեր է դեսպաններուն, բողոքեր է, եւ.

- Կը խոստովանի՞ ինծի, Վեհափա՛ռ, պնդեց Ոստիկանութեան նախարարը, ներեցէ՛ք համարձակութեանս, ես գիտեմ զինքը խոստովանցնելու կերպը:

- Ինչպէ՛ս...

- Եթէ Օրմանեան պատրիարքը չը կընամ այսօր տեսնել, շարունակեց Շէֆիզ, իր մարդը կը տեսնեմ ու բերնէն կը կորզեմ գաղտնիքը.

- Ո՞ր մարդը...

- Ռօպէ՛ռը, Ռօպէ՛ռը, կրկնեց Ոստիկանութեան նախարարը ,ամեն բան գիտէ ան, դեսպանատունները կը մտնէ կելլէ, ամեն օր Ոստիկանութեան Դուռը կուգայ, միշտ մեր շրջանակներուն մէջ կը պքտայ, Վեհափա՛ռ.

- Շէֆիզ բաշա՛, ըսաւ Ապտիւլ Համիտ յոգնաբեկ դէմքով մը, հիմա կերթաք, վաղը ճուռնալել կուգեմ, ջանացէ՛ք ստոյգ, վաւերական տեղեկութիւններ քաղել. հասկցէ՛ք թէ՛ Հայոց պատրիարքը մեծ տէրութեանց ո՞ր դեսպանին կամ դեսպաններուն դիմած է, ե՞րբ դիմած է, ինչո՞ւ դիմած է, և ի՞նչ պահանջած է, ի՞նչ բողոք ըլած է, բոլոր պարագաներովը, մանրամասնութիւններովը տեղեկացէք. նոյնպէս հասկցէ՛ք, եթէ կընաք, թէ ի՛նչ պատասխան

ստացած է պատրիարքը, վերջապէս, ճուռնալին մէջ բան մը մի՛ մոռնաք, ամեն կէտերը յիշեցէք, հասկցա՞ք.

- Գլխո՛ւս վրայ, ա՛յս իրիկուրնէ կը հասկնամ եղելութիւնը, ըսաւ Շէֆիգ բաշան, թերևս նո՛յն իսկ Օրմանեան պատրիարքին բերնէն:

- Հա՛, Շէֆի՛գ բաշա, շարունակեց Հինքեարը, մասնաւորապէս երկու դեսպանատուններուն ֆիմած է իմացայ.

- Ո՞ր դեսպանատուններուն, Վեհափա՛ռ տէր, հարցուց ոստիկանութեան նախարարը.

- Անգլիական և Ֆրանսական, պատասխանեց Հինքեարը, արդէն այդ երկուքը միշտ վառ կուգեն պարզել հայկական խնդիրը, չիմացա՞ք, այս օրերս դարեալ կատղեր են հայ զօմիթաճիները...

- Վեհափա՛ռ տէր, յարեց Շէֆիգ, Եւրոպայի երկու մեծ մայրաքաղաքներուն մէջ շատ երես առած են ատոնք, Լոնատոն ու Բարիգ, ահա երկու կեդրոններ, ու որջացած են այդ անիծեալ... անիշխանականները.

- Չը մոռնա՞ք, շեշտեց Համիտ, ահա՛ կը կրկնեմ, անգլիական և ֆրանսական դեսպանատուններուն դիմած է Հայոց պատրիարքը. միւսներուն երես չունի դիմելու գիտէք արդէն, ռուսական դեսպանին երբէ՛ք չի կրնար դիմել, պատճարը ծանօթ է, իսկ գերմանական դեսպանատունէն վախ մը չունիմ. ի՛նչ ալ աւրստօ, հունգարականէն, կը մնայ իտալականը, որ, աւելորդ է ըսել, իր երկու դաշնակիցներուն պոչէն կախուած է...:

Ու քահ քահ մը փրցուց:

- Ուրեմն, յարեց Շէֆիգ, անգլիական և ֆրանսական դեսպանատուները դիմած ըլլալու է պատրիարքը.

- Այդպէս ըլլալու է, ընդմիջեց Հինքեարը, այդ երկուքը շատ երես տուած են իրեն, ինչպէս որ իմացած եմ.

- Դիւրի՛ն է ստուգել, վեհափա՛ռ տէր, գաղնիքը մինչեւ վաղը կը պարզուի. անպատճառ պիտի հասկնամ պատրիարքի դիմումին շարժառիթը, նոյնպէս առարկան

- Հասկցե՞ք թէ, ընդմիջեց դարձեալ Ապտիւլ Համիտ, ի՛նչ պատասխան ստացար է դեսպաններէն.

- Վեհափա՛ռ տէր, շարունակեց Ոստիկանութեան նախարարը, ինչպէս ըսի, պիտի աշխատիմ ձեռք ձգել դեսպաններուն պատասխանին պատճէնը. յետոյ, պիտի ջանամ հասկնալ, պատրիարքին դիմումը բերանացի՞ է թէ գրաւոր. եթէ գրաւոր է, ասո՛ր ալ պատճէնը ձեռք պիտի անցընեմ. Վերջապէս, բոլոր այս տեղեկութիւնները կը յուսամ, վաղուան ճուռնային հետ, մատուցանել յո՞ծ Ձերդ Օգոստափառ Տէրութեան.

- Ապրի՛ք, ապրի՛ք, Շէֆի՛գ բաշա, կրկնեց Հինքեարը, Բարերարի ու Պաշտպանի շեշտ մը դնելով իր ձայնին մէջ. դուք այս գործը զուլիս հանեցէ՛ք, պիտի տեսնէք յետոյ, ինչե՛ք, ինչե՛ք պիտի ընեմ ձեղի...

- Անարժա՛ն եմ Ձեր վեհափառութեան լիառատ շնորհներուն, յարեց կեղծաւոր Սիւրիացին, մէջքը կոտրելով ու ծռելով մինչեւ գետին.

- Գացէ՛ք հիմա, գացէ՛ք, հրամայեց Հինքեարը ժպտելով, վաղուան ճուռնալը մի՛ մոռնաք.

Ոստիկանութեան նախարարը, գոհ ու զուարթ, ետ ետ քաշուելով, դուրս ելաւ կայսերական դահլիճէն, սենեկապետ Արիֆ պէյին հետ վար իջաւ, և, առանց հանդիպելու կայսերական քարտուղարութեան դիւանին, կառքը նետուեցաւ ու մեկնեցաւ Երլտըզի շրջափակոն:

Նոյն օրը, Ոստիկանութեան Դուռը, իր առանձնասենեակին մէջ, Շէֆիգ բաշան անձամբ պիտի վարէր վերջերը ձերբակալուած երեք անձանօթ երիտասարդներուն հարցաքննութիւնները:

Ե

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Սօֆիա գումարուած Գ. Ընդհանուր Ժողովի նիստերը վերջացած էին արդէն, և նոյն տարին, զարնան սկիզմները, պատգամաւորները խմբովին մեկնած էին Պուլարիոյ մայրաքաղաքէն և վերադարձած՝ իրենց տեղերը:

Նոր եռուզեռ մը, եռանդ մը, տարօրինակ գործունէութեան տենդ մը կը տեսնուէր ամէն տեղ:

Դաշնակցականները դարձեալ գործի վարյ են, դարձեալ ասպարէզ իջան և այս անգամ, վճռական հարուած մը պիտի տան համիտական բռնապետութեան, ա՛յս էր հանրային կարծիքը, և այս փսփսուքը շրջան կ'ընէր բերնէ բերան:

Ամբոխը, հրաշքներով սնած, երակայութեան թելերուն վրայ, առասպելներ կը ստեղծէր, իրերը կը խոշորցնէր, և այսպէս, կը մեծնար Դաշնակցութիւնը, կը բարձրանար, և կը տիրապետէր բոլոր հոգիներուն, որոնք ազատութեան ծարաւովը կը տանջուէին:

Պուլկարիոյ և Եգիպտոսի մէջ, ուր հոծ գաղթականութիւն մը կ'ապրէր, աւելի զգալի էր շարժումը:

Իսկ Պոլիս, տխուր մահաքաղաք մը, Օսմանեան Պանքայի Դէպքէն ի վեր Հայերէն պարպուած, ամայացած մեռելային խաղաղութիւն մը կը տիրէր:

Խուզարկություններ, ձերբակալումներ, բանտարկություններ, աքսորներ, սովորական բաներ էին ասոնք, Ապտիլ Համիտի շնորհիւ. Հայկական ընտանիքներուն մէջ, տարիներէ ի վեր տեւող սուգը սովորութեան կարգ անցած և բնական դարձած էր, այնպէս որ, խանութէն վերադարձին, արհեստաւորը կամ խանութպանը, ընթրիքէն անմիջապէս վերջ, անկողին կը մտնէր, առտուն կանուխ, վերստին գործին երթալու համար, ո՛չ սրճարան, ո՛չ գինետուն, ո՛չ զբօսավայր, բոլոր զաւարճութիւնները, բոլոր անմեղ հաճոյքները բացարձակապէս արգիլուած էին այս անիծեալ (.) դատապարտեալ(.) տառին համար, որ ինկած էր Վեհափառ Սուլթանին աչքէն:

Օրմանեան պատրիարքը, իրեն պէս խորհողներէն և իրեն պէս զգացողներէն ազգային վարչութիւն մը կազմած, և Երլտրզէն մատնանշուած յայտնի անձեր իր գլուխը հաւաքած, իր Վեհափառ Սուլթանին ձեռովը կը վարէր իր ազգին ճակատագիրը, Գում Գաբուի պատրիարքարանը վերածելով երկրորդ Բ. Դուռի մը, ուր դիմող բանտարկեալներու մայրերը, աքսորեալներու կիները, կամ ջարդուածներու որբերը կոշտօրէն կը վռնտուէին Օրմանեան Սրբազանի (.) հրամանը կէտ առ կէտ գործադրող բարապաններու ձեռքովը, մինչ անդին, Հայաստանի աղետահար կեդրոններուն և անկիւններուն մէջ, թալաններէն ու կոտորածներէն ճողոպրած կեանքի բեկորներ, զո՛ւր հաց կը փնտռէին իրենց մայր երկրի ծոցին մէջ, և սակայն այս թշուառութիւնները չէին կրնար արգիլել Պոլսոյ մէջ ո՛չ ճոխ խնջոյքները, ո՛չ չքեղ երեկոյթները, ո՛չ հանդիսաւոր պատարագները, ո՛չ ալ մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներուն մէջ գոհաբանական մաղթանքները Վեհափառ Սուլթանին արեւշատութեան և իր բարեխնամ (.) կառավարութեան համար...:

Իրիկուան դէմ էր, Ոստիկանութեան նախարար Շէֆիզ բաշատին կառքը կեցաւ Գում Գաբուի պատրիարքարանին փողոցը, Մայր Եկեղեցւոյ Աւագ Դուռին առջև:

Բարապանները դիմաւորեցին անմիջապէս նախարարը, որ ծանրաքայլ ակսաւ բարձրանալ պատրիարքարանի սանդուխներէն:

Օրմանեան պատրիարքը դահլիճին մէջ, սանդուխին գլուխը կըսպասէր, ողջագուրուեցան պատրիարք ու նախարար և ուղղուեցան ընդունելութեան սրահը:

Տեսակցութիւնը մտերմական էր, միայն երկուքին միջև:

- Պատրիա՛րք էֆէնտի, ըսաւ Շէֆիզ բաշան, վեհափառ Սուլթանին կողմէն յանձնարարուած եմ իր կայսերական բարեւները հաղորդելու, Ձեզի, և Ձեր Վարչութեան յարգելի անդամներուն.

- Շնորհակա՛լ եմ, Վսեմաշո՛ւք բաշա. Նորին Կայսերական Վեհափառութեան ա՛յնքան սրտիս մօտիկ ողջոյններուն համար, կը փութամ երախտագիտական անխարդախ զգացումներու հաւաստիքը մատուցանել յո՞ծ Վեհագոյն Գահոյից.

- Ի՞նչպէս է Գաբրիէլ էֆէնտին, հարցուց Շէֆիզ բաշան, Նորատունկեանին համար, որ Օրմանեանի պատրիարքութեան բովանդակ շրջանին մէջ վարչապետ պիտի մնար.

- Աղէկ է, կանոնաւորապէս կը վարէ ժողովները, պատասխանեց պատրիարքը:

Շէֆիզ բաշան Օրմանեան պատրիարքին արժանիքները գնահատողներէն և անոր տաղանդին հիացողներէն էր, մէկէ աւելի անգամներ, յաճախ հրապարակով, խոստովանած էր անոր վարչագիտական անվիճելի կարողութիւնները, և ուրիշ յատկութիւնները, որոնք

Ն Կ Ա Ր - Թորգոմ (Վիշապի անդամներէն)

դիւանագէտներու քով կը փնտռուին, հազուագիւտ ձիրքեր, որոնք անհրաժեշտ են և յարակից տարրը կը կազմեն ամէն պետական մարդու նկարագրին: Եւ այս բոլորը գիտնալով, Շէֆիզ բաշան կը վարանէր, չէր համարձակէր յանկարծ յայտնել Օրմանեան պատրիարքին իր այցելութեան նպատակը, միայն, շեղակի հարցումներով, կ'աշխատէր հետժեւտ մօտենալ նիւթին, անտեղի կասկածներ չարթնցնելու համար անոր մտքին մէջ և զանի չը նախապաշարելու համար իրեն դէմ, ուստի, անտարբեր շեշտով մը.

- Պատրիարք էֆէնտի, ըսաւ, կը յուսամ թէ անդորրութիւնը կատարեալ է, և

- Շնորհիւ Օգոստափառ Սուլթանին, ընդմիջեց Օրմանեան փութկոտօրէն.

- Եւ Ձեր պաշտօնի կիրառութեան մէջ, շարունակեց Ոստիկանութեան նախարարը, չէք հանդիպիր խոչընդոտներու.

- Է՛հ, կ'աշխատինք չը հանդիպելու, յարեց Օրմանեան ուսը թօթվելով.

- Ի՞նչպէս, այսի՞նքն, հարցուց նախարարը զարմացկոտ շարժումներով մը, խոչընդոտներ կա՞ն.

- Կը պակսի՞ն խոչընդոտները, շարունակեց Օրմանեան.

- Կը խնդրեմ, պատրիարք էֆէնտի, շա՛տ կ'աղաչեմ, ըսաւ Շէֆիզ բաշան, հաճեցէ՛ք բացատրել, պարզ խօսեցէ՛ք, ի՞նչ ըսել կ'ուզէք.

- Ես շա՛տ պարզ կը խօսիմ, յարեց պատրիարքը, ես արդէն կը սիրեմ պարզութիւնը, անկեղծութիւնը, դուք զիս լաւ կը ճանչնաք, վսեմաշո՛ւք բաշա, չէ՞.

- Անշո՛ւշտ, պատրիարք էֆէնտի, վաղուց կը ճանչնամ զձեզ և Ձեր արժանիքները գնահատողներէն եղած եմ միշտ.

- Շնորհակա՛լ եմ. բաշա՛, Ձեր բարձր պաշտպանութիւնը վայելելէ աւելի մեծ երջանկութիւն մը կա՞յ արդեօք ինծի համար այս երկրին մէջ, ուր անակնկալները չեն պակսիր.

- Ի՞նչպէս, պատրիարք էֆէնտի, հարցուց Շէֆիզ յանկարծ այլայլած դեմքով մը, ի՞նչ անակնկալ է.

- Օրինակ համար, շարունակեց Օրմանեան ժպտելով, վաղը պիտի լսէք թէ Հայոց պատրիարքին դէմ մահափորձ մը, թէոռական գործողութիւն մը կատարուած է, և

- Ի՞նչ կ'ըսէք, ընդմիջեց Շէֆիզ ընդոստ շարժումով մը, իրա՞ւ կ'ըսէք, պատրիարք էֆէնտի.

- Սո՛ւտ պիտի ըսէի, բողոքեց պատրիարքը, գրպանը խառնելով.

- Խնդրե՛մ, շարունակեց նախարարը յուզուած դեմքով մը, կատակը մէկդի՛.

- Ի՛նչ կատակ, Բաշա՛, զարմա՛նք, տրտնջաց պատրիարքը, մինչև ցարդ ըլա՞ծ եմ այդպիսի կատակ մը, մանաւանդ ա՛յսքան լուրջ խնդիրի մը համար, որ կենսական է, իմ կեանքիս ու մահուան խնդի՛րը, չէ՞.

- Պատմեցէ՛ք ուրեմն. պատրիա՛րք Էֆէնտի, թախանձեց ոստիկանութեան նախարարը:
Եւ Օրմանեան պատրիարքը, զրպանէն քաշեց հանեց թուղթի կտոր մը, և, ձեռքը բռնած.

- Բաշա՛, ըսաւ, նշանակալից նայուածքով մը, ասիկա սպառնազի՛ր մըն է.

- Ստորագրութի՞ւնը, հարցուց Շէֆիզ.

- Ստորաֆրութի՞ւն... կրկնեց Օրմանեան, այս կնիքը չի՞ բաւեր:

Ու ցուցամատը կարմիր կնիքի մը վրայ դրած.

- Ի՞նչ պէտք կայ ստորագրութեան, շարունակեց պատրիարքը, ահաւաստիկ կինքը, Բաշա՛:

Ոստիկանութեան նախարարը պատրիարքին ձեռքէն առաւ թուղթը, և սիսաւ գննել կնիքը. յետոյ- դառնալով Օրմանեանի.

- Պատրիա՛րք Էֆէնտի- ըսաւ, դուք կը ճանչնաք այդ կնիքը, ո՞ր գօմիթէին է.

- Դուք չէ՞ք ճանչնար, Բաշա՛, դիտել տուաւ Օրմանեան, խորհրդաւոր ժպիտ մը սահեցնելով, ձեր պաշտօնարանի թղթածրարներուն մէջ ո՛վ գիտէ քանի քանի հարիւրներ, թերեւս հազարներ կը գտնուին այդ կարմիր կնիքը կրող թուղթերէն. Հնչակեաններուն կնիքը չէ՞ք ճանչնար.

- Հնչակեաններէն մարդ մնա՞ց տակաւին մայրաքաղաքին մէջ, պատրիա՛րք Էֆէնտի, հարցուց նախարարը:

Օրմանեանը քրքջալիւր խնդաց:

Նախարարը վիրաւորուած, հարցական նայուածքով մը.

- Պատրիա՛րք Էֆէնտի, ըսաւ, կը դարմանամ, ես կը կարծէի թէ Հնչակեաններուն հունտը փճացած էր.

- Կարելի՞ է ատիկա, առարկեց Օրմանեան, ի՞նչ կը կարծէք՝ Բաշա՛, բանտերուն մէջ քանի՞ Հնչակեան կը պառկի...:

- Բայց ի՞նչու այդպէս կըսէք, պատրիա՛րք Էֆէնտի, բողոքեց նախարարը, ձերբակալուածներուն ցանկը Ռօպէր Էֆէնտիին ձեռքէ՛ն անցած է:

Օրմանեան լռեց:

Լռութիւնը պահ մը տեւեց, մինչեւ որ Շէֆիզ բաշան, իր այցելութեան շարժառիթը յիշելով, ուզեց փոխել խօսակցութեան նիւթը, և Օրմանեանի դիմագծերը զննելով, յանկարծ

- Պատրիա՛րք էֆէնտի, ըսաւ ժպտելով, կարեւորութիւն մի՛ ընծայէք այսպիսի թուղթերու, եւ ալ ամէն օր կըստանամ ասոնցմէ. եթէ կ'ուզէք, քովս թո՛ղ մնայ, քննութիւն մը կը բանամ և երեւան կը հանեմ հեղինակները.

- Բաշա՛, յարեց Օրմանեան, կեանքս վտանգի տակ է այսօր, չպիտի կընամ այսուհետև յաճախել պատրիարքարանս, կը խորհիմ տունս քաշուիլ ժամանակ մը, ի՞նչ կ'ըսէք.

- Աս թուղթի կտորներուն կարեւորութիւն չէք ընծայեր, պատրիա՛րք էֆէնտի, շարունակեց Շէֆիզ, վեհափառ Սուլթանին շնորհիւ.

- Բարձրեալն Աստուած երկար կեանք շնորհէ մեր սիրեցեալ Փատիշահին, ըսաւ Օրմանեան, կեանքս պաշտպանուած է, բայց խշմութիւնը ձեռքէ ձգելու չէ՛, զգուշութիւնը կարեւոր է, լաւագոյն է մէկ քանի օր առանձնանալ.

- Ոստիկան զինուորներուս թիւը կ'աւելցունեմ, պատրիա՛րք էֆէնտի, կը կրկնապատկեմ եթէ կ'ուզէք, խօստացաւ Ոստիկանութեան նախարարը.

- Ի՛նչ օգուտ, բաշա՛, դիտել տուաւ Օրմանեան, պատրիարքարանէն մինչեւ Բերա, ոստիկան զինուորներո՞վ պիտի ծածկէք փողոցները. և յետոյ ի՞նչ կ'ըսեն դեսպանները, մայրաքաղաքին անդորրութիւնը վտանգուած է պիտի ըսեն- չէ՞.

- Չէ՞ն ըսեր արդէն, յարեց Շէֆիզ, դեսպաններուն հաշիւ տալու պարտական չե՛մ...

- Բաշա՛, բողոքեց Օրմանեան, թիւր մի՛ մեկնէք խօսքերս. մի՛ մեղադրէք զիս, կեանքիս համար կը դողա՛մ...

- Պատրիա՛րք էֆէնտի, պնդեց նախարարը, կը ցտիմ որ չափազանց կարեւորութիւն կուտաք չնչին սպառնալիքներու, եւ ամէն միջոցներ ի գործ պիտի դնեմ ո՛ն է յարձակումէ գերծ պահելու համար Ձեր կեանքը, որ ա՛յնքան թանկագին է մեզի համար.

- Շնորհակա՛լ եմ, բաշա՛, ըսաւ պատրիարքը, կ'աղաչեմ, թոյլ տուէ՛ք որ գոնէ մէկ շաբաթ տունս փակուիմ, պատրիարքարան չիջնեմ, որովհետև այս անգամ խնդիրը լուրջ է, սև նախազգացումներէ կը տանջուիմ.

- Այդ մասին, յարեց նախարարը, պէտք է նախապէս բարձրագոյն հաճութիւնը ստանալ մեր սիրեցեալ Պատիշահին, որ, զիտէք, կը գուրգուրայ ձեր անձին վրայ. հօգ չէ, վաղն ալ իջէ՛ք պատրիարքարանը, վաղը, մինչև կէս օր, եւ դարձեալ կուգամ:

Օրմանեան պատրիարքին դէմքը կը չոգար, հասած էր իր նպատակին, մեծկակ գումար մըն ալ պիտի փրցընէր Կայսերական Անձնական Գանձէն:

Սակայն Ոստիկանութեան նախարարը կը տառապէր, ե՞րբ, ի՞նչպէս պիտի բանար իր սիրտը, և ի՞նչպէս պիտի յաջողէր յայտնել պատրիարքին իր այցելութեան շարժառիթը:

- Բաշա՛, ըսաւ Օրմանեան, թո՛ղ այդպէս ըլլայ, Վեհափառ Սուլթանին բարձր իրատէին կըսպասեմ, մտադրութիւնս գործադրելէ առաջ, վաղն ալ կ'իջնեմ հոս, միայն, ոստիկան զինուորներուն թիւը կ'աւելցնէք անշուշտ, բայց, ներեցէ՛ք, Բաշա՛, ե՞րբ պիտի վերջ գտնէ այդ կացութիւնը.

- Ո՞ր կացութիւնը...

- Նեքին գաւառներէն, շարունակեց Օրմանեան, ամէն օր գանգատներ կը հասնին, թալանի, մասնակի թէ հաւաքական սպաննութեանց քստմնելի դէպքեր, սրտակեղեք մանրամասնութիւններ, ե՛ս ալ շուարեցայ, չեմ գիտեր ի՛նչ պիտի ընեմ. ձանձրացա՛յ թագրիներ մատուցանելէ.

- Պատրիա՛րք էֆէնտի, յարեց Շէֆիզ Բաշան, Նորին Կայսերական Վեհափառութիւնը, աւելորդ է կրկնել, շատ կը սիրէ իր հպատակները, մասնաւորապէս Հեյերը, չեք կրնար ուրանալ. բայց խռովարարները զինք հանգիստ չեն ձգեր: Կառավարութիւնը կը փափագի բարենորոգումներ ի գործ դնել այդ գաւառներուն մէջ ալ, ինչպէս որ հոս, մայրաքաղաքիս մէջ յաջողած է կարգ ու կանոնը հաստատել, սակայն, ձեր գօմիթաճիները կը զայրացնեն մեր սիրեցեալ Փատիշահը.

- Բաշա՛, ընդմիջեց Օրմանեան, եթէ այս վիճակը տակաւին տեւէ, պիտի հարկադրուիմ հրաժարիլ:

- Դուք չէ՛ք հրաժարիր, յարեց Շէֆիզ, զլուխը ձօճով ու նշանակալից ժպիտ մը՝ շրթունքներուն ծայրը, դուք խելացի մարդ եք, եթէ հրաժարիք, ո՞վ պիտի յաջորդէ ձեզի, կա՞յ միթէ ուրիշ եկեղեցական մը, ձեր առաքինութիւնները միացնող՝ իր անձին վրայ: Փորձեցէ՛ք, եթէ կ'ուղեք, հրաժարեցէ՛ք անգամ մը, չե՞ որ պիտի ստիպուիք յետոյ ետ առնել ձեր հրաժարականը.

- Ի՞նչպէս ընեմ ուրեմն, յերեց Օրմանեան, ներքին գոհունակութեան մը ցոյքը դիմագծերուն վրայ, հաւատացէ՛ք, Բաշա՛, ե՛ս ալ չեմ գիտեր ի՛նչպէս խաղամ. կը տեսնէք, Արտասահմանի գաղթական ժողովուրդս քէն ըրած է ինծի դէմ, աչքէ անցուցէք անգամ մը թերթերը, ի՛նչ, ի՛նչ լուտանքներ, ի՛նչ սպառնալիքներ, ի՛նչ յարձակումներ, ինչո՞ւ, Որովհետև կայսերական կառավարութեան շահերը կը պաշտպանեմ և ժողովուրդիս տրտունջները կը խեղդեմ.

- Պատրիա՛րք էֆէնտի, ընդմիջեց նախարարը, մի՛ կարծէք թէ կառավարութիւնը ձեր ծառայութիւնները կ'ուրանայ, ընդհակառակն, դեռ այսօր, Երլտըզի մէջ, փատիշահիս ներկայութեան, ձեր հաւատարմութիւնը բարձրաձայն հռչակեցի և նոյնիսկ վարձատրութիւն մը խնդրեցի ձեզի համար.

- Երախտապա՛րտ եմ, Բաշա՛, երախտապա՛րտ եմ ձեզի, կրկնեց Օրմանեան, աչքերը լեցուած կեղծ արցունքներով, գիտեմ, վստահ եմ թէ ձեզի պէս բարձրաստիճան վեզիրի մը պաշտպանութիւնը կը վայելեմ.

- Ուրեմն, շարունակեց նախարարը, կը կառչիք ձեր բարձր պաշտօնին, և ինձի հետ ձեռք ձեռի տուած կը շարունակէք մատուցանել ձեր ծառայութիւնները, որոնց համար, վստահ ըլլալու էք, լիառատօրէն պիտի վարձատրուիք:

- Բաշա՛, ըսաւ Օրմանեան, չեմ ուզեր ուրախացնել պաշտօնիս ցանկացողերը, անհաշտելի թշնամիներս, որոնք դարանակալ կը հսկեն, յափշտակելու համար գահս, չէ՛ք դիտեր, Բաշա՛, ի՛նչ դաւեր կը սարքեն ասոնք, անկումս փութացնելու համար. գաղտնի գործակալներ ունին արտասահմանի մէջ, որոնք կը գործեն իրենց հաշուին. թերթերու մէջ կը վարկաբեկեն զիս, և դեռ ինչե՛ր, ինչե՛ր...

- Մի՛ յուզուիք, պատրիա՛րք Էֆէնտի, քաջալերեց Շէֆիդ Բաշան, լո՛կ մատնանիշ ըրէ՛ք զանոնք. և դուք քաշուեցէ՛ք, ինձի յանձնեցէք մնացածը:

- Շնորհակալ եմ, Բաշա՛, ըսաւ Օրմանեան, խանդաղատալից աչքերով, զերազանցօրէն ազնիւ էք, ոսկի սիրտ մը կը կրէք ձեր շքանշաններով ծածկուած կուրծքին տակ...

Շէֆիդ Բաշան փղձկեցաւ. փառամոլ մարդ, առանց դժուարութեան կը կլլէր Օրմանեանի պատրաստած դեղահատը:

- Պատրիա՛րք Էֆէնտի, ըսաւ յանկարծ, փոխելով խօսակցութեան դօնը, դուք անկեղծ մարդ մըն էք, և, միեւնոյն ժամանակ- ճշմարտախօս մարդ մը, չէ՞:

-Ի՞նչ կայ, Բաշա՛, դիտել տուաւ Օրմանեան, ինչո՞ւ յանկարծ այս խօսելակերպը:

- Պիտի ըսեմ, պատրիա՛րք Էֆէնտի, շարունակեց նախարարը, խիստ ընտանի շեշտով մը, կը խնդրեմ որ զիս յուսախաբ չընէք:

- Կաղաչե՛մ, Բաշա՛, յարեց պատրիարքը, առանց յառաջաբանի խօսեցէ՛ք, հրամայեցէ՛ք միայն, և ես պատրաստ եմ ընելու ինչ որ կրնամ:

Շէֆիդ Բաշան աւելի մօտեցաւ պատրիարքին և լուրջ դէմքով մը:

- Պատրիա՛րք Էֆէնտի, ըսաւ, վերջերս, նախընթաց կամ ներկայ շաբթուան մէջ, անգլիական թէ ֆրանսական մեծ դեսպաններուն հետ տեսակցութիւն մը չունեցա՞ք:

Օրմանեան ցնցուեցաւ, սիրտը թնդաց, բայց չուզեց ինքզինք մատնել, ուստի- անկարելին ընելով, իր պաղարիւնը պահելու և անտարբերութիւն կեղծելու համար:

- Բաշա՛, ըսաւ, դուք կը կասկածի.ք իմ հաւատարմութեանս վրայ:

- Քա՛ւ լիցի, պատրիա՛րք Էֆէնտի, բողոքել կեզծեց նախարարը, ձեր հաւատարմութիւնը զերծ է ամէն կասկածէ: Միթէ յանցա՞նք մը գործեցի ուղղելով այդ հարցումը, հոգ չէ, եթէ կը վշտանաք, ետ կ'առնեմ հարցումս:

- Ո՛չ- Բաշա՛, յարեց Օրմանեան, ինչո՞ւ պիտի վշտանամ, և ինչո՞ւ պիտի գազտնի պահեմ ձենէ տեսակցութիւններս, այո՛, հինգ օր առաջ ունեցայ տեսակցութիւն մը ֆրանսական մեծ դեսպանին հետ, նոյնպէս, անգլիական դեսպանին այցելութիւն մը տուի նախընթաց օրը:

- Կրնա՞մ արդեօք հարցընել, շարունակեց Շէֆեզ, կրնա՞մ իմանալ այդ տեսակցութիւններուն արդիւնքը:

- Ինչո՞ւ չէ- բաշա՛, պատասխանեց Օրմանեան հանդարտօրէն, երկու տեսակցութիւններն ալ նոյն նիւթին շուրջը դարձան:

- Ո՞ր նիւթին...

- Քիչ առաջ չը յիշեցի՞, բաշա՛, շեշտեց Օրմանեան, ներքին գաւառներուն մէջ տիրող հարստահարութիւնները. թալան, սպաննութիւն են.

Ոստիկանութեան նախարարը կ'եռնեփէր, բայց երբէք չէր մատներ իր ներքին տագնապը: Հանգոյցին ծայրը գտած էր, կը մնար քակել. ուստի, առաջ տանելով իր պեղումները.

- Պատրիարք էֆէնտի՛, ըսաւ, պիտի հաճի՞ք արդեօք լուսաբանել մութ կէտ մը.

- Ի՞նչպէս, հարցուց Օրմանեան.

- Պալատին մէջ պնդոյնք կան թէ, շարունակեց նախարարը, Հայոց պատրիարքը Մեծ դեսպաններուն ազդու բողոքագրեր ներկայացուցեր և ասոնց լուրջ ուշադրութիւնը հրաւիրեր է Հայկական Խնդրին անմիջական կարգադրութեան վրայ. ճի՞շդ է ասիկա.

- Ո՞րիշ, ընդմիջոց Օրմանեան, կ'աղաչեմ, բաշա՛, դուք լրացուցէ՛ք ձեր խօսքը, յետոյ ե՛ս կը պատմեմ իրողութիւնը, ճիշդ ինչպէս որ է:

- Շատ լա՛ւ ուրեմն, շարունակեց նախարարը, ֆրանսական և անգլիական և կարծեմ ուրիշ մեծ տերութեան մը դեսպանները հաւաքական ծանուցագիր մը պատաստած են և պիտի վաղը կամ միւ օր ներկայացընեն զայն Բ. Դուռը, շիտակը շա՛տ զգածուած է Օգոստափառ Սուլթանը, և այս խնդրի լուսաբանելու համա՛ր է որ ինծի պաշտօն յանձնեց անձամբ գալ և Ձեզի հաղորդել Նորին կայսերական Վեհափառութեան ողջոյնները. կ'աղաչեմ, լուծեցէ՛ք այս հանելուկը...:

Օրմանեան պատրիարքը, իր ցանցառ մօրութիւն քանի մը թելերը գիրուկ ձեռքին մէջ, մտմտալ սկսաւ: Տեսակցութիւններս իմացուած են, կ'ըսէր ինքնիրեն, անօգուտ է ուրացումը, նոյն իսկ վտագաւոր. կը խորհէր նոյնութեամբ պատմել անցած դարձածը, բան մը չը ծածկել. սակայն, միսկողմէ, կը վարանէր, որովհետև, մեծ դեսպաններուն երկդիմի ընթացքը վստիחותիւն ներշնչելէ հեռի էր, մինչդեռ, Բ. Դուռը կամ Պալատը, իր կարծիքով, պիտի պաշտպանէր զինք, իբրև կառավարութեան ձեռքըգործիք մը, և այսպէս, արկու սուրի միջև, չուարած մնացած էր:

- Պատրիա՛րք էֆէնտի, ըսաւ նախարարը, ի՞նչ կը խորհիք, պատմեցէ՛ք նայինք, ի՞նչպէս եղաւ.

- Բաշա՛, պատասխանեց Օրմանեան, նախ պէտք է գիտնալ թե ո՛ւ և է գրաւոր բողոք ներկայացողոցած չեմ ո՛չ, մէկ դեսպանի. տեսակցութիւն մըն է, պարզ տեսակցութիւն, մը, զոր ունեցայ անգլիական մեծ դեսպանին հետ- երբ այցելութեան եկած էր ինծի.

- Ո՞ր, ընդմիջեց նախարարը.

- Հոս, պատրիարքարանը, պատասխանեց Օրմանեան.

- Լա՛ւ, շարունակեց նախարարը, պատրիարքին շրթունքէն կախուած, բա՛ռ մը չը փախցնելու համար. ի՞նչպէս եղաւ յետոյ.

- Յետոյ, պատասխանեց պատրիարքը, մեծ դեսպանը, ինքնաբերաբար տեղեկութիւններ հարցուց ինծի, Արեւելեան Անատօլուի և Քիւրտիստանի մէջ տիրող վիճակին վրայ.

- Դուք ի՞նչ ըսիք, նախարարը.

- Ի՞նչ կընայի ըսել, շարունակեց Օրմանեան, իրողութիւնները չէի կընար ծածկել, և սակայն, այդ ալ փորձեցի, թեթև, շատ թեթև ցոյց տուի, չափազանցութիւններ կան, ըսի, բայց

- Ի՞նչ- չը հաւատա՞ց մեծ դեսպանը, ընդմիջեց Շէֆիգ.

- Այնքան տխմա՞ր էր, դիտել տուաւ պատրիարքը, գիտէք ի՛նչ ըլաւ.

- Ի՞նչ ըլաւ...

- Խնդա՛ց, ծաղրեց զիս, պատասխանեց պատրիարքը. և, հիւպատոսական հեռագիրներուն ու տեղեկագիրներուն վրայ հիմնուած, թուեց ինծի ծանրակշիռ դէպքերու շարք մը, որոնք չէին յիշո՞ւիս ինծի հասած գանգատներուն մէջ. ի վերջոյ, ստիպուեցայ խոստովանիլ ճշմարտութիւնը...,

Շէֆօգ բաշան կարմրեցաւ, բարկութենէն պիտի ճաթէր, դարձաւ ըսաւ,

- Պատրիա՛րք էֆէնտի, կը ցաւիմ որ ա՛յդ աստիճան առաջ գացած էք, պարզապէս ամբաստանա՛ծ էք կայսերական կառավարութիւնը,

- Երբե՛ք, երբե՛ք բողոքեց Օրմանեան, իր հոգիին բովանդակ գայրոյթովը, գիաե՞ք ի՛նչ ըսի յետոյ մեծ դեսպանին.

- Ի՞նչ ըսիք...

- Կայսերական կառավարութիւնը, ըսի, շարունակեց Օրմանեան, ցաւ զգաց պատահած դէպքերուն վրայ և ինծի խոստացաւ անմիջական միջոցներ ձեռք առնել արգիլելու անոնց կրկնութիւնը.

- Մեծ դեսպա՞նը, ընդմիջեց նախարարը, ան ի՞նչ ըսաւ.

- Կայսերական կառավարութիւնը կը խոստանայ, ըսաւ, լոկ կը խոստանայ, պատասխանեց պատրիարքը, բայց երբե՞ք չը գործադրէր...

- Վերջապէ՛ս. ընդմիջեց նախարարը հառաչելով, ի՞նչ եղաւ արդիւնկըր.

- Բաշա՛պ, ատասխանեց Օրմանեան, գիտե՞ք ի՛նչ եղաւ մեծ դեսպանին վերջին խօսքը.

- Ի՞նչ եղաւ...

- Չե՛մ կրնար կրկնել, բաշա՛, պատասխանեց Օրմանեան, սիրտի՛ս բանեցաւ, խոցոտի՛չ, մամացուցի՛չ խօսք մը.

- Խնդրե՛մ, ըսե՛ք, թախանձեց նախարարը:

Եւ Օրմանեան, ինքզինք ամփոփելով ու լայն շունչ մը քաշելով, յարեց.

- Սրբազա՛ն հայր, կը ներե՛ք, ըսաւ ինծի մեծ դեսպանը, աւելի լաւ է որ ուրիշի մը ձգեք այս աթոռը, քաշուեցե՛ք պաշտօնէ, քանի որ չեք կրնար պաշտպանել ձեր ազգին իրաւունքները:

- Դուք ի՞նչ ըսիք, հարցուց Շէֆիզ.

- Ի՞նչ պիտի ըսէի, պատասխանեց Օրմանեան, շա՛տ լաւ, կը հրաժարիմ, ըսի...:

Նախարարը կատաղութենէն ինքզինք կուտէր, բայց ամէն ճիգ կ'ընէր ինքզինք զսպելու, վերջաւորութիւնը կ'ուզէր առնել. ուստի, մեղմելով ձայնը, մտերիմ շեշտով մը.

- Գուգո՛ւմ պատրիարք Էֆէնտի, ըսաւ, դուք պերճախօս քարոզիչ, հռչակաւոր բեմբասաց, միեւնոյն ժամանակ, նուրբ դիւանագէտ մը. ինչպե՛ս հանդուրժենացիք այդքան ծանրակշիռ հարուա՛ծ մը, ինչո՞ւ չը տուիք իրեն արժանաւոր պատասխանը.

- Ի՞նչ պատասխան աայի, բաշա՛, հարցուց Օրմանեան.

- Թո՛ղ ազդարարէիք որ իր կօշիկէն վեր չելլէր, յարեց նախարարը:

- Ի՛նչպէս...

- Ի՛նչ իրաւասութիւն ունէր միջամտելու մեր կառավարութեան ներքին գործերուն, դիտել տուաւ Շէֆիզ, ի՞նչպէս յանդգնեցաւ այդ լիբբ լեզուն գործածելու. միթէ դուք իր պաշտօնեա՞ն էք, կամ ստորակարգեալը.

- Բաշա՛, բողոքեց պատրիարքը, ես չէի կրնար ընել այդ դիտողութիւնը, որովհետեւ, գիտեմ թէ բրիտանական կառավարութեան մեծ դեսպանը կշռելով կը խօսի, և երբեք դուրս չելլէր իր իրաւասութեան սահմանէն:

- Խնդրե՛մ, պատրիարք Էֆէնտի՛. լաւ չը հասկըցայ այդ կէտը, հաճեցե՛ք բացատրել.

- Անգլիան, բաշա՛, շարունակեց Օրմանեան, տիրական շեշտով մը, միջազգային դաշնագիրներու ուժովը, յանձնառութիւններ, հէտեւաբար, իրաւասութիւն ունի միջամտելու մեր ներքին գործերուն. Հայկական Խնդիրի գործադրութեան երաշխաւորը չե՞:

Ոսկիկանքեան նախարարը լռեց. Ջախջախիչ էր պատասխանը: Եւ լռութիւնը բաւական երկար տեւեց:

- Պատրիա՛րք Էֆէնտի, ըսաւ ի վերջոյ. անգլիական դեսպանինը հասկցանք. ֆրանսականին հետ ինչպէս վեջացուցիք.

- Բաշա՛. պատասխանեց Օրմանեան, կ'երկայ թէ երկու մեծ դեսպանները, թերևս իրենց պատկանեալ կառավարութեան հրահանգովը, կանխաւ պատրաստած էին այդ տեսակցութիւնները.

- Ի՞նչպէս...

- Որովհետև. շարունակեց Օրմանեան, երկուքն ալ նոյն նիւթը քրքրեցին, միննոյն հարցումը, ներքին գաւառներուն ապահովութեան մասին. ֆրանսականը նոյնիսկ սպառնալիքներ ըսաւ.

- Ի՞նչ սպառնալիքներ, հարցուց նախարարը.

- Ի՞նչ հարկ կայ. բաշա՛, ամէն բան պատմելու, դիտել տուաւ Օրմանեան.

- Հոգ չէ՛, հոգ չէ՛, կրկնեց Շէֆիգ, պատմեցէ՛ք,

- Բայց կը յուզուի՞ք. բաշա՛.

- Ընհակառակն, պնդեց նախարարը. շատ գոհ կը մնամ.

- Ֆրանսական դեսպանին յայտարարութիւնները, շարունակեց Օրմանեան, մտածել տուող սպառնալիքներ են գիտէ՛ք՝ բաշա՛, ժամանակները փոխուած են ըսաւ, Օգոստափառ Սուլթանը չարաչար կը սխալի, եթէ Եւրոպան պառակտուած կը կարծէ. թո՛ղ լաւ գիտնայ, Եւրոպական համձայնութիւնը կատարեալ է Արեւելեան խնդրին շուրջը. Սուլթանը պէտք չէ՛ այլ ևս իր յոյսը դնէ գերմանական պաշտպանութեան վրայ, ատիկա անուանակա՛ն է. յետոյ, շեշտեց դեսպանը, Անգլիան և Ֆրանսան հաշտուած են, հաշտուա՛ծ, Սրտագին Համաձայնութիւնը կ'ամրապնդուի տարուէ տարի, և վաղը, Ռուսիան ալ պիտի հաշտուի Անգլիոյ հետ. այն ատեն, տեսնենք ինչի՛ պիտի ծառայեն Վիլիէլմ Բ. ի ճառեր՛ը.

- Ի՞նչ կ'ըսեք, պատրիարք Էֆէնտի, ընդմիջեց նախարարը, ա՛յդքան բացարո՞շ խօսեցաւ դեսպանը.

- Քարոզ չէ՛մ խօսիր, բաշա՛, մեծ դեսպանին յայտարարութիւննե՛րը կը կրկնեմ հոտ-յարեց Օրմանեան.

- Շարունակեցէ՛ք, պատրիարք Էֆէնտի՛, թախանձեց Շէֆիգ, Շարունակեցէ՛ք, որւիշ ի՞նչ խօսեցաւ ֆրանսական դեսպանը.

- Շա՛տ բաներ խօսեցաւ, պատասխանեց Օրմանեան, նաւային ցոյցերու խոսք մըն ալ ըլաւ. Հայկական Խնդիրը պէտք է անյապաղ լուծուի ըսաւ. հակառակ պարագային, Եւրոպան պիտի պարտաւորուի, ըսաւ, Հաւաքական միջամտութեամբ մը, բռնի լուծել տալ այդ խնդիրը, որ արին- հեղեղներ թափել տուաւ...:

Շէֆիգ բաշան, Սիւրիացի, միւս մեծ աէրութիւններուն ուժին վրայ այնչափ մեծ գաղափար մը չունէր, որքան ֆրանսական ազդեցութեան վրայ, մասնաւորապէս Արևելքի մէջ: Հայոց պատրիարքին խօսքերը՝ յիշեցուցին իրեն Դամասկոսին Կոտորածը, յետոյ Նաբոլէոն Գ. ի զինուորական միջամտութիւնը, և անմիջապէս յետոյ՝ Լիբանանի ազատագրումը:

- Պատրիարք Էֆէնտի, ըսաւ, ֆրանսական դեսպանին յայտարարութիւններէն ի՞նչ հետևցուցիք.

- Մէ'կ բան, պատասխանեց Օրմանեան, համոզեցայ թէ՛ Անգլիան ու Ֆրանսան միաբանած են Հայկական Խնդիրը, այս կամ այն ձևով կարգադրելու համար.

- Այդ երկու մեծ տերութիւնները պիտի կընա՞ն առանձին գլուխ հանել այդ գործը, հարցուց Շէֆիզ.

- Այդ երկու մեծ տերութիւնները, պատասխանեց Օրմանեան, մէ'կ քայլ չեն առներ, առանց կանխաւ ապահոված ըլլալու միւս մեծ տերութիւններուն ալ աջակցութիւնը կամ չեզոքութիւնը.

- Այսի՞նքն, հարցուց նախարարը.

- Ի՞նչպէս եղաւ Կրէտէն, շարունակեց Օրմանեան.

Անգլիան Ֆրանսան, Ռուսիան և Իտալիան գործեցին հոն, համերաշխօրէն, իսկ Գերմանիան և Աւստրո, Հունգարիան ձեռնպահ, չեզոք մնացին, այնպէս չէ՞.

- Այո՛, այնպէս է, պատասխանեց մեքենայօրէն նախարարը.

- Ա՛յս է իմ կարծիքս, բաշա՛, յարեց Օրմանեան յաղթական շեշտով մը, եթէ մեր ներքին գաւառներուն մէջ տակաւին գործուին ծանօթ խժոժութիւնները, Եւրոպան պիտի բռնադատուի միջամտել, և անգլիական ու ֆրանսական մեծ դեսպաններուն յատարարութիւնները նո՛յնը հաստատեն- բաշա՛.

- Կը կարծ՞եք թէ ծանուցագիր մը ներկայացնեն, հարցուց Շէֆիզ.

- Ծանուցագիրը, պատասխանեց Օրմանեան, պիտի յետաձգեն առ այժմ, պիտի սպասեն թէ Բ. Դուռը պիտի հաճի՞ անմիջական միջոցներ ձեռք առնել. հակառակ պարագային, միւս մեծ տերութիւններուն ալ հաւանութիւնը պիտի առնեն և այնուհետև ներկայացընեն հաւաքական ծանուցագիր մը.

- Պատրիարք Էֆէնտի, հարցուց դարձեալ Շէֆիզ, դեսպաննե՞րը յայտարարեցին այդպէս, թէ դուք կ'ենթադրէք.

- Ե՛ս կ'ենթադրեմ, բաշա՛, յարեց Օրմանեան, որովհետև, այս անգամ լուրջ ձեռնարկ կը կը խորհինքնել, հաւաքական ծանուցագրով մը պիտի ներկայանան այս անգամ և պիտի պարտադրեն իրենց բացարձակ կամքը...:

- Ըսել է թէ, պատրիարք Էֆէնտի, յարեց նախարարը, դուք ո՛ր է գրաւոր բողոք չէ՛ք ներկայացուցած իրենց.

- Երբե՛ք, պատասխանեց Օրմանեան, իրե՛նք հարցուցած են և ես պատասխանած եմ, բաշա՛:

Ոստիկանության նախարարը կատարած էր իր ստանձնած դերը, հրաժեշտ տուաւ Օրմանեան պատրիարքին:

Զ

Դաշնակցական պատգամաւորները, կը յիշեն ընթերցողները, Գ. Ընդհանուր Ժողովին նիստերը փակուելէ յետոյ, մեկնած էին Պուկարիայէն. հոն կը մնային Վիշապի Պատասխանատու Մարմինի չորս անդամները, Քրիստափոր, Աշոտ, Սաֆօ ու Թորգոմ:

Վիշապի այս չորս ծանօթ անդամները, անկիւն մը նստած, Սօֆիա սրճարանին մէկ անկիւնը, միւս յաճախորդներէն հեռու, խորհրդակցութեան մը մէջ էին:

Չորան ալ դէմքերը լուրջ- մտածկոտ- չորսին ալ աչքերը խարոյկներ էին:

- Աշո՛տ, կ'ըսէր Քրիստափոր, հիմա գուն Եֆիպտոս պիտի երթաս, ընտանեկան գործերդ պիտի կարդագրես և յետայ վերադառնաս պիտի Պօլիս, այնպէ՞ս չէ՞:

- Այնպէս է, կը պատասխանէր Աշոտ, դուն ալ գիտես թէ ընդհանուր Ժողովի կրկնակի ստիպումներուն վրա՛յ է որ համակերպութիւն յայտնեցի, կը խորհիմ թէ շատ դժուար պիտի ըլլայ ինծի համար վերստին Պոլիս մեկնիլ, Ժամհարեանի խնդիրը թարմ է դեռ, ամերիկեան անցագիրս զրօ մը չ'արժէր, քանի որ, գիտես արդէն, հիւպատոսարանը ձանձրացած է, ա՛լ չ'պիտի ուզէ պաշտպանել զիս, հետևաբար, պիտի խնդրէի որ առ այժմ ազատ ձգէք զիս:

- Դա կարելի չէ՛, շեշտեց Քրիստափոր, տիրական նայուած մը շանթելով Աշոտի, ընտրութիւնդ կատարած իրողութիւն մըն է, Ընդհանուր Ժողովին վճիռը պէտք է գործադրուի:

- Աշո՛տ, միջամտեց Սաֆօ, նոյնպէս ռուսահայ մը, այդ հարցը մոռացի՛ր, դուն մեզի անբաժան ընկեր մըն ես, վաղուց կը ճանչեմ քու անձնուիրութիւնդ, նոր հարց մի՛ յարուցաներ:

- Եզիպտոս կ'երթամ, յարեց Աշոտ, ընկերնե՛ր, մի՛ կարծէք թէ կը խուսափիմ կամ կը խրտչիմ, ո՛չ, ինչպէս ըսի, անգամ մը կ'երթամ Եզիպտոս, կ'աշխատիմ գործերս կարգի դնել, յետոյ դիւրին է:

- Այսի՞նքն, հարցուց Քրիստափոր, ի՞նչը դիւրին է, չ'պիտի՞ մտնէք երկիր:

- Պիտի մտնե՛մ, պատասխանեց Աշոտ, քանի որ Վիշապի Պատասխանատու Մարմինի անդամ ընտրուած եմ Ընդհանուր Ժողովին միաձայնութեամբը, պիտի խոնարհիմ անոր կամքին առջև, մանաւանդ, իմ մէջ հզօր ու բարձր կը խօսի պարտականութեան ձայնը- ի՛նչ նշանակութիւն ունի կեանքը:

- Կեցցե՛ս, 'տ ջան, կեցցե՛ս, կրկնեցին երկու ռուսահայ ընկերները:

Աշոտի վերջնական հաւանութիւնը ձեռք բերուած էր, խօսակցութիւնը կը տաքնար տակաւ:

- Քրիստափոր, ըսաւ Աշոտ, մենք Պոլիս պիտի երթանք, ասիկա վճռուած վերջացած է. բայց, գիտէ՞ք արդեօք, ո՞րքան դժուար է Պոլսոյ մուտքը մեզի պէս օսմանեան հպատակներուն համար.

- Այդքան խստութիւն նա՞յ, հարցուց Սաֆօ զարմանքով, որ բնաւ գաղափար մը չունէր Համիտի լրտեսներուն վրայ.

- Խստութի՞ւն... կրկնեց Թորգոմ ժպտելով, Պոլիս գազա՞ծ ես, Սաֆօ՛,

- Ո՛չ...

- Սպասէ՛ ուրեմն, շարունակեց Աշոտ, քեզի պատմեմ, նախ, շոգենաւր քարափին չը մօտեցած, հարիւրաւոր նաւակներ ու մակոյկներ կըսկսին արշաւել ու ծփծփալ ծովին երեսը, քանի՛ մօտենայ շոգենաւր ցամաքին, ա՛յնքան կը բազմապատկուի թիւը նաւակներուն ու մակոյկներուն, որոնք լեցուն են լրտեսներով.

- Ի՞նչ կ'ըսէք, այդքա՞ն, ընդմիջեց Սաֆօ.

- Համբերէ՛ շարունակեց Թորգոմ, Պոլսոյ բոլոր նաւավարները, իսլամ թէ քրիստոնեայ, լրտեսնե՛ր են, լրտեսնե՛ր...

Քրիստափոր ու Սաֆօ ապշահար, սկսան իրարու երես նայիլ:

- Յետո՞յ, պատմէ՛ նայինք, պատմէ՛, կրկնեց Քրիստափոր.

- Շոգենաւր կը՛մտնեն այս նաւավարներու, կը հասկնաք անշուշտ, այս լրտեսներու երամակը, մէ՛կ նայուածքով կը ճանչնան իրենց որսը, կը մօտենան, իրենց մակոյկը կ'առաջարկեն, հազարումէկ կեղծաւոր ու շողոքորթ կերպով, մինչև որ կը յաջողին տիրանալ, օձիքը չեն ձգեր, գոյքերը, իրեզները կը շալկեն, կիջեցնեն իրենց նաւակը, և կը տանին զանի ուղղակի սալօ՛նը...

- Սալօ՞նը, ի՛նչ է սալօնը, հարցուցին երկուքը միասին:

- Քարափին երկայքը, մաքսատուն մը, պատասխանեց Թորգոմ, ուր, ճամբորդը խիստ քննութեան մը կենթարկուի, և, հրաշքներուն մեծագոյնը կատարուած պիտի ըլլայ, եթէ յաջողի ան ազատել օձի՛քը...:

- Օ՛, Թորգո՛մ, ընդմիջեց Քրիստափոր հեզնելով, չըսե՞ս որ Պոլիսը սքանչելի (.՞) դրա՛ խտ մըն է...

- Ապտիւլ Համիտի դրա՛ խտը, ըսաւ Աշոտ, սրտին խորէն հառաչանք մը հանելով. ա՛խ, չէ՛ք գիտեր դուք, չէ՛ք գիտեր ի՛նչ սոսկալի տեղ է...:

- Ինչպէ՞ս պիտի ընենք ուրմեն, հարցուց Սաֆօ, Աշոտին աղերսող ականարկ մը նետելով.

- Ես բան մը կը խորհիմ, ընկերնե՛ր, յարեց Աշոտ.

- Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, կրկնեց Քրիստափոր.

- Ինչպես յիշեցի քիչ առաջ, շարունակեց Աշոտ, օսմանեան հպատակի մը համար, եթէ ո՛չ անկարելի, գոնէ դժուար է բանութիւնը Պոլսոյ մէջ.մենք, Ստամպուլի կազմը չենք կրնար սենեակ բռնել, Ոստիկանութեան անմիջական հսկողութեան ներքն կը գտնուինք այդ կերպով. յարմարգոյն բանակավայրը մեզի համար՝ Բերա՛, է, եւրոպական դեսպանատուններուն և ուրիշ հանրային նման հաստատութիւններուն շուրջը, Բերա. կէս Եւրոպա մը կը համարուի, փաթթոցներէ ու ֆէ սերէ աւելի՝ գլխարկներ կը տեսնես փողոցները. վերջապէս աւելի ապահով տեղ մըն է Բերա.

- Լա՛ւ, ընդմիջեց Քրիստափոր, Բերա թո՛ղ ըլլայ, ի՛նչ խորհած ես, քիչ առաջ կըսէր.

- Այո՛, շարունակեց Աշոտ, բան մը խորհած եմ ըսի, գիտե՞ք ի՛նչ է, նախ ըսեմ թէ՛ դուք, երկու օտար հպատակներ, ձեր ձեռքի անցագիրներով, կընաք, առանց ո՛ն է արգելքի, մեկնիլ Պոլիս, սենեակ մը վարձել, ազատօրէն շրջագայել, մանաւանդ, չէք վիրաւորանք զգար անշուշտ, ձեր դիմագիծէ՛րն ալ նպաստաւոր են, չէ՛ք մատնուիր.

- Ի՛նչպէս, ի՛նչպէս, ընդմիջեցին երկու ռուսահայ ընկերները, վերջին պարբերութիւնները կրկնէ՛, Աշո՛տ.

- Ձեր դիմագիծերն ալ նպաստաւոր են ըսի, չէ՛ք մատնուիր, պատասխանեց Աշոտ, մի՛ խնդաք, տեսնողները ձեզ օտարականնէ՛ր պիտի կարծեն, Հայու չէ՛ք նմանիր ըսել կոյզեմ.

Քրիստափոր խնդաց քրքրջաձայն, իսկ Սաֆօյի ճակատը կնճռատեցաւ:

- Ընկերնէ՛ր, շարունակեց Աշոտ, թոյլ տուէ՛ք որ վերջացնեմ. ես կար խորհիմ թէ մեզի համար անհրաժեշտ է ունենալ երկու կիներ, բնականաբար օտարահպատակ, որոնք առանձին տուն մը կրնան վարձել և մեզ իրենցքով առնել բանսիօնէր.

- Հանճարե՛ղ գիւտ, բացականչեց Քրիստափոր, այդ յղացումը կը գնահատեմ ես, և այդ երկու կիները պատրաստ են, երկո՛ւքն ալ ինէ պահանջեցէ՛ք: Դուն ի՞նչ կըսես, Սաֆօ՛, ի՞նչպէս գտար.

- Աշոտ գէշ բան չի՛ խորհիր, յարեց Սաֆօ հեշտախտաւորի ժպիտով մը, իր ընկերները կը հոգնա՛յ.

- Միշտ գէշ միտքի կը տանիս արդէն, Սաֆօ՛, կշտամբեց Աշոտ.

- Ծուռ մի՛ մեկներ անմեղ խօսքերս, առարկեց Սաֆօ կնոջ ընկերութիւնը, մասնաւորապէս բռնապետական լուծի տակ հեծող երկիրներու մէջ, ուր մէն մի քայլիդ, լրտեսներէ կը հալածուիս, շանթարգելի դեր մը կը կատարէ. կինը կեանքիդ անհրաժեշտ ընկերուհին է, պահապան հրէշտալ մը,

- Բանաստեղծութիւնը մեկդի՛, Սաֆօ՛, ընդմիջեց Քրիստափոր, այդ տեսակետով չէ՛ որ ես կը գնահատեմ Աշոտի գիւտը. կինը, դարերէ ի վեր հաստատուած ճշմարտութիւն մըն է, ամէն նոր կրօնի, նոր վարդապետութեան ջերմեռանդ յարող մըն է, և հակամէտ արիւթիւններու, հերոսութիւններու, որոնք անձնագոհութիւն կը պահանջեն, չէ՞.

- Այդ տեսակետը կա՛յ ու կայ, հաստատեց Սաֆօ, մանաւանդ եթէ մայր մըն է ան կամ...սիրուհի մը, առածային է.

- Գիտէ՞ք ինչո՛ւ, շարունակեց Քրիստափոր, կինը զգացումով կ'ապրի միայն ու կ'իրքո՛ւ կը գործէ. ամէն շարժում վայրկենական է անոր մէջ, ներշնչումը կը մղէ զինք ամենէն վտանգալի արկածներու, հետևաբար, Աշոտի մատնանշած պարագան միշտ ունենալով աչքի առջև, սենեակ վարձելու, միասին բնակելու մասին, պիտի աւելցնեմ թէ՛ մեր ապագայ ձեռնարկներուն մէջ, ո՛չ նուազ կարևոր, և թերևս հաւասար չափով գործօն դեր մը պիտի ունենան կիները.

- Ընկերէ՛ր, ընդմիջեց Աշոտ, այդ պարագան ձգեցէք հիմա, ապագան պիտի ցոյց տայ.

- Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, կրկնեց Սաֆօ, մեր ձեռնարկներուն մէջ կնոջ մասնակցութեան խնդիրը պէտք է ենթարկուի լուրջ քննութեան, խորունկ ուսումնասիրութեան կարօտ խնդիր մըն է ստիկա, իմ կարծիքովս, կնոջ ներկայութիւնը մէ՛կ օգուտ միայն ունի, կ'ընդունիմ.

- Ի՞նչ օգուտ ունի, հարցուց Քրիստափոր.

- Լրտեսներուն կասկածները կը չեղեցնէ, շարունակեց Սաֆօ, իմացած եմ թէ Պոլիս ընտանիքները հալածանքի ենթակա չեն ըլլար, այնպէս չէ՞, Աշո՛տ.

- Է՛հ, եսաւ Աշոտ, ժամանակին այնպէս էր, բայց, Պանք Օթօմանի Դէպքէն ասդին, կիներ՝ ըն ալ կը հետապնդուին, սեռի խտիր չիկայ, հիմա Պոլիս, միայն օտարուհիները գերծ են հետապնդումներէ, գոնէ արտաքուստ.

- Ուրեմն, առարկեց Սաֆօ, ինչի՞՞ պիտի ծառայեն այդ կիները, եթէ իրենք ալ ենթակա պիտի ըլլան հետապնդումի.

- Սաֆօ՛, ըսայ Աշոտ, ինչո՞ւ չէք հասկանար, ես ըսի թէ՛ երկու կիներու պէտք ունինք մենք, օտարահպատակ կիներու, որոնք շուքին տակ պիտի կրնանք ազատօրէն գործել, գոնէ մեզ ալ այդ կիներուն պէս օտարականներ պիտի կարծեն:

- Դա հասկանալի է, յարեց Քրիստափոր, երբ մենք Պոլիս այդ օտարուհիներուն հետ բնակինք ու ման գանք, մէկ ընտանիք պիտի կարծուինք, և, հետևապէս, ինչպէս կ'ըսէ Աշոտ, այդ կիներուն օգտակարութիւնը մեծ է:

- Քանի որ այդպէս է, ընդմիջեց Սաֆօ, օրիորդ մը կը ճանչնամ ես, շատ անձնուէր, թէ և քիչ մը ջղային, կը յուսամ թէ կ'ընկերանայ մեզի.

- Հոգ չէ՛, օրիո՛րդ թող ըլլայ, ըսաւ Աշոտ, բաւական է որ օտարուհի մըն է, չէ՞:

- Այո՛, շարունակեց Սաֆօ, Թիֆլիզէն Հայուհի մըն է, մեզի պէս ռուսահպատակ.

- Ես ալ կ'ընամ տրամադրել, յարեց Քրիստափոր, ուրիշ եկու կիներ, ինչպէս յիշեցի քիչ առաջ.

- Երեքը կը բաւէ արդէն, ըսաւ Աշոտ.

- Ուրեմն այս խնդիրը փակուած կը նկարենք, չէ՞, ըսաւ Քրիստափոր, ուրիշ ի՞նչ կարևոր խնդիր կայ.

- Այո՛, կա՛յ, պատասխանեց Աշոտ, եթէ Պիլիս լուրջ ձեռնարկ մը պիտի ընենք, միայն մենք, Պատասխանատու Մարմինի չորս անդամները, չենք բաւեր, ուրիշ օժանդակ ընկերներու ել պէտք պիտի ունենանք.

Այդ ընկերները պատրաստ են արդէն, ըսւ Քրիստափոր.

-Որո՞նք են, հարցուց Աշոտ.

ՆԿԱՐ - Մանիսայի Արամ (Վիշապի Օժանդակներէն)

- Սա մեր չորս տղաքնե՛րը, պատասխանեց Քրիստափոր.

- Այո՛, այո՛, կրկնեց Աշոտ, աղէ՛կ ըսիք, մեր չորս օժանդակ ընկերները, չորսն ալ ընտիր տղաքներ,- Լեւոն Կիւլիմեանը Կարօն, Գրիգոր Սայեճանը և Լեւին Քրիսթեանը. Զարեհն ալ չը մոռնաք.

- Ուրեմն, յարեց Սաֆօ, օժանդակ ընկերներուն գործն ալ կարգադրուած է, չէ՞.

- Ա՛խ, հառաչեց Աշոտ, ուրիշ տփհայ մըն ալ կը ճանչնամ, եթէ ձեռքս անցնե՛ր...

- Ո՞րը, ո՞րը, հարցուցին երկու Ռուսահայերը.

- Դուք չէ՛ք ճանչնար, շարունակեց Աստոտ, սքանչելի՛ տղայ մըն է, Մանիսացի Արամը.

- Այդ անունը լսա՛ծ եմ ես, ընմիջեց Քրիստափոր, իր յիշատակները պրպտելու ձեռով մը.

- Պէտք է ճանչնա՛ք, շարունակեց Աշոտ, կը յիշե՛ք, Իզմիրի մէջ թէնորական գործողութիւնը մը կատարած էր, բայց չէր ձերբակալուած. յետոյ, Կիլիկիոյ Պատասխանատու Մարմինին կողմէն Պերութ ղրկուած էր, երկիր անցնելու համար. սրտոտ, ազնիւ, խիզախ երիտասա՛րս մը, ինչպէս որ է, Պերութի մէջ կը ձերբակալուի, իբրև կասկածելի, և հսկողութեան տակ շոգենաւ կը դրուի Իզմիրի համար, սակայն ճարպիկ աղայ, կը յաջողի ճամբան փախչիլ և ՅՈւՆԱՍՏԱՆ կ'ելլէ, ես այդ տղուն վրայ մեծ հաւատք ունում.

- Աղէ՛կ, աղէ՛կ, կրկնեց Քրիստափոր, կ'աշխատինք օգտուիլ այդ կարգի ուժերէ:

Սրժարանին մէջ յաճախորդները կ'աւելնային, այնպէս որ մթնոլորտը կ'ապականուէր մարդկային շունչերէն ու ծխախոտի մուխերէն:

Չորս Դաշանկցական գործիչները դուրս ելան գացին ուղղակի իրենց ծանօթ ճաշարանը, միասին ընթրելու:

Հետեւեալ օրը, չորսն ալ պիտի մեկնէին Պուլկարիայէն:

Սեղանին վրայ խիստ սիրալիր մաղթանքներ փոխանակուեցան ծրագրուած նոր ձեռնարկներու յաջողութեան համար: Քրիստափոր Միքայէլեան, Պալքաններու ընտիր գինիով

լեցուն բաժակը ձեռքը. պարպեց Հայ Յեղափոխական Դաշնակցության յարատևության և իր հետապնդած վեհ ու փրկարար գաղափարներուն փառաւոր յաղթանակին համար:

Նոյնը կրկնեցին միւս երեք ընկերները: Այդ իրիկունը, սովորականէն աւելի եկրար տեսեց ընթրիքը, դէմքերը զուարթ, կատակներ շատ ըրին:

- Ընկերէ՛ր, ընդմիջեց Աշոտ, այդ պարագան ձգեցէք հիմա, ապագան պիտի ցոյց տայ.

- Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, կրկնեց Սաֆօ, մեր ձեռնարկներուն մէջ կնոջ մասնակցութեան խնդիրը պէտք է ենթարկուի լուրջ քննութեան, խորունկ ուսումնասիրութեան կարօտ խնդիր մըն է ստիկա, իմ կարծիքովս, կնոջ ներկայութիւնը մէ՛կ օգուտ միայն ունի, կ'ընդունիմ.

- Ի՞նչ օգուտ ունի, հարցուց Քրիստափոր.

- Լրտեսներուն կասկածները կը չեղեցնէ, շարունակեց Սաֆօ, իմացած եմ թէ Պոլիս ընտանիքները հալածանքի ենթակայ չեն ըլլար, այնպէս չէ՞, Աշո՛տ.

- Է՛հ, ելսաւ Աշոտ, ժամանակին այնպէս էր, բայց, Պանք Օթօմանի Դէպքէն ասդին, կիներ՝ րն ալ կը հետապնդուին, սեռի խտիր չիկայ, հիմա Պոլիս, միայն օտարուհիները զերծ են հետապնդումներէ, գոնէ արտաքուստ.

- Ուրեմն, առարկեց Սաֆօ, ինչի՞ պիտի ծառայեն այդ կիները, եթէ իրենք ալ ենթակայ պիտի ըլլան հետապնդումի.

- Սաֆօ՛, ըսայ Աշոտ, ինչո՞ւ չէք հասկանար, ես ըսի թէ՝ երկու կիներու պէտք ունինք մենք, օտարահպատակ կիներու, որոնք շուքին տակ պիտի կրնանք ազատօրէն գործել, գոնէ մեզ ալ այդ կիներուն պէս օտարականներ պիտի կարծեն:

- Դա հասկանալի է, յարեց Քրիստափոր, երբ մենք Պոլիս այդ օտարուհիներուն հետ բնակինք ու ման գանք, մէկ ընտանիք պիտի կարծուինք, և, հետևապէս, ինչպէս կ'ըսէ Աշոտ-այդ կիներուն օգտակարութիւնը մեծ է:

- Քանի որ այդպէս է, ընդմիջեց Սաֆօ, օրիորդ մը կը ճանչնամ ես, շատ անձնուէր, թէ և քիչ մը ջղային, կը յուսամ թէ կ'ընկերանայ մեզի.

- Հոգ չէ՛, օրիո՛րդ թող ըլլայ, ըսաւ Աշոտ, բաւական է որ օտարուհի մըն է, չէ՞:

- Այո՛, շարունակեց Սաֆօ, Թիֆլիզէն Հայուհի մըն է, մեզի պէս ռուսահպատակ.

- Ես ալ կ'ընամ տրամադրել, յարեց Քրիստափոր, ուրիշ եկու կիներ, ինչպէս յիշեցի քիչ առաջ.

- Երեքը կը բաւէ արդէն, ըսաւ Աշոտ.

- Ուրեմն այս խնդիրը փակուած կը նկարենք, չէ՞, ըսաւ Քրիստափոր, ուրիշ ի՞նչ կարևոր խնդիր կայ.

- Այո՛, կա՛յ, պատասխանեց Աշոտ, եթե Պիլիս լուրջ ձեռնարկ մը պիտի ընենք, միայն մենք, Պատասխանատու Մարմինի չորս անդամները, չենք բաւեր, ուրիշ օժանդակ ընկերներու ել պէտք պիտի ունենանք.

Այդ ընկերները պատրաստ են արդէն, ըսւ. Քրիստափոր.

-Որո՞նք են, հարցուց Աշոտ.

ՆԿԱՐ - Մանիսայի Արամ (Վիշապի Օժանդակներէն)

- Սա մեր չորս տղաքնե՛րը, պատասխանեց Քրիստափոր.

- Այո՛, այո՛, կրկնեց Աշոտ, աղէ՛կ ըսիք, մեր չորս օժանդակ ընկերները, չորսն ալ ընտիր տղաքներ,- Լեւոն Կիւլիւմեանը Կարօն, Գրիգոր Սայեծանը և Լեւին Քրիսքեանը. Զարեհն ալ չը մոռնաք.

- Ուրեմն, յարեց Սաֆօ, օժանդակ ընկերներուն գործն ալ կարգադրուած է, չէ՞.

- Ա՛խ, հառաչեց Աշոտ, ուրիշ տփհայ մըն ալ կը ճանչնամ, եթե ձեռքս անցնե՛ր...

- Ո՞րը, ո՞րը, հարցուցին երկու Ռուսահայերը.

- Դուք չե՛ք ճանչնար, շարունակեց Ասոտ, սքանչելի՛ տղայ մըն է, Մանիսացի Արամը.

- Այդ անունը լսա՛ծ եմ ես, ընմիջեց Քրիստափոր, իր յիշատակները պրպտելու ձեռով մը.

- Պէտք է ճանչնա՛ք, շարունակեց Աշոտ, կը յիշե՛ք, Իզմիրի մէջ թէոքական գործողութիւնը մը կատարած էր, բայց չէր ձերբակալուած. յետոյ, Կիլիկիոյ Պատասխանատու Մարմինին կողմէն Պերութ ղրկուած էր, երկիր անցնելու համար. սրտոտ, ազնիւ, խիզախ երիտասա՛րս մը, ինչպէս որ է, Պերութի մէջ կը ձերբակալուի, իբրև կասկածելի, և հսկողութեան տակ շոգենաւ կը դրուի Իզմիրի համար, սակայն ճարպիկ աղայ, կը յաջողի ճամբան փախչիլ և ՅՈՒՆԱՍՏԱՆ կ'ելլէ, ես այդ տղուն վրայ մեծ հաւատք ոննմ.

- Աղէ՛կ, աղէ՛կ, կրկնեց Քրիստափոր, կ'աշխատինք օգտուիլ այդ կարգի ուժերէ:

Սրժարանին մէջ յաճախորդները կ'աւելնային, այնպէս որ մթնոլորտը կ'ապականուէր մարդկային շունչերէն ու ծխախոտի մուխերէն:

Չորս Դաշակցական գործիչները դուրս ելան գացին ուղղակի իրենց ծանօթ ճաշարանը, միասին ընթրելու:

Հետեւեալ օրը, չորսն ալ պիտի մեկնէին Պուլկարիայէն:

Մեղանին վրայ խիստ սիրալիր մաղթանքներ փոխանակուեցան ծրագրուած նոր ձեռնարկներու յաջողութեան համար: Քրիստափոր Միքայէլեան, Պալքաններու ընտիր գինիով լեցուն բաժակը ձեռքը. պարպեց Հայ Յեղափոխական Դաշակցութեան յարատեւութեան և իր հետապնդած վեհ ու փրկարար գաղափարներուն փառաւոր յաղթանակին համար:

Նոյնը կրկնեցին միւս երեք ընկերները: Այդ իրիկունը, սովորականէն աւելի եկրար տեւեց ընթրիքը, դէմքերը գուարթ, կատակներ շատ ըրին:

Է

Վիշապի Պատասխանատու Մարմնի երեք անդամները- Քրիստափոր- Աշոտ ու Սաֆո- մեկնած էին արդէն Պուլկարիայէն, Թորգոմը կը մնար դեռ:

Քրիստափոր Բարիդ անցած էր՝ առաջիկայ գործողութիւններուն հարկաւոր նիւթերը գնելու համար. Սաֆո Կովկաս մեկնած էր, իսկ Աշոտ Եգիպտոս վերդարձած էր, իր ընտանիքին քով:

Աշոտ, շարունակ երկու ամիս գործ մը փնտռեց, բայց չը յաջողեցաւ գտնել և է զբաղում, որովհետև տագնապը սոսկալի էր Եգիպտոսի մէջ, հրապարակի վրայ սնանկութիւնները կը յաջողէին որարու, սակարանին մէջ մէկէ աւելի շահադէտներ, մէկ բոպէի մէջ քանդուած, կաթուածահար կամ յանկարծամահ եղած, հիւանդանոց կամ տուն կը փոխադուէին, այնքան յաճախադէպ էին այս կարգի ցաւալի միջադէպերը:

Ճարահատած, Աշոտ հրաժարականը դրկեց Ժընէվ, Քրիստափորի, ցաւ յայտնելով թէ՝ իր տնտեսական դըրութիւնը միշտ արգելք պիտի ըլլար իրեն:

Քրիստափոր անմիջապէս նամակ մը հասցնելով Աշոտի, բացարձակապէս մերժեց այս վերջինին հրաժարականը, կոչում ընելով իր հելլենասիրութեան և յեղափոխութեան հանդէպ տաժած մաքուր զգացումներուն, խոստանալով, միևնոյն ժամանակ, իր ընտանեկան աննախանձելի դրութեան դարման մը գտնել մօտ օրէն:

Այդ նամակը սակայն անբաւական էր համոզելու Աշոտը, որուն վիճակը տակաւ կը ծանրանար:

Երկրորդեց իր հրաժարականը, մէկիկ մէկիկ թրւելով զօրաւոր պատճառները, որոնք կը հարկադրէին, կը բռնադատէին տալու այս որոշումը, որ իրեն համար վերջնական էր և անդառնալի:

Այդ երկրորդ հրաժարականին վրայ ձայն մը չելաւ, Աշոտի խիղճը հանդարտ էր, ընդունուած էր հրաճարականը Վիշապի Պատասխանատու Մարմնի անդամկցութենէն, կը խորհէր ինքնիրեն:

Օր մը, մայիսեան պայծառ ու գեղեցիկ օրերէն, Աշոտ մինակը նաստած էր Մէնշիյէ Գաֆֆէ Էմբերիալի պարտեզին մէջ:

Այդ օրը թախծոտ էր Աշոտ գրեթե յուսահատ, չէր կրցած տակաւին գործ մը, զբաղում մը գտնել, հակառակ որ իր արհեստը, որմանկարչութիւն, այնքան բանուկ էր Եգիպտոսի մէջ, ուր ամէն օր նոր շէնքեր կը կառուցուէին ու կը գեղազարգուէր քաղաքը:

Կառսօնները կը վազվզէին եմբերիալի պարտեզին մէջ, Աշոտ սուռճու նարկիլէ մը յանձնարարեց:

Կառսօնը բերաւ իշխանական նարկիլէն, կոթը սաթէ, երկայն մարփուչով մը, ինչպէս նաև գաւաթ մը սուրճ:

Հազիւ սկսած էր քանի մը շունչ քաշել, և դէռ սուրճին գաւաթը շրթունքին չէր մօտեցուցած, երբ, հայ ցրուիչներէն Լեւոն Կիւրեղեան նամակատան փողոցէն ողղելով դէպի պարտեզը, մօտեցաւ Աշոտի և իմաց տուաւ թէ՝ յանձնարարեալ նամակ մը հասած է իրեն բօսթ րէսդանդ:

Աշոտ այնպէս ձգեց նարկիլէն որ սուրճը, և վազեց դէպի նամակատունը, որ մօտ էր արդէն Մենշիյէի:

Նամակատան պաշտօնեան Աշոտը կը ճանչնար, անմիջապէս իրեն յանձնեց նամակը: Աշոտ զննեց նախ նամակածրարին կնիքը, տեսաւ, Ժընէվէն էր, աճապարանքով բացաւ և ճամբան քաղելով, դանդաղաքայլ, վերադարձաւ Մենշիյէ, սրճարանին պարտեզը, ուր նարկիլէն ու սուրճը դէռ կը կենային:

Աշոտի էութեան մէջ վայրկենական յեղաշրջում մը գործեց այս նամակը, զոր նոյնութեամբ կարտագրենքիս.-

ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

12 Մայիս 904- Ժընէւ

Աշոտ Բագրատունուն

Աղեքսանդրիա

Սիրելի՛ Աշոտ,

Ստացայ նամակդ և շատ ցաւեցի Վիշապի գործից հրաժարելուդ առթիւ: Սպասում էի Մարտիրոսից ուրախառիթ լուրեր, բայց երկու օր առաջ ստացւած նրա նամակում, զժբաղդաբար, ոչինչ չգտայ քո նիւթականի վերաբերմամբ: Ի նկատի ունենալով սակայն գործի պահանջը, ես վճռեցի հետեւեալը.-

<< 1. Գրել անմիջապէս Մարտիրոսին, որ դիմէ իսկոյն մեր կողմից, Կարմիր Խաչի Կանանց ընկերութեան և աշխատի հետը վերցնել ի՛նչքան կարող է և պարտաւորեցնի տարւալ ընթացքում երկու անգամ եւս գոնէ երկու հարիւրական ռուբլի մեզ փոխադրել:

2. Առաջարկել քեզ, իմ և Մարտիրոսի պատասխանատուութեան տակ, վերցնել իսկոյն այդ տեղ բժիշկ Բաշաեանեց 2000 ֆրանգ, մէկ մասը պարտքի և միւս մասը ընտանիքիդ թողնելով, ինքդ, առանց նիւթականի մասին երկար մտածելու, ճանապարհուես դէպի Վիշապ:

<< Այս մասին ես խնդրել եմ մեր Բիւրօյից, իր կողմից նամակ գրել Բաշաեանին և առաջարկել նրան որ, եթէ Աշոտ Բագրատունին, ընկեր Էլլէնի նամակի համաձայն, իրանից դրամ ուզի, անմիջապէս վճարի 2000 ֆրանգը:

<< Այդ նամակը կը գրուի հէնց այսօր և դու կարող ես ուզած օրդ վերցնել դրամը: Կը լրացնենք ես և Մարտիրոս այդ գումարը, թէ ո՛չ, դա քեզ չպիտի վերաբերի: Գումարը մտցնելու է Բիւրօյի կամ Վիշապի հիշիւներին մէջ իբրև պարտք իմ և Մարտիրոսի վրայ:

<< Դոռ գիտես արդէն որ երկիրը կրուի մէջ է և ժամանակը չէ պսասում, գիտես նաև որ մեր գործը երկար տերիւների գործ չէ և ամենաշատը կարող է տեւել մինչև ձմեռուայ վերջը: Եկուր ուրեմն մի՛ մտածեր. եթէ ողջ դուրս եկանք գործից- ժամանակ կ'ունենաք ընտանիքներիս վրայ մտածելու, իսկ եթէ այն տեղ մնացինք, միևնոյնն է, երկու չէ երեք տարւայ ապահովութիւնն էլ մի առանձին բան չէ՝ ընտանիքդ համար. ահա՛ իմ խորհուրդը, որ յուսամ չպիտի արհամարհես:

<< Մարտիրոսի նամակում կային տեղեկութիւններ Յօնանի և Նիկօլի մասին: Նիկօլը պատրաստում է արդէն Սասուն գնալու, իսկ Յօնանը չէ ուզում կնոջ հետ

(1) Ակնարկութիւն Անդրանիկի կոիւներուն- Սասնոյ շրջաններուն մէջ.

Օ. Հ.

գալ և ապահովութիւն էր ուզում նրա համար: Մարտիրոսը գրում է և ես էլ համաձայն եմ նրան որ, այդ պայմաններով մենք նրան չենք կարող հրաւիրել, հետևաբար մնում ենք չորս հոգի, և քու հրաժարականով այդ չորսը պիտի իջնի երեքի ու Մարմինը պիտի թուլանայ. այս հանգամանքը ևս ի նկատի պիտի առնես:

<<Քրիստի մասին գրեցի Թորգոմին որ միանգամ ընդ միշտ հասկացնի այդ երիտասարդին իր դերի սահմանափակ բաւարարութիւնը, և եթէ չի՛ ուզում նա բաւականանալ այդ ֆերով, թո՛ղ անկեղծութեամբ հրաժաւի մեզ գործակից լինելուց, տեսնենք վերջը ի՛նչ կը լինի:

<< Փոխադրութիւնները առաջ են գնում երկու տեղի համար էլ: Մարթինը համաձայնեց Ոսկեհանք գնալու. ինձնից առաջ, նա այն տեղ կը մտնի, գտայ գիծեր, թէ՛ մարդ փոխադրելու և թէ՛ ապրանքի համար նաեւ Ֆրանսայից: Դու կարող ես Բիրէայից նստել նաւ և Վիշապ մտնել, առանց ո՛ր և է օգնութեան ներսից՝ ձեղ կը հանեն քաղաք:

<< Նամակս կարդալուց և Բաշաեանին ցոյց տալուց յետոյ (դրամը ստանալու համար) այրիբ՛ր, ոչնչացրո՛ւ:

<< Կօպիան ես այս տեղ վերցնեմ եմ, եթէ հատկաւորի երբ և իցէ (դրամական խնդրի առիթով), միշտ կարող ես ուզել Բիւրօյից սրա պատճէնը:

Սպասելով համաձայնութեանդ, և ընկերական համբոյրներով:

Մնամ քո

ԷԼԼԷՆ

Այս նամակը, ինչպես ըսինք, ցնցեց, յեզաշրջեց տառապող յեղափոխականին հոգեւամ գրութիւնը, հոն, Մէնշիեի ծառերուն շուքը նստած, կը սկսէր վայելէյ մայիսի հեշտանքները: Նոյն պահուն, պարտէզը, որ կէս ժամ առաջ դժոխք մը կը թուէր իր յուսահատ աշքերուն, կարծես թէ կը ժպտէր իրեն. իրերը, տեսարանները դիւթիչ էին աւելի համլքոտ, կեանքը շատկ քաղցրացաւ՝, Աշոտ ինքզինք յանկարծ կերպարանափոխւած գտաւ. իր կեանքը պիտի վերանորոգուէր և իր ներքին բնագոյներուն ու ձգումներուն դդեմ ո՛չ մէկ արգելք, ո՛չ մէկ պատուար պիտի գոյութիւն ունենար այնուհետեւ:

Նարկիլէն քաշեց վերջացուց, կառսօնը կանչեց, վրճարեց ու մեկնեցաւ Աշոտ, գնաց ուղղակի Աթթարինի կողմը, ուր իր ընտանիքով կը բնակէր Տոգթ, Կարապետ Խան Բաշաեան, Պողոտային վրայ նայող կոկիկ տունի մը մէջ:

Աշոտ ներս մտաւ և ընդունեցաւ Տիկին Վերգինէ Կ. Բաշաեանէն, բժիշկին բացակայութեանը:

Տիկին Վերգինէ կը համակրէր Աշոտի, սկսաւ խօսկցիկ ասոր հետ Սասունի կոիւներուն վրայ, կը գովէր Անդրանիկի հերոսային արարքները:

Եւ ահա՛ վարէն դուռը զարնուեցաւ, բժիշկ խանը կը վերադառնար:

Վեր ելաւ, Աշոտը տեսաւ և գոհ մնաց, շատ կը սիրէր զանի:

Տեսակցութիւնը շատ սիրալիր եղաւ, Աշոտ, առանց սեթեւեթի, առանց յառաջաբանի, պարզեց իր այցելութեան շարժառիթը, և Քրիստափոր Միքայէլեանի նամակը գրպանէն հանելով, երկնցուց զայն Տօգթ. բաշայանին:

Այս վերջինը, նամակը ծայրէ ծայր քաղելէ յետոյ, դարձաւ ըսաւ.

- Աշո՛տ, պատրա՛ստ է գումարը, ե՞րբ պիտի մեկնիք.

- Քանի մը մանր մունր գործեր ունիմ, պիտի կարգադրեմ, և յետոյ պիտի մեկնիմ, արդէն սպասելու ժամանակ չը կայ:

- Շա՛տ լաւ, ըսաւ Տօգթօր խանը, մէկ կողմէ բանալով իր գրասեղանի գգրոցը:

Երկու հազար ֆրանգի գումարը վճարեց Աշոտի, մաս մը հնչուն ոսկի, մաս մըն ալ դրամատոմս:

Աշոտ, մաս մը հնչուն ոսկի, մաս մըն ալ դրամատոմս:

Աշոտ գրեթէ ժամ մը նստաւ բժիշկին մօտ, և յետոյ վերադարձաւ իր տունը:

Տնական պաարաքեր ունէր դիգուած, հազարագործի, մսագործի, նպարավաճառի, տունի վարձք, եւն, նոյնպէս, իր անգործութեան ամիսներուն մէջ, պարտաւորւած էր փոխառութիւններ ընել քանի մը բարեկամներէ, բոլոր այս պարտքերը մաքրեց, առանց մէկ սանդիմ ձգելու: Պարտքերէն թեթեւցած, գումար մըն ալ զարտեց իր ընտանիքին համար, որպէս զի չի տառապին իր բախցակայութեան միջոցին:

Այլաէս, ամէն կարգադրութիւնները վերջացուցած, հետեւեալ օրը պիտի մեկնէր դէպի Յունաստան, և անկէ Պոլիս:

Ը

Բիրէայի մաւամատոյցը տենդոտ գործունէութիւն մը կը տիրէր, հարիւրներով մեծ ու փոքր մակոյկներ զիրար կը խաչաձեւէին, տարմովին խուժելով դէպի շոգենաւ մը որ նոր կը հասներ ու կը խարսխէր ծովին բացերը:

Աղէքսանդրիայէն մեկնած էր այդ շոգենաւը:

Ժիր նաւավարները գործի վրայ էին, շոգենաւին սանդուխը կը վերելակէին մագլցի և իրարու ձեռքէ կը յափշտակէին ճամբորդներուն գոյքերը: Կէս ժամուան մէջ պարպուեցաւ շոգենաւը ճամբորդներէն, որոնք, խառն ի խառն, իրենց գոյքերուն հետ, մակոյկներուն մէջ նետուած, կ'աճապարէին ելլել ցամաք:

Այդ ժամբորդներուն մէջ կը նշմարուէր թուիս դէմքով, արտայայտիչ աչքերով, երեսունհինգը լրացուցած, նուրբ հասակով մարդ մը, որ քանի մը փոքր սնտուկներէ բաղկացած իր գոյքերով, առանձին նստած էր մակոյկի մը մէջ, որ արագօրէն կը սահէր խաղաղ ու կապոյտ ծովուէ վրայէն:

Քարափը կը սպասէին մէկ քանի երիտասարդներ, որոնք մակոյկին մէջէն առին ճամբորդը, և առաջնորդեցին զանի մօտիկ հիւրանոց մը:

Աւելորդ է ըսել, այդ խորհրդաւոր դէմքով մարդը ծանօթ է արդէն ընթերցողներուն, դաշնակցական անխոնջ գործիչը, նոյնինքն Աշոտ Բագրատունին, Վիշապի Պատասխանատու Մարմնի անդամներէն, որ մայիսի 23ին Արեքսանդրիայէն մեկնած էր, Քրիստափոր Միքայէլեանի հրահանգին համաձայն, և Բիրէա կուգար, ասկէ, ապահով միջոցով մը Պոլիս մտելու համար:

Արդէն- իրմէ առաջ ուրիշ օժանդակ ընկերներ փութացած էին Յունաստան գալ: Ասոնց մէջ կը գտնուէր Մարթինը և Մանկալճի Զարեհը, ինցպէս նաեւ ուրիշ մէկ քանի յեղափոխականներ, որոնք յետոյ, յաջորդաբար պիտի երթային Պոլիս, նախապէս իրարու ժամադրութիւն տուած ըլլալով Յունաստանի այս ազատ նաւահանգիստը:

Աշոտ կ'աճապարէր, օր առաջ պէտք էր Պոլիս մտնէր, ուր իրմէ առաջ վերադարձած էր Թորգոմ, Վիշապի Պատասխանատու Մարմնի անդամներէն- որուն հետ, ինք Աշոտ, Սօֆիայէն մինչեւ Վառնա ուղեկից եղած էր:

Գիշերը միասին անցուց Աշոտ իր ընկերներուն հետ- որոնցմէ կարևոր տեղեկութիւններ քաղեց Պոլսոյ վրայ:

Հետևեալ օրը, ընկերներէն բաժնուեցաւ, և գնաց գտաւ իր վաղեմի մէկ բարեկամը, որ Բիրէա կը բնակէր և տեսակ մը գործակալութիւն կ'ընէր փախստական ճամբորդելու համար-
որոնք կուգէին եկիր մտնել, Պոլիս, Իզմիր և ուրիշ տեղեր:

Այս բարեկամը շատ կը սիրէր Աշոտը: Գացին միասին, քարափի սրճարաններէն
մէկուն մէջ առանձնացան և մտերմական խօսակցութեան մը սկսան:

- Աշո՛տ, ըսաւ այս բարեկամը, կը տեսնեմ որ կ'աճապարես, կը փափագիս ժամ առաջ
մեկնիլ, չէ՞:

- Այո՛, սիրելի՛ս, յարեց Աշոտ, ուշացած եմ արդէն պետք է շուտով հասնիմ հոն.

- Շա՛ւ լաւ, ըսաւ բարեկամը, քանի որ այդպէս է, կը ջանամ ճար մը գտնել:

- Շատ գոհ կ'ըլլամ, յարեց Աշոտ, դուն այս երկրի գայլերէն ես. գիտեմ, խորիէ՛,
վստահելի նաւ մը չե՞ս ճանչնար:

Բարեկամը ձեռքը ճակտին տարաւ և քիչ մը խորիելէ յետոյ.

Աշո՛տ, ըսաւ, ապահով, խիստ յարմար նաւ մը պիտի գայ, կ'ուզե՞ս երթալ անով.

- Ինչ կ'ընես, սիրելի՛ս ըսաւ Աշոտ, մե՛կ վայրկեան չեմ կ'ընար սպասել հոս, անհրաժեշտ
է ներկայութիւնս Պոլիս, մանաւանդ այս միջոցիս.

- Շա՛տ շատ երկու օր կ'ըսպասես, շարունակեց բարեկամը, այդ նաւը կը նստիս.

- Ո՞ր նաւը, հարցուց Աշոտ հետաքրքրի շարժումով մը.

- Ֆրանսական զրահաւոր՝ըր, յարեց բարեկամը.

- Զրահաւոր՝ըր, հարցուց Աշոտ, ինե՞նդ ես, ի՞նչ կ'ընես, զրահաւորի մէջ կ'ընդունի՞՞ծ զիս.

- Կ'ընդունին, պատասխանեց բարեկամը.

- Չըսե՞ս, ի՛նչ տեսակ զրահաւոր է, հարցուց Աշոտ տենդոտ շարժումով մը.

- Վօթո՛ւրը, Վօթո՛ւրը, պատասխանեց բարեկամը,

- Վօթո՞ւրը, կրկնեց Աշոտ,

- Այո՛, շարունակեց բարեկամը, Պոլսոյ ֆրանսական դեսպանատան զրահաւոր
պահականա՛ւր...:

Աշոտի դէմքը շողաց, չէր հաւատար թէ դեսպանատան պահականաւի մը
հրամանատարը պիտի ընդունէր զինք իր նաւին մէջ.

- Կարելի՞ քան է, ըսաւ վարանոտ դէմքով մը.

- Ինչո՞ւդ պետք, յարեց բարեկամը վստահ շեշտով մը, ես կը յաջողցնեմ, անհոգ եղի՛ր,

- Ի՞նչպէս պիտի յաջողացնես...

- Գիտե՞ս ո՞վ է հրամանատարը, հարցուց բարեկամը,
- Ո՞վ է...
- Ֆրանսացի գրական մեծագույն փառքերէն...
- Բիէռ Լօթի՞ն, ընմիջեց Աշոտ, յանկարծ ոգևորուած,
- Այո՛, նոյնի՛նքը. Բիէռ Լօթին, իմ բարեկամս, կրկնեց Աշոտի բարեկամը:
- Ե՞րբ պիտի գայ այդ պահակաւր, հարցուց Աշոտ.
- Թերևս երկու օրէն, պատասխանեց բարեկամը, պիտի գայ և չորս հինգ օր պիտի մնայ

հոս:

Երկու օրէն Վօթուր հասաւ Բիւրէա, ուր չորս հինգ օր պիտի մնար, ինչպէս որ կանխաւ յայտարարած էր Աշոտի բարեկամը:

Միասին գացին պահականաւր:

Սիրալիր ընդունելութիւն մը, Բիէռ Լօթիէն.

- Պարո՛ն հրամանատար, ըսաւ բարեկամը, ցոյց տալով Աշոտը, ձեզի կը ներկայացնեմ հայ յեղափոխական մը, Դաշնակցութեան յայտնի գործիչներէն, որ կարելոր դեր մը կատարած է 1896ին, Պանք Օթօմանի Դէպքին մէջ.

- Ուրախ եմ, ըսաւ Բիէռ Լօթի:

Եւ անմիջապէս երկու հիւրերը տարաւ իր սենեակը:

Աշոտ շուտով մանրամասնաւ մեծ վիպասանին հետ, որ իր վաւաշոտ նայուածքը սեւեռած՝ լափել կ'ուզէր հայ յեղափոխականին առինքնող ու թովիչ դէմքը:

- Ե՞րբ պիտի մեկնիք, պարո՛ն հրամանատար, հարցուց Աշոտի բարեկամը.

- Կը յուսամ երկու օրէն մեկնիլ, պատասխանեց Բիէռ Լօթին, աչքերովը շարունակ Աշոտի դիմագծերը զննելով, ի՞նչ կը փափագիք.

- Մեր պարոնը, շարունակեց Աշոտի բարեկամը, Պոլիս պիտի երթայ, ապահով միջոցով մը, արդեօք պիտի հաճի՞ք զինք ընդունիլ ձեր շոգենաւին մէջ.

- Յօժարակա՛մ, յարեց հրամանատարը, երկու օրէն կը մեկնի նաւս, թող մեր նոր բարեկամը վաղը գայ, կը տանիմ դինքը:

Եւ կիզող աչքերը սեւեռեց հայ յեղափոխականին վրայ:

Բիէռ Լօթի, փափկանկատ կենցաղագէտ մը, և, միեւնոյն ժամանակ, անբաղդատալի հոգերան մը, իօսակցութեան միջոցին չէր թերանար կարդալու Աշոտի հոգին, համակ անձնագոհութիւն և արիութիւն:

Երկու հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին Վօթարի հրամանատարին որ կը կրկնէր.

- Մեր նոր բարեկամը թող վաղը հոս գայ, միոին կը նաւարկենք մինչև Պոլիս:

Աշոտ շատ ուրախ էր, այս առոիթով ծանօթացած էր Բիէռ Լօթիի պէս մեծանուն վիպասանի մը հետ, որուն պաշտպանութիւնը պիտի վայելէր. կը խորհէր թէ, այդ պահականաւով հիանալի նաւարկութիւն մը պիտի կատարէր, և յետոյ, երբ հասնէին Պոլիս, առանց սալօն հանդիպելու, առանց լրտեսներէ հետապնդուելու, Վօթուրի նաւաստիներուն հետ խառնուած, պիտի կընար ուղղակի երթալ Բէրա, ֆրանսական դեսպանատունը, և յետոյ տեղաւորուիլ սենեակի մը մէջ:

Եւ այս անոյշ մտածումներով բաժնուեցաւ Վօթուրի հրամանատարէն և իր բարեկամին հետ վերադարձաւ քարափը, ուր սրճարան մը նստան միասին:

Երբ հիւրանոցը վերադարձաւ Աշոտ, և կը պատրաստուէր ելլել իր սենեակը, ծառան մօտեցաւ և իրեն երկնցուց հեռագիր մը:

Վեր ելաւ, իր սենեակը, բացաւ հեռագիրը և կարդաց:

Քրիստափոր Միքայէլեանէն էր, Ժընէվէն հեռագրած էր,-

<< Մի՛ մեկնիր, նամակիս սպասէ՛:

Չը հաւատաց, չէր ուզեր հաւատալ, անգամ մըն ալ կարդաց, լաւ մը զննեց ստորագրութիւնը.- Քրիստափոր:

Ի՞նչ կընար ընել, ստիպուած էր սպասել նամակին:

Աշոտի սիրտը կը նեղուէր, ֆրանսական պահականաւովը Պլիս երթալու բաղդէն ու պատիւէն կը զըրկուէր այս կերպով:

Հետեւեալ օրը, Վօթուրի նաւաստիներէն երկու զինուորներ եկան գտան Աշոտը, քարափի ծանօթ սրճարանը նստած՝ իր բարեկամին հետ:

Հրամանատարը կըսպասէր և այդ երկու զինուորները դրկած էր, ազդարարելու համար թէ, հակառակ իր երեկուան յայտարարութեան թէ երկու օրէն պիտի մեկնէր շոգենաւը գիշերը Պոլսէն հեռագիր մը ստացած էր, որով մեծ դեսպանը կը հրամայէր անմիջապէս Վօթուրը ճամբայ հանել դէպի Պոլիս.

- Ինչո՞ւ արդեօք այդ հրամանը, հարցուց Աշոտ Վօթուրի նաւաստիներուն, որոնք նոյն սեղանին առջև, իր դիմացը նստած, զինի կը խմէին:

- Չեմ գիտեր, պատասխանեց զինուորներէն մեկը, կ'երևայ թէ անակնկալ մը կայ.

- Ի՞նչ տեսակ անակնկալ կընայ ըլլալ կը կարծէք, հարցուց անձկանօք Աշոտի բարեկամը.

- Թերևս խուժանային գրգռո՞ւմ մը, մոլեռանդութեան նոր պոռթկո՞ւմ մը, պատասխանեց միւս զինուորը, անտարբեր կերպով մը:

Եւ խօսակցութիւնը կը դառնար այսպէս Պոլսոյ կացութեան շուրջը:

Աշոտ, դառնալոծ զինուորներուն.

- Պարոննե՛ր, ըսաւ, անհունապէս շնորհակալ եմ պարոն հրամանատարին, ցոյց տուած այսքան անկեղծ ու արտիս խօսող համակրանքին համար. սակայն, կը ցաւիմ որ չպիտի կրամ օգտուիլ ներկայացած գեղեցիկ առիթէն.

- Ինչպե՛ս, ինչպե՛ս, կրկնեցին երկու զինուորները, դարձեալ պարպելով բաժակը.

- Անակնկալ մը, պատասխանեց Աշոտ- շոգենաւէն վերադաձիս, երէկ, երբ հիւրանոցը մտայ- ծառաս հեռագիր մը յանձնեց, կարդացի, ամողջ ծրագիրն յեղաշրջուեցաւ.

- Ի՞նչպէս...

- Հեռագիրը կը հրամայէր ինծի ասէն մը սպասել հոս, յարեց Աշոտ, հետևաբար, չպիտի կրնամ վայելել պարոն հրամանատարին պաշտպանութիւնը, ո՛չ ալ ձեր ընկերութեան հաճոյքը:

- Զինուորները քիչ մընալ նստան, քանի մը գաւաթներ ալ պարպելէն յետոյ, հրաժեշտ առին ու վերադարձան իրենց շոգենաւը:

Աշոտ, ինչպէս ըսինք, կը տառապէր անգործութենէ, սիրտը շատ կը նեղուէր. կը տառապէր անգործութենէ, սիրտը շատ կը նեղուէր. կը փափագէր օր առաջ գործին ձեռնարկել:

Այսպէս, մէկ շաբաթ անցաւ, և Քրիստափոր Միքայէլեանը չերեւցաւ: Նիւթերը կը հասնէին հետգհետէ և դուրս կը հանուէին:

Ահաւասիկ թէ ի՛նչ կը գրէ այս մասին, նոյնինքն Աշոտ, իր յուշատետրին մէջ.

<<Ղրկված ապրանքները պայթուցիկներ շինելու նիւթեր էին, մօտ 150 քիլօ, նոյնպէս ելէքտրական ժամացոյցներ և գործիքներ: Ասոնց մէկ մասը մաքսախուսօրէն դուրս հանեցինք, իսկ մնացածներուն համար 165 ֆրանք մաքսատուրք վճարեցինք:

<<Ո՛չ մաքսատան պաշտօնեաները, ո՛չ ալ ես, չի կրցանք ըմբռնել այդ նիւթերուն իսկութիւնը. Քրիստափորը միայն դիտէր, ինքը Բարիզէն գներ էր, Պոլիս մենելիթ պատրաստելու համար: Ինք սովորէր էր պատրաստութեան եղանակը:

<< Ասոնցմէ զատ, Պուլկարիայէն 500 քիլօ պատրաստ մենելիթ ալ գնուէր էր, քիլոն 8 ֆրանգի, իսկ լաւ պատրաստուած տինամիթը գտանք Յունաստանի մէջ, քիլօն երկուք ու կէտ ֆրենգի պայմանաւորուեցանք վաճառականին հետ, ապրանքը փորձելէ յետոյ, մէկ քանի հարիւր քիլօ գնել իրմէ:

<< Այս առեւտրական գործողութիւնները խորհրդակցութեամբ չէինք ընէր, այլ ամէն մարդ իր ուզած ձևովը կը սակարկէր, օրինակի համար, Սօֆիայէն 500 քիլօ ապրանք կը գնուի, առանց այդ Մարմինին հետ կանխաւ խորհրդակցութեան և առանց այդ ապրանքը քննուելու, յիմար փորձ մը բաւարար կը նկատէինք ամէնքս ալ. նոյնը Քրիստափոր ըրած էր, այդ նիւթերը գնած էր առանց իր միւս ընկերներուն հետ խորհրդակցելու, իսկ մենք, Մարթինի հետ,

Յունաստան գտնուող ապրանքը չէինք գնած, միայն 50 ֆրանգ կանխավճար ըրած էինք որ մեզի յանձնէ մեր ուզած օրը: Այդ ապրանքին տէրը ստանձնած էր ապրանքներուն մինչև նաւը փոխադրութեան ծախքերը:

<<Մենք այս ամէնը գրած էինք Քրիստափորի, և սա հեռագրով արգիլած էր մեզի ո՛ր է գնում- յանձնարարելով որ իրեն սպասենք:

<< Արդդէն, առանց իր արգելքին ալ չէինք կրնար մենք ապրանք գնել, որովհետև մեր քովը քանի մը տրախմիէն աւելի չը կար, իրենց քով էին ամբողջ դրամները և մեր ծախքերուն մանրամասն հաշիւները, ստացագրերովը միասին կը պահանջուէին:

<< Յունաստանի մէջ սպասելու դատապարտուած էի Քրիստափորին համար, որ սակայն կ'ուշանար, և ես կամաց կամաց ձանձրանալ կըսկսէի:>>

Օրերը, շաբաթները կ'անցնէին և տակաւին Քրիստափորը չէր երեւնար, շարունակ նիւթեր կը դրկէր, և այդ նիւթերը, առանց ո՛ր է կասկած արթնցնելու մաքսային պաշտօնէաներուն, վերցնել կուտար Աշոտ և կը փոխադրէր իր հիւրանոցը- սպասելով Քրիստափորի ժամանումին:

Եւ սակայն Քրիստափորի հետքը դեռ չէր նշմարուեր:

Թ

Արտասահմանի զանազան կէտերէն Յունաստան կուգային Դաշնակցութեան անձնուէր զինուորները, օժանդակ ընկերներ և ընկերուհիներ բոլորը:

Օր մը, Մարթին, Աշոտ և ուրիշ քանի մը բարեկամներ նստած էին քարափի ծանօթ սրճարանին մէջ. խօսակցութեան մը բռնուած, երբ յանկարծ ներս մտաւ մարդ մը, կլորիկ գլուխով, լայն ճակատով, վառվռուն, յարաշարժ աչքերով, ժպտուն դէմքով ու միջակ հասակով, համակրելի մարդ մը, որ, ուղղակի մօտեցաւ Աշոտի և ընկերներուն:

Բոլորը միասին ցատկեցին իրենց տեղէն, ու շրջապատեցին նորեկը, համբոյրներով ծածկեցին անոր երեսները, և առին նստեցուցին իրենց քով, նոյն սեղանին շուրջը:

Մանկալճի Զարեհը, Սամաթ հացին էր, իննսունըվեցի ծանօթ հերոսներէն, Օսմանեան Դրամատունը մտողներէն, ան որ, Պոլսէն մեկնելու միջոցին, դառնալով Մաքսիմօֆի, անգլիական և ֆրանսական ներկայացուցիչներուն, ըսած էր.

- Մենք դարձե՛ալ պիտի դանք...:

Եւ իրոք, այն Զարեհը, ինը տարի ետքը, երկրագընդի հինգ ցամաքներուն մէջ թափառական շրջելէ, մաքառելէ, տառապելէ յետոյ, կուգար գործադրել իր խոստումը...:

ԵԸԼՏԸԶԻ ՊՕՍՊԱՆ ի ընթերցողները, մէկէ աւելի առիթներու և պարագաներու մէջ, պիտի հանդիպին այս արտակարգ յեղափոխականին և հետեւաբար, իրաւամբ

ՆԿԱՐ - Երևանի Կառապանը (․) (ՄԱՆԿԱԼՃԻ ԶԱՐԵԶ)

պիտի շահագրգռուին անոր կեանքով, այնքան հարուստ դրուագներով, հանկարծալից կեանք մը, որուն մէծ գիծերը կը դնենք ստորեւ:

Պոլսոյ Սամաթիա թաղը ծնած է Խաչիկեան Զարեհ, <<Մանկալճի Զարեհ>> յաջորջումով հանրածանօթ: Տղայութենէն ի վեր կրակ ու բոց, շարունակ կը փախչէր դպրոցէն, ծնողքը պարտաւորուցան աշկերտութեան դնել իրենց ստահակ տղան: Այսպէս տարիներով խանութ յաճախելէ յետոյ, վարպետին սիրելի կը դառնար տարուէ տարի: Բայց օր մը, օրերուն ամենէն սեւը, Զարեհ, կը բարկանայ իր վարպետին դէմ և չը կրնալով ինքզինք զսպել, մոլեգնութեան մէկ թռպէին, կը յարձակի վրան ու կը սպաննէ զանի: Դեռ քսան տարու էր Զարեհ, երբ տասնըհինգ տարուան տաժանակիր աշխատութեան, կամ որ նոյն է, թիարանի դատապարտուեցաւ, պատիժ մը, զոր պիտի քաւէր Պոլսոյ Բանտին մէջ:

Սակայն, բազոր միշտ կը հալածէր Սամաթիացի վարպետասպան եիտարսարդը: Օր մը, նոյն բանտին մէջ իրեն հետ ապրող Արմենակին հետ միասին փախչելու խորհուրդ մը յղացաւ. փորձը վիճեց, երկունքն ալ նբոնուեցան և Զարեհի գատապարսութիւնը, 15 տարիէ բարձրացաւ 20ի: Մէկ օր ետքը փոխադրուեցաւ Սինօպի բերդը, հոն, շղթայակապ, անցընելու իր կեանքի գեղեցկագոյն տարիները: Մոռցանք ըսել, Պոլսոյ բանտը մնացած էր արդէն երեք տարիէ աւելի, երբ Սինօպի բերդին մէջ արգելափակ մնալու դատապարտուեցաւ:

Ահաւասիկ Մանկալճի Զարեհի կեանքէն խիստ շահեկան կտոր մէ.-

Սինօպի բերդը փոխադրուած, ոտքերը միշտ չըղթայուած, Զարեհ կը քաշքշէր իր գոյութիւնը, վկայեալ ոճրագործներու, աւագակներու և մարդասպաններու ամբոխի մը մէջ, որոնք, իրեն պէս, թերեւս մէկ թռպէի բարկութեան զոհեր, կը քաւէին իրենց գործած ոճիրը...: Արդար ըլլալու համար, պէտք է խոստովանիլ թէ՝ այդ թշուառներուն մէջ անմեղներ, անպարտներ ալ կային , որոնք ո՛վ գիտէ ո՛ր արիւրաբու աւատապետին կամ վաշխառուին գործիք կամ զոհ եղած էին...:

Տարիներու ընթացքին մէջ, Զարեհ յաջողված էր բերդապահներուն համակրանքը գրաւել և եղած էր տասնապետ:

Այդ միջոցներ, իր սենեակը բերին հռչակաւոր յեղափոխական Սասունցի Արապօն, ուրիշ տասն երկու Մշեցիներով, որոնց հինգը թիապարտ էր, և եօթը՝ բերդագէլ. ասոնք բանտարկուած էին դիւղապետ Քայլուշցի Գեորգ աղայի մը ձեռքով:

Այդ օրերուն մէջ էր, Պապը Ալիիի Ցոյցը դեռ նոր կատարուած էր, Սինոպի բերդը կը բերուին երեք դատապարտեալներ, երեքն ալ բերդարգել, մէկը յոյն՝ Նիքօլի, իսկ միւս երկունքը հայ, Գում Գաբուցի Աւետիս և Քէօթահեացի Պարոն, երկունքս ալ 16-17 տարու պատանիներ: Ասոնք, միայն քառսուն օր մնացին բերդին մէջ բանտարկուած, յետոյ դուրս ելան,

բերդաքաղաքին մէջ արձակ համարձակ կը շրջադայէին, որովհետեւ երկունքին ալ պատիժը՝ բերդարգելութիւն էր:

Զարեհ այս նորեկներուն հետ շուտով բարեկամացած և նշմարած էր որ Պարոնը պարկէշտ և ազնիւ տըղայ մըն է:

Օր մը- Զարեհ, մօտենալով Պարոնին, ըսաւ.

- Պարո՛ն, կը ճանչնա՞ս Արապօն, գիտե՞ս, ո՛վ է.

- Լսած եմ, պատասխանեց Պարոնը, Սասունի մէջ մեծ քաջութիւններ գործած է, ան չէ՞.

- Այո՛, ճիշդ էս իմացեր, տղա՛ս, հիմա քեզի գաղտնիք մը պիտի տամ, մեր ազգին մէջ, հազարին մէկ չը՛ ծնիր Արապօմը, էս այս հերոսը պիտի փախցընեմ, հոգ չէ՛, միւս Մշեցի հայ եղբայները թո՛ղ մնան մեզի հետ.

- Ի՞նչպէս պիտի փախցնես, հարցուց Պարոնը, խանդաղատանքով մը.

- Մտի՛կ ըլէ՛ ինծի, Պարո՛ն, շարունակեց Զարեհ, ահա՛ կը տեսնես, քարանթինայի շինութիւններուն վրայ կը գտնիմ, չէ՞.

- Այո՛...

- Ձեռիս տակ տասը բանտարկեալներ կ'աշխատին, շարունակեց Զարեհ, դուն ազատ կը պտըտիս.

Եւ իրօք, այդ օրերը մաքրանոցի շէնքեր կը կառուցուէին ծովեզերքը, և Զարեհ, տասը բանտարկեալներու վերկացու կարգուած, իր ոտքերը միշտ շղթաներու մէջ, կը հսկէր անոնց աշխատութիւններուն:

- Ըսէ՛ք, պարո՛ն Զարեհ, յարեց պարոնը, էս ի՛նչ ծառայութիւն կրնամ ընել, անիկա՛ ըսէ՛ք ինծի.

- Սպասէ՛, սիրելի՛ս, շարունակեց Զարեհ, դուն հիմակ աղատ էս, չէ՞.

- Այո՛, ազատ եմ, պատասխանեց Գում Դաբուցի պատանին.

- Քեզի պիտի ցոյց տամ Արապօն, լաւ մը նայէ՛, միտքդ պահէ՛, շարունակեց Զարեհ:

Արապօն, նոյն պահուն, մաքրանոցի շինութիւններուն համար, ջուր կը կրէր միայն. աղատտ հագուստներով:

- Կը տեսնե՞ս, ըսաւ Զարեհ, Պարո՛ն, սա ջուր կրող երիտասարդը, ա՛ն է Արապօն,

- Տեսայ, ճանշցայ, յարեց Պարոնը. շարունակէ՛ք ձեր պատմութիւնը, ի՞նչպէս պիտի փախցնենք.

- Էֆէնտողլու Յոյնը չե՞ս ճանչնար, ըսաւ Զարեհ.

- Այո՛, կը ճանչնամ, ըսաւ Պարոնը.

- Լա՛ւ, շարունակեց Ջարեհ, սիրելի՛ս, այդ յոյնին նաւակը ճանչնա՞ս,

- Կը ճանչնամ.

- Է՛հ ուրեմն, ըսաւ Ջարեհ խնդումով, հոս, ծովեզերքը կը բերես այդ նաւակը, Արապօն մէջը կը նսուի, դուն կը տանիս կ'անցընես նաւակը ծովին դիմացը, յետոյ կը վերադառնառ. ինչպէս է գիւծ, Պարո՛ն:

- Հիանալի՛, սքանչելի՛, բացագանչեց Գում Գաբուցի խիզախ պատանին, ե՛ս կը փախցնեմ, ե՛ս իմ ձեռքովս կը բերեմ նաւակը, և Արապօն կը փախցնեմ, Ջարե՛հ.

- Սիրելի՛ս, յարեց Ջարեհ, այս շաբթուան մէջ շինութիւնները կ'աւարտին, յետոյ խեղճ Արապօն բանտին մէջ կը փակեն, ուստի պէտք է հիմա փախցնենք զինք, աշխատելու միջոցին:

Այպէս, որոշուեցաւ Արապօն փախցնել:

Գում Գաբուցի պատանին, Ջարհի պատուերին համաձայն, գացած Էֆէնսողլուի, նաւակը բերած էր և կազմ ու պատրաստ կըսպասէր:

Ջարեհի խորհուրդովը, անցուցին Արապօյին գլուխը բարձր ֆէս մը, հովանոցը մըն ալ ձեռքը տուին, Պարոնին հովանոցը, կռնակը քաշեցին Ջարեհին թիկնոցը, և այսպէս, կերպարանափոխ վիճակի մը մէջ, յաջողեցան նստեցնել զանի նաւակը, զոր Գում Գաբուցի անձնաուէր պատանին թոցուց միւ ծովափը, ուր տարաւձգեց Արապօն, իսկ ինքը վերադարձաւ, Ջարեհին սիրտը հանդարտեցնելու համար:

Նոյն գիշերը խուզարկութիւններ կատարուեցան Սինոպի բերդին բոլոր խուցերուն մէջ, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէր երեսուն քառասուն բանտարկեալներ: Արապօն, սկիզբէն ի վեր, Ջարեհին խուցը կը պառկէր. բանտապանները զո՛ւր փնտռեցին Արապօն, Ջարեհ խտրեց զանոնք և դրկեց ուրիշ խուցեր:

Արապօյի փախուստին վրայ, մէկ քանի օր արտակարգ խստութիւններ և հսկողութիւններ ի գործ դրուեցան, մասնաւորապէս հայ բանտարկեալներուն վրայ, և յետոյ, ամէն բան մոռցուեցաւ:

Այս միջադէպէն ի վեր, Ջարեհ առարկայ եղաւմասնաւոր հալածանաքի՝ բերդապահներուն կողմէն, բայց ան երբեք չէր վշտակրէր, սրտի անհուն բերկրանքով մը կը յիշէր միշտ Արապօյի փախուստը: Այսպէս, 9 տարի, 18 օր բերդարգել մնաց Սինոպի բերդը, և 96ի մայիսին արձակուած, վերադարձաւ Պոլիս:

Այնքան երկար, տաժանակիր տարիները չէին կրցած անոր մէջ վառող յեղափոխութեան հուրը մարել, ընդհակառակն, ան աւելի՛ դարբնուած էր, և պողպատի պէս ամուր հաւատք մը բերած էր իրեն հետ, ան կը հաւատար թէ՛ Յեղափոխութեա՛ն է վերջին խօսքը, թէ երկիրը դէպի լոյս կ'ընթանայ, և թէ՛ մարդկութիւնը պիտի վերստանայ իր յափշտակուած իրաւունքները: Եւ այս հզօր հաւատքէն ներշնչուած, մանսակցեցաւ 1896ի Օգոստոսի Պանքայի Ցոյցին: Ճիշդդ երեք ամիս միայն ազատ պտըտած էր Պոլսոյ մէջ, իր

աքսորավայրէն վերագարձէն ետքը, և Օգոստոս 14ին, Փիճ Լեւոնի յանձնարարութեամբ, եկած խառնուած էր Դաշնակցութեան զիւորներու շարքերուն մէջ, նոյնի՛սկ ցոյցին օրը, և յաջողված էր մտնէ: Դրամատունը: Ցոյցէն ետքը, տասնեօթը ընկերներով, Պոլսէն մասնաւոր շոգենաւով մը Ֆրանս տարուած և, զարմա՛նք, իր ընկերներէն շատերուն հետ, Ֆրանսայի հանրապետական կառավարութեան ջանքերով ու խնամով (°) Պուէնտու Այրէս աքսորուած էր, Արժանթինի մայրաքաղաքը, ուր գրեթէ երեք տարի տառապելէ յետոյ, անցած էր Զուիցերիոյ Ժընէվը, Դաշնակցութեան Ապաստանարան, Քաղաքը, ուր կը նստէր Արեւմտեան Բիւրօն:

Զարեհ աշխատաւոր ծնած է՛ր, շուտով գտաւ զբաշում մը, գործարանի մը մէջ կ'աշխատէր և իր ճակտին քրտինքովը կը ճարէր իր ապրուստը: Սակայն, խաղաղ աշխատանքէն աւելի կը սիրէր փոթորկուտ կեանքը, յեղափոխութիւնը, ամէն տեղ, ամէն ժամանակ, ամէն ընկերութեան մէջ, կը փափագէր լսել լո՛կ յեղափոխական կեանքէ քաղուած պատմութիւններ, յաճախ ինքզինք կ'առաջարկէր ամենավտանգաւոր ձեռնարկներու մէջ իբրև նախապարձակ: Ժընէվի մէջ, գործարանէն երբ կ'արձակուէր, կէրթար սրժարանը, ուր կը համախմբուէին սովորաբար իր գաղթական հայրենակիցները, հոն կը նստէր, մտիկ կ'ընէր տեղի ունեցող բանավէճերը, խօսակցութիւնները, և շատ կ'ախորժէր մանաւանդ նոր ցոյցերու և նոր շարժումներու լուրերէ, անմիջապէս մէջ կը նետուէր, իր անձը, իր կեանքը կը դնէր ի սպաս և կ'աղաչէր որ իրեն վստահուի գործ մը, որ գերագոյն անձնուիրութիւն կը պահանջէ:

Զարեհի բաղդը բացուած էր Ժընէվի մէջ: Օր մը, իրիկուան դէմ, երբ դարձեալ, ընկերներու հետ նստած էր ծանոթ սրժարանէն ներս մտաւ Քրիստափոր Միքայէլեան, և մօտենալով իրեն, բարեւեց ներկաները:

Քրիստափոր, Զարեհի հետ առանձին սկսաւ խօսակցիլ, ներկաները մէկիկ մէկիկ քաշուեցան, հեռացան.

- Զարե՛հ, ըսաւ Քրիստափոր, քեզի գաղտնիք մը պիտի հաղորդեմ:

Զարեհ ինքզինք ամփոփելով.

- Պարո՛ն Քրիստափոր, ըսաւ, արդեոք նոր բան մը կա՞յ, ի՞նչ գաղտնիք է.

- Զարե՛հ, շարունակեց Քրիստափոր ընտանի և մտերիմ շեշտով մը, այս՛, նոր բան մը կայ, Պոլսոյ մէջ վերստին ցոյց մը պիտի ընենք:

Զարեհ խելայեղ, ըդոստ ելաւ տեղէն ու գոշեց.

- Ցո՞յց մը, ե՞րբ ալ պիտի մասնակցիմ, չէ՞.

- Անտարակո՛յս, յարեց Քրիստափոր ժպտելով, առանց քեզի ցոյց կ'ընե՞նք.

- Կ'աղաչե՛մ, թախանձեց Զարեհ, ե՞րբ պիտի ընէք ցոյց.

- Հիմա մտիկ ըլէ՛, Զարե՛հ, շարունակեց Քրիստափոր, Կազմակերպութիւնը վճռած է այս անգամ ձեռնարկել հսկայական գործի մը, որ չորս հորիզոններուն պիտի արձագանգ տայ

և պիտի զտրմացնէ տիեզերքը. այս անգամ թեթև, տգայական ցոյց մը չպիտի ըլլայ, ինչպէս եղաւ ձերինը.

- Ո՞րը...

- Պանք Օթօմանի ցո՛յցը...:

Զարեհ լռեց, ինք ալ գիտէր թէ այն ցոյցը յանկարծական ներշնչումէ մը բղխած էր, գոնէ իր կարծիքով:

- Ուստի, շարունակեց Քրիստափոր, եկած եմ քեզի առաջարկ բերելու.

- Ի՞նչ- խնդրեմ, ընդմիջեց Զարեհ

- Դուն ալ պիտի մասնակցիս, յարեց Քրիստափոր, և վաղուքն պէտք է թողուս Ժընէվը, և պէտք է մեկնիս.

- Դէպի ո՞ւր...

- Դէպի Յունաստան, շարունակեց Քրիստափոր, ճանապարհաճախադ պատրաստ է, ընկերներդ հոն կը սպասեն վաղը դուն պիտի մեկնիս, մէկ քանի օրէն ես ալ պիտի հասնիմ ետեւէդ, ի՞նչ կ'ըսես.

- Այսօրուքն՝ կը մեկնիմ, ըսաւ Զարեհ, եթէ պէտք է:

Զարեհ հետեւեալ օրը գործարանը գնաց, և գործարանատիրոջ իմաց տուաւ թէ այլեւս չը պիտի աշխատի հոն, ստիպուած ըլլալով մեկնիլ Ժընէվէն:

Յետոյ, նոյն օրը, հանդիպեցաւ Դրօշակի խմբագրատունը, ներկայացաւ Բիւրօյին, հարկ եղած հրահանգները ստացաւ, նաև ճանապարհաճախը, և մեկնեցաւ Յունաստան:

Ահա՛ այդ օրը հասած էր Բիրէա և կը նստէր միւս օժանդակ ընկերներուն հետ, ծանօթ սրճարանին մէջ:

- Զարե՛հ, հարցուց Աշոտ, ե՞րբ պիտի գայ ինքը, ակնարկնելով Քրիստափորի.

- Ի՛նք ալ պիտի գայ մէկ քանի օրէն, պատասխանեց Զարեհ, անպատճառ պիտի գայ:

Բաւական ժամանակ նստան հոն, խօսակցեցան, Ժընէվի ընկերներուն վրայ մանրամասն տեղեկութիւններ առին Զարեհէն և յետոյ բաժնուեցան իրարմէ:

Աշոտ ու Զարեհ մնացին առանձին, արճարանին մէջ և սկսան աւելի մտերմական խօսակցութեան մը: Աշոտ, խօսակցութեան ընթացքին մէջ տեսաւ թէ՝ Զարեհ տեղեկութիւն չիւնէր ո՛չ ցոյցի բնութենէն, ո՛չ ալ դրկուած նիւթերէն, լո՛կ ինք դրկուած էր Յունաստան, միւս օժանդակ ընկերներուն պէս, սպասելով Քրիստափորի, որ խոստացած էր շուտով մեկնիլ Ժընէվէն և միանալ իրեն:

Վերջապէս Յունաստան եկաւ Քրիստափոր, մինակը չէր, հետը կը բերէր Յովնանը, որ անծանօթ մը չէր:

Աշոտի և իր օժանդակ ընկերներուն ուրախութիւնը մեծ եղաւ, շաբաթներէ ի վեր կը սպասէին անոր, որ հոգին էր Կազմակերպութեան:

Քրիստափոր անմիջապէս տեղեկութիւններ հարցուց ղրկուած ապրանքներուն մասին և շատ գոհ մնաց, երբ իմացաւ Աշոտէն թէ մաքսէն ազատուած էին ամէնը, առանց դոյզն կասկածի մը տեղի տալու:

Մէկ քանի օր անցաւ, և ահա՛ Վիշապի Պատասխանատու Մարմնի անդամներէն Սաֆօն եկաւ: Այս ալ առանձին չեկաւ Քրիստափորին պէս, իր հետ երկրորդ մըն ալ բերած էր, կին մը,

Սաֆօ չէր ուզեր վայրկեան մը զատուիլ այս կնոջ քովէն, բայց այս վերջինը կը խորշէր, շատ պաղ վերաբերում մը ցոյց կուտար Սաֆօյի հանդէպ: Խորհրդրաւոր բան մը կար այս երկու նորեկներուն միջև, արդեօք ի՞նչ պատահած էր:

Ո՞վ էր այդ կինը, ո՞ր երկրացի էր, ի՞նչ ազգէ, ի՞նչ կը կոչուէր, ի՞նչու եկած էր Սաֆօյի հետ- և սակայն ինչո՞ւ, Յունաստանի ցամաքը կոխելէ անմիջապէս յետոյ կը խրտչէր այդ մարդէն, միշտ հեռու հեռու կը խուսէր, երբէք անունը տալ կամ լսել չէր ուզեր. ինչու...:

Բոլոր այս ինչուններուն պատասխանը տալէ առաջ, Սաֆօն մտիկ ընենք:

Քրիստափոր, Սաֆօ, Աշոտ Մարթին, Յովնան ու այդ կինը, միասին նստած էին.

- Սաֆօ՛, հարցուց Աշոտ, կընա՞նք իմանալ թէ ո՞վ է տիկինը, որուն ներկայութիւնը կը վայելենք.

- Տիկի՞նը կը հարցնէք, յարեց Սաֆօ հպարտ շեշտով, մը իմ հեծ եկած է, ինծի պիտի ընկերանայ, ինծի հետ միասին պիտի մտնէ Պոլիս,

- Աշէ՛կ, աշէ՛կ, կրկնեցին ներկաները, ծանօթացուցէ՛ք ուրմէն մեղի.

- Տիկինը, շարունակեց Սաֆօ ժպտուն ու գոհունակ դմքով մը, խորհրդրաւոր ակնարկ մը ձգելով կնոջ վրայ, բնիկ Թիֆլիզցի է, Հայուհի մը.

- Հայուհի՞ մը, Հայուհի՞ մը, կրկնեցին Մարթին ու Աշոտ, համակրալիք շարժումներով մը.

- Կը կոչուի, շարունակեց Սաֆօ, տիկին Էլիզապէթ, մէկ երկու տարի առաջ այրիացած, հազիւ երեսունհինգ տարիքին մէջ, զրկուած իր ամուսինէն, որ ռուս բժիշկ մըն էր, դժբաղդաբար բառ մը չը գիտեր հայերէն:

Այս խօսակցութեան պահուն, կինը զգուանք ու քիչ մըն ալ քէն բուրող նայուածքներ կը շանթեր Սաֆօյի, ամէն անգամ որ իր անունը կուտար. և այս բանը կը գիտուէր թէ՛ Քրիստափորէն և թէ՛ Աշոտէն, որոնք, սակայն, չէին անոր զգացներ իրենց հետաքրքրութիւնը, իրենց կասկածները:

Քիչ մըն ալ խօսակցեցան, յետոյ Սաֆօ տիկին Անչքովան առաւ տարաւ ձգել հիւրանոցը, որովհետեւ, ինչպէս կ'երեւար դէմքէն, շատ յոգնած էր ճամբորդութենէն, և հանգստանալու պէտքը կը զգար:

- Աշոթ ըսաւ Քրիստափոր, երբ երկուքը մինակ մնացին, ես այդ կնոջ նայուածքը չը հանեցայ, մթին, խրթին արտայայտութիւն մը.

- Ես ալ նոյնը նշմարեցի, հաստատեց Աշոտ, այդ կնոջ աչքերուն մէջ անմարելի կրակ մը կը վառէր, Սաֆօյի դէմ լարուած գտայ զինք և անհաշտելի ատելութիւն մը դէմքին վրայ. շիտակը գայթակղեցայ ես, Քրիստափոր:

- Գիտե՞ս, յարեց Քրիստափոր, մեր գործին վնասաբար կընայ ըլլալ պարագան. կին մը, որ կ'ատէ Սաֆօն, ի՞նչպէս պիտի ընկերանայ իրեն և պիտի միասին Պոլիս մտնէ, ես չե՛մ հաւատար.

- Ո՛չ ալ ես, կրկնեց Աշոտ, Սաֆօյին զգացնելու է այս բանը.

-Այո՛, այո՛, հաստատեց Քրիստափորը, պէտք է զգացնենք իրեն այս պարագան, պէտք է պրպտենք, պէտք է պեղենք, մինչեւ որ թափանցենք գաղտնիքը:

Այսպէս կը խօսակցէին Վիշապի երկու անդամները, երբ երրորդ անդամը Սաֆօ-վերադարձաւ առանձին և եկաւ նստաւ իր ընկերներուն մօտ:

Պահ մը լռութիւն պատեց, ո՛չ ոք խօսաւեցաւ, սկսան իրարու երես նայել ու զիրար կարդալ:

Յետոյ, Աշոտ, խզելով լռութիւնը.

- Սաֆօ՛, ըսաւ, ուրկէ՞ գտաք այդ կինը.

- Թիֆլիզէն, չըսի՞, պատասխանեց Սաֆօ, շատ պարկեշտ կին մըն է, չէ՛ք գիտեր, քանի՛ տարի է, այրի է մնացեր, երբէք խօսեցնել չէ՛ տուեր իր վրայ.

- Եթէ այդպէս է, ընդմիջեց Քրիստափոր, աչքի չարաճճի ժպիտ մը զրկելով Աշոտին, բարի կին մըն է.

- Օ՛, բացագանչեց Սաֆօ, բարի՛ է, շա՛տ բարի, պատուաւո՛ր կին մը.

- Աղէ՛կ, աղէ՛կ, կրկնեց Աշոտ, խորհրդահաւոր շեշտով մը, որուն իմաստը կըմբռնէր Սաֆօ,

- Աշո՛տ, ըսաւ Սաֆօ, ի՞նչ ըսել կ'ուզես, բան մը գիտե՞ս, իմացա՞ծ ես այդ կնոջ մասին, երբ Թիֆլիզ էիր.

- Ի՞նչ պիտի գիտնամ, ի՞նչ պիտի իմացած ըլլամ, Սաֆօ, յարեց Աշոտ, ես հիմա՛ տեսայ զինքը, Բայց ի՞նչ պահեմ մեղքս...

- Ի՞նչ, ի՞նչ, խոսե՛, Աշո՛տ, մի՛ քաշուիր, շիտակը խօսե՛.

- Շիտակը խօսի՞մ ես, շարունակեց Մարթին, ձեր երկունքին յարաբերութիւնը կասկածելի գտայ, ձեր երկունքին միջեւ, բան մը կայ, մի՛ պահեր Սաֆօ՛.

- Ինչ պիտի ըլլայ, յարեց Սաֆօ քիչ մը կարմրելով, բա՛ն մը չը կայ, ինք անա՛նկ է, մեղամաղձոտ, ընկերութեան մէջ միշտ վեհերոտ, թախծոտ, բնաւ չը խօսիր, խօսակցութեան չը խառնուիր, մենասէր, կասկածոտ կին մը, թէեւ շատ անձնուէր.

- Հիմա ձեր եկուքին միջեւ անցած դարձած մը չը կա՞յ կըսես, հարցուց Մարթին կշտամբող նայուածքով մը.

- Երբե՛ք, երբե՛ք, Մարթին, բողոքեց Սաֆօ, տիկին Էլիզապէթը, ինչպէս ըսի, երբ ընկերութեան մը մէջ կը գտնուի, շատ պաղ կը վերաբերուի, այդ է իր բաւորութիւնը, Բայց երբ մինակ է, ինծի հետ առանձին, և երբ վստահ է թէ դիտող մը չունի, ո՛չ ալ ունկընդիր մը, զուարթ թիթեռնիկի մը պէս իմ շուրջս կը թռչկոտի, սոխակի մը պէս կը դայլտյլէ՛, կէրդէ, կը խնգայ, կը պարե՛կը խաղայ, ի՞նչ կըսէք, զուա՛րթ է, զո՛ւարթ, անմահ ընկերուհի՛ մըն...:

- Աստուա՛ծ տայ, Աստուա՛ծ տայ, կրկնեց Աշոտ ժպտելով, խե՛րը տեսնես ուրեմն...:

Ու Վիշապի Պատասխանատու Մարմինի երեք անդամներն ալ մրանուագ խնդացին քրքիջներով, թէեւ Սաֆօյին քրքիջը կեղծ էր, ներքնապէս կը զայրանար, կը զգար թէ իր ընկերները թաց տեղ պառկողներէն չէին:

Սակայն Աշոտի մաղթանքները լսող ո՛վ. Սաֆօն ի՛նք ալ չը զգար թէ իրէ բերած կինը օրէ օր կը պաղէր իրմէ, և յաճախ, նոյնիսկ ընկերութեան մէջ, չէր կրնար ծածկել, զսպել իր ներքին ատելութիւնը, նողկանքը: Բայց, անգամ մը բերուած էր, Քրիստափոր միշտ կը ջանար սիրաշահիլ այդ արտակէդրոն կինը, գործին սիրոյն համար:

Բերեաղդաբար այդ կնոջ վրայ չը մնացին, շունտով ուրիշներ հասան, հրաւիրուած երկու օրիորդները, երկունքն ալ քսանըհինգ տարու մանկամարդուհիներ:

- Մէկը գերմանուհի մըն էր, Ռուսի ծնած, և կը կոշուէր Մառի Զայց, իսկ միւսը՝ Հայուհի մըն էր, Թիֆլիզ ծնած, ջղային, համարձակ, առնացի կերպարանքով աղջիկ մը, որուն անունը Ռուպինա դրուեցաւ յետոյ:

Այս վերջին օրիորդը, Սաֆօյէն հրաւիրուած, օժանդակ ընկերուհի, միասին իրեն հետ պիտի երթար Պոլիս, միասին պիտի բնակէր, մէկ խօսքով, օգտակար պիտի ըլլար. սակայն-զարմանալի զուգադիպութիւն, այդ օրիորդն ալ, ինչպէս տիկին Էլիզապէթը հազիւ թէ ոտքը դրագ Յունաստանի հողին վրայ, սկսաւ պաղ վարուիլ Սաֆօյի հետ. միշտ հեռու կը փախչէր, շարունակ կը հեկառէր անոր, այն աստիճան որ, չէր կրնար սքողել իր զգուանքը:

Այս օրիորդին վարմունքը մտածել կուտար Վիշապի միւս երկու անդամներուն. սակայն, Քրիստափոր խորհուրդ կուտար Աշոտի բնաւ խօսքը չը բանալ Սաֆօյին

քով.Քրիստափոր կը ճանչնար Սաֆօյին ներքին մարդը, շատ լաւ ուսումնադիրած էր իր հեյրենակցին ախորժակները...

Այսպէս, ամէն օր կը հասնէին նորեկներ և Դաշնակցական խումբը կըստուտրանար օրէ օր, և օրերը կը մօտենային: Պատասխանատու Մարմինի անդամները շարունակ գաղտնի նիստեր կը գումարէին, կը խորհրդակցէին, շատ մը ծրագիրներ կը շինէին, կ'աւրէին, մօտաւոր դէպքերուն յաջողութիւնը ձեռք բերելու համար, հազարումէկ հնարքներ, միջոցներ կը խորհէին, և սակայն, վերջնական որոշումէ մը չէրին կրնար տալ, որովհետև իրենք ալ գիտէին թէ՝ գործաֆրել երկրին մէջ, առանց տեղական պայմաններու և լուրջ ուսումնասիրութեան:

Աթենք, 1904ի գարնանա վերջին, տեսակ մը ժամադրավայր եղած էր, հայ յեղափոխական Դաշնակցութեան գործիչներուն, որոնք երկիր պիտի մտնէին: Յունաստանի մայրաքաղաքին մէջ այս անծանօթ դէմքերուն երեւումը, այս խորհրդաւոր շարժումը, բնականաբար հերաքրքրութիւններ, կասկածներ պիտի արթնցնէր բնակչութեան գեթ բոլոր խաւերուն մէջ, հետեւաբար, կը խորհէր Քրիստափոր, պէտք էր ժամ առաջ մեկնիլ Աթենքէն, սակայն, տակաւին խոչընդոտներ կային, որոնք դեռ չէին հարթուած, լուրջ խոչընդոտներ, որոնց գլխաւորագոյնը կը համարուէր Յովնանի մը խնդիրը.

Այս Յովնանի խնդիրը լուսաբանելու համար, նախ պէտք է վարդառնա: Սօֆիա գումարուած Գ. Ընդհանուր Ժողովի, որւն ժմանակին մեծագոյն մասը գրաւած էին Արեւմտեան Բիւրօյի անդամներուն ընտրութեան վիճաբանութիւնները, որոնց մէջ երեւան եկան դժբաղդաբար Դաշնակցութեան սուրբ անունը շահգործող և անոր թելովը թոչելու անսուրբ տենչէն ու մարմաջէն բռնուած ցաւադարնալու բոպիկութիւնները...

Այդ հռչալաւոր Ընդհանուր Ժողովի նիստերուն մէջ է որ չափուցան երկու... ըմբիչներ, երկուքն ալ Կիլիկիոյ պատգամաւորի տիտղոսով: Տեսնելու էր հոն երկայն, բարձր հասակը պոռոտախոս, ճոռմաբան, Կապատովքիոյ նոր ծնունդներէն, Կիլիկիոյ պատգամաւորին, Եգիպտոս նստած, որ կը գոռար ու իրպարապ տակառի մը պէս հնչող ձայնովը կ'աղմկէր ժողովասրահը, ներքողեանը հիւսելով կիլիկեան գունդերուն (.), որոնք, կազմ ու պատարաստ (.), իր հրամայական ազդանշանին ակնկառոյց կը սպասէին, Ադէքսանդրեան կամ Պօնաբարթեան երկրակալութիւն (.) մը գլուխ հանելու համար. մինչ միւս կողմէ, դարձեալ Կիլիկիոյ պատգամաւոր մը, բայց ո՛չ Կոպատովկիոյ սահմաններէն, պարզ Արաբկիրցի մը, նոյն ինքը Ռահվիր հիացած և ապշահար՝ սպանիական դղեակներու չշացուցիչ ու զգլխիչ տեսարանին հանդէպ որոնք քովէ քով, կարգով, գրթէ մէկ տողի, մէկ շարքի վրայ կը կառուցուէին վայրկենաբար, հոն, Սօֆիայի Ընդհանուր Ժողովի մթնոլորտին մէջ արշաւող ամպերուն վրայ, կը հարկադրուէր բացագանչել.

- Օ՛՝ Օ՛՝, ներեցէ՛ք, ընկերնէ՛ր, այդպիսի պատրաստ երկիր մը գոյութիւն ունի լո՛կ իմ ընկերոջս խելապատակին մէջ...:

Այդ Գ. Ընդհանուր Ժողովին մէջ է, որ կատաղի վիճաբանութիւններ պայթեցաւ Արեւմտեան Բիւրօյի անդամներուն ընտրութեան համար: Դաշնակցութեան մենաշնորհեալներէ՛րը, անմահներէ՛րը պիտի ընտրուէին...:

Արդ, նոյն ժողովին մէջ առաջարկողներ եղած էին Յովնանը Վիշապի Պատասխանատու Մարմինի անդամ ընտրել, պայմանով որ ան իր կնոջ հետ Պոլիս մտնէ, որովհետև կինը հելվետոսի մըն էր, պարագայ մը, որ օգտակարութիւն կրնար ունենալ գործին: Եւ այդ առաջարկը գործադրուելէ առաջ, որոշուած էր նախապէս ստանալ իրենց կամքը, Յովնանին և իր կնոջ բացակայութեանը ծագած ըլլալով այդ խնդիրը, և Քրիստափոր ի՛նք ստանձնած ըլլալով տեսնէ; Յովնանը, և ընդունել տալ Ընդհանուր Ժողովին որոշած պայմանը:

Աթենքի մէջ, Սօֆիայի Ընդհանուր Ժողովին որոշումը հիմ բռնելով, Վիշապի Պատասխանատու Մարմինի երեք անդամները հրաւիրած էին Յովնանը խորհրդակցութեան մը:

- Յովնա՛ն, ըսաւ Սաֆօ, գիտե՞ս, մեր Գ. Ընդհանուր Ժողովին մէջ առաջարկուեցաւ, քեզ ընտրել անդամ Վիշապի Պատասխանատու Մարմինի, պայմանով որ տիկնոջդ հետ միասին Պոլիս մտնես.

- Կինս հիւանդ է, առարկեց Յովնան, կարօտ է դարմանուելու, հետեւաբար չեմ կրնար Պոլիս երթալ անոր հետ.

- Լա՛ւ ուրեմն, հարցուց Աշոտ, ինչո՞ւ եկաք հոս.

- Պարոն Քրիստափորի հետ եկած եմ, պատասխանեց Յովնան, որոշ պայմանով մը.

- Ի՞նչ պայմանով, հարցուց Աշոտ քիչ մը նեղսրտած.

- Վիշապի Պատասխանատու Մարմինը զիս իրեն ներկայացուցիչ պիտի ընտրէ.

- Ո՞ր, որի՞ համար, ընդմիջեց Աշոտ.

- Արեւմտեան Բիւրօյի՛ մէջ, պատասխանեց Յովնան, Բիւռոյի վերջին վանկը շեշտելով, և ես, փոխարէնը, պիտի հաւանիմ երթալ նստիլ Ժընեվ՝...:

Աշոտ ու Սաֆօ ապշած մնացին, իսկ Քրիստափոր լռութիւն կը կահէր, գրեթէ անտարբեր:

Յանկարծ, Յովնան դառնալով Քրիստափորի.

- Ի՞նչպէս է մեր խօսքը, հարցուց տիրական շեշտելով մը, այդ պայմանով չը բերի՞՞ք զիս հոս.

Քրիստափոր լռեց:

Յովնան իրաւունք ուներ, Գ. Ընդհանուր Ժողովին մէկ որոշումը հասած էր իր ականջին: Որոշուած էր որ իւրաքանչիւր Պատասխանատու Մարմին ունենայ իր ներկայացուցիչը Ժընեվ, Արեւմտեան Բիւրօյի մէջ, և ասիկա շատ բանաւոր էր, ամէն զարուր դիմում, նամակ, չպիտի մնար առանց պատասխանի և գործերը չպիտի կաղային այդ կարգադրութեան շնորհիւ: Յովնան ասիկա լսած էր և, խաղաղասէր ու կենցաղասէր յեղափոխական (.), կ'ուզէր օգտուիլ այդ որոշումէն, երթալ հոն նստիլ, հանգիստ, պատգամներ խմբագրէր, կառավարէր

Հայաստանը Ձուիցերիայի բարձունքներեն...: Ո՞վ կրնար սակայն մեղադրել Յովնանը, ո՞վ գիտե՞ ո՞րքան տառապած էր (.) պարապ գործելէն (.) և հիմա կը ցանկար, պէտք ունէր հանգըստի, ինչո՞ւ էր որ Պոլիս մտնէր իր կնոջ հետ, ինչո՞ւ իրենց ողջ գլուխը դնէր Աւետարանի տակ, քանի որ Ժընէվ կրնար նատիլ և ապրիլ հոն, իբրև ներկայացուցիչ Պատասխանատու Մարմինի մը, որուն ի՛նչ փոյթ թէ եղած չըլլար անդամը (.)...:

Քրիստափոր կը տառապէր, գիշեր ցերեկ կը մտածէր կարգի բերել Յովնանը, գոր ինքը բերած էր Ժընէվէն: Աշոտին ու Սաֆօյի ընդդիմութիւնը յայտնի էր, երկուքն ալ չէին ուզեր Յովնանի ընտրութիւնը, շուարած մնացած էր: Միւս կողմէ, տաքերը կը նեղէին:

Աթենքի ամառը տաժանքոտ էր, ձմեռը ցուրտ, ամառը տաք: Ասկէ դատ, հոն բաւական թիւով Հայեր կային, մատուռ մըն ալ պունէին, Դաշնակցականներու ներկայութենէն ո՞վ գիտէ ի՛նչ հետեւութիւններ պիտի հանէին:

Այս ամէնը կը խորհէր Քրիստափոր, ուղեց մէկ քարով երկու թռչուն զարնել: Առաջարկեց իր ընկերներուն առժամապէս ամառանոց մէ փոխադրուելի: Աշոտ և Սաֆօ ընդունեցին այս առաջարկը, իրենք միայն մնացին մայրաքաղաքին մէջ, իսկ Քրիստափոր, Յովնան ու օրիորդները գացին Քիֆիսէ, օդասուն ու զովագին ամառանոց մը:

Յովնանի խնդիրը միշտ վառ կը մնար. մարդը կուզէր ամէն գնով ներկայացուցիչ կարգուիլ Արեւմտեան Բիւրօյին մէջ, հակառակ պարագային, կը սպառնար բոլորովին քաջուիլ և Դաշնակցութիւնը թողուլ... կռնակի վրայ. ա՛յնքան հզօր էր իր մէջ ինքնասիրութիւնը...:

Վերջապէս, Աշոտ ու Սաֆօ համախորհուրդ, կը դիմեն Քրիստափոր և կը խնդրեն որ Յովնան ալ իրենց հետ երկիտ մտնէ, Ընդհանուր Ժողովին ա՛յն կարեւոր որոշման համաձայն թէ՛ Պատասխանատու Մարմնի ամէն անդամ պարտուաւոր է մտնել երկիր, և թէ՛ երեք ամիս արտասահման կամ այն շրջանէն դուրս գտնուող անդամ մը կը նկատուի հրաժարած, են: Նաև առաջարկեցին որ առ այժմ Յովնան մէկդի թողու իր պահանջումը, ապագայի խնդիր է ատիկա, հոն, երկրի մէջ կորեշենք, ըսին, ներկայացուցիչի խնդիրը, և Յունաստանի մէջ կարելի չէ կարագդրել զայն, քանի որ անդամներէն մէկը, Թորգոմ, Պոլիս կը գտուի, են:

Քրիստափոր ալ համակարծիք էր Աշոտի և Սաֆօյի: Ամալ անոցին մէջ շատ աշխատեցաւ Յովնանը բերելու ուղղութեան, բայց կարելի չեղաւ:

Քենիֆէ, ամառանոցին մէջ, Յովնան իր բոլոր ճարտասանութիւնը թափած էր համոզելու Քրիստափոր զանի շահելու համար իր դատին: Միւս կողմէ կաշխատէր

ՆԿԱԲ- ԱՇՈՏ (Վիշապի անդամներէն)

նոյնպէս Սաֆօն ալ վաստակելու իր կողմը, և Աշոտը ձգելով առանձին, ինքզինք ընտրել տալու Բիւրօյի ներկայացուցիչ: Քրիստափորի սրտին բարութիւնը ծանօթ էր իրեն, նոյնպէս, կը յուսար թէ Սաֆօն ալ պիտի կրնար կարգի բերել, դարձեալ Քրիստափորի միջոցաւ:

Եւ յաջողեցաւ:

Օր մը, Քրիստափոր, այս խնդիրին համար յատկապէս քաղաք իջած, գտան Աշոտը.

- Աշո՛տ, ըսաւ, արի՛ սրան դրկենց մեր կողմից, թո՛ղ գնայ էլի՛, շատ է թախանձում,

- Ի՞նչպէս ընենք, առարկեց Աշոտ, քանի որ Թորգոմը հոս չէ. և յետոյ.ինք ինչո՞ւ չուզեր մեզի հետ Պոլիս մտնել:

- Իրաւունք ունիս, Աշո՛տ, պնդեց Քրիստափոր, շա՛տ է թափակձում, ես չի դիմացայ, խոստացայ իմ քուէն ալ տալ, արի՛, դո՛ւն ալ համաձայնի՛ր մեզ հետ:

Աշոտ անդրդուելի մնաց.

- Պարոն՝ Քրիստափո՛ր, ըսաւ, ես չեմ կրնար ընել այդ բանը, եթէ կուզէք.դուք դրկեցէ՛ք.

Աշոտ շատ կը յարգէր Քրիստափորը, երբէք չէր ուզեր կոտորել անոր սիրտը, և յաճախ, հակառակ իր անձնական սեփական համոխումներուն, կը համակերպէր անոր... կամայական անօրինութիւններեուն.բայց, միւս կողմէ, կը խորհէր թէ ան, Քրիստափորը, բան մը կը կորսնցնէր իր մեծութենէն, երբ կը փորձէր եսապաշտ Յովնանի մը յամառ կամքը քայլեցնել...: Աշոտ երբէք չէր ներեր ո՛չ մէկու շեզել Կազմակերպութեան սկզբունքներէն, որոնք- իրեն համար նուիրական հին և գերիվեր՝ ամէն բարեկամութեններէ:

Դարձաւ ըսաւ.

- Պարո՛ն Քրիստափո՛ր, դուք գիտէք որ ես զձեզ կը յարգեմ և կը փափագիմ միշտ գոհ թողուլ զձեզ.սակայն, պիտի ներէ, եթէ դիտել տամ թէ՛ Յովնանի մը համար պէտք չէ խանգարել մեր Կազմակերպութեան կարգ- կանոնը, չէ՞.

- Անշո՛ւշտ, Աշո՛տ, յարեց Քրիստափոր, ես քեզ իրաւունք կուտամ, բայց, վերջապէս, գործի սիրոյն համա՛ր է որ եո ա՛յսքան պնդեցի.

- Ջարմա՛նք, շարունակեց Աշոտ, Յովնանի մը մասնակցութիւնը կամ ոչ՝ գործին վրայ գոյի մը չափ ազդեցութիւն չիկնար գործել. ի՞նչ կընայ ընել Յովնան մը, կամ իր կինը, ի՞նչ օգուտ կընայ բերել, պարո՛ն Քրիստափորպ լսեցիք, կինը հիւանդ է, դարմանի կարօտ է. Պօլիս չի կրնար երթալ ո՛չ ինքը, ո՛չ կինը, հետեւաբար, ես բացարձակապէս կը մերժեմ ձեր առաջարկը.այդպէս թուլամորթ մը մեր շարքերէն դուրս կը վտարեմ...:

Քրիստափոր չէր խօսեր, իրաւացի կը գտնէր Աշոտի ա՛յսքան դառն ու խիստ դիտողութիւնները:

Վերջապէս Յովնանի խնդիրը չի լուծուեցաւ, մնաց այնպէս:

Օր մը. Յովնան իմացած ըլլալով Աշոտի ընդդիմութիւնը, կուզէ շահիլ անոր սիրտը, ուստի, քովը գալով, կըսէ աղերսագին:

- Աշո՛տ ջան, խնդրո՛ւմ եմ, ինձ ասա՛, դու ի՞նչ ունիս ինձ դէմ որ հակառակում ես իմ գնալու մասին.

- Քեզի դէն ի՞նչ պիտի ունենամ, Յովնան, ըսաւ Ահոտ, մեր կազմակերպութեան զկգբունքնէ ըր միայն աչքի առջն ունիմ, և անոնց անխախտ և անկեղծ պահպանութեան համա՛ր է որ ա՛յնքան աղմուկ կը հանեմ.

- Բայց արի՛ տես, շարունակեց Յովնան թախանձելով ու պաղատելով, Քրիստափորը նոյնպէս հակառակ էր, նա՛ էլ համաձայնեցաւ, դո՛ւ էլ քու քուէն տու՛ր:

Աշոտ պարտաւորեցաւ ճշմարտութիւնը յայտադրել առանց ո՛ր և է վերապահումի.

- Պարո՛ն Յովնան, ըսաւ, քեզի շիտակը խոստովանի՞մ ես քու անձիդ դէմ ին՛չ հակառակութիւն կրնամ ունենալ. անցեալ մը, հաշիւ մը, լաւ խորհեցէք, ունի՞մ քեզո հետ:

- Ո՛չ, պատասխանեց Յովնան, ե՛ս ալ ճիշդ այդ կետը կուզէի հասկցնել, կը մտածեմ թէ քեզի հետ ո՛չ մէկ հաշիւ, ո՛չ մէկ բաղխում, ո՛չ մէկ անհասկացողութիւն ունեցած եմ անցեալին մէջ, ընդհակառակն, Ժընէվի մէջ, գրեթէ բոլոր ընկերներուն բերնէն գովեսաներ լսած եմ քեզի համար, առհասարակ քու անձնուիրութիւնդ, քու յանդգնութիւնդ, քու ճարպիկութիւնդ առարկայ ըրած են իրենց խօսակցութեան: Կը զարմանամ, ինչու ա՛յդքան յամառ ես այդ խնդրում.

- Սիրելի՛ պարոն Յովնան, յարեց Աշոտ, ըսի քիչ առաջ, դարձեալ կը կրկնեմ, ես ձեզի հետ ո՛չ մէկ անձնական խնդիր չունիմ, բայց, գիտե՞ս, ինչու կը հակառակիմ, ինչո՛ւ չեմ ուզեր որ դուն ըլլաս մեր Մարմինի ներկայացուցիչը.

- Ինչո՞ւ հարցուց Յովնան անձկոտ շարժումով և աղերոսող նայուածքով մը.

- Որովհետեւ, շարունակեց Աշոտ, կուզեմ որ մէկ թրքահայ ներկայացուցիչ ունենանք Արևմտեան Բիւրօյին մէջ, հասկցա՞ք հիմա.

- Ո՛վ պիտի ըլայ այդ ներկայացուցիչը, հարցուց Յովնան կոտրուած դէմքով մը.

- Պատրա՛ստ է, պարո՛ն Յովնան, շարունակեց Աշոտ, ի՛նչ եղեր է Վոամշապուհին.

- Ո՞ր Վոամշապուհին...

- Քէնտիրեանի՛ն, պատասխանեց Աշոտ...

Եւ Յովնան լռեց, կարողութիւն չէր զգար իր մէջ խօսակցութիւնը շարունակելու, հարուածը շատ ծանր էր, որ բոլոր երագները կը ցնդէին մէկ բոպէի մէջ, վերջնականապէս համոզուեցաւ թէ Արևմտեան Բիւրօյին Երջանկութեան Դուռը փակ էր իրեն առջն...:

Սակայն, շուտով յուսահատողներէն չէր Յովնան, մանաւանդ, երբ խնդիրը կը դառնար անձնական շահու և փառքի շուրջը: Աշոտէն բաժանուելէ յետոյ, կը խորհէր թէ Քրիստափորը վաստկուած է, գիտէր թէ՛ ան ի վերջոյ պիտի յաղթանակի տանի ժողովին մէջ, երբ խնդիրը վիճաբանութեան դրուի. ժողովին մէջ երեք են, կըսէր Յովնան ինքիրեն, եթէ յաջողիմ Սաֆօն ալ համոզել, այն Աշոտ առանձին պիտի մնայ և պիտի հարկադրուի համակերպիլ, ուստի, բոլոր ջանքս պիտի թափեմ Սաֆօն ալ շահելու իմ կողմս, չէ՞ որ երկուքն ալ սուսահայ են, և ինծի պէս, կ'ատեն թրքահայերը, ապուշնէ՛րը, ո՞վ են թրքահայերը, որ պիտի անդամ ընտրուին

Արեւմտեան Բիւրօյին, ո՛չ, ո՛չ, կը մենախօսէր Յովնան, չպիտի թոյլ տամ որ Վռամշապուհ Քէնտիրեան մը կարգեն ներկայացուցիչ...:

Այս լաւատես մտածումներէն և այս յոյսերէն մղւած, գնաց Քրիստափորը գտաւ և անոր պատմեց Աշոտի հետ իր տեսակցութիւնը, մանրամասնօրէն թուելով անոր յարուցած առարկութիւնները, իր բոլոր պերճախօսութիւնը սպառեց, զրգռելու համար Քրիստափորի ռուսահայոյ ջիղերը, թրքահայոյ և ռուսահայոյ խնդիր յուզելով.

- Յովնան, ըսաւ Քրիստափոր, Աշոտ յամառ տղայ է, գիտե՞ս.

- Գիտե՛մ, գիտե՛մ, կրկնեց Յովնան, գլուխը ճօճելով, մինչեւ վերջը պիտի յամառի, իր էշը պիտի քշէ, ան չուզէր որ ռուսահայ ըլլայ ներկայացուցիչը.

- Ճի՛շդ է, հաստատեց Քրիստափոր, Ընդհանուր Ժողովին մէջ ալ շատ աշխատեցաւ մէկ երկու թրքահայ ընտրել տալու Բիւրօյին անդամ, բայց չը յաջողեցաւ.

- Շա՛տ աղէկ, դիտել տուաւ Յովնան, հոս երեք անդամ կը գտնուիք այս պահուս, չէ՞.

- Այո՛, պատասխանեց Քրիստափոր, Թորգոմը Պոլիս է.

- Եթէ դուն ու Սաֆօն համաձայնիք, շարունակեց Յովնան, թող Աշոտ տարակարծիք մնայ.ի՞նչ կարելորութիւն ունի իր յամառութիւնը, եթէ դուք, երկու անդամներ, ձեր քուէն տաք ինծի.

- Սաֆօն տե՛ս ուրեմն, յարեց Քրիստափոր, եթէ համոզես, խնդիրը ժողովի կը դնենք:

Յովնանի համար գոյութեան հարց մըն էր Արեւմտեան Բիւրօյին մէջ աթոռ ունենալ, հոգ չէ թէ ըլլար պարզ ներկայացուցիչի աթոռ մը, բաւական է որ ընտանիքովը Ժընէվ նստէր և գործէր...իր փորին համար:

Ուստի, Քրիստափորի խորհուրդին համաձայն, դիմեց Սաֆօյի, խնդիրը վերստին ներկայացուց, աղաչեց, թախանձեց, պաղատելով, թրքահայոյ խնդիր յուզելով, մինչև որ, վերջապէս, յաջողեցաւ զանի համոզել.

- Յովնան, ըսաւ Սաֆօ, շատ լաւ խորհած է պարոն Քրիստափորը, հարցը ժողովին կը բերենք, կը լուծենք, դու անհոգ եղի՛ր:

Յովնան երջանի՛կ էր, իր երազը պիտի կատարւէր...:

Խնդիրը վերստին բերուեցաւ Ժողովի, ուր, այս անգամ, խիստ տաք եզան վիճաբանութիւնները: Աշոտ զայրեցաւ Սաֆօյի դէմ, որ նախապէս կատաղի հակառակորդ մը յայտնուած էր, և յետոյ, յանկարծ ինք ալ ջերմապէս կը պաշտպանէր Յովնանը:

Վիճաբանութիւնը բաւական բուռն եղաւ, Սաֆօն ու Քրիստափորը, զո՛ւր աշխատեցան Աշոտը համոզելու, սակայն, այս վերջինը, մինչև վերջը յամառեցաւ, այնպէս որ- միւս երկու անդամները պարտաւորուեցան տեղի տալ.

- Ընկերներ, ըսաւ Քրիստափոր, ասիկա սկզբունքի հարց մըն է, իրա՛ւ է, Սօֆիայի Ընդհանուր Ժողովին մէջ անցաւ խօսքը, առաջարկուեցաւ Յովնանը Վիշապի Պատասխանատու Մարմինի անդամ ընտրել, բայց պայմանը չը մոռնա՛նք.

- Ի՞նչ էր պայմանը, հարցուց Սաֆօ.

- Չէ՞ք յիշեր, շարունակեց Քրիստափոր, պայման դրուեցաւ որ Յովնան իր կնոջ հետ Պոլիծ մտնէ, չէ՞.

- Արդէն իր կնոջ համար չէ՞ր որ Յովնանի ընտրութեան առաջարկը բերուեցաւ Ժողովին, ընդմիջեց Աշոտ.

- Արդ, շարունակեց Քրիստափոր, քանի որ Յովնանը կը դժկամակի, չուզեր երթալ Պոլիս, ո՛չ ինքը, ո՛չ իր կինը, ինքնին փակուած կը նկատուի հարցը, ի՞նչ կըսէք:

Եւ խնդիրը փակուեցաւ:

- Այն ատեն, դիտել տուաւ Աշոտ, հոս ի՞նչ գործ ունի Յովնան, ժամ առաջ Ժընէվ թո՛ղ վերադառնայ.

- Իզմիր չերթա՞ր արդեոք, հարցուց Սաֆօ, գործիչի պէտք ունինք, չէ՞.

- Շա՛տ գեղեցիկ խօսեցար, Սաֆօ՛, յարեց Քրիստափոր, կ'առաջարկենք անգամ մը, տեսնենք ի՞նչ կըսէ.

- Չե՛րթար, չե՛րթար, ըսաւ Աշոտ, Յովնանը Ժընէվէն դուրս չելլե՛ր, մոռցաք, իր հիւանդ կինը պիտի դարմանել տայ, չըսա՞ւ ինքը.

- Հոգ չէ՛, առարկեց Քրիստափոր, մենք անգամ մը կ'առաջարկենք, տեսնենք ինչ կը պատասխանէ:

Վիշապի Պատասխանատու Մարմինի երեք անգամները կանչեցին Յովնանը, և իրեն հաղորդեցին իրենց խորհրդակցութեան արդիւնքը.

- Յովնա՛ն, ըսաւ Քրիստափոր, բաւական ծեծեցինք քու խնդիրը Ընդհանուր Ժողովին մէջ կայացած պայմանին համաձայն, պէտք է դուն կնոջդ հետ Պոլիս ուղևորուես, որպէս զի մենք քեզ անդամակից ճանչնանք.

- Պոլիս չե՛նք երթար, ընդմիջեց Յովնան, ո՛չ ես, ո՛չ կինս.

- Քանի որ չէք երթար, շարունակեց Քրիստափոր, մենք չենք կրնար ճանչնալ զձեզ մեր անդամակիցը, և հետեւաբար, դու չես կրնար Ժընէվ, Արեւմըտեան Բիւրօյի մէջ ներկայացուցիչ ըլլայ Վիշապի Պատասխանատու Մարմինին.

- Իզմիրի համար պէտք ունինք գործիչի, միջամըտեց Աշոտ, հոն կ'երթա՞ք, պարո՛ն Յովնան.

- Ի՞նչ ընելու, հարցուց Յովնան արհամարհոտ դէմքով մը.

- Գործելով պատասխանեց Սաֆօ, եղբայր, դու կուզես նստած տեղդ յեղափոխութիւն ընել, մենք ալ հոգի ունինք, մենք ինչպէս պիտի մտնենք Պոլիս.

- Դուք կրնաք մտնել, բայց ես ո՛չ, յարեց Յովնան, ո՛չ Պոլիս կերթամ, ո՛չ Իսմիր, հասկցա՛յ, ես այս կաղմերը գործ մը չունիմ, զիս հրաժարեալ կը նկատէք Վիշապի գործերէն:

- Ինչո՞ւ այդպէս կը վարուիս, Յովնան, յանդիմանեց Քրիտափոք, ինչո՞ւ չես երթար Իզմիր:

Յովնան կրկնեց միեւնոյն խօսքը, յայտարարեց թէ այլ նսգործ մը չունի Վիշապի անդամներուն հետ, և բաժանուեցաւ:

Յաջորդ օրը մեկնեցաւ Ժընէվ իր կնոջ քով...:

Քրիստափոր, Սաֆօ, Աշոտ, Վիշապի երեք անդամներ, միշտ խորհրդակցութիւններ կը կատարէին առաջիկայ գործողութիւններուն վրայ: Ձիւրենք շատ կըզբաղեցնէր Ոսկեհանքը՝ Իզմիր, ուր կարող գործիչներ կը պակսէին:

Յիշիալ շրջանին համար որոշուեցաւ որկել Մարթինը որ արդէն, բաւական ժամանակէ իվեր Յունաստանի մէջ դեգերելէ տաղտկացաւ, յոժարակամ ընդունեց երթալ:

Մարթինը որկուած էր Իզմիր, երբ Աթենք հասաւ Ս. Ջ. Կիլիկիոյ պատասխանատու մարմնի միակ անդամ իր շրջանը կուգեր այցելել և այդ նպատակով եկած էր Յունաստան:

Պետք է խոստովանիլ, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, այդ տարին, անսովոր գործունէութիւն մը, եռանդ մը ցոյց կուտար, Մայր Երկրին դանազան կողմերը զրկելով գործիչներ և օժանդակներ, որոնք, Ապտիւլ Համիտի բռնապետական լուծին տակ հեծով միլիոնաւոր ժողովուրդներուն ազատագրումը փութացնելու համար ամէն զոհաբերութիւն յանձն առած և այնպէս ճամբայ ելած էին Արտասահմանէն, Կովկասի, Եգիպտոսի, Պոլկարիոյ և Ամերիկայի սահմաններէն:

Այս անձնուէրներու կարգէն էր Սիմօն Զաւարեան, որ, Աթենքէն կը մտածէր անցնիլ Պերութ և անկէց դէպի Կիլիկիա:

Ձեռքի ռուսական անցագիրը վիճէ ընել տալով Աթենքի Օսմանեան Դեսպանատան, մէկ քանի օրէն մեկնեցաւ: Քիչ յետոյ լսուեցաւ, անվտանգ մտած էր երկիր:

Կիլիկիոյ Պատասխանատու Մարմինին անդամը, իր շրջան ըրած վայրերէն կը գրէր մերթ ընդ մերթ իր ուսումնասիրութեանց արդիւնքը: Սօֆիայի Ընդհանուր Ժողովին մէջ բարձրադաշակ փառաբանուած պատրաստութիւնները գոյութիւն չունէին, ժողովուրդը կը տառապէր ո՛չ միա՛յն կառավարութեան պաշտօնեաներէն, այլ և, մանաւանդ, անխիղճ աւատապետներէ, ընչքաղց վաշխառուներէ և հողատէր աւագակներէ, որոնք աշխատաւոր գեղջուկին, աղքատ մշակին արիւնը կը ծծէին: Ձեթունի վերջին պատերազմէն ի վեր, վիատութիւնը տիրացած էր բոլոր հոգիներուն, ընդհանուր էր ատելութիւնը Յեղափոխութեան դէմ:

Կիլիկիոյ Պատասխանատու Անդամին այս իմաստով թղթակցութիւնները պարբերաբեր կը հասնէին Աթէնք և Քրիստափորի ու իր ընկերներուն հոգեկան տագնապը կ'աւելցնէին:

ԺԱ.

Գործըրը շոգեպինդ առաջ կը տարուէին, Համիտական կառավարութեան դէմ ուխտեալ դաւադիրները, բոլորը՝ Դաշնակցական անձնուէրներ, ծովէն ու ցամաքէն, ամէն կողմերէ կը մտնէին երկիր, և գիտակցութիւնները կը լարէին տիրող կառավարութեան ձեռին դէմ:

Սակայն, քարոզութիւնը միայն չէր բաւեր, խոսքէն գործի անցնելու էր, և այս անգամ, լուրջ, ամենալուրջ պատրաստութիւններ կը լլային, վճռական և թերեւս մահացու հարուած մը տալու այն Մարմինին, որ կը կոչուէր Ապտիւլ Համիտի Կայսրութիւն:

Եւ որովհետեւ, խորհած էին դաւադրութեան հեղինակները, Երլտրզի Բոնաւորը բանակներ ունէր, որոնք, իր մէկ իրատեով, ընդունակ էին մէկ օրուան մէջ բնաջինջ ընել բովանդակ հպատակները, քանդել, այրել, ջարդել, փճացնել ամէն բան, այդ դժոխային, այդ աւաղակային կազմակերպութեան ուժին դէմ ուրիշ ոյժ մը պէտք էր. ոյժ մը, որուն հրաշքներէն ապշէր տիեզերքը:

Այդ ոյժը ծանօթ էր Վիշապի անդամներուն, Քրիստափոր Միքայէլեանը մեծ քանակութեամբ հայթայթած էր այդ հրաշագործ ուժէն.- Յունաստան բերուած ու մաքսէն ազատուած ապրանքները, որոնց նիւթը, ո՛չ ալ յատկութիւնը գիտէին Աշոտ ու Սաֆօ, Քրիստափորը միայն գիտէր, ի՞նքը գնած էր Բարիզ և այլուր, և ի՞նքը միայն սովորած էր պատրաստութեան ու գործածութեան եղանակները:

- Քրիստափոր՝, հարցուց Սաֆօ հետաքրքիր շարժումով մը, այս ապրանքները հանուեցան մաքսէն և հիմակ ապահով տեղ կը գտնուին, բայց մենք չենք գիտեր, ի՞նչ նիւթեր են արդեօք, և ի՞նչ յատկութիւն ունին անոնք:

Աշոտ, լարուած ուշադրութեամբ մը կը հետեւէր խօսակցութեան:

- Ընկերներ՝, ըսաւ Քրիստափոր, պիտի բացատրեմ ձեզի, լաւ մտիկ ըրէ՛ք. այս նիւթը վերջին գիտերէն է, գիտէ՞ք, ինչէ՛ր քաշեցի մինչև որ յաջողեցայ սովորիլ պատրաստութեան եղանակը.

- Ի՞նչ նիւթ է, հարցուց Աշոտ.

- Այս նիւթը, շարունակեց Քրիստափոր, հրաշալի արդիւնքներ պիտի տայ, մէկ քիւօյին մէջ երկու քիւօ Գլօրատ տը բողաս պիտի խառնու, նաև ուրիշ նիւթեր, շատ թեթև է, փոխադրութիւնը դիւրին և ապահով պիտի կընանք մտցնել Պոլիս, չէ՞.

Աշոտ տհաճ դեմքով մը:

- Պարոն Քրիստափոր, ըսաւ ժպտելով ենթադրենք թէ այդ նիւթը մացուցինք ապահով, հապա մի՞ւսը.

- Որ՞ը, հարցուց Քրիստափոր.

- Գլորադ դը բօդա՛սը պատասխանեց Աշոտ, ուրկէ՛ պիտի գտնենք այդ նիւթը.

Քրիստափոր վեր ցատկեց տեղէն ու գոչեց,

- Ինչ՞... Պոլիսում չը կայ՞, լիքն է Կովկաս, կուզես, փութերո՛վ բերել տամ:

- Քրիստափո՛ր պնդեց Աշոտ, Կովկասը մի՛ բաղդատեր Պոլսոյ հետ. Ապտիւլ Համիտի մայրաքաղաքին մէջ բացարձակապէս արգիլուած է Գլօրադ տը Բգաս ը, և եթէ՞ անհրաժեշտօրէն փնտռուի, դեղարաններուն պատուիրած է, մէկ կրամեն աւելի չեն տար, այն ալ ի՞նչպէս, գիտե՛ք.

- Ինչէ՞ս.

- Չուրի մէջ խառնուաց շարունակեց Աշոտ.

Շուարումը տիրեցաւ Վիշապի անդամներուն, Քրիստափոր կըսկսէր տակաւ պայծառ տեսնել կացութիւնը, կը զգար թէ՛ Բանի մը չպիտի ծառայէին ապրանքները, ա՛յնքան տառապանքներով հայթայթուած և ա՛յլքան դողերով ու դժուարութիւններով Յունաստան փախադրուած. կը մտմտար, կը չարչըկէր իր ուղեղը, միջոց մը գտնելու զանոնք անվտանգ Պոլիս մտցնելու:

- Ի՞նչ կ'ըսես, Աշո՛տ, ըսաւ յանկարծ, Պոլիս մտցնելու միջոց մը չե՞ս գիտեր.

- Եղբա՛յր, ըսաւ Աշոտ, ենթադրենք թէ մացուցինք առանց վտանգի, յետոյ ի՞նչպէս պիտի ընենք պատրաստութիւնը, չե՞որ գլօրատ տը բօդաս պէտք է Բաւական մեծ քանակութեամբ. Պոլիս չը կա՛յ, ինչպէս ըսի քիչ առաջ, ի՞նչպէս պիտի հայթայթենք և ի՞նչպէս պիտի մտցնենք ներս, քանակութիւնն ալ նկատի առնելու է.

- Իրաւունք ունիս, դժուար է մոտքը, և վտանգաւոր՝ պատրաստութիւնը, շարունակեց Քրիստափոր, ի՞նչ ընենք ուրեմն.

Այդքան շուարելու տեղը չէ՛, սրտապնդեց Աշոտ. ատո՛ր ալ դարմանը կայ.

- Ի՞նչպէս, ի՞նչպէս, կրկնեցին միւսերը.

- Այս ապրանքները կը Պուլկարիա գտնուածները, արդէն մինչև ցարդ, ընկերները Բաւական քանակութեամբ ապրանք մացուցած են Պոլիս.

- Բայց, ինչո՞ւ ոչնչացնենք, Աշո՛տ, տրտնջաց Քրիստափոր.

- Շա՛տ լաւ, շարունակեց Աշոտ, եթէ կ'ուզէք, շոշնցացնե՛նք, Բայց ինչի՞ պիտի ծառայեն, ո՛չ կը ծախի, ո՛չ կը փոխադրուի, և եթէ բռնուի, երակայեցե՛ք հետեւանքները.

- Ուրեմն ի՞նչ խորհեցար այդ մասին, Աշո՛տ, հարցուց Սաֆօ.

- Թիթեղէ ամաններու մէջ, պատասխանեց Աշոտ, հիւրանոցիս մատանը պահել կուտամ զանոնք, վաճառականի ապրանք թո՛ղ կարծեն...:

- Ատիկա կըլլա՞յ, առարկեց Քրիստափոր, մինչև ե՞րբ պիտի մնան հոն.

- Շա՛տ աղէկ, ի՞նչ ընենք ուրեմն, հարցուց Աշոտ, ոչնչացնե՛նք, քանի որ օգուտ մը չը պիտի բերեն մեզի:

Եւ Աշոտի յանձնուեցաւ զանոնք պահելու, կամ աւելի ճիշդը, թաղելու հոգը:

ԺԲ

Շաբաթները, ամիսները կը յաջորդէին իրարու և Վիշապի անդամները, իրենց ընկերներով ու ընկերուհիներով, կը թափառէին տակաւին Աթենքի մէջ:

Ամառը վերջացած, Քիֆիսէի ամառանոցէն քաղաք իջած էին Քիրստափոր, տիկին Էլիզապէթ, և օր.օր. Մառի Զայձ ու Ռուպինա:

Աշունը, դալկահար ճակատով ու նուաղկոտ նայւածքով, երերալով կիջներ լեռներէն վար, Աթենքի մօտակայ պորակներուն վրայ մահուան դողին հետ, ձմեռներուն սարսուռը սփռելու:

Արդէն պարտէղներէն կեանքը տակաւ կը քաշուէր. այգիներէն վերադարձողներուն թիւը կ'աճէր օրէ օր, ու մայրաքաղաքը վերստին կը հագներ իր գարնանային պերճանքը: Բնակչութիւնը կը խտանար և փողոցներուն մէջ անցուդարձը կը դժուարանար, սրճարանները լեփլեցուն էին յաճախորդներով, որոնք այգիներու թարմ ողկոյզներէն թորուած ողին կը խմէին ու կ'արբենային:

Իրիկնադէմի խաղաղ ժամուն, երբ աշնային ողբաձայն հովիկ մը կը փչէր Պարթենոնի դարաւոր աւերակներուն գագաթներէն, երբ մօտեցող ցուրտին դողէն դեղնած տերևները կը թափթփէին ու կը ծածկէին ճամբաները իրենց դիակոյտով, երբ ամէն մարդ իր բնակարանը

ՆԿԱՐ- Հ. Յ. Եղիկեան (Պօմպայի Նահատակ Ընտանիքէն)

կը վերադառնար այգիներէն, պարտէզներէն, խանութներէն ու գործարաններէն, և երբ վերջալուսային ծիրանիներու մէջ ծփացող շառագոյն ամպեր կ'արշաւէին երկինքի կամարին տակէն, երբ իրիկունը կը մօտենար ու ստուերները կը փաթթուէին Ելլագայի նոր մայրաքաղաքի մարմարէ սպիտակ տուններուն, այդ անխըռով պահուն, Աշոտ, Աթենքի գերեզմանատունէն կը վերադառնար և կուգար ուղղակի նամակատունը:

Հինգ վայրկեան ետքը նամակատան դռնէն դուրս կ'ելլէր, ձեռքը նամակ մը, որուն վրայ կախուած, առանց շուրջը նայելու, կը քաղէր գայն:

Աշոտին ծնողքը գրած էր այդ նամակը Պոլիսէն, ուր կը գտնուէին:

Տունը տեղը լքաց, անգութ յեղափոխականին տարաբաղդ հայրը, աչքերուն արցունքներովը թրջուած այդ նամակին մէջ կը բանար իր սիրտը, վերքոտ կուրծքին տակ բաբախող հօր սիւրտ մը:

<<Տղա՛ւ, կը գրէր Եղիկեան հաճի Յովհաննէս աղան, հոս շատ մը լուրեր կը պտըտին քու մասիդ. մանուած ես, գիտցած ըլլաս; չըլլա՛յ թէ տեղէդ շարժիս. կարօտես պիտի մեռնիմ, հոգ չէ՛, մի՛ գար, ատեն մըն ալ կ'եցիր հոգ, տեսնէ՛նք ի՛նչ կը բերէ վաղուան օրը: Գիտելիքներ շատ ունիմ, բայց ինչո՞ւ գրեմ, ի՛նչ օգուտ, դուն հոդ, մենք հոդ, մենք հոս, ծովերով անջատուած...: Մայրդ գիշեր ցերեկ կուլայ, աչքերը ճամբան մնացին. ե՞րբ պիտի գայ Կարապէտ, կ'սէ ու կուլայ. բայց, չըլլա՛յ թէ աճապարես, գալու ժամանակը չէ՛. ժողովուրդը կը տապկուի՛. լրտեսները նորէն մեջտեղ ելան, տուններու խուզարկութիւններ. բանտարկութիւններ, սովորական բաներ են. շողենաւէն ելլողը կը բռնեն կը տանին ուղղակի Ոստիկանութեանը Դուռը, հարցնող փնտռող չըկայ. ամա՛ն գաւա՛կս, տեղէդ մի՛ շարժիր...: >>

Նամակը ծայրէ ծայր կարդացած և հասած էր ծանօթ սրճարանը, ուր սովորեալ կը հաւաքուէին իրենք և իրենց խորհրդակցութիւնները կը կատարէին: Գրպանը դրաւ նամակը, և ինք ներս մտաւ:

Քրիստափոր ու Սաֆօ, անկիւնի սեղանին առջև նստած էին դէմ առ դէմ: Աշոտ մօտեցաւ, բարեւեց ու նստաւ անոնց քով:

Ընկերները նշմարեցին Աշոտի ներքին թախիծը.

- Աշո՛տ, ի՞նչ ունիս, ինչո՞ւ տրտում ես, հարցուց Քրիստափոր.

- Բա՛ն չունիմ, պատասխանեց Աշոտ, ինքզինք բռնի զուարթ կեղծեով, նամակ առի տունէն.

- Նամա՞կ, հարցուցին երկու ընկերները տենդագին, ի՞նչ կը գրեն.

- Ինչ պիտի գրեն, շարունակեց Աշոտ, հայրես, դողերու սարսափներու մատնուած, կը յորդորէ որ չերթամ Պոլիս, խստութիւնները բազմապատկուեր են, յաճախակի խուզարկութիւններ, ձերբակալումներ ու բանտարկութիւններ, են.

- Ուրիշ կաւուր լուր մը կա՞յ: Հարցուց Սաֆօ.

- Հայրս ի՞նչ պիտի գիտնայ, պատասխանեց Աշոտ, պարզ խանութպան մը, քաղաքականութենէն ինչ կը հասկնայ.

- Վե՛րջապէս, ըսաւ Քրիստափոր, նամակին մէջ ուրիշ ինչ է գրեր.

- Ընտանեկան լուրեր, պատասխանեց Աշոտ, կարօտի խօսքեր, յորդորներ՝ ատեն մըն ալ կենալու այս կողմերը, եւն:

- Մեր վերջին շարժումներուն վրայ, բա՛ն մը չէ՞ գրեր, հարցուց Սաֆօ.

- Հա՛, աղէ՛կ յիշեցուցիր, յարեց Աշոտ, գիտէ՞ք ի՛նչ կը գրէ.

- Ի՞նչ, հարցուցին ընկերները.

- Ձեզի համար գէշ լուրեր կ'առնենք, կը գրէ. պատասխանեց Աշոտ, կ'երեւայ թէ բաներ մը լսած է.

- Այսօր բօթի օր է, ըսաւ Քրիստափոր, ես դեռ չը հանդիպեցայ Բօթատունը, արդեօք անուանս նամակ կա՞յ.

- Ես ալ չը հանդիպեցայ, ըսաւ Սաֆօ, եթէ կուգես, միասին երկնանք դէպի բօթատունը.

- Երկնանք անգամ մը, կրկնեց Քրիստափոր:

Դառնալով Աշոտին.

- Դու հոս կըսպասես, չէ՞, ըսաւ:

Քրիստափոր ու Սաֆօ մեկնեցան, իսկ Աշոտ, լրագիր մը ձեռքը, սկսաւ կարդալ, միւս կողմէ ումպ ումպ խմելով սուրճը:

Կէս ժամ չանցած, սրճարան վերադարձան Վիշապի երկու անդամները, և առանց նստելու.

- Աշո՛տ, ըսին, Պոլիսէն նամակ ունիս, ինչո՞ւ չես առեր, արի՛, երթա՛նք, ա՛ռ նայինք ի՛նչ նամակ է, ո՛վ է գրեր:

Երեքը միասին դուրս ելան, և կրկին ուղղուեցան նամակատուն:

Աշոտ ստացաւ նամակը, երեքը միասին դուրս ելան և մտան ուրիշ սրճարան մը, առանձին տեղ մը նստան քովէ քով, սեղանին շուրջը:

Նամակը բացաւ Աշոտ, և ստորագրութիւնը կարդալով.

- Օ՛, բացագանչեց, Թորգոմէ՛ն է, Թորգոմէն.

- Թորգոմէ՞ն, գոչեցին միւս երկու ընկերները, կարդա՛ նայինք:

Եւ Աշոտ սկսաւ կարդալ:

Թորգոմ կը գրէր թէ Պոլսոյ կացութիւնը կը վատթարանար երթալով, կարծես թէ Ոստիկանութիւնը հոտ առած ըլլար. կը գանգատէր թէ ինչո՞ւ կ'ուշանային Աթենքի ընկերները, կը թախանձէր որ ժամ առաջ Պոլիս մտնեն, թէն, կը գրէր, ի՛ր ալ դիրքը վատանգուած էր, որովհետև իր բարեկամներէն մէկը ձերբակալուած էր վերջին օրերը:

Թորգոմի նամակին մեջ ուրիշ լուր մը կար, որ ամենէն աւելի ցաւալի էր ու սրտնեղիչ. Աշոտ անգամ մը քաղեց հարկանցի, չուզեց կարդալ, իր ընկերներուն սիրտը չի կոտրելու համար բայց, Քրիստափորի սուր աչքերը տեսած էին այն մէկ քանի տողերը.

- Կարդա՛, կարդա՛, կրկնեց Քրիստափոր, սա վերջին տողերը. ի՛նչ կը գրէ Թորգոմը.

- Ցաւալի լո՛ւր մը- խի՛ստ ցաւալի- մրմնջեց Աշոտ- գլուխը ճօճելով ու բոցարձակ աչքերը թաւալելով.

- Ի՞նչ է, կարդա՛ նայինք, թախանձեցին ընկերները.

Եւ Աշոտ, գրեթէ ակամայ կարդաց նամակին վերջին տողերը: Թորգոմ կը գրէր թէ, դրկուած ապրանքները ցամաք փոխադրուելու միջոցին, լրտեսները հոտ առեր են, և Ոստիկանութիւնը ձերբակալել փորձեր է նաւավարը, որ սակայն, յաջողեր է Յունաստան փախշիլ, իսկ ապրանքները...

Աշոտ կանգ առաւ, չուզեց ընթերցումը շարունակել.

- Է՛, բացագանչեցին Քրիստափոր ու Սաֆօ, իսկ ապրնաքնե՞րը, շարունակէ Աշոտ.

Աշոտ ստիպուեցաւ շարունակել, իսկ ապրանքները բռնուեր են, և ահագին իրարանցում առաջ բերեր են Բ. Դուրին, ինչպէս նաև դիւանագիտական շրջանակներուն մէջ:

- Ափսո՛ս, ափսո՛ս, հեծեց Քրիստափոր, մե՛ղք այսքան աշխատանքներուն ու ծախքերուն. ո՞ր ապուշ նաւավարին յանձնուած էին արդեօք ապրանքները.

- Եթէ ապուշ ըլլար, առարկեց Աշոտ օձիքը ձեռք կուտար, Քրիստափո՛ր, մոռցա՞ր ի՛նչ էր գրեր Թորգոմը, նաւավարը փախե՛ր է փախե՛ր. հո՛ս է եկեր, չե՞նք կընար գտնել զինքը...:

- Ի՞նչ պիտի ընենք, եթէ գտնենք, հարցուց Քրիստափոր, աղետը միշտ աղետ կը մնայ.

- Անշո՛ւշտ, շարունակեց Աշոտ, դէպքին մանրամասնութիւնները կը լսէինք գոնէ:

Այս վերջին լուրերէն շատ ազգուած էր Քրիստափոր, նոյնպէս միւս անդամները, երեքն ալ ջղագրգիռ վիճակի մը մատնուած էին:

Քրիստափոր, ապագայ պատահականութեանց և անպատեհութեանց դէմ կանխարգել միջոցներ կը խորհէր շարունակ, կը մտածէր Վիշապի Մարմինին համար ներքին կանոնագիր մը պատրաստել:

Միւս երկու անդամները կը հակառակէին այս գաղափարին, առարկելով թէ այդպիսի կանոնագիր մը մշակելու համար, պէտք է նախ ուսումնասիրել տեղական պայմանները նաև յարակից պարագաները.

- Քրստափո՛ր, կըսէր Սաֆօ, այդ կանոնագիրը բոլորովին աւելորդ է առայժմ, անգամ մը Պոլիս մտնենք, այնուհետև կը մտածենք ատոր վրայ.

- Սաֆօ՛, կը պդներ Քրիստափոր, առանց ներքին կանոնագրի ո՛չ մէկ ընկերութիւն, ո՛չ մէկ կազմակերպութիւն չապրիր.

- Ճիշդ է, պարո՛ն Քրիստափոր, յարեց Աշոտ, ամեն լուրջ կազմակերպություն պետք է ունենայ ներքին կանոնագիր մը, ծրագիր մը, մենք ատոր հակառակ չենք, միայն, իչպէս դիտել տուաւ Սաֆօն, հոս, Յունաստանի մէջ նստած, Պոլսոյ և Թուրքիոյ համար կանոնագրի մը խմբագրութիւնը գործնական չէ և ո՛չ մէկ օգտակարութիւն ունի, որովհետեւ, Պոլիս մտնելէ յետոյ, պիտի ստիպուինք, դէպքերուն և պարագաներուն ուժովը, փոխել, թերեւս յաղաշրջել այդ կանոնագիրը. իմ կարծիքովս, աւելորդ է զբաղիլ ատով. ուրիշ ի՛նչ կարելոր գործեր ունինք, որոնք երեսի վրայ կը մնան տակաւին, ապագայի խնդիր է կանոնագիրը:

Քրիստափոր, իր միւս աբկու անդամակիցներուն միջեւ դադունի դաշնակցութեան մը, դիտումաւոր, խափանարար ընթացքի մը, մէկ խօքով, իրեն դէմ կանխամտածուած խոչընդոտներու գոյութիւնը կը կասկածէր, և հետզհետէ կը լարուէր անոնց դէմ: Ասդին, Սաֆօ, անբուժելի ջլախտաւոր մը, Քրիստափորի ո՛նէ խօսքը, ո՛ն է անմեղ թելադրութիւնը կամ խորհուրդը ծածկամտօրէն կը մեկնէր. Քրիստափորի մէջ բռնապետի մը խմորը կը տեսնէր Սաֆօ, և սկիզբէն ի վեր իր մէջ խմորուիլ սկսած էր անոր դէմ թագուն ատելութիւն մը: Իսկ Աշոտ. զերծ էր ամեն կանխակալ կարծիքներէ, երբէք չէր ազդուէր կամ ներշնչուէր միջավայրէն կամ պարագաներէն, ո՛չ ալ կ'առաջնորդուէր կիրքերէ, կամ համակրանքներէ կամ հակակրանքներէ. Աշոտի համար Քրիստափորը մաքուր մտաւորական մըն էր, գաղափարապաշտ մը, Յեղափոխութեան քում մը, որուն անկեղծութեան և ձիրքերուն վրայ գաղափար մը կազմած էր. սակայն- այդ ներքին կանոնադրի խնդիրը գէշ ազդեց իրեն. ինք Աշոտ, համոզուած էր Քրիստափորի առողջ դատողութեանը, միայն կը զարմանար թէ ի՛նչպէս այդպիսի սխալ քայլ մը կ'առնէր, յանկարծ ներքին կանոնագրի հարց մը յուզելով, որ անտեղի էր:

Այսպէս վիճաբանութիւնը կը տաքնար, կը զայրանար երթալով, և էք անդամները, երեքն ալ գրեթէ իրենց հաւասարակշռութիւնը նորանցուցած, իրարու նախատական խօսքեր լը փոխանակէին. Քրիստափոր, յամառ մարդ, կը պնդէր, կը շեշտէր, կը պաշտպանէր ներքին կանոնագրի մը հրամայական պէտքը, օգտակարութիւնը, մինչդեռ Սաֆօ, արդէն ջղային ու կասկածոտ, ա՛լ աւելի կը հակառակէր. կը մնար Աշոտը, որ Քրիստափորի հանդէպ իր սնուցած յարգանքը պահելով միշտ, կը ջանար հանդարտեցնել երկու հակառակորդները: Սակայն գլուխները տաքցած էին, անկարելի է խօսք հասկցնել իրարու:

Վերջապէս, Աշոտ յուսահատ, մեկնեցաւ սրճարանէն, երկու հակառակորդները թողլով հոն որարու դէմ:

Սաֆօ կատղած էր, ամիսներէ ի վեր իր սրտին մէջ մթերուած մաղձի թոյնը թափեց հոն- Քրիստափորի առջև:

Քրիստափոր, բարեկութեան մէկ բոպէին, յանկարծ գոչեց Սաֆօյի երեսին.

- Սաֆօ՛, դու գործի՛ք ես եղեր.

- Որի՞, հարցուց Սաֆօ զայրեցկոտ շեշտով մը.

- Թրքահայերո՛ւն, շարունակեց Քրիստափոր, ափսո՛ս քեզի.

- Ի՞նչ ըսել կ'ուզես, բողոքեց Սաֆո.

- Ըսել կ'ուզեմ թե Թադոս Մաթոսներու ձե՛ռքը մնացինք...:

Սաֆո- առանց այլեւս երկարելու, բանավեճին վերջակէտը դրաւ և կոշտօրէն դուրս ելաւ, Քրիստափորը թողելով առանձին: Ուղղակի գնաց գտաւ Աշոտը.

- Աշո՛տ, ըսաւ, գիտե՞ս, ի՛նչ կ'անցնի կը դառնայ.

-Ի՞նչ...

- Մարդը վերջապէս ճանչցուց ինքզինք, շարունակեց Սաֆո խորհրդաւոր դէմքով մը.

- Ո՞ր մարդը, հարցուց Աշոտ, ի՞նչ կ'ըսես, պարզ խոսե՛.

- Քանի՞ մարդ ունինք մեր գլխուն վերև, պատասխանեց Սաֆո.

- Քրիստափո՞րը, ընդմիջեց Աշոտ.

- Ուրիշ ո՞վ կ'ընայ ըլլայ, շարունակեց Սաֆո, գիտե՞ս ի՛նչ ըսաւ, վեճին մէջ իր ներկը դուրս տուաւ.

- Ի՞նչ ըսաւ, հարցուց Աշոտ հետաքրքիր շարժումով մը.

- Թադոս, Մաթո՛ս ըսաւ, պատասխանեց Սաֆո.

- Ի՞նչ ըսել է Թադոս Մաթոս:

- Խըմպը՛լ, խախա՛, չե՞ս հասկնար, հեզնեց Սաֆո, ա՛լ աւելի գրգռելով դիմացինը.

- Որի՞ հասցէին ուղղեց այս անբազանքը, հարցուց Աշոտ.

- Ձե՛ր հասցէին, ձե՛ր շարունակեց Սաֆո, Թորգոմին ու քեզի՛....:

Աշոտ յուզուեցաւ.

- Վա՛յ, բացագանչեց, ըսել է թէ գործիքներ ենք անարգ գործիքներ, հա՞...

- Աւելի՛ն կայ, շարունակեց Սաֆո արծարծելով կրակը, կը կարծէ թէ ես ձեզի գործի՛ք եմ եղեր...:

Աշոտ մտիկ չէր ըներ, աչքերը դարձած, մոլորած էին, զո՛ւր կաշխատէր պահել իր պաղարիւնը:

- Սաֆո՛, այդ խնդիրը ձգե՛, հիմակ ո՞ւր է ինքը.

- Ո՞ւր պիտի ըլլայ, սովորական տե՛ղը, պատասխանեց Սաֆո, մեր ծանօթ սրճարա՛նը:

Աշոտ առանց << մնաս բարով>>ի հեռացաւ Սաֆոյի քովէն և գնաց նստաւ ուրիշ սրճարան մը:

Գանկը կ'այրեր, աչքերը կը վառէին, կատղած էր Քրիստափորի դէմ, որ նախատած էր Թրքահայերը:

Շատ ատեն չանցաւ, Քրիստափորը ներս մտաւ սրճարանէն և եկաւ Աշոտի քով նստաւ:

Աշոտ, երեսկախ, ճակետը կնճռոտ, դաժան նայածքով, անխօս կը նստէր.

- Ի՞նչ ունիս, Աշո՛տ, հարցուց Քրիստափոր միամտօրէն.

- Ի՞նչ կունենայ Թադո՛ւսը, պատասխանեց յանկարծ Աշոտ զսպուած կատաղութիւն մը՝ դէմքին վրայ.

- Ի՞նչ ըսել է Թադոս Մաթո՛ւս, յարեց Քրիստափոր, ի՞նչ ըսել կուզես, Աշո՛տ, ո՞վ է Թադոս Մաթոսը...

- Սաֆօյին հարցուր, յարեց Աշոտ.

Քրիստափոր վայրկենապէս ըմբռնեց Սաֆօյի կատարած դերը:

- Աշո՛տ, ըսաւ մտերիմ շեշտով մը, ջանալով հանդարտեցնել իր զայրացած ընկերը, տղայական բանէ՛ր են ատոնք, ինչո՞ւ կարեւորութիւն ես տուեր.

Աշոտ չէր խօսեր, դէմքը կախած.մտիկ կընէր լոկ.

- Աշո՛տ, շարունակեց Քրիստափոր, Սաֆօ լաւ դեր չի՛ կատարեր մեր միջև.

- Բայց նախատի՞նքը, պարոն Քրիստափոր, կը մարսուի՞ ասիկա:

Քրիստափոր լռեց:

Յետոյ, ուզեց փոխել խօսակցութեան նիւթը, յուսալով թէ պիտի յաջողէր, գոնէ առժամապէս, մեղմել Աշոտի վիշտը.

- Աշո՛տ, ըսաւ, Զարեհը տեսա՞ր.

Մանկալճի Զարեհին համար էր:

- Է՛, ընդմիջեց Աշոտ, ի՞նչ կայ.

- Տե՛ս զինքը, շարունակեց Քրիստափոր, խօսե՛ շուտով թող վերջացնէ...

- Ես քու գործակալգ չե՛մ, ընդմիջեց յանկարծ, Աշոտ, ո՛չ ալ լրատարդ, դուն կրնաս անձմար տեսնել զինքը, խօսիլ:

Քրիստափոր վիրաւորութեամբ, երբէք Աշոտէն այսպիսի կոպիտ վարմունք մը չէր սպասեր.

- Ի՞նչ ես եղեր, Աշո՛տ, կշտամբեց.

- Ի՞նչ պիտի ըլլամ, քեզի՛ հարցուր:

Եւ սկսան իրարու գլխու լուտանքներ տեղալ:

Սրժարանին յաճախորդները կը դիտէին տեսարանը:

Աշոտ իսկոյն մեկնեցաւ:

Հիւրանոցը գնաց. իր սենեակը քաշուեցաւ:

Անհանգիստ էր, կը խորհէր հրաժարիլ գործէն, անմիջապէս հեռանալ Աթէնքէն և Եգիպտոս վերադառնալ, սակայն, միւս կողմէ, կը մտածէր թէ՝ պիտի մեղադրէին, պիտի դատապարտէին, խաչագող պիտի յորջորջէին զինք ու պիտի ըսէին.- Երկու հազար ֆրանգը կերաւ, Կազմակերպութեան ահագին հարուած մը տուաւ ու կծիկը դրաւ: Այս նախատինքը, բնականաբար, չպիտի ուզէր կրել, ամէն պարագայի մէջ, մոռնալով անձնական վէճերը, հանդուրժել պէտք էր ամէն անարգանք, հալածանք, ամէն տառապանքի վիզ ծռելու էր, մտած էր անգամ մը գործին մէջ, կէս ճամբան ձգել փախչիլ վատութիւններու վատութիւնը պիտի ըլլար:

Իրիկուան դէմ, երբ Աշոտ կը պատրաստուէր դուրս ելլել հիւրանոցէն, դուռը հանդիպեցաւ Քրիստափորի, որ իրեն այցելութեան կուգար:

Աշոտ կանգ առաւ դուռին առջև:

- Աշո՛տ, ըսաւ Քրիստափոր, քեզի՛ կուգայի, կարելոր, խիստ կարելոր խօսելիք ունիմ քեզի, եկո՛ւր երթանք առանձին տեղ մը:

Աշոտ, վայրկենապէս հաշտուած, ընկերացաւ Քրիստափորի, և միասին գացին փոքրիկ սրճարան մը, ուր որոշ դասակարգի մը մարդիկ կը յաճախէին, և ուր լռութիւն ու հանդարտութիւն կը տիրէր:

Անկիւն մը նսաչ, քովէ քով, պահ մը զիրար դիտեցին:

Յետոյ, Քրիստափոր բանալով խօսակցութեան դուռը.

- Աշո՛տ, ըսաւ, մենք հոս, Արտասահմանում, փծուն ու սնոտի խնդիրներով ժամանակ կըսպաննենք, անդին գո՛րծը կը տուժէ, գիտե՞ս.

- Նիյնը չէ՞ ըսեր ես ալ, յարեց Աշոտ, դուն, պարո՛ն Քրիստափոր, ներքին կանոնագրի մը հարցը մէջտեղ նետեցիր, պարապ տեղը զիրար վիրաւորեցինք, չէ՞.

- Այդ բաներուն կարգը չէ՛ հիմա, Աշո՛տ, գիտե՞ս, ինչե՛ր պատահեր են.

- Ուր, հարցուց Աշոտ տենդոտ շարժումով մը.

- Պոլի՛ս, Պոլի՛ս, կրկնեց Քրիստափոր.

- Ի՞նչ կ'ըսէք, գոչեց Աշոտ, ի՞նչ է պատահեր.

Սոսկալի՛ բաներ, սոսկալի՛, կրկնեց Քրիստափոր:

Թորգոմ ընդարձակ նամակի մը մէջ, որ նոյ օրը հասած էր, հետևեալը կը պատմէր.-

<< Պուլկարիայէն ուժանակներ ու ռումբեր զրկուած էին շոգենաւով: Մեր ծանօթ յոյն նաւաւարը գացած էր նաւապետին քով, ստանալու ապրանքները: Նաւապետը վաղուց կը ճանչնար մեր յոյն նաւաւարը: Նաւագները սակառ մը կը յանձնեն, որուն պարունակութիւնը ծանօթ էր արդէն նաւաւարին սա, իր կարգին, սակառը կը յանձնէ թուրք նաւաւարի մը, առանց անոր իմաց տալու պարունակութիւնը: Այս վերջին նաւաւարը միամիտ մարդ մըն էր. մաքսախոյս ապրանք մը կը կը կարծէր զայն. դուրս կը հանէ, իր տունը կը տանի, և շահագրգիռ ակնարկ մը նետելով վրան, կսկսի խուզարկել զայն: Եւ ահա կը գտնէ հոն պարապ երկաթէ ռումբեր, իրարու վրայ պառկած:

<< Աշտոտ հայիւններ կը մոլտայ յոյն նաւաւարի հասցէին, և կը սպասէ որ գայ իրեն և պահանջէ սակառը:

<< Յոյն նաւաւարը նոյն օրը կը ներկայանայ իր բարեկամ թուրքին, յանձնուած սակառը պահանջելու:

Հոս տեղի կ'ունենայ ողբերգա, զաւեշտախաղի մը ներկայացումը, երկու հին աղոէսներ, ծովեզերքի բոլոր անյայտ ու յայտնի արհեստները իւրացուցած երկու արհեստակիցներ, պահ մը կը նային իրարու երես.

- Ի՞նչ էր սակառին մէջինը, կը հարցնէ Թուրքը, չարաճճի ժպիտով մը.

- Ես գիտե՞մ, պատասխանեց Յույնը.

Թուրք նաւաւարին դիմագծերը ծամածոեցան յանկարծ, ընթուիներու պոստոմով մը, պոռչտաց.

- Քանի որ չես գիտեր սակառին պարունակութիւնը, հ'մա, հի'մա, քսան ոսկի պիտի համրես, սէնի կիտի քէռաթա...

Յոյնը ապշահար, անգիտանալ կեղծելով.

- Աստուա՛ծ վկայ, չեմ գիտեր պարունակութիւնը.

- Ուրեմն- շարունակեց Թուրքը սպառնական շարժումով մը, քանի որ պարունակութիւնը չես գիտեր, սակառին չես կրնար ձեռք դպցնել, մինչև որ ինծի քսան ոսկի չը վճարես.

- Ի՞նչ կ'ըսես, վեր ցատկեց յանկարծ յոյն նաւաւարը յուսահատական ճիշ մը փրցնելով, կատա՛կ կ'ընես, ի՞նչ է սակառին մէջինը, որ քսան ոսկի կը պահանջես ինէ:

<< Թուրքը, անտարբեր դէմքով մը, սակառին վրայ ծռած, երկու ձեռքերովը ռումբ մը դուրդ կը հանէ մէջէն ու կը պոռայ նաւաւարի երեսին.

- Ի՞նչ կայ, չե՞ս տեսներ, ասիկա ի՞նչ է, պօմպա՛ւ է, պօմպա՛ւ:

<< Յոյնը, դերասանութիւնը կատարելութեան հասցըներլու համար, կը մարի կիյնայ գետէն: Միամիտ Թուրքը կըստիպուի անմիջապէս մոռնալ իր քէնը, կ'աճապարէ օգնութեան

հասնիլ, մինչև որ, իբր թէ սթափած, Յոյնը կը բանայ աչքերը, շուրջը կը պտըտցնէ, և յետոյ, յառելով Թուրքին.

- Հայրենակի՛ց, կըսէ աղերսական ձայնով մը, ի՞նչ երդում ընեմ որ հաւատաս, Քրիստո՞սը, Խա՞չը, Աստուածածի՞նը, ո՞ր մէկուն վրայ երդնում, խոսե՛, Աստուա՛ծ վկայ որ բնաւ տեղեկութիւն չունիմ, խաբա՛ծ են զիս, խաբա՛ծ...:

<< Թուրքը կը պնդէր, շարունակ սպառնալով.

- Ձներ չեմ ուզեր, ինծի նայե՛, կամ քսան ոսկին հոս, ա՛յս բռպէիս մէջ կը համրես, և կ'ամ...

- Ի՞նչ...

- Լո՛ւր պիտի տամ, յարեց թուրք նաւավարը:

<< Յոյնը սարսափար, հազարումէկ խոստումներով, երդումներով կը ջանայ հաւտացնել թէ խաբէութեան գոհ մըն է ինքը, թէ՛ սակառին պարունակութենէն երբեք տեղեկութիւն չունէր և թէ՛ իրեն անծանօթ է անէրը, են:

<< Սակայն Թուրքը, տակառին տիրացած, կըսպառնայ շարունակ.

- Կա՛մ քսան ոսկին, և կա՛մ...:

Վերջապէս երկու ժամէ աւելի կը տնէ այս մենամարտը: Յոյնը ջախջախուած, կը մօտենայ Թուրքին ու պարտելի մը ձեւով.

- Բարեկա՛մս, կըսէ անոր, եթէ իսլամ ես, հաւատա խօսքիս, ես բացարձակապէս անմեղ մըն եմ, երբեք չէի գիտեր թէ ինչ կը պարունակէր սակառը, բայց քանի որ յատնի եղաւ հիմա, պօմպա՛ է մեջինը, կաղաչեմ. եղա՛ծ է սխալում մը, ա՛ռ մէկ քան ոսկի, և ինծի վերադարձուր սակառը.

- Կարելի՞ քան է, կը յամառէր թուրքը, քսանէն մէ՛կ ոսկի պակառ չեմ առներ, դո՛ն գիտես, սակառը լաւ տեղ է, թո՛ղ մնայ, վաղը կը չափե՛մ հասակդ:

<< Յոյնը կը պաղատէր, կուլար, իսկ Թուրքը կը յոխորտար, քանի՛ կը տեսնէր Յոյնը, որ իր ոտքերուն տակ մը քծներ ու կուլար:

<< Ի վերջոյ, Յոյնը կը պարտաւորուի, տեսնելով թուրքին յամառութիւնը, սակառը թողուլ հոն, Թուրքին տունը, և ինք կուգայ եզելութիւնը կը պատմէ Քրիստին:>>

Հոս քիչ մը կանգ առաւ Քրիստափոր, մինչ Աշոտ անհամբեր կըսպասէր պատմութեան վախճանին:

- Աշո՛տ, ըսաւ Քրիստափոր, Քրիսը կը ճանչնաւ, չէ՞.

- Կը ճանչնամ, ի՞նչ կայ, հարցուց Աշատ, իր կարգին.

- Կարևոր գործեր յանձնուած են իրեն, շարունակեց Քրիստափոր, չէ՞.

- Այո՛, պատասխանեց Աշոտ, Թորգոմը հոն է, չէ՞.
- Անշո՛ւշտ, հաստատեց Քրիստափոր, մենք Թորգոմը կը ճանչնանք.
- Հետեւաբար, յարեց Աշոտ, Քրիստի անձը պէտք չէ զբաղեցնէ մեզ:

Այս կարճ ընդհատումէն ետքը, ժրիստափոր շարունակեց կարդալ Թորգոմին գրութիւնը.-

ՆԿԱՐ - ՔՐԻՍ ՎԻՉԱՎԻ նոր Անդամներէն

<< Քրիս, երբ կը լսէ յոյն նաւավարէն թէ ուժանակ ու ռումբեր պարունակող սակառը Թուրքի մը ձեռք է անցեր, խոհեմութիւն կը համարի, մէկ քանի ոսկի վճարելով, անոր ձեռքէն աղատել ապրանքները:

<< Թուրքը, ինչպէս յիշեցի վերեւ, սակառը տարած էր տունը, որ կը գտունէր Ազապ Գաբուի կողմը, և գաղտնիքը յայտնած էր ուրիշ Թուրքի մը, որուն շնորհիւ կը յուսար շինել ահագին հարստութիւն մը:

<< Եւ գիշերը մտած էին անկողին, այդ երագով:

<< Կէս գիշերուան խաղաղէտ պահուն, երբ լոյսերը մարած էին քնացող մայրաքաղաքի բոլոր բնակարաններուն մէջ, և միայն փողոցները զգուրտող դասներակներով հազարաւոր շուներու հաչոցները կը լսուէին մերթ ընդ մերթ, Ազապ Գաբուի այդ մթին անկիւնը յանկարծ կը շրջապատուի ոստիկաններէ:

<< Թուրք նաւավարին թուրք բարեկամը (.) վարկենապէս հաղորդած էր գաղտնիքը ոստիկանութեան նախարար Շէֆիզ Բաշային, որ շուտով հոն փութացուցած էր ոստիկանները:

<< Ասոնք ներս կը մտնեն, խուզարկութիւններ կ'ընեն և կը գտնեն ռումբերը հոն, ճիշդ ինչպէս եթէ իրենց ձեռքերովը դրած ըլլային զանոնք:

<< Ոստիկանները, թուրք նաւավարին ձեռքերը կապած, ուղղակի բանտը կը տանին զանի, ուր, այն քան վարդագոյն ու ոսկեղէն երագներէ վերջ, ուր իր բաղդին պալատը տեսած էր ան, փառաւոր տփոց մը կուտէ, և կ'ենթարկուի սոսկալի խոշտանգումներու, մինչև որ կը խոստովանի իրողութիւնը:

<< Թուրք նաւավարին հարցաքննութեան հետեւանքով, ոստիկանութիւնը խուզարկութիւններ կը կատարէ շատ մը տեղեր, ինչպէս նաեւ ձերբակալումներ բազմաթիւ յոյներու, որոնց մեղապարտութիւնը հաստատող ո՛չ մէկ ապացոյց կարելի չըլլար գտնել:

<< Գալով յոյն նաւավարին, որ սակառը յանձնած էր Թուրքին, մէկ քանի օր կ'անյայտանայ, ինքզինք կ'ապհէ, քիչ քիչ երեւան կ'ելլէ, ու վերստին կը սկսի իր արհեստը գործ դնելու.բարեբաղդութիւն մըն էր իրեն համար որ թուրք նաւավարը՝ դէմքով միայն կը ճանչնար զինքը, ո՛չ իր անունը գիտէր, ո՛չ ալ տունը:

Քրիս, որուն համար կը գրէր Թորգոմ, նոր դէմք մը չէր Դաշնակցութեան մէջ:

Աշոտ, իր յեղափոխականի յուշատետրին մէջ- Արիւնի ճամբին վրայ- ա՛յսպէս կը նկարագրէ Քրիսի գործունէութիւնը:

<< Քրիս Ֆէնէրճեան կամ Սիլվիօ Ռիչչի, վերջին անգամ, մահափորձէն մէկ ու կէս տարի առաջ, Ռոստոմի կողմէն Պոլիս դրկուած էր յարաբերութիւնները պահելու համար: Թէն Քրիս ուզած էր գործի մը ձեռնարկել, որուն համար ահագին ծախքեր ալ ըրած էր, որովհետեւ Պոլսոյ Պատասխանատու Մարմինը, գրամ ձեռք բերելու համար, իր գործունէութեան վայրը փոխադրած էր այլուր (Կոկաս) և Պոլսոյ համար մասնաւոր ծրագիր ունէր գործադրելու:

<< 1904ին Սօֆիա գումարուած Ընդհանուր Ժողովը վերջացած և ընտրուած էր նոր Պատասխանատու Մարմին մը, որ անմիջապէս գործի ձեռնարկած էր, Պոլիս ուժանակ մտցնելու:

<< Քրիսի գրուեցաւ միջոցներ գտնելու, դրկուած ուժանակները դուրս հանելու համար: Քրիս յաջողեցաւ ապահով դուրս հանել բոլոր դրկուած ուժանակները, ունեցաւ իր օդակարութիւնը, նաեւ կառքը մաքսէն դուրս հանեց:

<< Սաֆօյի բացակայութեանը, իր անունին կը դրկուէին դրամները, զոր ինքը զանձելով մեզի կը յանձնէր, և իրեն նկատմամբ ո՛ր և է կասկածմը չէր եղած, և իր հայ ըլլալը ո՛չ ոք գիտէր, մահափորձէն գրեթէ քսանըհինգ օր առաջ, անդամ ընտրուած էր Պոլսոյ Պատասխանատու Մարմինին:>>

Կարծէր տալ այս համառօտ ծանօթութիւնները մեր ընթերցողներուն, որոնք զանազան առիթներով պիտի հանդիպին Յեղափոխական այս շահագրգիռ դէմքին:

Այս երիտասարդին մասին է որ Քրիստափոր տեղեկութիւններ կուգէր առնել Աշոտէն:

- Աշո՛տ, ըսաւ Քրիստափոր, հասած լուրերը մխիթարակն չեն, Թրոգոմը մինակ է մնացեր, պէտք է ժամ առաջ ուզելորինք:

- Թրոգո՛մ ալ գրած էր արդէն.յարեց Աշոտ, եթէ տակաւին այս կողմերը դեգերինք, գործերը պիտի վատթարանան և մեր բոլոր ջանքերը, բոլոր զոհողութիւնները պիտի դերն ելլեն:

Եւ այսպէս խօսակցելով ու վշտակցելով իրարու, սրճարանէն դուրս ելլան Վիշապի երկու անդամները:

ԺԳ

Սակառին միջադէպը շուտով մոտ ցուած էր, թուրք նաւավարին բանտարկութենէն ի վեր մէկ ամին անցած էր և նաւահանգիստի հսկողութիւնները քիչ մը թուլցած կը թուէին:

Դաշնակցութեան գործիչները, օգտուելով Պոլսոյ Ոստիկանութեան անհոգ ու թոյլ ընթացքէն, զաղտնի միջոցներով յաջողած էին, այդ մէկ ամսուան մէջ, արտասահմանիմէջ

պատրաստուած ապրանքներու կարելոր քանակութիւն մը փոխադրել տալ Պոլիս, առանց վտանգի:

Սակայն բաղդը միշտ չպիտի ժպտէր յեղափոխականներուն, որոնք, այդ օրերուն մէջ գրեթէ ամէն շաբաթ, տասնեակներով ներս կը մտնէին ու տասնեակներով դուրս կ'ելլէին Ապտիւլ Համիտի մայրաքաղաքէն, առանց իրենց վրայ հրաւիրելու Ոստիկանութեան ո՛չ ալ Երլտըզի լրտեսներուն ուշադրութիւնը:

Յանկարծ, խոստութիւնները կրկնապատկուեցան, մանսաւորապէս Ղալաթիոյ քարափին վրայ: Շոգենաւէն ցամաք ըլլով ամէն ճամբարդ, անմիջապէս կը պաշարուէր լրտեսներէ և, ոստիկաններու ձեռքով կ'առաջնորդուէր ուղղակի Սալօնը:

Այդ օրերուն մէջ էր, Ղալաթիոյ քարափին երկայնքը խոնուած էր մեծ թիւով լրտեսներու, ոստիկաններու և հետաքրքիրներու ամբախ մը, որ երթելով աւելի կըստուարանար, զո՛ւր կը փորձէին ոստիկանները ցրուել զայն:

Ի՞նչ կար արդեօք, ինչո՞ւ այդ խոնումը, ինչո՞ւ այդ իրարանցումը ժողովուրդին ու ոստիկաններուն մէջ:

- Մաքսէն ապրանք փախցուցած են, կը փսփսային իրարու քանի մը մարդեր, ոտոնք կ'անցնէին բաղմութեան մէջէն.

- Արգիլուած ապրանքնե՛ր, կը մրմնջէր ուրիշ մը.

- Տոպրակ մըն է, ուրիշ մը կըսէր քովինին, չե՞ս տեսներ, կը փախչե՛....:

Արդարև, այդ ահագին ամբոխը ճեղքելով, կոնակը տոպրակ մը, մարդ մը, կը փախչէր ոստիկան զինուորներուն առջեւէն, որոնք կը հետապնդէին պօռալով.

- Բոնեցե՛ք, բոնեցե՛ք գողը....:

Եւ անտարբեր անցորդները, առանց հետաքրքրուելու, կը շարունակէին իրենց ճամբան, բազմութեան մէջէն.

Ոստիկան զինուորներուն միացած էին նաև մաքսատան պաշտօնետներ, որոնք, իրենց կարգին կը հալածէին փախստական բեռնակիրները, կանչելով ետսէն.

- Մաքսե՛ն կը փածցնէ, մաքսե՛ն:

Եւ շարունակ կը հալածէին:

Խեղճ մարդը, յոգնած պարտասած, ա՛լ անկարող՝ վազելու, ուսին բեռը գետին կը նետէ և այս անգամ իր բոլոր ուժովը կըսկսի վազել: Ոստիկանները կը դադրին հետապնդելէ դանի:

Մարդը կ'աղատի ապրանքը ձեռք կ'անցնի:

Մաքսատան պաշտօնետները կը թառին տոպրակին վրայ, և շալկելով կը տանին մաքսատունը:

Շուտով կը բացուի տոպրակը...-

Ռումբի պատրոյգներ, գաբսիւլներ, ռումբեր, այլ և այլ ելեքարական թելեր, մէկ խօսքով, Ապտիլ Համիտի մղձաւանջը կազմող բոլոր վտանգաւոր ու մահաբեր ապրանքները...:

Տոպրակը նոյնութեամբ կը յանձնուի Ոստիկանութեան, որ շուտով կը յաջողի հասկնալ փախստականին ինքնութիւնը:

Գրաւուած տոպրակին տէրը յոյն մըն էր, Եօրկի անունով, Դաշնակցութեան ծանօթ, հաւատարիմ գործակալներէն, որ մէկէ աւելի պարագաներու և վտանգներու մէջ ապացոյցը տուած էր անկեղծութեան, իր ճարպիկութեան և իր խոհեմութեան: Ու հիմա, ոստիկան զինուորներուն ձեռքէն ձողոպրած, կը դիմէ Դաշնակցական ընկերներուն և ապահով թագստող մը կը խնդրէ:

Եօրկի ջերմ ընդունելութիւն մը կը գտնէ Դաշնակցականներուն քով, որոնք, մէկ քանի օր, ճօնսըն աբարթըմանի դռնապան Մանուկին հիւր կուտան զանի:

Այս միջադէպը շատ մը խուզարկութիւններու և ձերբակալումներու դուռ բացաւ: Ոստիկանութիւնը խստացուց հսկողութիւնները, մասնաւորապէս Ղալաթիա ու Բերա:

Եւ այս խստութիւնը տեւեց միայն մէկ շաբաթ, թէեւ Եօրկին միշտ կը հետապնդուէր և ասոր պատճառով ուրիշ անմեղներ ալ կը ձերբակալուէին:

Այդ միջոցին, Դաշնակցութեան տասը տարուան ծանօթ գործակալներէն Գամպուր Գօսթին, պատուական յոյնը, կը հետապնդուի ոստիկանօթենէն, կը պարտաւորուի երեսի վրայ ձգել իր բոլոր գործերը, և փախչիլ Յունաստան: Նոյնպէս Եօրկին, ատեն մը դռնապան Մանուկին քով ինքզինք պահելէ յետոյ, օր մը, շոգենաւ կը նետուի և կը փախչի Բիրէա:

Մէկ քանի շաբաթներ անցան տոպրակի միջադէպէն վրայ ու շուտով մոռցուեցաւ ամէն բան:

Դաշնակցութիւնը կը ծաղրէր ամէն վտանգ, Ընդհանուր Ժողովին գաղտնի որոշումները պիտի գործադրէ տար ամէն գնով, ուստի. Արտասահմանի զանազան կէտերէն, գրեթէ ամէն շաբաթ, նոր մարդեր ու նոր ապրանքներ կը դրկուէին Պոլիս, ուր քիչ ատենէն, զահուրելի դէպքեր պիտի պայթէին:

Պոլսսէն փակած Եօրկին ու Գամպուր Գօսթին, այս երկու յոյները, կերթամ ուղղակի Աթէնք և կը գտնեն Վիշապի անդամները, որոնց կը պատմեն Պոլսոյ վերջին դէպքերուն մանրամասնութիւնները:

Այս երկու փախստականները Յունաստանէն ատրճանակներ և ուրիշ արգիլուած ապրանքներ փոխադրել կուտային Պոլիս և այսպէս, դարձեալ իրենց օգտակար ծառայութիւնները կը նուիրէին Դաշնակցութեան գործին:

Իսկ Թորգոմ- առանձին մնացած, Պոլիսէն շարունակ գանգատներ կը տեղացներ Յունաստան, իր ընկերներուն, և կը պաղատէր որ ժամ առաջ մտնէին երկիր և ձեռնարկէին գործի:

Վիշապի երեք անդամները, Թորգոմի նամակներէն, մանաւանդ, Պոլսոյ վերջին դէպքերէն տպաւորուած ու խորապէս ազդուած, վճռեցին շուտով մտնել Պոլիս:

Ուստի, վերստին մտան խորհրդակցութեան:

Պոլկարիոյ օժանդակ ընկերներէն Գրիգոր Սայեանը մտած էր արդէն Պոլիս, Ռումանիոյ ճամբով, Գոսդանցայէն շոգենաւ նստած. միւս օժանդակ ընկերներէն Լեւոն Քրիքեան և ուրիշները ժամանակին հասած էին Աթենք և Վիշապի անդամներուն հրահանգին կըսպասէին երկիր մտնելու համար:

Խորհրդակցութիւնը կարելոր էր, բաց ի Վիշապի երեք անդամներէն, ներկայ էին նաև օժանդակ ընկերներէն Զարեհ, Լեւոն և ուրիշ ընկերուհիներ:

- Ընկերներ, ըսաւ Քրիստափոր, իր շուրջը բաղլորուած դաշնակցական ուխտեալներուն, ժամանակը հասած է, պէտք է մեկնինք այս երկրէն, որ այսքան ամիս է, ընդունեց մեզ իր ասպնջական ծոցը. հիմա պէտք է որոշենք թէ ո՞վ, որո՞նք մեր մէջէն պիտի մեկնին առաջին փայտով:

Ընկերները լռութեամբ կը հետեւէին Քրիստափորի, առանց ընդմիջելու:

- Պարո՛ն Քրիստափոր, ըսաւ Սաֆօ, նախ պէտք է մենք ճամբայ բանանք, մե՛նք պէտք է մտնենք Պոլիս, պատրաստութիւնները գլուխ հանելու համար, և յետոյ, երբ ամէն պատրաստութիւններ լրացած, վերջացած պիտի ըլլան, պէտք է հոն կանչենք մեր օժանդակ ընկերները, նոյնպէս ընկերուհիները:

- Սաֆօ՛, առարկեց Քրիստափոր, ես ու դու կը մեկնինք, մեր գործը դիւրին է, բայց Աշո՞տը:

- Ի՞նչ է եղեր Աշոտին, հարցուց Սաֆօ.

- Զարմա՛նք, ինչու այդպէս կը խօսիս, Սաֆօ՛, մեզ Աշոտի՞ հետ կը բաղդատես.

- Խնդրե՛մ, բացատրեցե՛ք, յարեց Սաֆօ. ի՞նչ տարբերութիւն կայ մեր ու Աշոտին միջև.

- Հպարտութեան տարբերութի՛ւնը, պատասխանեց Քրիստափոր, մենք ռուսահպատակներ ենք, մեզի համար արգելք մը չըկայ, ազատ է մեր մուտքը.

- Աշո՛տ ալ ունի անցագիր, առարկեց Սաֆօ, ամերիկեան հպատակ չե՞՞նք.

- Չըսի՞նք, Սաֆօ՛, ինչո՞ւ կը մոռնաս, ամերիկեան անցագիրը գրօ՛ է, գրօ՛.

- Ինչո՞ւ...

- Հիւպատասարանը ձանձրացա՛ծ է, չպիտի պաշտպանէ Աշոտը.

Սաֆօ լռեց, իրաւունք ունէր Քրիստափորը:

Օրիորդ Ռուպինան, որ միշտ լռութիւն կը պահէր, լոկ ունկդրելով, ինք ալ՝ խօսքի խառնուեցաւ.

- Պարո՛ն Սաֆօ, ըսաւ, օսմանեան հպատակներուն համա՛ր է մուտքի դժուարութիւնը, չէ՞:

- Այո՛, պատասխանեց Սաֆօ, օտար հպատակներուն համար բացարձակապէս ազատ է մուտքը.

-Ուրեմն, շարունակեց օրիորդ Ռուպինա, նախ օտարհպատակ ընկերները կը մեկնին ընկերուիներով, Պոլիս կը մտնեն, նախ կը պատրաստեն դիւրութիւնները, յետոյ կը կանչեն օսմանեան հպատակ ընկերները.

- Մենք ի՞նչ կ'ըսէինք, օրիո՛րդ, դիտել տուաւ Քրիստափոր հեզնական ժպիտով. դա հասկնալի՛ է, պէտք է նախ մենք անգամ մը ներս մտնենք, այնուհետև գործը պիտի դիւրանայ.-

Բաւական երկար վիճաբանութիւններէ վերջ, հետևեալ որոշումներուն յանգեցան.

Քրիստափոր, Սաֆօ, Մարի Զայձ, Ռուպինա. այս չորս օտարահպատակ ընկերներն ու ընկերուիները պիտի մեկնէին Աթենքէն դէպի Պոլիս- գանազան ճամբաներէ.- Աշոտ պիտի մնար ատեն մըն ալ Յունաստանի մէջ, օժանդակ ընկերներուն հետ, սպասելով նոր հրահանգներու:

Աշոտ, իր յուշատետրին մէջ, հետեւեալը կը պատմէ այս մասին.-

<< Որոշեցինք վերջապէս երկիր մտնել.նախ Քրիստափոր ու Սաֆօ պիտի մտնէին, Պոլսոյ մէջ բոլոր պատրաստութիւնները գլուխ պիտի հանէին, և յետոյ զիս պիտի կանչէին Զարեհին (Մանկալճի) հետ.ես արդէն կասկածուած էի.այդ պատճառով է որ ճիշդ ժամանակին պիտի գտունէի գործին գլուխը:

<< Յունաստանի մէջ անգործ չէինք նստեր.մենէ իւրաքանչիւրը 50-60 փամփուշտ կը սպառէր, ամէն օր զինավարժութեան փորձեր ընելով, կառավարութեան սեփական զինամարզարանին մէջ: Եւ մենք ա՛յն աստիճան վարժուեցանք որ՝ 300 մէդրի վրայ՝ ճիշդ նշանին կեդրոնը կը զարնէինք.իսկ ատրճանակով՝ 150 մէդրի վրայ- առանց գնդակ մը վրիպեցնելու:

<< Քանի՛ քանի անգամներ, յոյն սպաներ զարմանքով կը դիտէին մեզ: Օր մը, Յունաստան եկած էին անգլիական և ամերիկեան մարտանաւեր, որոնց զինուորները նշանառութիւն կ'ընէին փոքրիկ գնդակի մը վրայ, որ ջուրին վրայ կը ծփծփար: Մէկ քանի անգամներ փորձեցին և չը յաջողեցան զարնել: Այն ատեն, ես ու Զարեհը, հրացանը շտկեցինք ու տեղնուտեղը փշրեցինք գնդակը, և այսպէս մէկ քանի անգամ կրկնեցինք նշանառութիւնները, բոլորն ալ յաջող:

<< Անգլիացի և ամերիկացի զինուորները, փամփուշտներու համար 20 ֆրանգէն աւելի դրամ վճարեցին ու << կոտտեմ սըն օֆ է պիշ>>ը կոչելով դուրս եկան:

<< Քրիստափոր, Ռուպինային հետ Իզմիր անցաւ օրինաւոր անցագրով.ինք՝ Սամուէլ Ֆայն անունով, իսկ Ռուպինան՝ իր աղջիկը ձեւանալով: Իզմիր ամիս մը պիտի մնար, տեղին գործերը կարգադրելու համար: Իզմիրէն 28000 ֆրանգ ծախք որոշուած էր գործին համար:

<< Իսկ Սաֆօ, Մառի Չայձի հետ, Աթենքէն շողեկառքով Բաթրաս անցաւ, ուրկէ ուղղակի շոգենաւ պիտի նստէր դէպի պլիսպ Բիրէայէն մեկնած չըլլալու համար: Սաֆօյի և Մառի Չայձի նստած շոգենաւ Բաթրասէն եկաւ Բիրէա և ասկէ մեկնեցաւ Պոլիս: Լիբա Ռիփս անունին, օրինաւոր անցագիր մը կրէր Սաֆօ, երկուքն ալ ապահով մտած էին Պոլիս:>>

Այսպէս, Յունաստանի մէջ համախմբուած Դաշնակցականներուն մեծ մասը յաջորդաբար մեկնած վ մտած էին երկիր:

Սամուէլ Ֆայն և Օրիորդ Ռուպինա Ֆայն, Իզմիր հասած և իրենց անվտանգ ժամանումը նամակով մը հաղորդած էին Աշոտի, որ տակաւին Աթենքի մէջ կսպասէր Ջարեհին և ուրիշ մէկ երկու ընկերներու հետ, որոնք նոյնպէս պիտի մեկնէին քիչ օրէն:

Իսկ Սաֆօ, Մառի Չայձի հետ Պոլիս հասած և առանց դժուարութեան ցամաք ելած էր, ինչպէս կը գրէր Թորգոմ նամակով մը: Սաֆօն, Աթենքէն մեկնելէն ի վեր, տող մը չէր գրած Աշոտի. գոնէ չոր բարս մը. միայն Թորգոմ կը շարունակէր Աշոտի հետ իր կանոնաւոր թղթակցութիւնը, երբեմնակի կարելոր լուրեր հաղորդելով Պոլսոյ ներքին քաղաքական կեանքէն.

ԺԳ

Աթենքի մէջ սպասելէ ձանձրացած, Աշոտ իջաւ Բիրէա, ուր վերստին գտաւ իր վաղեմի բարեկամը, որ զինք ծանօթացուցած էր Վօթուրի հրամանատարին, և անոր հետ կ'անցընէր բոլոր ժամանակը- քարափի սրճարաններուն մէջ:

Օրերը կ'անցնէին և իր սիրտը կը նեղուէր, ո՛չ Պոլիսէն, ո՛չ Իզմիրէն, ո՛չ մէկ նամակ ստացած չէր, Բիրէա իջնելէն ի վեր, սև կասկածներու մատնուած, չարգուշակ ենթադրութիւններով իր երևակայութիւնը կը տանջէր: Արդեօք Քրիստափորը ձերբակալուեցա՞ւ Իզմիրի մէջ, արդեօք Սաֆօն բանտարկուեցա՞ւ...:

Թորգոմ ալ կը պահէր երկար լռութիւն մը, որուն չար մեկնութիւններ կուտար Աշոտ, որովհետև, զիտէր Թորգոմի բանտրութիւնը, թղթակցութեան մէջ այնչափ ծոյլ չէր. բայց ինչո՞ւ չէր գրէր, կը մտմտար ինքնիրեն Աշոտ, մէկ խօսքով, կացութիւնը կը սեւնար տակաւ Աշոտի մտքին մէջ:

Սրճարանին մէջ առանձին նստած, ծանօթ բարեկամին հետ, կը գանգատէր իր ընկերներուն անտարբերութեան դէմ.

- Աշոտ, կըսէր բարեկամը, ինչո՞ւ կը գանգատիս, սպասէ՛ նայինք, թերեւս այսօր լուր մը կ'առնես,

- Այս քանի՞ օր է, գիտե՞ս, աչքերս ճամբան մնացին, շա՛տ ուշացայ:

Այս խօսակցութեան միջոցին, հեւալով ներս մտաւ Զարեհ, և մօտենալով սեղանին.

- Աշո՛տ, ըսաւ, հեռագրատան ցրուիչը կըզ կը փնտռէր, հետս բերի.

- Ո՞ւր է, ո՞ւր, գոչեց Աշոտ.

Եւ ցրուիչը սրճարանէն ներս մտաւ և առաջացաւ դէպի սեղանը, որուն շուրջը կը նստէին Աշոտ, իր բարեկամը, և Զարեհ.

- Ո՞վ է Աշոտը, հարցուց ցրուիչը, դառնալով Աշոտի բարեկամին, որ տարիներէ ի վեր հոն հաստատուած, ծանօթ էր նաեւ հեռագրատան ցրուիչին.

- Ահա՛, պատասխանեց բարեկամը, ցոյց տալով Աշոտը:

Յրուիչը, ընկալագիր մը ստորագրել տուաւ Աշոտին և յանձնելով հեռագիրը, մեկնեցաւ:

Աշոտ, դողացող մատներով սկսաւ պատռել հեռագրին ծրարը, բացաւ և սկսաւ կարդալ, ֆրանսերէն էր.-

<< Ղրկեցէ՛ք Վարշամօֆը առաջին թղթատար շոգենաւով. Սամուէլ Ֆայն:>>

Աշոտ անգամ մըն ալ կարդաց, դարձեալ կարդաց. ճիշդ էր, Վարշամօֆը կ'ուզուէր:

Ո՞վ էր Վարշամօֆը...:

Նոյն ինքն Զարե՛հը, Սամաթիացին, որ պատրաստուող անակնկալներու գլխաւոր հերոսներէն ըլլալու սահմանուած էր, և հետեւաբար, Վիշապի Պատասխանատու Մարմինի անդամներուն միաձայնութեամբը մկրտուած էր Վարշամօֆ նոր անունովը:

Զարեհ ինք ալ գիտէր իր նոր անունը, հասկցաւ Աշոտէն թէ իրեն համար քաշած էր այդ հեռագիրը և թէ՛ Քրիստափոր կ'ուզէր զինքը, ուստի խնդումէն կուլար:

ՆԿԱՐ Տողթ. ԳՐԻԳՈՐ ՄԱՅԵԱՆ (Վիշապի Օժանդակներէն)

- Ա՛լ ձայնդ կտրէ՛, ըսաւ Աշոտի բարեկամը ժպտելով:

Յետոյ, դառնալով սրճարանի սպասուորին.

- Կառսօ՛ն, կանչեց, բե՛ր մեզի երեք ռէչինա.

Եւ կառսօնը շուտով բերաւ երեք գաւաթ ճերմակ գինի, ռէչինա ըսուածը, Յունաստանի ընտիր տեսակը, թէեւ քիչ մը լեղի:

- Պարպէ՛ նայինք, Զարեհ, ըսաւ Աշոտի բարեկամը, վաղը ճամբորդ ես, մեզ պիտի թողուս:

Աշոտ ու իր բարեկամը, իրենց ձեռքերուն մեջ, գաւաթը բարձրացուցած, երկուքը միասին:

- Կենա՛ցդ, Զարեհ, ըսին ու պարպեցին:

- Ձեր կենա՛ցը կրկնեց Զարեհ, փոխադարձ մաղթանքներով:

Գաւաթները վերստին լեցուեցան փրփրադեղ ռէչինայով.

- Բարի ճամբորդութիւն, մրմնջեց Աշոտ, Զարեհի գաւաթին զարնելով իրենը.

- Մնաք բարո՛ւ վ ուրեմն, յարեց Զարեհ և մէկ ումպով պարպեց:

Այդ օրը, շոգենաւր պատրաստ էր, Աշոտ իր ձեռքով Զարեհը- որ այնուհետև Վարշավոֆ պիտի կուչուէր- դրաւ շոգենաւր, և ինք, իր բարեկամին հետ ուղղուեցաւ հեռագրատունը, հեռագիր մը խմբագրելով, քաշեց Պոլիս, իրեններուն, Զարեհի մեկնումը ծանուցանալով այսինչ շոգենաւով:

Յետոյ եկան նստան ծանօթ սրճարանը:

- Տեսա՞ր, դիտել տուաւ Աշոտի բարեկամը, ո՞ր մնացին սև կասկածներդ, Զարեհն ալ ճամբեցինք, հիմա մնացինք մենք ու մենք. կը տեսնես որ մէկ երկու օրէն ալ քե՛զ կ'ուզեն.

- Ո՛ւր էր թէ, տրտնջաց Աշոտ, հաւատա՛, սիրելի՛ս, հոգիտ շատ կը նեղուի, ձանձրացա՛յ անգործութենէն.

- Կանցնի՛, շուտով կանցնի՛ ա՛ս ալ, կը յորդորէր բարեկամը.

Այն իրիկունը միասին ընթրեցին երկու բարեկամները, կուշտ ու կուտ կերան, խմեցին, փոխադարձ բարեմաղթութիւններով, և յետոյ, ծանօթ սրճարանին մէջ առնելէ յետոյ իրենց սուրճը, գացին թատրոնը: Այն գիշերը յունական խումբ մը կը ներկայացնէր Սօֆօկլի գլուխ գործոցներէն <<Իդիպոս Արքայ>> ողբերգութիւնը: Աշոտ շատ յուզուած դուրս ելաւ թատրոնէն և գիշերը միասին անցուց իր բարեկամին հետ:

Յաջորդ օրը, Իզմիրէն նամակ մը ստացաւ, Մարթինը կը գրէր, գանգատնելով տեղական գործերուն անկերպարան վիճակէն, սակայն Աշոտ վաղուց կը ճանչնար Մարթինը, ուսումնասիրած էր անոր նկարագիրը, բնաւ կարւորապիթին չը տոաւ նամակին պարունակութեանը:

Մէկ շաբաթ անցած էր Զարեհի մեկնումէն ի վեր և դեռ ձայն մը չէր ելած:

Դարձեալ իր բարեկամին հետ էր Աշոտ, ման կուգար Բիրէայի քարափը: Տրտում էր այդ օրը, մտատանջ, կը տառապէր, Պոլոս կողմէն դարձեալ լռութիւն, հազարումէկ կասկածներէ կը տարուէր:

Դիմացէն նշմարուեցաւ հեռագրատան ծանօթ ցուիչը կաճապարէր, դէպի սրճարանը կը դիմէր: Հանդիպեցաւ երկու բարեկամներուն և Աշոտին երկնցուց հեռագիր մը:

Աշոտ բացաւ տենդոտ շարժումով մը, կարդաց և բացագանչեց.

- Վա՛խ, խե՛ղճ տղայ...

Քովի բարեկամը հետաքրքիր, հարցուց.

- Ի՞նչ կայ դարձեալ, Աշո՛տ,

- Ի՞նչ պիտի ըլլայ, շարունակեց Աշոտ, խե՛ղճ Ջարեհ, Պոլիս հասեր, երկու օր սպասեր է շոգենաւին մէջ, քարափին առջև, եկող գացող չե՛ եղեր, ո՛չ ոք է եկեր զինքը փնտռեր: Ի վերջոյ, Ջարեհ, յուսահատ, նոյն շոգենաւով ստիպուեր է երկարաձգել իր ճամբորդութիւնը մինչև Ռումանիոյ Գօսթանձա նաւահանգիստը, ուրկէ քաշէր է ինծի այս հեռագիրը...:

Բարեկամը լռեց, մտովին կը մեղադրէր Պոլսոյ ընկերները:

Ապագայ Վարշամօֆի այս տաժանքոտ ճամբորդութեան ողիսականը հետեւեալ տողերուն մէջ ամփոփած է Աշոտ իր յուշատեարին մէջ, որմէ բառ առ բառ կ'արտագրենք զանոնք:

<< Ջարեհը շոգենաւ դրի և իրենց հեռագրեցի: Շոգենաւը Պոլսոյ առջև կըսպասէ երկու օր, ո՛չ ոք կ'երեւայ: Տղան կըստիպուի շարունակել ճամբորդութիւնը մինչև Գօստանձա, ուր գամաք կ'ելլէ և ինծի կը հաղորդէ եղելութիւնը:

<< Իսկոյն, Բիրէայի հին ծանօթ նաւապետներուն միջոցաւ կարգադրեցի որ Ջարեհը Վառնայէն առնեն և իրենց նաւով Պոլիս հանեն: Իսկ Ջարեհին անմիջապէս հեռագրեցի որ ինքը Վառնա անցնի: Նոյնպէս Վառնա, Արթաքի Խաչիկեանին նամակ գրեցի և խնդրեցի որ Ջարեհը նաւ նստեցնէ, վստահելով իրեն ներկայացնող նաւորդներուն: Իբրև Բառօլա, ոպաթիի թաղլ ըն երկու կտորի բաժնելով, մէկ մասը Պուլկարիա դրկած էի և միւս մասը նաւապետին յանձնած էի:

<< Այդ միջոցին Ջարեհը Վառնայէն իրենց նաւը կառնեն և Պոլիս ապահով ցամաք կը հանեն: Արդէն այս կարգադրութիւնները գրած էի Պոլսոյ ընկերներուս, որպէս զի Ջարեհին սպասեն, և Ջարեհ, զիրենք գտնելու համար նեղութիւն չը քաշէ: Ջարեհը կասկածելի մարդ էր, 96ի Պանքայի Յոյցին մասնակցողներէն ըլլալով:

<< Ջարեհ ապահով դուրս կ'ելլէ, բայց նաւին շուրջը ո՛չ մէկը կը տեսնէ ընկերներէն: Այդ գիշեր, ասդին անդին թափառական կ'անցընէ և ի վերջոյ կը ստիպուի Մամաթիա գիշերել, իր եղբօր տունը, ուր գաղտնի կը պահէ ինքզինք:

<< Ընկերները մէջտեղ շը կան, կ'որոշէ հետեւեալ օրը վերտդառնալ Յունաստան, կ'երթայ քարափ, և պտըտելու միջոցին, պատահաբար կը տեսնէ Մանիսացի Արամը, այն տղան որ ես Պոլիս դրկած էի իբրեւոյն: Արամ՝ Ջարեհը կ'առնէ, կը տանի մեր ընկերներուն քով>>:

Եւ ԵԸԼՏԸԶԻ ՊՕՄՊԱյին գլխաւոր դերակատարը, Աշոտ, որ Պոլիս պիտի մտնէր և պիտի մտնէր և պիտի գործէր իբրեւ Գառլօ Եուվանօվիչ, տակաւին կը դեգերէր Բիրէա, վայրկեանէ վայրկեան սպասելով Պոլսոյ լուրերուն:

Հոկտեմբերի մեջ էր, գեղեցիկ օդեր կընէին, Բիրեայի կեանքը կը քաղցրանար, զուարճալի և հեշտալի էր պտոյտը՝ քարափին երկայնքը, որուն մեջտեղէն ճեղքելով կը սուրար ելեքտրակարքը:

Նոր շոգենաւ մը հասած էր, Աշոտ դէպի նաւամատոյցը վազեց:

Խարտեաշ մաղերով, միջակ հասակով, համակրելի դէմքով երիտասարդ մը կը մօտենար քարափին առանձին նաւակով մը: Աշոտ, ուշադիր նայեցաւ, ճանչցաւ իր վաղեմի, իր սիրական ընկերներէն Հայկ Սանոսեանը:

Աշոտ գրեթէ նաւակէն քաշեց դուրս հանեց նորեկ ճամբորդը, և գոյքերը բեռնակրի ձեռքով անիջապէս իր հիւրանոցը փոխադրել տուաւ:

Արտաշարժ ողջագոյրում մը քարափին վրայ, երկու կարօտակէզ բարեկամներու, որոնք տարիներու բացակայութիւններէ վերջ, զիրար վերստին կը գտնէին:

Աշոտ վայրկենապէս մոռցաւ իր ցաւերը, Սանոսեան Հայկին յանկարծական, անսպասելի երեւումը, յունական օտար ափերու վրայ, վերաբոնցուց իր հին յիշատակները: Անմիջապէս իր բնական հիւրանոցին սենեակը- որ մէկ մահճակալով էր- փոխեց և ուրիշ սենեակ մը փոխադրուեցաւ, երկու մահճակալներով, Սանոսեանի հետ միասին բնակելու հաճոյքը վայելելու համար, հոգ չէ թէ կարճատև ժամանակի մը համար:

Ցերենները միասին կը նստէին, սրճարան, ճաշարան, շրջագայութիւն, միշտ միասին էին: Հիւրանոցի սենեակին մէջ, յաճախ մինչև կէս գիշեր, ջերմանոյշ խօսակցութեան մը բռնուած, իրենց հին յիշատակները կը քրքրէին և իրարու կը պատմէին օտարութեան մէջ իրենց անցուցած կեանքի զանգան հրուագները:

Հայկ Սանոսեան աշխոյժ, անհանդարտ և երևակայութիւնը միշտ վառ տղայ մը, կը փափագէր ժամ առաջ Պոլիս մտնել, մասնակցելու հմար գործողութիւններուն, որոնք, իմացած էր, տեղի պիտի ունենային քիչ ատենէն:

- Աշո՛տ, ըսաւ Հայկ, գիտես թէ ո՛րքան կը սիրեմ գործը, հոս պարապ նստիլ իմ գործիս չի՛ գար,

- Ի՞նչ ընենք, Հա՛յկ, ի՞նչ կրնամ ընել քեզի, առարկեց Աշոտպ կարծելով թէ Սանոսեան տակաւին բան մը չէր իմացած իրենց պատրաստած ցոյցի մասին.

- Միթէ՛ վա՞ր կը մանմ միւս ընկերներէն, բողոքեց Հայկ.

- Ո՞ր ընկերներէն, հարցուց Աշոտ.

- Զարեհէն, Արամէն, Լևոնէն, Գրիգորէն, պատասխանեց Հայկ, ես աւելի փորձառու եմ.

- Գիտեմ, յարեց Աշոտ համակրական շարժումով մը, եռանդուն ես դուն, Հայկ, ամեն վտանգ կ'արհամարհես, ո՛չ բանտէ կը վաճնաս, ո՛չ կախաղանէ, բայց ի՞նչ գործի պիտի մասնակցիս.

- Պոլսոյ գործի՞ն, պատասխանեց Հայկ, խորհրդաւոր ժպիտով մը.

- Պոլսոյ գործի՞ն..., կրկնեց Աշոտ զարմացկոտ դեմքով մը, ի՛նչ գործ է ատիկա, որ ես չեմ դիտեր.

- Ի՞նչպէս չես գիտեր, ի՛նչպէս, կրկնեց Հայկ գլուխը ճօճելով. ես ամեն բան իմացած եմ.

- Ո՞րկէ, հարցուց Աշոտ, ո՞րկէ իմացար.

- Հոգի՛ս, ինչո՞ւ կը հարցնես, շարունակեց Հայկ ժպտելով, իմացայ կըսեմ, հաւատա՛:

Աշոտ ա՛լ չը պնդեց:

Յետոյ, Սանոսեան պատմեց իր արկածները, թէ ի՛նչպէս Պերութ անցած էր, Կիլիկիոյ յեղափոխական շարժումներուն մասնակցելու նպատակով, թէ ի՛նչպէս հոն, Պերութի մէջ, ձերբակալուած էր իբրեւ անիշխանական, բայց թէ ի՛նչպէս յետոյ, իր ձեռքի ամերիկեան քաղաքացիի անցագրին ուժովը յաջողած էր ազատել իր օձիքը, բայց թէ ի՛նչպէս, համիտական կառավարութեան ճնշումին տակ, երկրէն վտարուած և եկած էր Բիրեա:

Աշոտ, ինչպէս ըսինք, վաղուց կը ճանչնար Հայկ Սանոսեանը, մեծ վստահութիւն ունէր անոր նկարագրին ու յեղափոխական տրամադրութեանց վրայ.

- Հայկ, ըսաւ, իրաւ կը փափագի՞ս մասնակցի Պոլսոյ ցոյցին.

- Աշո՛տ, պատասխանեց Հայկ, շիտակը խօսի՞մ, այդ նպատակով արդէն եկած եմ հոն եթէ այսօր դրկես պատրաստ եմ մեկնելու:

Աշոտ համոզուած էր թէ՛ Հայկ Սանոսեանը շատ օգտակար պիտի կրնար ըլլալ գործին, ուստի, առաջին թղթատարով գրեց Պոլիս իր ընկերներուն և անոնց հաղորդեց Հայկի փափագը՝ գործին մասնակցելու, միւս օժանդակ ընկերներուն հետ:

Օր մը, սրճարանին մէջ նստած, կը խօսակցէին.

- Աշո՛տ, ըսաւ Հայկ, նամակիդ պատասխանը շատ ուշացաւ, ես հոս պիտի ճաթիմ անգործութենէ, ի՞նչ կ'ըսես.

- Գրա՛ծ եմ, Հայկ, գիտե՛ս. պատասխանեց Աշոտ, քիչ մըն ալ սպասէ, պատասխանը պիտի գայ.

- Չե՞ս կրնար զիս հիմակուրնէ դրկել, պնդեց Հայջկ թախանձելով, ո՛վ պիտի սպասէ պատասխանին:

Աշոտ գիտէր, վստահ էր թէ ընկերները չը պիտի մերժէին իր առաջարկած օժանդակ ընկերը, միւս կողմէ, Հայկ շարունակ կըստիպէր, կ'աղաչէր, կը պաղատէր:

- Շա՛տ լաւ, Հայկ, ըսաւ վերջապէս, պատրաստու՛ է ուրեմն:

- Յարմար նաւ մը կայ, յարեց Հայկ, անով կ'երթամ, եթէ կուզես:

Աշոտ այդ նաւը դրաւ Հայկը, և առանց նամակին պատասխանին սպասելու, հետեւեալ օրը դրկեց գանի Պոլիս:

Հայկ ապահով կը հասնի Պոլիս, կէ լէ Ղալաթիոյ քարափը, ներկայացուց իր ձեռքի ամփրիկեան քաղաքացիի անցագիրը, և առանց դժուարութեան հանդիպելու լըրտեսներուն կամ ոստիկաններուն կողմէն, Ղալաթիոյ կողմը, հիւրանոց մը կ'իջնէ:

Պոլսոյ Դաշնակցական ընկերները, իմացած ըլլալով Հայկին ամերիկեան քաղաքացիի հանգամանքը, խորհուրս կուտան իրեն ամերիկեան Հիւպատոսարանը դիմել ու հոն արձանագրել տալ իր անցագիրը, և այնուհետեւ Պոլսոյ մէջ արձակ համարձակ պտըտիլ:

Հայկ իր ընկերներուն խորհուրդին կ'անսայ, ուղղակի կ'երթայ ամերիկեան Միացեալ Նահանգներուն հիւպատոսարանը, արձանագրել տալու իր ձեռքի անցագիրը:

Հիւպատոսարանին մէջ ամէն ձեւակերպութիւնները կը կատարուին և Հայկ կը պատրաստուի դուրս ելլել:

Հազիւ թէ շէնքին դռնէն դուրս նետած էր ոտքը, լրտեսներու առաջնորդութեամբ, ոստիկաններու խումբ մը, կը ձերբակալեն Հայկը, և բանտը կը տանին, ուր կը մնայ:

Հիւպատոսարանի վատոգի պաշտօնեաներէն սինլըքոր մը մատնած էր Հայկ Սանոսեանը, Ոստիկանութեան այն ժամանակի նախարար Շէֆիզ բաշային, և սա, իսկոյն ամերիկեան Հիւպատոսարանի քովի փողոցները շրջապատել տուած էր լրտեսներով:

Եւ Հայկ Սանոսեան օտար դէսպանատան մը շուքին տակ, լրտեսութեան ստորին արհեստին շնորհիւ իր ապրուստը ճարող ճիւղի մը մատնութեան զոհ, մէկ քանի օր բանտին մէջ քաւելէ յետոյ իր...յանդգնութիւնը, կ'արտաքսուի Օսմանեան հողէն:

Այդ անիծեալ շրջանի Պոլիսը դիւրին չէ մէկ քանի տողերու մէջ վերապիեցընել. ճշմարիտ դժոխք մը, որուն մէջ կը տապկուէր ժողովուրդը, և բոլոր ժողովուրդներու մէջ, ամենէ՛ն աւելի հայ ժողովուրդը:

Ապտիւլ Համիտ, իր ամենասուրբ (.) անձին պահպանութեան տարամերժ մտահոգութենէն մտրակուած այս Կասկիծոտ Մենագարը, յաջողած էր իր շուրջը բոլորովին նոր աշխարհ մը կերտել, լրտեսներու, քսուներու, կաշառակերներու, աւազակներու, ոճրագործներու դաշնակցութենէ բաղկացած մարդկային ընկերութիւն մը, որ կը կառավարուէր վերէն բոլիսած բացարձակ հրամաններով:

Երլտըզի Արքունիքը ճոխ հանք մըն էր, շահագործելի, անսպառելի հանք մը, հոն, ամէն տեսակէ ապրանքներ կը գտնուէին, երկրագնտիս Հինգ Ցամաքներուն բերքերէն: Եւ Ապտիւլ Համիտ, այդ ճախ հանքին միահեծան և ինքակալ տէրը, գիտէր արժեւնել իր սեփականութիւնները, չքանշան, դրամ, պաշտօն, կին, նն, նն.աւս բոլոր հարստութիւնները

գիտեր գործածել տեղին, ժամանակին և պարագային համեմատ, այնպես որ, շատ անդամներ, կը յաջողէր հրաշքներ գործել և ապշեցնել քաղաքակրթեալ աշխարհը:

Այսպէս, այս ժահրոտ ճահիճին մէջ- որ դժբաղդաբար Ելտըզ կը կոչուէր- և ուր սակայն, ո՛չինչ կընայիր գտնել աստղի նմանող, բացի իզոդ աչքերուն բոցերէնն Հարէմի կիներուն ու աղջիկներուն, և բացի ասոնց կուծքերուն վրայի շողշողուն գոհարներէն ու աղամանդներէն- մարդ- անասունին ամենէն ստոր ընտանիքները կ'ապրէին: Մեծ ներքինապետէն սկսեալ մինչև ախոռապանը, և առաջին քարտուղարէն մինչև վերջին դռնապանը, ամենքը լրտեսներ էին, իրարու արարքը հոկող, խօսք տանող, բերող անարգ, քսու, կեղծաւոր, խաւեւայ ստրուկներ, որոնք մէկ մարդու քմահմաճոյքը կատարելու մէջ կ'որոնէին իրենց փառքը...:

Ահա՛ այս ապականեալ մթնոլորտին տակ, այս թունաւոր մօրուտին մէջ բուսած, աճած քանի՛ քանի չար ոգիներ. Օսմանեան Հայրենիքին ճակատագիրը կը վարէին հոն, Ելտըզի մէջ, իր հարիւր հազարաւոր հայ զոհերուն արիւնովը յօրացող, իր հարազատ եղբայրները տարիներէ ի վեր բանտարկող, իր սեփական զաւակները չարչարող, և, մանաւանդ, իր լաւագոյն և ազնուագոյն հպատակներուն արիւնը ծծող այդ Տգրուկին Օգոստափառ հովանաւորութեան տակ...:

Ելտըզի մէջ մէկ բան միայն ի պատուի էր, լրտեսութի՛ւնը...:

Լրտեսներուն հայրը, նոյնիքն Ապտիւլ Համիտ էր, իրմէ ետքը կուգար Ահմէտ Ճէլալէտտին բաշան, արքունի լրտեսապետը, յետոյ կուգային ելտըզեան նուիրապետութեան միւ կարգերը. լրտես մըն էր մեծ ներքինապետը, որ ամէն օր, իր ստորակարգեալ ներքինիներուն բերած հարէմական սաղորանքներուն դաւադրութիւններուն, տոփանքներուն, զգուրտութիւններուն, այցելութիւններուն, վերջապէս հարէմի վերաբերեալ բոլոր գաղտնիքներուն մանրամասնութիւնները, ժամը ժամին ամփոփած ու շարակարգած, պիտի մատուցանէր Հիւնքեարին. լրտես մըն էր, և վտանգաւոր տեսակէ լրտես մը, Արքունի Արարողապետը, որ պաշտօն ունէր ընդունելու, կարգի դնելու և յետոյ Հիւնքեարին ներկայացնելու Ելտըզ հասած ժողովները, որոնք յաճախ ստորագրութիւններու կը կրէին պետական բարձ (.) անձնաւորութիւններու որոնք, բաղդին հեգնանքով թէ դէպքերուն բռնադատումովը, սահմանուած էին ապագային ըլլալ երեսփոխան, ծերակուտական կամ... նախարարապէ՛տ:

Ինչ՞ հարկ երկարելու այս տխուր շարքը, Ելտըզի բնակիչները կը բաղկանային լրտեսներէ և լրտեսուհիներէ, իսկ ասոնք, իրենց կարգին, իրենց ձեռքին տակ ունէին գործակիցներ, օտար տէրութեանց դեսպանատունները, հիպատոսարանները, կրթական, առևտրական, արհեստական, և ուրիշ հաստատութիւնները վարող անձերուն մէջ: Լրտես, դեսպաններ կային, որոնք, բնականաբար փոխարինումով մը- ո՛վ գիտէ ի՛նչ խոշոր- բոպէին Ելտըզի բռնաւորին ականջը կը հասցնէին դիւանագիտական կարեւոր գաղտնիք մը: Լրտեսուհիներուն թիւը կարելի չէր հաշուել, մանաւանդ այդ թուականին:

Ամէն մարդ իր գործին, գլուխը ծած կը քալէր, առանց աչքերը շուրջը դարձնելու, լրտեսի մը հալածող աչքերուն չը հանդիպելու համար: Իսկ սրճարանները, զբօսարանները,

ընթերցատունները, հրապարակները, նաւամատոյցները, հաւաքոյթներու յատուկ վայրերը, մզկիթները, եկեղեցիները, սինակօկաները, շոգենաւ, հանրակառք, մաքսատուն, պահականոց, դպրոց, ամէն տեղ, ամէն աչքի զարնող կեդրոն, լրտեսներով լեցուն էին. բովանդակ Ստամպօլը լրտեսներու քաղաք մըն էր, փողոցներուն անցքը խափանող, Պոլսոյ համբաւաւոր շուներէն աւելի բազմաթիւ...:

Ահա՛ այս կարգի լրտես մըն էր, ամերիկեան հիւպատոսարանի սեւ սիրտ ու ժանտ պաշտօնեան, որ այնքան անխղճօրէն ու վստօրէն մատնեց Հայկ Սանոսեանը, երբ սա կը վերադառնար հիւպատոսարանէն, ուր գտցած էր, իր ընկերներուն խորհրդով, արձանագրել տալու իր ամերիկեան քաղաքացիի անցագիրը:

Ամբողջացնելու համար շարքը, պէտք է յիշել նաև այդ օրերու Հայոց Պատրիարքարանը, Գում Գաբուի անիւնը, ուր Օրմանեան պատրիարքը, շրջապատուած իր կուսակիցներով, գաղափարակիցներով, արբանեակներով, կամ իրեններով, այսպէս ըսելու համար, մէկ կողմէ, Երլտըզի պալատականներուն նախանձը շարժող ժարպիկութիւն, եռանդ ու փութկոտութիւն մը կը դնէր իր պաշտօնի կիրառութեանը մէջ, հաճելի ըլլալու համար Հինքեարին, իսկ միւս կողմէ արտասահմանի հետ երբեք չէր խզեր իր գաղտնի յարաբերութիւնները, զորս կը մշակէր հայ յեղափոխական կամ քաղաքական գործիչներու հետ...

ԺԵ

Բամազան էր :

Յերեկները մեռելային լռութիւն մը փողոցներուն մէջ, գրեթէ մինչեւ կէս օր.իրիկուան դէմ քիչ մը գործունէութիւն կը նշմարուէր , Շուկային մէջ և ուրիշ հրապարակները.իսկ գիշերները , միայն իսլամ Թալերու մէջ , սրճարանները բաց էին , ուր ընդհանուր եռուզեռ մը կար :

Բամազանի Տասնըփինգին, Ապտիւլ Համիտ , իբրեւ Խալիֆա , պիտի երթար Այա Սօֆիա , համբուրելու համար Մարգարէի Վերաբկուն : Ուստի , փողոցներուն անցքը մաքրելու համար կասկածելիներէ , Բամազանի առաջին օրէն , Ոստիկանութիւնը կը սկսէր ձերբակալումներ ընել :

Վիչապի երեք անդամները սակայն, ուզելով օգտուիլ այդ կայասերական անցքէն , որ տարին մէկ անգամ միայն տեղի կունենար, որոշած էին Բամազանի ճիշդ Տասնըփինգին գործադրել ծրագրուած Ցոյցը

Քրիստափոր ու Սաֆօ, երկու ռուսահայերը, կ'աճապարէին, կ'ուզէին ժամ առաջ կատարել տալ ցոյցը , իսկ Թորգոմ կ'ընդդիմանար : Վիշապի անդամներէն Աշոտի բացակայութիւնը կ'առարկէր և կը պնդէր որ ան Պոլիս կանչուի անմիջապէս .

- Պարո՛ն Քրիստափոր, կ'ըսէր Թորգոմ, Աշոտի ներկայութիւնը, գիտե՞ք , ո՛րքան անհրաժեշտ է.դուն ու Սաֆօն օտարներ էք , տեղական պայմաններուն դէռ չընտելացաք :

- Աշո՛տը, ընդմիջեց Սաֆօ, ան ի՞նչ գիտէ.

- Պարո՛ն Սաֆօ, յարեց Թորգոմ հեզնելով, ի՛նչ պիտի գիտնայ, անշո՛ւշտ ինը տարի առաջ ալ, Պանք Օթօմանի Ցոցին , իրեն դո՛ւն սորվեցուցրի ռումբերու պատրաստութիւնները , ևն .

- Սաֆօ, միջամտեց Քրիստափոր, իրաւունք ունիս Թորգոմը, անհրաժեշտ է Աշոտի ներկայութիւնը , ան փորձառու է , միջավայրի բոլոր պահանջումներուն. գիտակ, պէտք է , սպասենք , մինչև որ ան ալ գայ .

- Ես հակառակ չեմ Աշոտին, յարեց Սաֆօ, Թո՛ղ գայ , բայց ժամանակը կ'անցնի , առիթը պիտի փախցընե՛նք .

- Առիթը չի՛ փախչրի, պնդեց Քրիստափոր, պէտք է կանչենք Աշոտը , այո՛ , անհրաժեշտ է իր ներկայութիւնը , առանց Աշոտի գործը կը վիժե՛ ... :

Թորգոմ շատ գոհ մնաց Քրիստափորի վերջին խօսքերէն: Սաֆօ լռութիւն կը պահէր, ըմբռնեց իր սխալը :

- Սաֆօ՛, ըսաւ Քրիստափոր, ի՞նչ կ'ըսես, Աշոտը չը կանչե՞նք.

- Կանչե՛նք, կանչե՛նք, կրկնեց Սաֆօ համակերպող շարժուձևով մը, քանի որ այդքան կարևոր կը գտնէք իր ներկայութիւնը.

- Ի՞նչ ըսել է կարևոր, պարո՛ն Սաֆօ, բողոքեց Թորգոմ, կ'աղաչե՞մ, անձնականութիւնները

մէկդի՛ , մի՛ վշտանաք եթէ յայտարարեմ հոս թէ՛ առանց Աշոտի, բա՛ն մը չենք կրնար ընել մենք մեր գլխին:

- Հարկ չը կա՛յ կրկնելու միևնոյն բանը, դիտել տուաւ Քրիստափոր, ես քիչ առաջ ըսի արդէն, Աշոտը պէտք է հեռագրով կանչենք .

- Այ՛ո , հեռագրով կանչելու՛ է Աշոտը , յարեց Թորգոմ .

- Հեռագրեն՛ք ուրեմն, աւելցուց Սաֆօ :

Եւ Վիշապի Ժադովը միաձայնութեամբ որոշեց նոյն օրը հեռագրել Բիրէա, ստիպողաբար կանչելով Աշոտը :

Աշոտ տակաւին Բիրէայի մէջ կը դեգերէր, պարբերաբար նոր օժանդակ ընկերներ կը դրկէր Պոլիս : Այդ օրերը հոն հասած էր նաև Պերութի դաշնակցական կարևոր գործիչներէն Սառհաստ որու վրայ խօսելու առիթը պիտի ունենանք առաջիկային :

Ծանօթ սրճարանին մէջ նստած էր Աշոտ առանձին, երբ տեսաւ , հեռագրատան իրեն ծանօթ ցրուիչը ներս կը մտնէր սրճարանէն և կը մօտենար իրեն :

Հեռագիր մը կը բերէր, յանձնեց զայն Աշոտի :

Այս հեռագիրը Կ. Պոլսէն էր, և Ս ա մ ու է լ Ֆ ա յ ն ստորագրութիւնը կը կրէր, Աշոտ սկսաւ կարդալ .

- << Ամէն ինչ պատրաստ է, շուտով ճամբայ ելի՛ր >> :

Կարդալէ յետոյ, գրպանը դրաւ հեռագիրը, իսկոյն դուրս ելաւ սրճարանէն , վազեց դէպի հիւրանոցը, հաշիւները մաքրեց , գոյքերը ժողովեց և նոյն օրը մեկնեցաւ Բիրէայէն :

Շոգենաւի նաւապետը ծանօթ էր Աշոտի, պատուասիրեց զինքը , մասնաւոր սենեակ մը յատկացուց իրեն և մինչեւ Պոլիս , գուրգուրաց անոր վրայ , ա՛յնքան համակրած էր հայ յեղափոխականին :

Հիմա զինքը մտիկ ընենք , տեսնենք ի՛նչ կը խօսի իր Յուշատետրին մէջ :

<< Բամազանի Տասնըհինգը մօտեցած էր , այդ օրը կարելի էր բան մը յաջողցնել :

<< Հեռագիրը ստանալէս անմիջապէս յետոյ , նաւ նստայ դէպի Պոլիս : Նաւապետը , երբ շոգենաւը քարափին մօտեցաւ , ինծի առանձին սենեակ մը տուաւ , վրաս զլուխս փոխեցի և մեքենավարի հագուստներով դուրս ելայ , շոգենաւը լրտես կար , իսկ սանգուլիին տակ երկու ոստիկաններ կըսպասէին :

<< Նաւապետը նախապէս խօսած էր ինծի թէ ի՛նչ ձեռով դուրս պիտի ելլէի : Ջիս ուրիշ մ ա ք ի –ն ի ս տ ի մը յանձնած էր . այս վերջինը , մօտենալով ինծի , ձեռքը բռնած երկաթի կտոր մը , նաեւ ուրիշ գործիք մը , ինծի տուաւ զայն և սկսաւ հետս յունարէն խօսիլ :

<< Սանդուխներէն միասին վար իջանք : Մենէ առաջ նաւապետը , վարը սանդուխին դակ , ձեռքը տուփ մը ծխախոտ , ոստիկանին կը հրամցնէր , սիկատ շինելու :

<< Ոստիկանին երեսը հակառակ կողմը դարձուցած էր , որպէս զի ուշադրութիւն չը դարձնէ մեզի , մեր վար իջնելու միջոցին :

<< Վար իջանք մենք և քանի մը քայլ հեռացած էինք , երբ նաւապետը պօռաց մեր ետեւէն .

<< - Շուտով եկէ՛ք... :

<< Մենք մաքսատան երիւրորդ դռնէն դուրս ելանք և շիտակ Ղալաթիա գացինք , յոյն զինեաւուն մը : Այդ զինետունը ծանօթ էր ինծի ընկերացոյ մաքինիստին :

<< Հոդ, մէկ ժամ սպասեցին, շոգենաւէն հագուստներս բերին , փոխուեցայ վրաս և մեր ընկերներուն քով գացի: >>

Վիշապի անդամներուն սւրախութեանը չափ ու սահման չը կար, Աշոտ յաջոգած էր առանց միջադէպի, առանց վտանգի Պոլիս մտնել , ուր այդ օրերը , խիստ էր հսկողութիւնը , Ոստիկանութեան կողմէն :

Օժանդակ ընկերուհիներէն տիկին Էլիզաբէթ ալ, մոռացանք յիշել , որ Սաֆօյին հետ Աթէնք անցած էր

Ռուսիայէն, Սաֆօյէն առաջ մեկնած էր Պոլիս և հոն մտած ` առանց դժուարութեան:

Այս կինը, ինչպէս կը յիշեն ընթերցողները, այրին էր ռուս բժիշկի մը , և մաքուր յեղափոխական , Դաշնակցութեան յարած օրէն ի վեր , կը փափաքէր մասնակցիլ մեծ ցոյցի մը : Եւ այդ փափաքին հասնելու նըպատակով է որ ընկերացած ` ր Սաֆօյի : Իրեն հետ ուժանակի գաբսիւլներ ու մաննիխէր ատրճանակ մը բերած էր և կը բնակէր Բէրա , Թընէլի դրացի տուն մը :

Վիշապի անդամները, ինչպէս նաև օժանդակ ընկերներն ու ընկերուհիները զար զար կը բնակէին:

Քրիստափորը , Սամուէլ Ֆայան , նոր անուէին տակ , օրիորդ Ռուպինայի հետ կ'ապրէր, իբրև իր աղջկան հետ, Օթէլ Քրէքըրէն դուրս, Եէնի Զարշը, Ճէզայիր փողոց , Աւստրիացի Ռատովիցի աբարաթըմանին մեջ , Պէլճիքացի Ժօրիսի վարձած տունը :

Այդ Ժօրիսի մասին առաջիկային պիտի խօսինք:

Սաֆօն, իբրև իր կնոջ ` Մառի Զայճի հետ կ'ապրէր գիշերօթիկ , Եւմէնիճի փողոց , Թիւ 33 տունը :

Իսկ Աշոտ, Պոլիս մտնելէն ի վեր, իր ծնողքին չէր հանդիպած , գաղտնի կ'ապրէր , մերթ Թորգոմին տունը , և մերթ ուրիշ տեղեր մնալով :

Աշոտի համար շատ աննպաստ էր այս ապրելակերպը, շուտով իր վրայ պիտի հրաւիրէր Ոստիկանութեան կասկածը : Ճար մը կը մտած էր , օր մը դիմեց Քրիստափորի և պարզեց իր գաղափար , առանձին բնակութեան վտանգները մի առ մի Թուեց և խնդրեց որ համոզէ տիկին Էլիզաբէթը , որպէս զի իրեն մետ ապրի մէկ տան մեջ :

Տիկին Էլիզաբէթը սակայն գիւրամատչելի կիներէն չէր, ուներ իր քմահաճոյքները. մարդատեաց մըն էր , իր ամուսինին մահուրէն ի վեր , և չէր ուզեր ո'չ մէկու հետ միասին ապրիլ . ո'չ ամուսինի , ո'չ եղօօր և ոչ ուրիշ անունի մը քօղին տակ :

Սակայն Աշոտ շատ ստիպեց, մատնանիշ ըրաւ առանձին ապրելու վտանգը, այնպէս որ Քրիստափոր պարտաւորուեցաւ ճնշում ի գործ դնել , կոտրելու համար Էլիզաբէթի յամառութիւնը .

- Տիկին, ըստ Քրիստափոր, կը տեսնէք, մենք առհասարակ ընտանիքով ենք, ես օրիորդ Ռուպինային հետ կ'ապրիմ և պարոն Սաֆօն ՝ Մառի Զայձի հետ, նոյնպէս միւս օժանդակ ընկերները, բոլորը կը բնակին ընտանիքներու մէջ :

- Պարոն, լաւ կը խօսիք, առարկեց տիկին Էլիզապէթ, բայց ես վարժուած եմ առանձին ապրելու, մենակեցուի մըն եմ ես և չեմ ուզեր ինծի ուրիշ բնակակից մը.

- Բայց, տիկին, Թախանձեց Քրիստափոր, ես մեծ հաւատք ունիմ ձեր անկեղծութեան վրայ, վստահ եմ թէ կը սիրէք գոհաբերութիւններ ընել, յեղափոխութեան համար.

- Սակայն, պարոն, յարեց տիկին Էլիզապէթ, յեղափոխութեան հետ գործ մը չունինք հիմա, չէ՞ .

- Ո՞վ կըսէ թէ չունինք, բողոքեց Քրիստափոր, ինչ է ուրեմն մեր գործը, ինչ, կը կարծէ՞ք թէ մենք հոս եկած լոյսնք ժամանցներու համար .

- Քա՛ւ լիցի, պարոն, ըսաւ տիկին Էլիզապէթ, յայտնի է թէ նուիրական գործ մը գլուխ հանելու նպատակով եկած ենք հոս, բայց կ'աղաչեմ, պարոն Քրիստափոր, մի՛ ստիպէք, չեմ կրնար խանգարել խաղաղութիւն, զոր կը պարտիմ առանձնութեան :

- Գիտէ՞ք, տիկին պարոն Աշոտ իր կինը, զաւակները ձգեր է Եգիպտոս և ինք հո՛ւ է եկեր . հո՛ւ ալ ունի ընտանիք մը, իր ծնողքը . բայց չի կրնար ապրիլ անոնց հետ, դուք ալ գիտէք, հակառակ պարագային, անոնց գոյութիւնը կը վտանգուի . հետևաբար, ուրիշ ընտանիք մը պէտք է Աշոտի համար, կը զարմանամ, ինչո՞ւ այսքան կը յամառիք :

- Չե՛մ յամառիր, պարոն, շեշտեց տիկին Էլիզապէթ, Սաֆօյի հետ ատեն մը միասին ապրեցայ, գիտէ՞ք .

- Այո, գիտեմ, ընդմիջեց Քրիստափոր, Ի՞նչ եղաւ .

- Բան մը չեղաւ, շարունակեց տիկին Էլիզապէթ, անկէ ի վեր է, որոշած եմ առանձին ապրիլ, կ'աղաչեմ պարոն Քրիստափոր, այս խնդիրը փակեցէ՛ք :

Քրիստափոր պահ մը լռեց, ա՛լ չը խօսեաւ. կը խորհէր թր ինք իրանք չունէր այդքան բռնանալու կնոջ մը վրայ, սակայն միւս կողմէ, Աշոտի վիճակն ալ աչքին առաջելը կը բերէր, կը վախնար թէ յանկարծ չը ձերբակալուի խեղճ տղան :

Այո խօսակցութիւնը տեղի կունենար Աշոտի բացակայութեանը, Քրիստափոր կը ջանար համոզել տիկինը, թուելով Աշոտի բարոյական արժանիքը, ձիրքերը, մաքուր նկարագիրը :

Վերջապէս, տիկին Էլիզապէթ Քրիստափորի շոյլած գովեստներէն ազդուած, գոչեց .

- Պարոն, պարոն, գիտցած ըլլաք, ես ուխտած էի միշտ առանձին ապրիլ, երբէք մէկը չընդունիլ իմ քով, բայց քանի որ ա՛յդքան կը գովէք Աշոտը, կ'ընդունիմ ձեր առաջարկը :

Խնդրիր լուծած էր , տիկին Էլիզապեթ ու Աշոտ , միասին տուն մը վարձեցին :

Այս տունը կը գտնուէր Ադա Համամի , Թաղապետութեան հիւանդանոցին մօտ , հինգ սենեակներէ կը բաղկանար : Աշոտ շուտով կահաւորեց բոլոր սենեակները , գնելով երկու մահճակալ , երկու վառարան և պատուհաններու վարագոյր , սեղան , դարան , հայելի , ևն . և եզաւ խորհրդաւոր տուն մը :

Եւ այս խորհրդաւոր բնակարանին մէջ փոխադրուեացան մօտաւորապէս 300 քիլօ մէնէլիթ, Դաշնակցութեան պատրաստած ապրանքը Պոլսոյ մէջ :

Այսպէս, ամէն պատրաստութիւններ ու կարգադրութիւններ եղած, կը սպասէին Բամազանի Տասնըհինգին :

Սակայն ձգտում մը, ուծացում մը կը նշմարէր Աշոտ, Քրիստափորի և Սաֆօյի միջև:

Այդ օրերուն մէջ էր, երբ առանձին էին երկուքը.

- Աշո՛տ, ըսաւ Քրիստափոր գանգատելով, գիտե՞ս ի՛նչ յիմար բաներ կ'ընէ Սաֆօն.

- Ի՞նչ, հարցուց Աշոտ հետաքրքիր դէմքով մը, ի՛նչ կ'ընէ՝

- Առանց ընկերներուն խորհուրդ հարցնելու, առանց մեր կամքը կանխաւ ստացած ըլլալու, ելեր յիսուն ոսկի՛ է տուրի երիտասարդի մը.

- Ի՞նչ բան ընելու, հարցուց Աշոտ.

- Ռումբեր պատրաստելու Պոլսոյ մէջ, պատասխանեց Քրիստափոր.

- Բայց, առարկեց Աշոտ .մեր որոշումը մոռացա՞ծ է լլաֆօն.

- Ո՞ր որոշումը, հարցուց Քրիստափոր միամտօրէն, չը կրնալով նոյն բոպէին յիշել.

- Մենք չէի՞նք որոշած, շարունակեց Աշոտ խիստ շարժուձևով մը, բա՛ն մը չը պատրաստել Պոլսոյի մէջ, չէ՞ք յ շեր, որովհետև թէ դժուար է թէ վտանգաւոր.

- Յիշեցի՛, յիշեցի՛ կրկնեց Քրիստափորը, բայց մեր խելացին ուզեր է ինքնագլուխ գործել.

- Ո՞վ է այդ երիտասարդը, որուն յիսուն ոսկի է վճարել Սաֆօն.

- Գրիգոր ըսած խաբեբայ սրիկա՛յ մը, պատասխանեց Քրիստափոր.

- Ո՞ւր է հիմա, հարցուց Աշոտ, տեղը յայտնի չէ՞.

- Ի՞նչ կ'ըսես, Աշո՛տ. յարեց Քրիստափոր, այդ խաբեբան , յիսուն ոսկի առեր և խոստացեր է ռումբեր շինել .

- Է՛, յետո՞յ , ընդմիջեց Աշոտ .

- Յետոյ, Սաֆօն հաւտացեր է ատոր խօսքին, համրեր է յիսուն ոսկին ռումբեր շինողին, որ , մէկ քանի օր ձգձգելէ յետոյ .կծիկը դրեր փախեր է ո՛վ գիտէ ո՛ւր , ոչ ոք գիտէ հիմա թէ ո՛ւր կը գտնուի այդ դրամաշորթը :

Աշոտ մոլտալ սկսաւ, գլուխը ձօճելով:

Յետոյ դառնալով Քրիստափորի.

- Պարո՛ն Քրիստափոր .ըսաւ, Սաֆօն կը ճանչնար այդ երիտասարդը , չէ՞ .

- Անտարակյ՛ւս , պատասխանեց Քրիստափոր , մինչն ցարդ կը պնդէ թէ՛ այդ յիսուն ոսկին չէ՛ կորսուած , թէ՛ պարկեշտ տղայ մըն է այդ գումարը ստացողը , թէ , ո՛վ գիտէ մօտ օրէն պիտի պատրաստէ ռումբերը , և յանձնէ մեզի , են . են . հազարումէկ ենթադրութիւններով կարդարացնէ դրամաշորթը .

- Իրեն սովորութիւն ըրած է արդէն, հաստատեց Աշոտ, բայց ինչո՛ւ ինք իր գլուխն գործած է . ներեցէ՛ք պարո՛ն Քրիստափոր, ես այդ ծախսը չեմ ճանչնա՛ր .պէտք է ինքը տուժէ , Սաֆօն ինքը .

- Ե՛ս ալ ըսի նոյնը, յարեց Քրիստափոր, քանի որ մեր ժովովէն անկախառար գործած է այդ անխոհեմութիւնը, պէտք է քաւէ իր յանցանքը, ե՛ս ալ համակարծիք եմ քեզի .

- Ուրիշ ի՞նչ կայ, Պարո՛ն Քրիստափոր, հարցուց Ա՛շոտ, կըլուսամ թէ գործերը բաւական կարգի դրուած են, ահա՛ կը մօտենայ օրը, պէտք է պատրաստ զըտնուինք:

- Պատրաստութիւնները լրացած են Աշո՛տ, պատասխանեց Քրիստափոր, այդ կողմէն հոգ մը չունինք, բայց , կը վախնամ թէ վերջին պահուն չը վիժե գործը :

- Ինչո՞ւ պիտի վիժէ, հարցուց Աշոտ սրտի դողով մը, մատնութի՞ւն մը կայ , ի՞նչ կայ .

- Ո՛չ, շարունակեց Քրիստափոր, մէկ քանի ընկերներուն ընթա՛ցքը ...

- Ի՛նչպէս ...

- Ես այս տեղին տգէտը, օտարը կը համարուիմ, շարունակեց Քրիստափոր, չեմ ճանչնար մարդիկը, ո՛չ ալ վայրերը, անցածները , որոշոեցաւ փորձ մը կատարել .

- Է՛, ընդմիջեց Աշոտ, ինքզինք ամփոփելով, ի՞նչ փորձ է նայինք.

- Ռումբի փո՛րձ մը, շարունակեց Քրիստափոր.

Սաֆօյի խելքը փչեց օր մը, խմբովին երթա՛նք, ըսաւ, հեռաւոր տեղ մը, մարդիկներէ հեռու, փո՛րձ մը կատարենք.

- Կ՛աղաչե՛մ, պարո՛ն Քրիստափոր, ընդմիջեց Աշոտ, հետզհետէ շահագրգռուելով անոր պատմուածքով, պատմեցէ՛ք, պատմեցէ՛ք:

Եւ Քրիստափոր սկսաւ պատմել հետնեալը. -

<< Աշնան արևոտ օր մըն էր , որոշեցինք երթալ Պէկքօզ , և անկէ՝ Պօլոնէզ գլուղը :
Ուստի , ես , Սաֆօ , օրիորդ Ռուպինա , օրիորդ Մառի Զայձ , տիկին Աննա Գօռնէլի (Հէլլէնս)
՝ Ժօրիսի կինը , Թորգոմ ու Վռամչապուհ , ինչպէս նաև ուրիշ մէկ քանի օժանդակ ընկերներ ,
երկու ռումբ առինք հետերնիս և խմբովին ճամբայ ելանք :

<< Կամուրջէն նստանք Վասփորի շոգենաւը, բազմութեան աչքերը յառած էին մեզի.
Ճշմարիտ զբօսաշրջիկներ էինք , յունարէն , ռուսերէն , գերմաներէն , ֆրանսերէն , իտալերէն ,
ամէն լեզուներով կը խօսակցէինք :

<< Հասանք Պէյքօզի առջև և կը պատրաստուէինք դուրս ելլել շոգենաւէն, երբ մէկ քանի
ոստիկաններ ցցուեցան մեր առջև :

Աշոտ, անհամբեր շարժումով մը . ընդմիջելով.

Յետո՞յ, գոչեց , շարունակեցէ՛ք .

<< Սիրելի՛ս, շարունակեց Քրիստափոր , երևակայել պէտք է այն վայրկեանը ,
ոստիկանները շրջապատեցին մեզ և իրենց պէտք , մօտենալով ինծր .

- << Ո՞վ էք դուք, հարցուց .

<< Անմիջապէս այցաքարտս ներկայեցի, ոստիկանը նայեցաւ երեսս , նոյնպէս
միւսները ցոյց տուին իրենց այցաքարտը :

- Այցաքարտերը կրցա՞ւ յանել ոստիկանը, հարցուց Աշոտ , ի՞նչ լեզուով էին .

-Ո՞ր լեզուով կ'ուզես, յարեց Քրիստափոր ժըպտելով , չէ՞ որ զբօսաշրջիկներ ենք :

<< Վերջապէս , շարունակեց Քրիստափոր , ոստիկաններուն ձեռքէն ազատեցինք մեր
օձիքը , Բօլօնէզ գլուղը գնացինք , ուր քիչ մը հանգչելէ յետոյ , խմբովին ուղղուեցանք Երամեան
Աբրահամ Բաշայի Պէյքօզի անտառը , յարմարագոյն տեղը , ուր պիտի կրնայինք կատարել
մեր ռմբաձգութեան փորձերը :

<< Մեր ընկերները տեղը գտան , բայց երբեք չէին երեւակայած այդ ստուարախիտ
Թաւուաներուն մէջ անտառապահի ներկայութիւնը :

<< Առաջին ռումբը նետուեցաւ , բայց բարեբաղդաբար չը պայթեցաւ . բարեբաղդաբար,
այո՛ր որովհետև կը պատրաստուէինք երկրորդ ռումբը նետել , երբ անտառապահին հասակը
գծուեցաւ մեր առջև :

<<Կրնաս երեւակայել , Աշո՛տ , մեր դրութիւնը , հազիւ կարելի եղաւ պահել ռումբը :

- Պահապանը չը կռահե՞ց, ընդմիջեց Աշոտ:

Քրիստափոր շարունակեց իր պատմութիւնը. -

Անտառապահը միամիտ մարդ մը կ'երեւար, մեր եւրոպական գլխարներէն
խաբուեցաւ , միայն , մօտենալով , հարցուց . - << Ի՞նչ կը փնտռէք հոս, միւսիւնէ՛ր :

<< Մենք բառ մը չարտասանեցինք , քանի մը ձեռք ատրճանակ պարպեցինք միայն : Եւ մարդուկը մեզ զբօսաշրջիկներ կարծելով , դիտողութիւն մը չըրաւ : Իսկ մենք , անտառին խոտերուն տակ թողուցինք առաջին ռումբը , որ , ինչպէս ըսի , չէր պայթած , և այդ վայրերէն հեռացանք : >>

Քրիստափոր , վերջացնելով ռումբի պարմութիւնը .

- Աշո՛տ , ըսաւ , մեր խոհեմութիւնը մեկնութիւն չը վերցնէր , չէ՞ .

- Կը զարմանա՛մ , կը զարմանա՛մ , կրկնեց Աշոտ , պարո՛ն Քրիստափոր , գոնէ դուն խօսք չը կրցա՞ր հասկըցնել մեր խենդերուն .

- Իրաւո՛ւնք ունիս , Աշո՛տ , յարեց Քրիստափոր , ես ալ չեմ գիտեր ինչպէս ինկայ ծուղակը , յիմարութիւ մըն էր , գործեցինք , ի՛նք որ է ... :

Յետոյ , խօսակցութիւնը դարձաւ ուրիշ նիւթերու վրայ :

- Աշո՛տ , ըսաւ Քրիստափոր , մէկ քանի անգամներ ուրբաթի սէլամը գին ներկայ եղանք :

- Ի՞նչպէս ...

- Ես , շարունակեց Քրիստափոր , իբրև հրեայ վաճառական մը , ռուսական դեսպանատան տոմսովը զացի , օտարազգի կարևոր հիւրերու յատուկ տաղաւարը մտայ և դիտեցի Սուլթանին անցքը . ուրիշներ ալ գնացին ներկայ եղան , մեր ընկերներէն . ես շատ յարմար գտայ տաղաւարէն ռումբեր նետել Ապիտիւլ համիտի վրայ , մեր ընկերներէն շատերը նւյն կարծիքը յայտնեցին ,

- Բայց վտանգաւոր չ՞է , առարկեց Աշոտ , տաղաւարին մէջ ուրիշ օտար հիւրեր ալ կը գտնուին , չէ՞ .

- Անշուշտ , շարունակեց Քրիստափոր , բայց , բազմութեան մէջ ո՞վ պիտի կրնայ որոշել ... :

Աշոտ համակարծիք չէր Քրիստափորի , դարձաւ ըսաւ ,

- Պարո՛ն Քրիստափոր , ահա Բամազանին Տասնըհինգը կը մօտենայ , ես ուրիշ գործնական միջոց մը կը խորհիմ .

- Որ՞ը ...

- Թոյլ տու՛ր որ բացատրեմ . շարունակեց Աշոտ , չէ՞ որ այդ օրը Սուլթանը պիտի երթայ Այա Սօֆիա .

- Այո՛ , ընդմիջեց Քրիստափոր , պիտի երթայ .

- Սուլթանին անցքին երկու գիծերուն երկայնքը , շարունակեց Աշոտ , Երլորզէն մինչեւ Սօլմա Պազէ , երկերկու ընկերներ կը նշանակենք , ամէնքն ալ ատրճանակներով զինուած , կազմ ու պատրաստ :

- Է՛, ընդմիջեց Քրիստափոր , գաղափարը գէշ չէ .

- Գործնական է, գործնական է , յարեց Աշոտ , Սուլիթանին անցքը կը դիտեն , և երբ կը մօտենայ , ասորճանակաները կը պարպեն.

- Շա՛տ լաւ, յարեց Քրիստափոր , ժամ առաջ տուն մը վարձելու է այդ կողմերը .

- Պէշիքթաշի մէջ, աւելցուց Աշոտ :

Վիշապի երկու կարևոր անդամները համաձայն էին, որոշեցին նայն գիշեր ժողով գումարել , այս խնդիրը ծեծելու համար :

Ժողովը գումարուեցաւ, միւս երկու ընկերները , Սաֆօ ու Թորգոմ , համամիտ գտնուեցան Աշոտի ծրագրին և յանձնարարուեցաւ Ժօշիսի տուն մը վարձել Պէշիքթաշի մէջ , բայց անկարելի եղաւ : Ուստի բաւական համարուեցաւ զինուած ընկերներ միայն կեցնել Սուլթանին անցքին եւկու կողմերը , որունք ատրճանականերով պիտի գործադրէին մահափորձը :

ԺԶ

Խաղաղ անցաւ Բամազանի Տասնըփինգը , առանց ո՛ր է և է միջադէպի :

Վիշապի Պատասխանատու Մարմինը , կանխորոշ կարգադրութեան մը համաձայն , Ապտիւլ Համիտի անցքին երկայնքը , Երլտըզէն մինչև Սօլմա Պաղչէ , օժանդակ ընկերներէն փորձ ու նշանաձիգ տղաքներ նշանակած էր : բոլորը զինուած ` ատրճանականերով , որոնք պաշտօն ունէին գլուխ հանելու Մահափորձը :

Նոյն օրը , որոշեալ ժամուն , ծանօթ կէտերուն վրայ , անրերի ճշդապահութեամբ մը սպասեցին օժանդակ ընկերները , ժամերով սպասեցին , բայց , Սուլթանը չանցաւ այդ փողոցներէն , և իրենք ստիպուեցան ձեռնունայն վերադառնալ :

Ապտիւլ Համիտ , այդ օրը , արքունի լրտեսապետին խորհուրդովը, Երլտըզի պարտէզին մէջէն անցած էր Զրադանի պալատը , ուրկէ նաւ նստելով անցած էր Պոլսոյ կողմը :

Ինչո՞ւ արդեօք այս շեղումը , ինչո՞ւ Ապտիւլ Համիտ փոխած էր ուղեգիծը ... :

Բամազանի առաջին օրէն ի վեր , ինչպէս ընթերցողները կը յիշեն , կանխագգուշութեան համար , Ոստիկանութիւնը , ձերբակալած էր մեծ թիւով կասկածելի մարդեր , առ հասարակ անմեղներ ` ամէն ազգերէ մեծ մասը ` Հայերէն , որոնք տեղաւորուած

էին Կալաթա Մէրայ , Ոստիկանութեան Դուռը , և մայրաքաղաքի գլխաւոր պահականոցներուն մէջ և Բամազանի Տասնըփինգէն վերջը պիտի ազատ արձակէին :

Ասոնց մէջ կը գտնուէր Յոյն մը Թաթաւլլայէն , հարբած վիճակի մէջ , Ղալաթիոյ աղտոտ գինետունէ մը փոխադրուած : Այս Յոյնը , զինովութեան նօսական անցընելէ վերջ , Ոստիկանութեան նախարար Շէֆիզ բաշային ներկայութեան բերուած էր , հարցաքննելու համար :

Մեծամեծ խոստումներէ հրապուրուած , Այս Յոյնը նախարարին յայտարարած էր թէ՝ Վեհափառ Սուլթանին դէմ մահափորձ մը կը պարտաստուի Բամազանի Տասնըփինգին , և թէ՝ մահափորձը պիտի գործադրուի կայսերական անցքին միջոցին :

Նախարարը վար դրած էր այդ լրատուն , միևնոյն ժամանակ , եղելութիւնը փութացած էր հաղորդել Երլտըզ :

Ասդին , արքունի լրտեսապետը նոյն լուրը ստացած էր ուրիշ աղախուրէ մը , և զայն անմիջապէս հաղորդած էր Հինքեարին :

Երկու տարբեր աղախուրներէ քաղուած միևնոյն զգայացունց լուրը բնականաբար պիտի սոսկումի մատնէր Մեծ Կասկածոտը , որ առանց ատոր ալ , կը տառապէր արդէն հալածախտէ :

Սակայն փոքրիկ տարբերութիւն մը կար լրտեսապետին և ոստիկանութեան նախարարին բերած տեղեկութիւններուն առջև : Շէֆիզ բաշան կը պնդէր թէ հայ գօմիթէի կողմէն պիտի կատարուէր մահափորձը մինչդեռ լրտեսապետը կը կասկածէր կայսերական Համլէն :

Ապտիւլ Համիտ իրօք արգահատելի էր Բամազանի այդ օրերու մէջ . ամէն իֆթարի կը զառանցէր , նոյնիսկ նախարարներէն ներկայութեանը :

Նէճիպ Մէլիհամէ բաշան , մէկ ժամուան մէջ թերևս հինգ անգամ կանչուեցաւ Հինքեարէն :

- Նէճի՛պ , գոռաց Բոնաւորը , դո՛ւն գիտես , եթէ երեւան չը հանես այս դաւադրութիւնը...

- Վեհափա՛ռ տէր , կ'աղերսէր Նէճիպ Մէլիհամէ , զինովի մը խօսքին մի՛ այդքան կարեւորութիւն տաք .

- Ի՞նչ գինով , գոչեց Համիտ , Շէֆիզ բաշան ի՛նքը բերաւ լուրը .

- Բայց , Վեհափա՛ռ տէր , ընդմիջեց Նէճիպ Մէլիհամէ , Շէֆիզ բաշային ո՞վ հաղորդած է այդ լուրը .

- Ո՞վ հաղորդած է , կրկնեց Ապտիւլ Համիտ մեքենայօրէն .

- Գինովին մեկը , պատասխանեց Նեճիպ Մելիամե , կ'աղաչեմ , թո՛ղ հանդարտի ձեր Վեհափառութիւնը , ձեր ամենասուրբ անձը զե՛րծ է ամեն վտանգէ , մի՛ հաւատաք այդպիսի զրոյցներու , առասպելնե՛ր են ... :

Ապտիւլ Համիտ , Նեճիպ Մելիամեի վերջին խօսքերէն քիչ մը համոզուեցաւ , պահ մը հանդարտեցաւ :

Սակայն մահափորձին մղձաւանջը կը տանջէր զինք , կըսկսէր կասկածիլ նոյնիսկ Նեճիպ Մելիամեի հաւատարմութեան մասին . դարձաւ ըսաւ անոր .

- Նեճի՛պ , դուն կ'ըսես թէ այս լուրը սուտ է , շատ լա՛ւ , ենթադրենք թէ մեր ոսկոյիկանութեան նախարարը խաբուած ըլլայ գինովի մը ձաբոտութենէն .

- Խաբուած չե՛ , Վեհափա՛ռ տէր , առարկեց Նեճիպ , չարամիտ ժպիտով մը , Շէֆիֆ Բաշան պարապ մարդ մը չե՛ . ի՛նք է դրեր այդ խօսք գինովի մը բերանը .

- Ի՞նչ կըսես , Նեճի՛պ , ի՞նչ գինով է .

- Վեհափա՛ռ տէր , պատասխանեց Նեճիպ Մելիամե , գինով Յոյն . Մը ձերբակալել տուեր է , այդ Յոյնը հանած է եղեր այդ խօսքը

- Ո՞ւր է այդ Յոյնը հիմա , հարցուց Համիտ .

- Վեհափա՛ռ տէր , պատասխանեց Նեճիպ Մելիամե , Ոստիկանութեան դուռը բանտարկուած ըլլալու է .

- Այդ Յոյնը հոս թող բերուի , հրամայեց Հիւնքեարը . տեսնել կուզեմ ինչենի՛ է ... :

Նեճիպ Մելիամե դուրս ելաւ և անմիջապէս կայսերական իրատէն շուտով հաղորդել տուաւ Շէֆիֆ Բաշային :

Ոստիկանութեան նախարարին կառքը կէս ժամ ետքը ներս կը մտնէր Երլտըզի շրջափակէն , ուրիշ կառք մըն ալ ետեւէն :

Գինով Յոյնը կը բերուէր :

Նեճիպ Բաշա վազեց Հիւնքեարին քով , իմաց տուաւ .

- Սա գինովը բերե՛ք նայիմ , հրամայեց Հիւնքեարը , Շէֆիֆ Բաշան թո՛ղ սպասէ :

Յոյնը ներս տարուեցաւ , մինչ Ապտիւլ Համիտ , վարագոյրին ետին ման կուգար :

Նեճիպ Մելիամե հոն էր , Յոյնին քովը , ի՛նք կը հարցաքննէր զանի .

- Ի՞նչ ես խօսեր Ոստիկանութեան նախարարին , հարցուց Նեճիպ Մելիամե .

- Բաշա՛ , բան մը չեմ խօսեր , պատասխանեց Յոյնը :

Վարագոյրը շարժեցաւ և Նեճիպ Մելիամե ներս վազեց :

Հիւնքեարը հրամայեց Մէլհամէ հարցընել Յոյնի թէ ի՞նչիմ ացեր է Բամազանի Տասնըփինգի մասին:

Նէճիպ Մէլհամէ դուրս ելաւ և հարցաքննութիւնը շարունակեց ,

- Խօսէ՛ նայինք, ըսաւ Յոյնին , ի՞նչ պիտի ըլլայ Բամազանի Տասնըփինգին .

- Ի՞նչ օրտի ըլլայ , բաշա՛ , պատասխանեց Յոյնը , իր ցեղին յատուկ Թուրքերէն հնչունով մը , մեր սիրելի Փատիշահը պիտի երթայ Այա Սօֆիա .

- Շատ աղէկ , շարունակեց Նէճիպ Մէլհամէ , այդ մասին ի՞նչ ես խօսեր .

- Որո՞ւ , հարցուց Յոյնը , ապշահար .

- Շէֆիզ բաշային , պատասխանեց Նէճիպ Մէլհամէ .

- Ո՞վ է Շէֆիզ բաշան , հարցուց Յոյնը .

- Ոստիկանութեան նախարա՛րը , պատասխանեց Նէճիպ Մէլհամէ , դուն ի՞նչ խօսեցար անոր առջեւ .

- Բա՛ն մը չեմ խօսած , բողոքեց Յոյնը , Բամազանին առաջին օրէն ի վեր բանտարկուած եմ , բաշա՛ , ի՞նչ է յանցանքս , սկսու պաղատել Յոյնը .

- Քեզ պիտի արձակեմ հիմա , խոստացաւ Նէճիպ Մէլհամէ , եթէ շիտակը խոստովանիս .

- Բաշա՛ , յարեց Յոյնը , ի՞նչ պիտի խոստովանիմ , ես ի՞նչ գիտեմ , ի՞նչ խնդիր է .

- Բամազանի Տասնըփինգին , շարունակեց Նէճիպ Մէլհամէ , Վեհափառ Սուլթանին դէմ ի՞նչ պիտի ընեն եղեր գովիթէները .

- Չե՛մ գիտեր , ուրացաւ Յոյնը , ո՞վ է ըսեր .

- Դուն ես ըսեր , պատասխանեց Նէճիպ Մէլհամէ , Ոստիկանութեան նախարարին դո՛ւն ես ըսեր թէ գովիթէի մը կողմէն դուադրութիւն մը կը պատրաստի .

- Ես ատանկ բան մը չեմ ըսած , բաշա՛ , ին՛չդ մարդ մը եմ , տեղեկութիւն չունիմ այդ բանէն .

- Ինչո՞ւ կուրանաս , գոռաց Նէճիպ Մէլհամէ , ըսպառնացայտ նայուծքով մը .

- Ես ատանկ խօսք մը չեմ ըսած երբեք , կըրկնեց Յոյնը .

- Մե՛ղք է քեզի , յարեց Նէճիպ Մէլհամէ , ինչո՞ւ կ՛ուրանաս , ինչո՞ւ չես խոստովանիր , Շէֆիզ բա՛ւյին ներկայութեան ի՞նչ խօսեցար .

- Ես չը խօսեցա՛յ , բաշա՛ , պատասխանեց Յոյնը , ի՞նքը խօսեղաւ .

- Ի՞նչ խօսեցաւ , հարցուց Նէճիպ Մէլհամէ .

- Ի՛նք ստիպեց ինձի որ , շարունակեց Յոյնը , ըսեմ այդ խօսքը .

- Ո՞ր խօսքը .

- Գօմիթէին խօս՛քը – պատասխանեց Յոյնը .

- Պատմե՛ , պատմե՛ , տեսա՞ր , յօրդորեց Նեճիպ Մէլիամե՛ , ի՞նչ աղէկ կը պատմես , պատմե՛ նայինք Գօմիթէին խօսքը .

- Ոստիկանութեամ նախարարը , շարունակեց Յոյնը , խոստացաւ ինձի մեծ պարգևներ տալ , և անմիջապէս ազատ արձակել զիս , եթէ իր պատուէրը կատարեմ .

- Ի՞նչ պատուէր , հարցուց Նեճիպ Մէլիամե՛ .

- Ինձի պատուիրեց որ , շարունակեց Յոյնը , ըսեմ թէ հայ գօմիթէ մը Բամազանի Տասնըփինգին պիտի յարձակի Վեհափառ Սուլթանին վրայ .

- Ի՞նքը պատուիրեց քեզի , հարցուց վերսին Նեճիպ Մէլիամե՛ .

- Այո՛ , նոյնինքը , պատասխանեց Յոյնը , Շէֆիզ Բաշա՛ ...

Վարագոկըրը նորէն շարժեցաւ , Նեճիպ Մէլիամե՛ վերըստին ընդհատեց հարցաքննութիւնը , և վարագոյրին ետին մտաւ :

Ապտկլլ Համիտ կատաղած էր Շէֆիզ Բաշային դէմ , հրամայեց ազատ արձակել Յոյնը :

Նեճիպ Մէլիամե՛ գօհ էր , Շէֆիզ Բաշային անկումը մօտալուտ է , կըսէր ինքնիրեն :

Նոյն օրը կայսերական իրատեով ազատ արձակուեցաւ Յոյնը :

Ապտիւլ Համիտ հրամայեց Նեճիպ Մէլիամե՛ի գաղտնի քննութիւն մը բանալ Հարէմի մէջ, Մեծ ներքինապետին միջոցաւ , հասկանալու համար թէ ո՛ր աստիճանի ստոյգ է Լրտեսապետին հաղորդած լուրը :

Իսկ Շէֆիզ Բաշան , առանց ներկայանալու Հիւնքեարին , լոկ առաջին քարտուղար Թահսին Բաշայի հետ տեսակցելէ յետոյ , վերադարձաւ իր պաշտօնարանը :

Նոյն օրը սակայն տակնուվրայ եղաւ Երլտրզ , զանազան շշուկներ սկսակ շրջան ընել հոն , և արձագանգը հասաւ Հարէմի մէջ :

- Այս տարի չպիտի երթայ Այա Սօֆիա , կ'ըսէին իրարու :

Աստճան մը ս տոյգ էր այդ տարածայնութիւնը :

Ապտիւլ Համիտ , պատրուակ մը կը փնտռէր արդէն Բամազանի Տասնըփինգին դուրս չելլելու : Սակայն արդաացնելու համար իր բռնելիք ընթացքը , կանխաւ ուզեց ստանալ Էխիւլ Հիւտայի կարծիքը , որ այս կարգի խնդիրներու մէջ գերակշիռ կը համարուէր :

Եւ կայսերական Թիկնապահ մը գիշերով գնաց Երլտրզ կանչելու արքունի աստղաբաշխը , Պէշիկթաշի իր բնակարանէն :

Ապտիւլ Համիտ , ամէն անգամ որ հոգեկան տագնապներու մէջ կ'իյնար , օգնութեան կը կանչէր Էպիւ Հիւտան , երկինքի գաղտնիքներուն տեղեակ գուշակը , որուն խօսքը պատգամ էր , մանաւանդ երբ խնդիրը կը դառնար Յիւնքեարի կեանքիս շուրջը :

- Վեհափա՛ն տէր , պատասխանելով Ալտիւլ Համիտի հարցման թէ՛ կրնա՞ր արդեօք անվտանգ երթալ Այա Սօֆիա Րամազանի Տասնըփինգին , կրնաք երթալ , ըսաւ Էպիւլ Հիւտա , Բայց ո՛չ սովորական ճամբով .

- Ծովէ՛ն թէ ցամաքէն , հարցուց Հիւնքեարը .

- Թէ՛ ցամաքէն թէ՛ ծովէն , պատասխանեց Էպիւլ Հիւտա , մարգարէի տիրական շեշտով մը .

- Ի՞նչպէս ...

- Այո՛ , Վեհափա՛ն Տէր , շարունակեց Էպիւլ Հիւտա , կ'իջնէք ծովեզերքը կառքով , կը կտրէք ծովը նաւով և յետոյ կառքով մինչև Այա Սօֆիա , վերադարձը նոյն կերպով .

- Բայց ինչո՞ւ այդ ճամբան , հարցուց Ապտիւլ Համիտ կասկածոտ դեմքով մը , ինչո՞ւ կամուրջէն չանցնիմ .

- Մի՛ անցնիք Կամուրջէն , Վեհափա՛ն տէր , պատասխանեց Էպիւլ Հիւտա , մի՛ անցնիք կ'ըսեմ , Մահը կը դարանի հոն .

- Ո՞ւր

- Պալատէն Կամուրջը տանող ճամբուն վրայ , պատասխանեց Էպիւլ Հիւտա .

- Կրնա՞ք յայտնել , ո՛վ իմաստուն . և աստուածահաճոյ մարդ , հարցուց Հիւնքեարը , կրնա՞ք ինծի յայտնել թէ որո՞նք են իմ կեանքիս թշնամիները ...

Էպիւլ Հիւտա պահ մը լռեց , սկսաւ շփել իր երկու երեսները , մէկ քանի անգամ աչքերը գոցեց ու բացաւ , յետոյ .

- Վեհափա՛ն տէր , ըսաւ , ոգիները թոյլ չեն տար որ յայտնեմ .

- Կապահովէ՞ք թէ պիտի կրնամ ողջ առողջ վերադառնալ Այա Սօֆիայէն , հարցուց Համիտ .

- Այո՛ , պատասխանեց Էպիւլ Հիւտա , կ'ապահովեմ , պայմանաւ որ երթաք այն ճամբով , որ կանխաւ ցոյց տրուեցաւ :

Ապտիւլ Համիտ հանդարտեցաւ , վտանգ մը չէր սպառնար իրեն , քանի որ իր ամենագէտ աստղաբաշխը կ'ապահովէր ... :

Րամազանի Տասնըփինգին , Ապտիւլ Համիտ , Երլտըզի պարտէզին մէջէն անցած էր Ջրաղանի պալատը , ատկեց նաւ նստելով գացած էր Այա Սօֆիա , և վերադարձած թր միեւնոյն ճամբով :

Վիշապի Պատասխանատու Մարմինի ծրագիրը կը վիժեր այս կերպով , ուրիշ նոր ու գործնական ծրագրի մը կը մնար մշակել , Մեծ Մարդասպանը պատժելու համար :

ԺԷ

Վիշապի Մարմինը վճռած էր ամեն գնով գլուխ հանել Մահափորձը , որուն յաջող վերջաւորութիւնը ` պիտի մէջտեղէն վերցնէր անպատիժ մնացած թապակիր Ռճրագործը , և միեւնոյն ժամանակ , նոր կեանքի մը դարագլուխը պիտի պանար լուծի տակ հեծող ժողովուրդներուն :

Ուստի , վերստին ժողով գումարեցին , և երկար վիճաբանութիւններէ վերջ , նոր ծրագիր մը կազմեցին , այն է , Օտար հիւրերու տաղաւարէն ռումբեր նետել և ուժանակով լեցուն կառք մը միանուագ պայթեցնել .

Սակայն , Վիշապի անդամները , փորձառու յեղափոխականներ բոլորը , համոզուած էին թէ դիւրին չէր այսպիսի ծրագիր մը շուտով գլուխ հանել , առանց լուրջ պատրաստութիւններու : Նախ ` պէտք էր պատրաստել ռումբերը , որոնք պիտի նետուէին Սէլամըզին օրը , օտարագոյներու տաղաւարէն :

Ո՞ր պիտի օտարաստէին սակայն այդ փրկարար ռումբերը ... :

Պոլի՞ս ... անկարելի է , մէն մի քայլափոխի , լըր տես մը կը ցցուէր , ամբողջ մայրաքաղաքը , աւելորդ է կրկնել , լրտեսներու ժամադրավայր մըն թէ արդէն . հետեւաբար , որոշեցին այդ ռումբերը պատրաստել արտասահմանի մէջ , նոյնպէս , հ՛ոն կաաարել փորձերը : Յետոյ ուսումնասիրել պէտք էր կառքին խնդիրը . կառքը պիտի լեցուէր ուժանակներով , և անոնք ամենքը միասին պիտի պայթէին : Խնդիր մը , որ կարծուծէն շատ աւելի լուրջ թէ և մեծ զգուշութիւն ու յարատեւութիւն կը պահանջէր :

Վիշապի Պատասխանատու Մարմինը , որ նախապէս կը բաղկանար միայն չորս անդամներէ – Քիրստափոր , Աշոտ , Թորգոմ ու Սաֆօ , - յետոյ իր մէջ անդամ առած էր նաև Վոամշապուհ Քէնտիրեանը : Ասոնք ամեն գիշեր ժողով կը գումարէին ու մահափորձի խնդիրը կը ծեծէին իրենց մէջ : Ռումբերը պիտի պատրաստուէին , ինչպէս ըսինք , արտասահմանի մէջ , ուր պիտի կատարուէին նաև փորձերը :

Սակայն , նոյն օրերը , գէշ լուրեր հասան Պաւլկարիայէն : Դաշնակցական օժանդակ ընկերներէն Կարօ , Լեւոն Կիւլիմեան և Սարգիս , սրոնք ռումբի փորձեր կը կատարէին հոն , յանկարծ կը ձերբակալուին կ'արտաքսուին Պաւլկարիայէն :

Այս ձախողումը չէր կրնար երբեք վիատություն առթել Վիշապի անդամներուն , որոնք , ամեն վտանք և ամեն պատահականությունն աչքի առջեւ ունենալով , կը շարունակէին իրենց գործը :

Առանց բաւականալու մասնագէտներու տեսական ծանօթութիւններով , ռումբերուն պատրաստութիւնը գործնական գետնի վրայ դրուած էր , արտասահմանի ամեն անկիւններէն կը հասնէին քաջալերիչ լուրերը , և այդ կողմէն մտահոգութիւն մը չըկար :

Ռումբեր նետելու պաշտօնով , Երլտըզի հիւրանոցը մտնողները պատկառելի թիւ մը պիտի կազմէին :

Գլխաւոր դերակատարներէն Գառլօ Եուվանովիչի յուշատետրին մէջ յիշուած են անունները դաւադիրներուն , որոնք պիտի մտնէին Երլտըզի հիւրանոցը . -

Սամուէլ Ֆայն , ռուս վաճառական .

Ռուպինա Ֆայն , Սամուէլին աղջիկը .

Սաֆօ , ռուս մեծատուն մը .

Մառի Զայա , Սաֆօի կինը .

Աշոտ , ռուս դրամատէր մը .

Տիկին Էլիզապէթ , իր կինը .

Տօգթ . Գրիգոր Սայեան , Ռումանացի .

Կարօ , Ռուս .

Քրիս , Իտալացի :

Այս հիւրերը , զանազան դեսպանատուններու քարտերով պիտի յաջողէին մտնել տաղաւարը , ուրէկ միանուագ պիտի նետէին ռումբերը , մինչ , միւս կողմէն , ուժանակներով լեցուն դժոխային կառքը պիտի պայթէր :

Այդ , ռումբերը պատրաստելէ յետոյ , կառքը պիտի գնուէր և կառապան մը պիտի նշանակուէր :

Կառապանը պատրաստ էր , Զարեհը , Ճօրճ Վարշամովիչ կեղծ անունով , թէն կասկածուած , ինչպէս յայտնի է , 1896 ի Պանք Օթօմանի Դէպքով : Անդամներէն Թորգոմ առաջարկեց . կառապան կարգել նախ Մկրտիչ Ղարիպեանը , որ պարտաւոր պիտի տլլար սովորեցնել Զարեհին , որպէս զի այս վերջինը , մահափորձի գործադրութեան պահուն գտնուի պաշտօնին զուխը :

Պատասխանատու Մարմինը լրջօրէն ձեռք առած էր խնդիրը , որոշեց Քրիստափորը Պուլկարիա զրկել , թէ՛ ռումբերուն պատրաստութեան , թէ՛ կառքին ուսումնասիրութեան համար :

Քրիստափոր , առանց ո՛րն է առարկութեան , ստանձնեց իրեն վստահուած պաշտօնը , և 1904 Նոյեմբերի 12ին մեկնեցաւ Պուլկարիա , իր աղջկան Ռուպինայի հետ : Եւ Վիշապի անդամները մնացին միայն չորս հոգի . իսկ Օժանդակ Ընկերներէն Տօգթօր Գիրգոր Սեյեան , բժշկութեան արհեստը մէկդի դրած , հովհանոցեվաճառի խանութ մը բացած էր Ղալաթիա , Եիւքսէք Գալտըրըմ , Տէւտոնիայի դիմացը , յետոյ Պէշիկթաշ փոխադրուելու և հոն ուրիշ խանութ մը վարձելու պայմանով :

Պոլսոյ մէջ անգործ կը պտըտէին օժանդակ ընկերներէն Զարեհ , Կարօ , Արամ ու Քրիս :

Ուսումնասիրութեան համար , Վիշապի Մարմինը կը մտածէր կառք մը վարձել ու պահել , միշտ տրամադրելի ըլլաւ :

Վիշապի անդամներէն Սաֆօն ու Աշոտը կ'երթան Եէնի Զարշը , Վաֆիյատիս անուն Յոյնին քով : Առաջինը կը ձեւանայ միլիոնատէր Ռուս մը , իսկ Աշոտ ` անոր թարգմանը : Կը սակարկեն . և ամսական քսան ոսկիով կառք մը կը վարձեն : Եւ որպէս զի Յոյնին կասկածը չը հրաւիրեն իրենց վրայ , Աշոտ այդ սակարկութենէն երկու ոսկի միջնորդչէք կըստանայ :

Վաֆաիյատիս իր կառապաններէն մէկը կ'առաջարկէ վարձուած կառքը վարելու , բայց Աշոտ ու Սաֆօ կը հակառակին , առարկելով թէ իրենք ունին կառապան մը , Յոյնը կըստիպուի համակերպիլ :

Աւելորդ է կրկնել , Մկրտիչ Ղարիպեանը պիտի ընէր կառապանութիւնը , մինչև որ վարժուէր Վարշամովիչը :

Ղարիպեան բաւական վարժ էր արդէն , իրեն յանձնուեցաւ այս կառքը :

Այն սարին խիստ ձմեռ մը կար , ցուրտը սաստիկ , փողոցները սառ կապած : Ամէն մարդ իր տունը քաշուած , բարեկեցիկները մանաւաղ , վառարանէն չէին զառուեր : Դաշնակցականներուն կառապանը , առանց կարեւորութիւն տալու խաճնող ցուրտին ու եղանակին խստութեանը , ամէն օր կառքը դուրս կը կանէր ախոռէն . ու կը բերէր զայն կը կեցնէր կամ Աշոտի , կա՛մ Սաֆօյի բնակարանին դուռին առջև :

Սաֆօն իր կնոջ Մառի Զայձի հետ կը նստէր կառքը , երբեմն ալ Գառլօ Եովանովիչ ` Մառի Անչքովայի հետ , ու պտոյտի կ'երթային Պէշիկթաշի կողմերը :

Այսպէս , մէկ քանի օր կրկնուեցան այս պտոյտները , մինչև որ , օր մը ալ , կառքը կոտրեղաւ , ա՛յնքան քաջավարժ ու փորձ էր կառապանը ... :

Բան մը չէր սակայն , երեք ոսկի տուգանք տրուելով նորոգուեցաւ կառքը :

Անցորդները կը զարմանային երբ կը սեսնէչին Աշոտը կամ Սաֆօն , միշտ կնիկով , բաց կառքմի մէջ նըստած , ի՞նչ կը նշանակէր այդ ցուրտին պտոյտ ելլել , ի՞նչ խելք է , կըսէին իրարու , միամիտնէ՛րը , չէին գիտեր թէ այդ կարծեցեալ դրամատերները , Ապտիւլ Համիտի մահափորձը կը պատրաստէին այդ պտոյտներուն շնորհիւ , որովհետև , այդ կառքի մէջ , ուր կը բազմէին փոքրիկ արքաներու պէս , ուսումնասիրելու շատ մը բաներ ունէին :

Օրէ օր կ'աւելնար իրենց ծանօթութիւնը ամէն , օր նոր գիւտ մը կ'ընէին . օրինակի համար , կը նկատէին թէ ի՛նչ ձևով չինուած թէ կառքին կոնսլի մասը , և թէ՛ քանի քիլօ ուժանակ պիտի կրնար պարունակել ան :

Աշոտ , ի բնէ հնարագէտ և միևնոյն ժամանակ յաջողակ գծագրող , կառքին կոնսլի մասը շինեց խաւաքարտով , որպէս զի կարենայ գաղափար մը կազմել պարունակութեանը վրայ : Հաշուեցին և գտան թէ այդ խաւաքարտը պիտի կրնայ հաւրարիսուն քիլօ ուժանակ պարունակել : Արդար ըլլալու համար , պէտք է խոստովանիլ թէ՛ այս ուսումնասիրութիւնները դիւրին չէին , Աշոտ օրերով կ'առանձնանար , կ'երթար Շիշլիյէն դուրս , ամայի տեղեր , և հոն կ'առնէր չափերը :

Ահաւասիկ թէ ինչպէս պատմուած են այս իրողութիւնները Գառլօ Եովանօվիչի յուշատետիրն մէջ . -

<< Կառքին սեփականատէրը , կառքը կոտորուելէ յետոյ , դիտողութիւններ ըրաւ մեր կառապանին դէմ , ըսաւ , կառապանութիւն չը՛ գիտեր , վաղը կրնայ ձիերուս վնասել , ևն : Իր կօղմէն առաջարկեց ուրիշ կառապան մը տալ միասին , մինչև որ մեծերն լաւ մը վարժուի : Մտածեցինք այդ առաջարկը մերժել , սակայն ուրիշ ճար չը կար արդէն ուսումնասիրութիւնները վերջացուցած էինք և նոր կառապանին ուշադրութիւնը գրաւող ո և է բան մը չունէինք :

<< Մեր նոր կառապանը թուրք մըն էր , Մէհմէտ անունով , քիչ մըն ալ հայերէն գիտեր , մէկ շաբաթ աշխատեցաւ Մկրտիչին հետ միասին : Եւ երբ ամիսը լրացաւ , կառքը տէրոջը տօինք ետ , աւելորդ ծախքեր չընելու համար :

<< Քրիստափորի փորձերուն յաջողութեան սպասելով , միևնոյն ժամանակ , ամէն ուրբաթ օրերը կ'երթայինք Երլտըզ , և տեղին վրայ , Սուլթանին դուրս ելլելը ներս մտնելը կ'ուսումնասիրէինք վարկենաչափերով : Քանի անգամներ , քայլաչափով ալ հաշուած էինք մզկիթի դռնէն մինչև կայսերական կառքին կետալիք տեղին հեռաւորութիւնը : Եւ , մեր ուսումնասիրութիւններէն հետևողցինք թէ՛ Համիտիյէ մզկիթէն դուրս ելլալու բռպէին յարմարագոյն ժամանակ կը համարուէր մահափորձը գործադրելու ... որովհետև այդ միջոցին ամբոխը ցրուած հեռացած կ'ըլլար և խիստ չէր ըլլար հսկողութիւնը , այնպէս որ կառքէն ալ կրնային բաւական առաջ երթալ , կարծել տալով թէ պալատական մը պիտի նստի :

<< Այս սպասումի , այս անգործութեան շրջանը շատ կը նեղէր մեր օժանդակ ընկերները , որոնք անգործ նստած , ամսական ուր ինը ոսկի ծախսել միայն գիտէին և այնչափ տեղեակ չէին մեր ներքին գործերուն : այդ կեանքը շատ անտանելի էր իրենց համար , ի՛նչ ընելնին չէին դիտեր խեղճերը :

<< Տօգթոր Գրիգոր Սեյեան , Եիւքսէք Գալտըրըմի իր հովանոցավաճառի խանութ ծախելով , հեռացաւ Պոլսէն : >>

Այս վիճակը բնականաբար չէր կրնար տեսական ըլլալ , մանաւանդ օժանդակ ընկերներուն կամար , որոնք կը տառապէին անգործութենէ . Սակայն , մահափորձի նախապատրաստութիւնները մութի մէջ առաջ կը տարուէին , առանց կասկած արթնցնելու , ա՛յնքան գաղտնի կը կատարուէին բոլոր ուսումնասիրութիւնները , փորձերը , նաև յարակից գործողութիւնները :

Պուլկարիայէն հասած կուրերը քաջալերիչ էին , Քրիստափոր Միքայէլեան կը գործէր հոն , առաջ կը տանէր տումբերու փորձերը , և յաջողութեան մասին ամէն ապահովութիւն ստանալէ յետոյ է որ պիտի վերադառնար Պոլիս :

ԺԸ

Պուլկարիայէն վտարուած օժանդակ ընկերներէն մէկ քանիները կը դեգերէին Յիւնաստանի մէջ , սպասելով նոր հրահանգներու , որպէս զի մտնէին Պոլիս ու մասնակցէին Մահափորձին :

Ասդին , Վիշապի անդամները շոգեպինդ առաջ կը նանէին պատրաստութիւնները , միեւնոյն ժամանակ , մատակարարելով հեռուէն Ոսկեհանքի գործերը :

Ոսկեհանքը Դաշնակցութեան Զմիւռնիան էր , ուր , ինչպէս կը յիշեն ընթերցողները , Մարթինը դրկուած էր իբրև գործիչ :

Մարթին , իր ընկերներուն յաճախ յարուցած խոչընդոտներէն զգուած , հրաժարած էր պաճտօնէն և դուրս ելած Իզմիրէն :

Ընկերները կարող գործիչ մը կը պահանջէին , ուստի , Վիշապի Մարմինը , թղթկացնելով Լեւոն Կիւլիմեանի հետ , որ Յունաստանի մէջ դեգերող օժանդակ ընկերներէն էր , համոզեց և Իզմիր դրկեց գանի :

Սակայն սա ալ չկրցաւ երկար առէն մնալ հոն և պատճառաբանեալ հրաժարական մը դրկեց :

Ոսկեհանքի գործերը բարդութիւններ կը ստանային հետզհետէ . այդ շրջանի ընկերները շատ պահանջկոտ էին և յաւակնոտ , իրենց գլխէն վեր գործեր կ'ուզէին ընել : Վիշապի Մարմինը կը գանգատէր ասոնց ընթացքէն , որ մեծ մտահոգութիւն սկսած էր պատճառել :

Քսանութը հազար ֆրանգի գումար մը յատկացուած էր նախապէս այդ կողմերուն . այդ գումարը յանկարծ երեսունութը հազարի բարձրացուցին , առարկելով թէ ահադին , խոշոր ծրագիր մը պիտի գործադրէին իրենք , ևն : Բաւական երկար տնեցին Վիշապէն դէպի Ոսկեհանք և Ոսկեհանքէն դէպի Վիշապ թղթակցութիւնները , կարելի չեղաւ համաձայնութեան մը յանգիլ . վերջէս , Վիշապի Պատասխանատու Մարմինը , նկատելով թէ ` քանը քանէն անցած էր , այսինքն թէ ` պահանջուած գումարին մեծագոյն մասը ծախսուած էր արդէն , հարկադրուեացաւ ընդունիլ Ոսկեհանքի ընկերներուն պահանջումը , ու ա՛յնքան ապօրինի էր և չափազանց :

Ասիկա զիջում մը նկատելով Վիշապի կողմէն , Ոսկեհանքի անդամները սանձարձակօրէն կ'ուզէին գործէ այնուհետև , օրինակի համար , առանց պատկառելու վերջին պատգամաւորական Ժողովին որոշումներէն , առանց գոնէ կանխաւ ստանալու Վիշապի Մարմինին հաւանութիւնը , և իրենց պահանջումներուն ընդունելութենէն քաջալերուած , սկսան բռնի, մահուան սպառնալիքի տակ դրամներ հանգանակել :

Այո արարքը կազմակերպական կանոնին դէմ յայտնապէս կը մեղանչէր , ինչպէս ըսինք , երբէք իրաւունք չունէին այդ կերպով դրամ հաւաքելու , որովհետև Ոսկեհանքը գործելավայր մըն էր , և կարօտ ալ չէր դռամի , քանի որ Կազմակերպութիւնը կարելորդ գումար մը տրամադրած էր իրենց :

Աւելին կայ , Ոսկեհանքի ըմբոստ ընկերները , կանոն , կարգապահութիւն , ամէն ընկերային յանձնառութիւններ կոխտուելէ ու ծաղրելէ յետոյ , կը յանդգնին գրելու Վիշապի Պատասխանատու Մարմինին թէ ` յաջողած են իրենք առանց աղմուկի երկու հազար որկու հարիւր ոսկի հաւաքել սպառնալիքով մէկ քանի անձերէ , ուստի , կը խնդրեն որ ընդունուած երեսունութը հազար գրանգի գումարին մնացորդին ալ զրկուի իրենց :

Այս նոր պահանջումին վրայ , որ դարձեալ Ոսկեհանքէն կուգար , Վիշապի Պատասխանատու Մարմինը նիստ մը գումարեց : Նիստին մէջ թեր ու դէմ կարծիքները փոխանակուեցան :

Աշոտ բուն կերպով կը բողբէր այս աններելի գործողութեան դէմ , ը կը պնդէր կ'ամ տերերուն մերադարձնել բռնի հանգանակուած երկու ` հազար երկու հարիւր ոսկիները , և կա՛մ , քանի որ անդամը հանգանակուած էր , Ժընէվ , Աբելմտեան Բիւրօն փոխադրել այդ գումարը , և յանձնել զայն Դաշնակցութեան Առաջին Խորհուրդին :

Վիժաբանութիւններէն վերջ , որունք նիստին մէկ քանի ժամերը գրաւեցին , ընդունուեցաւ Աշոտի առաջարկը , և որոշուեցաւ նոյն ոճով և իմաստով նամակ մը գրել Ոսկեհանքի անդամներուն :

Այս վերջինները , երբ կը ստանան Վիշապի նամակը , կը բռնկին ու բացարձակապէս կը մերժեն Վիշապի Պատասխանատու Մարմինին որոշումը , կը պահանջեն անպայման կերպով լրացնել իրենց երեսունութը հազար ֆրանգի պահանջին մնացորդը , և կը պնդեն որ իրենց տրամադրութեան տակ մնայ իրենց բռնի հանգանակած երկու հազար երկու հարիւր

ուսկին , իբրև անձեռնամխելի գումար մը , որուն մեջէն մէկ սանդիւմ իսկ չեն ուզեր զրկել Արեւմտեան Բիւրօյին :

Այս պատասխանին վրայ , վերստին խորհրդակցութեան մտան Վիշապի անդամները :

Սաֆօ կ'արդարացներ իր մտքին մէջ Ոսկեհանքի պարոնները , և կ'աշխատէր համոզելու իր ընկերները , որպէս զի կատարուած իրողութիւն մը նկատեն այս գործը , և ա'լ չը պնդեն նախկին որոշման վրայ :

Անդամներէն Թորգոմ , որ սկզբները հակառակ էր Սաֆօյին , յանկարծ իր դիրքը փոխեց և անցաւ Սաֆօյի կողմը , որ կը կրկնէր շարունակ .

- Ընկերներ , ու իրաւունք կուտամ մեր Ոսկեհանքի պարոններուն .

- Ի՞նչպէս , կը հարցնէր Վռամշապուհ Քէնտիրեան , որ Աշոտի պէս կը խորհէր :

- Մարդիկը , շարունակեց Սաֆօ , այսպէս կամ այնպէս , դրամ հանգանակեր են , յոգներ են , իրենց մորթը վտանգեր են , չէ՞ .

- Է՛ , այո՛ , բացազանչեց Աշոտ , ի՞նչ ըսել կ'ուզես , Սաֆօ՛ .

- Ըսել կ'ուզեմ թէ , շարունակեց Սաֆօ , իրե՛նք ո՞ն հաւաքեր , ի՛նչպէս ուզեն , այնպէս կրնան գործածել այդ դրամը :

- Ինչո՞ւ կը մոռանաս , Սաֆօ՛ , կշտամբեց Աշոտ , վերջին ընդհանուր ժողովին որոշումը .

- Ո՞ր որոշումը , հարցուց Սաֆօ .

- Չէ՞ որ սպառնալիքով դրամ հանգանակելու դրութիւնը մերժուեցաւ , պատասխանեց Աշոտ .

- Բայց եղա՛ծ է եղածը , շարունակեց Սաֆօ , և յետոյ , մենք իրաւունք չունինք ձեռք դնելու ո՛չ միայն այդ երկու հազար երկու հարիւրին վրայ , այլ նաև , պարտաւոր ենք ժամ առաջ իրենց զրկել մնացորդ պահանջքը ... :

Եւ վիճաբանութիւնները տակաւ սաստկացան , այնպէս որ անկարելի եղաւ գտնել համաձայնութեան դետին մը :

Թորգոմ ու Սաֆօ մէկ կտրմէ , Աշոտ ու Վռամշապուհ միւս կողմէ , իրարու տրամագծօրէն հակառակ կէտերու վրայ կը պնդէին : Գլուծները տաքցան և խընդիրը լուծուելէ հետի , աւելի՛ ուրի հանգամանք մը ստացաւ :

- Ընկերներ , առաջարկեց Վռամշապուհ , կը տեսնէք , կարելի չափտի ըլլայ հանաձայնութիւն մը գոյացընել այս խնդրոյն շուրջը , եզրերը շատ հեռու են իրարմէ , մերձեցումը դժուար է , ասիկա սկզբունքի հարց մըն է :

- Այո՛ , ընդմիջեց Աշոտ կրքոտ շարժումով մը , ճիշդ ա՛յդ պատճառով է որ կը պնդեմ . սկզբունքը պէտք է միշտ գերադաս բռնուի պէտք չէ խոնարհիինք պարագաներուն առջև :

- Ի՞նչ Աշո՛տ , սկզբունքի համար Ոսկեհանքէ մը գրկուի՞ Դաշնակցութիւնը , ըսաւ Սաֆօ .

- Յեղափոխութեան մէջ այդ հաշիւները չե՞ն մըտներ , հեզնեց Աշոտ , ապօրինութիւն մը գործուած է և դուն կ'ուզես նուիրագործել զայն .

- Ներեցէ՛ք , յարեց Վոամշապուհ , զիս ընդմիջեցիք , թոյլ տուէ՛ք որ աւարտեմ խօսքս , կ'աղաչեմ , հասկնա՛նք զիրար , աղմուկի մէջ մի խեղդէք ձայնս .

- Խօսէ՛ , Վոա՛մ , խօսէ՛ , յարեց Սաֆօ , սակայն , ճամավաճառ պիտի ըլլանք .

- Նոյնը պիտի ըսէի ե՛ս ալ , շարունակեց Վոամշապուհ , քանի որ երկու մասի բաժնուած են կարծիքները , կ'առաջարկեմ խնդիրը երկու զատ զատ նամակներով հաղորդել Պուլկարիա . մեր երեց ընկերոջ՝ Քրիստափորի , և խնդրել այդ մասին իր կարծիքը , պայմանաւ սակայն որ երկուստեք ընդունուի այն :

- Շա՛տ լաւ , ըսաւ Աշոտ , ես կ'ընդունիմ Վոամի՛ն առաջարկը , մենք ալ կը գրենք , դուք ալ գրէք , տեսնենք ի՞նչ կը պատասխանէ պարոն Քրիստափոր :

- Մենք ալ կ'ընդունինք , յարեց Թորգոմ ու Սաֆօ .

- Չե՞ որ հինգ է Վիշապի անդամներուն թիւը , զիտել տուաւ Աշոտ , և մէկը բացակայ է .

- Այո՛ , ըսին ներկաները , ի՞նչ ըսել կ'ուզես .

- Ըսել կ'ուզեմ թէ , շարունակեց Աշոտ , Քրիստափորին պատասխանը վերջնական պիտի ընդունուի , անիկա՛ պիտի փակէ վիճաբանութիւնները , և անո՛վ պիտի կազմուի մեծամասնութիւնը .

- Այո՛ , այո՛ , հաստատեցին միւս ընկերները :

Եւ նոյն նիստի մէջ , անմիջապէս խմբագրուեցան երկու նամակները , որոնցմէ մէկը՝ ստորագրուեցաւ Աշոտէն ու Վոամշապուհէն , իսկ մյիւսը՝ Սաֆօյէն ու Թորգոմէն , իւրաքանչիւր կողմը պաշտպանելով իր կարծիքը :

Նիստը փակուեցաւ և երկու նամակները յանձնուեցան Սաֆօյի , իր կնոջ ձեռքովը նամակատունը տարւելու համար :

Սակայն Սաֆօ , նիստը փակուելէ ու ընկերներէն բաժնուելէ յետոյ , վստահութեան զեղծում մը գործեց :

Երկու խմբագրուած և ստորագրուած նամակները , փոխանակ իր կնոջ՝ Մառի Զայձի ձեռքով նամակատունը յանձնելու , վար դրաւ , և ընդօրինուկեց երկուքն ալ . յանձնելու , վար դրաւ , և ընդօրինուկեց երկուքն ալ . յետոյ , ստորագրուածները քովը պահելով , ընդօրինակուածները գրկեց Քրիստափորին :

Յաջորդ օրը , Վիշապի անդամները զիրար գտան :

Սաֆօ դառնալով իր ընկերներուն .

- Գիտե՞ք , ըսաւ , ստորագրուած նամակները չը դրկեցի :

- Ի՞նչո՞ւ , բողոքեց Աշոտ :

- Սպասե՛ վերջացնեմ , շարունակեց Սաֆօ :

Միւս երեք ընկերները կախուեցան Սաֆօյի շըրթունքէն. Արդեօք ինչո՞ւ չէր դրկած նամակները:

- Մտածեցի թէ , շարունակեց Սաֆօ , նամակներուն ստորագրութիւններէն պիտի նախապաշարուէր պարոն Քրիստափորը , ուստի երկու նամակներն ալ ընդօրինակեցի և դրկեցի առանց ստորագրութեան . ի՛նչ կըսէք դուք այս գլխտիս :

- Բայց իրաւնք ունէի՞ր , բողոքեց Աշոտ , փոխելու մեր նամակները , այդ առարկութիւնը թող նիստին մէջ յայտնէիր :

- Այո՛ , իրաւնք ունէի՛ , շեշտեց Սաֆօ , ես ուղեցի ազատ ձգել Քրիստափորը , չէ՞ .

- Դուն կրնաս այդպէս խորհիլ , շարունակեց Աշոտ , բայց իրաւունք չունէիր փոխելու , չըսելու համար խեղաթիրելու , ժողովի մը մէջ տրուած որոշում մը .

- Ես որոշումը չեմ խեղաթիրած , բողոքեց Սաֆօ , խոշոր աչքերը բացած , գոռոզ նայուածք մը շանթելով Աշոտի , և դուն ո՞վ ես որ պիտի յանդգնիս քննադատել իմ արարքս ... :

- Կըներե՛ս Սաֆօ , կըներե՛ս , ընդմիջեց Վոամշապուհ , գլուխը ճօճելով , երբէ՞ն ի վեր ձեռք բերած ես ընկերներդ նախատելու մենաշնորհը ... :

Սաֆօն գունաթափ , ինքզինք կորսնցնելու աստիճան կատղած էր :

- Պարո՛ն , յարեց Աշոտ սպառնացայտ դէմքով մը , ես այն եմ ինչ ու դուն ես , մեր Կազմակերպութեան մէջ գոյութիւն չունի կամայականութիւնը , ր դուն , Վիշապի մէկ անդամ , երբէք իրաւունք չունիս ժողովի մը որոշումը փոխելու , ո՛ր մնաց թէ քեզի տարակածիը ընկներ մը նախատելու . քեզի՛ կը վերադարձնեմ ուրեմն քու բառերդ ... :

- Աշո՛տ , միջամտեց Թորգոմ , Սաֆօյի վարմունքը չեմ կարծեր որ դիտումնաւոր ըլլայ , ինք այնպէս կարծեր է թէ . ստորագրուած նամակները վար դնելով և միայն ընդօրինակուածները գրկելով՝ Քրիստափորի միտքը կաշկանդած չըլլար , և այնպէս ալ է , հետեւաբար , այդքան բռնկելու տեղը չէ՛ .

- Դարձեալ զիրաի չենք հասկնար , դիտել տուաւ Վոամշապուհ , Սաֆօն պարտաւոր էր իրեն յանձնուած երկու նամակները նոյնութեամբ գրկել . իրաւունք չունէր ընդօրինակելու զանոնք , ո՛չ ալ ստորագրուածները վար դնելու :

Այդ օրը սրգողած բաժնուեցան իրաիմէ :

Հագիւ անցած էր շաբաթ մը , երբ հասաւ Քրիստափորի պատասխան – նամակը :

Վիշապի չորս անդամները վերստին նիստ մը գումարեցին և վերահասու եղան այդ նամակի պարունակութեանը :

Քրիստափոր կը պաշտպանէր Աշոտի և Վռամշապուհի կարծիքը , բռնի հանգանակուած երկու հազար երկու հարիւր ոսկի գումարը զրկելու Ժընէվ , Արեւմտեան Բիւրօյին , յետոյ , նոյն նամակին մէջ , աւելցուցած էր հետեւեալ պարբերութիւնը . << Եթէ Իզմիրցիները չը հնազանդին այդ որոշման , խզելու է ասոնց հետ ամէն յարաբերութիւն և զրկելու չէ՝ ո՛չ մէկ սանդիմ : >>

- Տեսա՞ր հիմայ , Սաֆօ՛ , դիտել տուաւ Ա՛նտ , ահա՛ բացակայ ընկեր մը , որ կը խորհի ճիշդ մեզի պէս հիմա ի՞նչ պիտի ըսես նայիմ ... :

Սաֆօ կատղած էր , երեսէն թոյն կը հոսէր . պահ մը խորունկ լռութիւն մը պահեց , յետոյ , յանկարծ ոտքի ելլելով , գոչեց .

- Աշո՛տ , Աշո՛տ , գիտցա՛ծ ըլլաս , պատասխանատու՝ ես առաջիկայ փորձանքներուն .

- Ի՞նչ փորձանքներ , հեզնեց Աշոտ , ի՞նչ , Ոսկեհանքի պարոններո՞ւն յանձնուած է Դաշնակցութեան ճակատագրիը :

- Վաղը կը տեսնե՛ս , շարունակեց Սաֆօ , հեռատես դիւանագէտի մը հովեր առած , ի՛նչ սոսկալի վըտանգներ պիտի ծագին .

- Ի՞նչ պիտի ծագի , պարո՛ւն Սաֆօ , հարցուց Վռամշապուհ , այսօր մեր բացակայ ընկերոջ կարծիքը կայ , որուն դիմած էինք մենք , այդ կարծիքը յարենըման է մեիրնին , հետևաբար , ինծի համար փակուած է խնդիրը , Ոսկեհանքի պարոններուն եռանդը զսպելո՛ւ է , և կարգապարութեան ոգին վառ պահելու համար մեր կազմակերպութեան բոլոր շարքերուն մէջ , պէտք է օրինակելի դաս մը տրուի այդ յաւակնոտ ըմբոստներուն , որոնք , իրենք իրենց գլխուն գործելու մարմարջէն բռնուած ,անգիտակցօրէն պիտի վարկաբեկեն Դաշնակցութիւնը . ո՛չ , ո՛չ , ընկերնե՛ր , պէտք է անգամ մըն ալ , և վերջին անգամ մը , գրել այդ Իզմիրցի պարոններուն և յիշեցնել իրենց պարտականութիւնը հանդէպ Կազմակերպութեան :

- Սակայն , Վռա՛մ , առարկեց Սաֆօ , Կազմակերպութիւնը մեծամեծ շահեր կ'ակնկալէ Ոսկեհանքէն , մեր Քրիստափորը թէթևօրէն վերաբերուեր է դէպի այս գործը , ան չէ խոհեր տխուր հետևանքները , որոնք անմիջապէս պիտի յաջորդեն խզումին . հաւատացէ՛ք , ընկերնե՛ր , ես գործը , միայն գո՛րծը կը մտածեմ , մենք հոս ինչե՛ր , ինչե՛ր ունինք կատարելիք . այսպիսի սնոտի վէճերով զիրար կը վերաւորենք , իրարու սիրտ կը ծակենք , ընկերնե՛ր , հաւատացէ՛ք , Ոսկեհանքի գործերէն շա՛տ կը վախենամ , եթէ մենք , հետևելով Քրիստափորի խորհուրդին , այսօրուրնէ խզենք մեր յարաբերութիւնը , գիտցա՛ծ ըլլաք , ինքնասպանութիւն մը գործած պիտի ըլլանք , ի՞նչ կ'ըսէք , կարելի՞ է թողուլ Ոսկեհա՛նքը Դաշնակցութեան Հնդկաստա՛նը

- Ինչպէ՞ս , ինչպէ՞ս , կրկնեց Վռամշապուհ մ լաւ չը հասկցայ .

- Չը հասկնալու ի՞նչ կայ , պատասխանեց Սաֆօ , այսօր տիեզերական ճշմարտութիւն մըն է թէ՛ Անդլիան , այն թիզուկ կղզին՝ հսկայ Անդլանտեանին մէջ , իր այսօրուան մեծութիւնը , հարստութիւնը , պատկառելի և ահարկու գօրութիւնը կը պարտի Հնդկաստանին տիրապետութեանը .

- Մտիկ ըրէ՛ք , ընկերնէ՛ր , ծաղրեց Աշոտ , աշխարհագրութեան դասը կ'աւանդուի .

- Հեզնէ՛ , Աշո՛տ , յարեց Սաֆօ , բայց մտիկ ըրէ՛ , ես աշխարհագրութիւն չե՛մ աւանդեր , այլ իրականութիւննէ՛ր կը խօսիմ ... :

Սաֆօյի այս վերջին խօսքերը տպաւորիչ էին , ըղդիմաղիւր ընկերներէն Վռամշապուհը , կասազի հակառակորդ մը , տակաւ սկսաւ թուլնալ , պարտութեան նշաններ ցոյց կուտա՛ր , դարձաւ ըսաւ Աշոտի .

- Աշոտճա՛ն , գիտե՞ս , գործը շատ լուրջ է , ես կը յարգեմ քու ողջմտութիւնդ , սկզբունքին համար ամէն բան գիտես զոհել . բայց , գործնական կեանքին մէջ , ընկերային յարաբերութիւնները միշտ չե՛ն առաջնորդուիր սկզբունքներէն , ո՛չ ալ օրենքներէ . մարդկային ընկերութիւնը յաճախ բնագոյով կամ խղճմտանքով կը կառավարուի , օրինապաշտ ժողովուրդները , օրէնքի տառին կառչող կառավարութիւնները չե՛ն որ կ'առաջադիմեն , կեանքը բազմաձև ու բարդ է , միջավայրի ազդեցութիւնը փոքրիկ դեր մը չի՛ կատարեր , գիտես . այդ , մեծագոյն չափը մը խափանած ըլլալու համար , օետք է համակերպութեամբ դիմաւորենք փոքրագույնը .

Ոսկեհանքը շիտակ է , սովորական , հասարակ , աննշան շրջան մը չէ . Դաշնակցութեան կարեւորագոյն ուժերէն , կամ աւելի ճիշդը , յայտերէն է անուիտետաբար , վտանգաւոր է խզումը , մանաւանդ ներկայ պարագաներուն մէջ :

- Դուն Իզմիրցիները չե՛ս ճանչնար , առարկեց Աշոտ , պատուական քաղաքացիներ են , Իզմիր եղած է միշտ մեծ գաղափարներուն , մեծ ձեռնարկներու , վեհ գործերու կայրենի՛քը . կը յիշեմ , յաճախ լսած եմ հեղինակաւոր անձերէ , Զմիւռնահայր քաղաքակրթութեան յառաջապահը հանդիսացած է Միջերկրականի այդ ասիական ծովեզերքի վրայ , պոլսահայէն առաջ , շա՛տ առաջ արթնացած է ան , և իրաւունք ունի հպարտանալու իր զանաան հիմնարկութիւններով . խանդավառ , ճկուն , Արումուքի գաղափարները վայրկենապէս ըմբռնող , ընդգրկող միտք մը , հանճարներու ծնունդ տուող ժողովուրդ մըն է վերջապէս , կը հասկընա՞ք .

- Հասկացա՛նք , հեզնեց Սաֆօ , եզրակացութիւնը .

- Եզչակացութի՞ւնը , յարեց Աշոտ , այդիպի ազնիւ , յեղափոխութեան սիրահար ժողովուրդի մը սիրտը վիրաւորելու չէ՛ : Բռնի հանգանակուած այդ երկու հազար երկու հարիւր ոսկիները վերադարձնելու է տէրերուն և անգամ մըն ալ հաստատելու է թէ՛ Դաշնակցութիւնը մէ՛կ սկզբունքի համար գիտէ զօհել աշխարհիս հարստութիւնը :

- Աշո՛տ , առարկեց Վռամշապուհ , այդքան պատկառելի գումար մը տէրերուն վերադարձնել առնուազն յիմարութիւն մը պիտի ըլլար . տէրերը , բնականաբար , աշխարհիկ

ու կենցաղասեր ջոջերեն , ո՛վ գիտէ ո՛ւր պիտի թափէին այդ ոսկիները , կրնա՞ս երաշխաւորել թէ անոնք ամէն գիշեր ոսկիներ չեն վատներ քարափին երկայնքի խաղատուն մը կամ ... հանրադուն մը . ի՞նչ կ'ըլլայ , ազգային յեղափոխութեան պէս նսրիական գործի մը համար մէկ քանի ոսկի տուած են , այն ալ ` բռնի . ա՛խ Աշոտ , ա՛յդքան սրբութիւն , այդքան արդարադատութիւն ու փափկանկատ վերաբերում Իզմիրի ջոջերուն հանդէպ ` չափազանց անեատրական կը գտնեմ ...:

- Վռա՛մ , մշտամբեց Աշոտ , կ'երեւայ թէ չըմբռնեցիր տեսակէտս , գիտե՞ս ինչ է մտահոգութիւնս .

- Ի՞նչ է , հարցուց Քէնտիրեան .

- Իզմիրցիները , շարունակեց Աշոտ , ինչպէս քիչ առաջ ըսի , արթնամիտ , խանգավառ ու դիւրագգած մարդիկ են , պէտք չէ՛ զանոնք ուծացնել յեղափոխութենէն . եթէ այդ բռնի հանգունակուած գումարը գոնէ զրկուի Արեւմտեան Բիւրօյին , մեր գործիչներուն պարկէշտութիւնը պիտի ապացուցուած ըլլայ , դրամին տէրերը պիտի համոզուին թէ ` հաւաքուած գումարը Դաշնայցութեան սնտուկը մտաւ . և Ոսկեհանքի տղաքները պիտի կրնան ուրիշ անգամներ , եթէ հարկը պահանջէ , պարզերես ձեռնարկել նման հանգանակութիւններու , ո՛չ սակայն բռնի միջոցներով ու սպառնալիքներով . ահա՛ իմ կարծիքս , եթէ այդ գումարը չպիտի ետ տրուի տէրերուն , գոնէ պէտք է զրկուի նոյնութեամբ Արեւմտեան Բիւրօյին .

- Աշո՛տ , յարեց Սաֆօ , դուն ՛ատ լաւ կը խօսիս , բայց առաջարկդ գործնական չէ .

- Ի՞նչպէս , բացատրէ նայիմ , ըսաւ Աշոտ .

- Մտիկ ըրէ՛ , շարունակեց Սաֆօ , և առանց կիրքի , պազարիւնով , Ոսկեհանքի մեր տղաքները , ես ալ համամիտ եմ քեզի , օրինազանց գտնուած են , ճիշդ է , Ընդհանուր Ժողովրդի վերջին որոշման դէմ մեղանշած են , բռնի դրամ հանգանակած են . բայց , այսօր , կատարուած իրողութեան մը հանդէպ կը գտնուինք , անշուշտ կ'ըլլէ թէ ի՛նչ գրած էին , ո՛չ միայն այդ գումարը կ'ուզեն իրենց քով պահել , այլ նաև երեսունութը հազար ֆրանգին մնացորդն ալ կը պահանջեն . եթէ մերժենք , խզում առաջ պիտի գայ , իրաւ է , Քրիստափո՛ր ալ քեզի պէս խորհած է , խզում առաջարկած է . ես չեմ ուզեր վշտացնել մեր տղաքները .

- Բայց Իզմիրի ժողովուրդը հոգ չէ վշտացնել , հեզնեց Աշոտ ընդմիջելով .

- Իզմիրի ժողովուրդը չի՛ վշտանար , շարունակեց Սաֆօ , քանի մը ջոջեր չէ՛ն որ Իզմիրի հայ բնակչութեան զանգուածը պիտի ներկայացէին , ո՞վ գիտէ ինչ անխիղճ վաշխառուներ , ին՞չ հեղեքւչներ , ին՞չ աւազակներ են անոնք ... :

- Սաֆօ՛ , Սաֆօ՛ , գոչեց Աշոտ , զուր մի ջանար զիս տարհամոզել , ես չեմ կրնար փոխել կարծիքս . հոգ չէ՛ , առանձին թող մնամ . դուք որոշեցէ՛ք , վերջացուցէ՛ք ... :

Վիճաբանութիւնները շատ երկարեցան , մինչեւ իր Վռամշապուհը Քէնտիրեանն ալ անցաւ Սաֆօի կողմը , և Աշոտ առանձին մնաց :

Սաֆօ, Թորգոմ , և Վռամշապուհ , երեքը միասին որոշեցին Ոսկեհանքի երկու հազար երկու հարիւր ոսկի գումարին դէմ ո՛ր և է առարկութիւն չընել , չը վիրաւորելու համար տղաքները , նոյնպէս , մաս առ մաս Իզմիր գրկել երեսունութը հազար ֆրանգի մնացորդի պահանջը :

Աշոտի ուրիշ բան չէր մնար ընել , բայց միայն գըլուխ ծռել այդ որոշումին , և կամ , հրաժարիլ Ոսկեհանքի գործերուն մասնակցութենէն : Եթէ համակերպէր , իր ուսերուն վրայ առած պիտի ըլլար ապագայի պատասխանատուութիւններու խոշոր բեռը , նուիրագործած պիտի ըլլար սկզբունքի դէմ գործուած յայտնի գեղծում մը , և միննոյն ժամանակ վշտացուցած պիտի ըլլաի Վիշապի երէց անդամը՝ Քրիստափոր Միքայէլեանանդ , գերակշիւ ըլլալու էր , կը խորհէր Աշոտ . Սաֆօն ամբարտաւան է , կըսէր ինքիրեն , պարզապէս իր էջը քշելու համա՛ր է որ ժամերով զբաղեցուց նիստը , կը զգար թէ այնուհետև իրեն համար դժուար պիտի ըլլար համաձայնիլ Սաֆօյի պէս ինքնահաւան , կամշոտ , յաւակնոտ ու միապետական խմորով սնած ընկերոջ մը հետ . Սաֆօն , կըսէր Աշոտ ինքիրեն , վարժուած է հրամայելու Թրքահայերուն , վերջապէս համալսարանակա՛ն մըն է . չը սիրէր աւելորդ յոգնութիւններ կրել ընկերներուն խորհուրդ հարցնելու , Իզմիրի տղաքներուն ընթացքը հաշտ կը գտնէ իր գործելակերպին հետ . իմ ներկայութիւնս կը նեղէ զինքը , փուշ մըն է իր աչքերուն ցցուող , հետեւաբար կ'եզրակացնէր Աշոտ , ինծի համար մէ՛կ ճամբայ կը մնայ , քաշուի՛լ Ոսկեհանքի գործերուն մասնակցութենէն , խիղճս հանդարտ է գոնէ :

Եւ անմիջապէս իր հրաժարականը ներկայացուց ընկերներուն լո՛կ Ոսկեհանքի գործերուն մատակարարութենէն : Մահափորձը գերազանցօրէն կը շահագրգռէր զինքը , իր մտատիպարն էր ան , որուն վրայ կը գուրգուրար ... : Օսմանեան Պանքայի Դէպքէն ի վեր ինը տարի անցած էր , և այդ՝ ինը տարիներու ընթացքին մէջ , վայրկեան մը չէր կրցած իր մտքէն վանել զայն . Օսմանեան Հայրենիքի Թշնամին , լուծերուն ամենէն զարշէլիին տակ ճնշուած ու չարչարուած արեւելքի ժողովուրդներուն , մասնաւորապէս Հայերուն Դահիճը պատժելու սրբազան պարտականութիւնը կը ծանրանար իր խղճմտանքին վրայ :

Աշոտ , հրաժաւելով Ոսկեհանքի գործերէն , իր բովանդակ ոյժը պիտի կեդրոնացնէր Վիշապի գործէին մէջ . րայս գործը նահմանուած էր ապշեցնելու տիեզերքը , Ապտիւլ Համիտ Մահափո՛րձը , հալածուած , յօշոտուած մարդկային զանգուածներուն հաւաքական վրէ՛ժը պիտի յագենար ստով . ուստի երբէք չէր զոջար իր այս քայլին համար :

Սակայն Սաֆօ դժգոհ էր , պայծառօրէն կը տեսնէր դժուարութիւնները , որոնք պիտի ծնէին Աշոտի հրաժարականէն և որոնց դիմագրաւելու մահար ինքզինք շատ անգոր կը զգար , որովհետեւ , մէկէ աւելի պարադաներու մէջ ստիպուած էր հերոսային առաքինութիւններուն վրայ :

Իսկ միւս ընկերները , Թորգոմ ու Վռամշապուհ , կը սիրէին Աշոտը , չէին ուզեր զրկուիլ ասոր նեցուկէն և վճռած էին մերժել իր հրաժարականը :

Սակայն Աշոտ անգրդուելի մնաց , մինչեւ վերջը պնդեց իր որոշման վրայ և վերջնականապէս ձեռք քաշեց Ոսկեհանքի գործերէն :

Ժընելվի մէջ պիտի գումարուէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Խորհուրդը, շուտով հրաւիրագրէր զրկուեցան բոլոր Պատասխանատու Մարմիններուն , իրենց կողմէն մէկ մէկ ներկայացուցիչ նշանակելու , ժամանակին ներկայ գտնուելու համար Ժողովին :

Վիշապի պատասխանատու Մարմինն ալ ստացած էր հրաւիրագիր մը, որով կը խնդրուէր ու Քրիստափոր Միքայէլեանը կարգուի ներկայացուցիչ , որովհետեւ , կը գրէր Արևմտեան Բիւրօն , արդէն արտասահմանի մէջ . կը գտնուր ան և յարմարագոյն անձը կը համարուի այդ պաշտօնին համար :

Միւս կողմէն, զանազան անձերէ նամակներ կը հասնէին Վիշապի անդամներուն , բոլորը ` գրեթէ նոյն իմաստով , Քրիստափոր Միքայէլեանի անձին շուրջը համակրանքի հոսանք մը նտեղծուած էր ամէն կողմ . կը թախանձէին զանի զերծ թողուլ մասնակցելէ Սահափորձի վտանգաւոր գործին և կ'աւելցնէին թէ ` մէկ Քրիստափորի կորուստը ` բովանդակ Դաշնակցութեան կորուստը կը նշանակէ , ևն :

Վիշապի անդամները, վերստին խերհրդակցութեան մտան այս խնդրոյն վրայ: Չորս անդամներն ալ ներկայ էին :

Սաֆօ կարդաց Ժընելվի նամակը, նոյնպէս կարդացուեցան ուշիշ անհատական նամակներ :

- Ընկերնէ՛ր, ըսաւ Սաֆօ, ինչպէս տեսաք, Արևմտեան Պիւրօն կը փափագի Քրիստափորը ներկայացուցիչ կարգել մեր կողմէն , և այդ փափագը կ'երևայ թէ ընդանուր է .ամէն կողմէ տեղացած նամակները նոյն կը հաստատեն , ի՞նչ կը խորհիք ահա մասին .

- Ընկերնէ՛ր, ըսաւ Թորգոմ, ինչպէս կը յիշէք, Քրիստափոր իր ազատ կամքով մտած է այս գործին մէջ , ո՛չ ոք բռնադատեց զինքը , չէ՞ .

- Անտարակո՛յս, յարեց Աշոտ, բաւական զարմանալի կը գտնեմ Արևմտեան Պիւրօյի միջամտութիւնը , և աւելի զարմանալի ` անհատական նամակները , որոնք , ինծի գէթ այնպէս կը թուի , մէկ կարգախօսի հնազանդած են .

- Սակայն, ընկերնէ՛ր , յարեց Վոամշապուհ , մեր մեջէն յարմարագոյն Քրիստափորը չէ՞ . քանի որ Բիւրօն ալ կը փափագի , մենք պատճառ մը չունինք մերժելու , ես իմ ձայնս Քրիստափորին կուտամ .

- Դուն կրնաս տալ, ընդմիջեց Սաֆօ , բայց ընկերները .

- Ներկայացուցիչ մը պէտք է խարապէս ուսումնասիրած ըլլայ իր պարտկանած շրջանին պէաքերը, առարկեց Աշոտ , լուրջ դէմքով մը , արդեօք Քրիստափոր իր անձին վրայ

կը միացնե՞լ այդ պայմանը , գիտե՞ , ուսումնասիրա՞ծ է մեր շրջանին պահանջումները, որքան ժամանակ ապրուեցաւ հոս , ինչ տեսաւ .

- Շատ լաւ կը տրամաբանէ Աշոտը, յարեց Սաֆօ, Պատասխանատու Մարմինի մը ներկայացուցիչը պետք է տեղացի ըլլայ , իր երկրին բնիկը , Քրիստափոր կրնայ բարձր յատկութիւններով օժտուած տլլալ , բայց , չեմ կարծեր թէ , իբրեւ ներկայացուցիչ , կարենայ օգտակար ըլլալ :

- Ընկերնե՛ր , շարունակեց Աշոտ , Արեւմտեան Բիւրօն ինչո՞ւ մեզի է դիմեր , թո՛ղ ուղղակի գրէր Քրիստափորի և անո՛ր առաջարկէր ինքզինք ընտրելի ներկայացնելու . Ճիշդ է , խնայել պետք է Քրիստափորի անձին , թանկագին է իր կեանքը Դաշնակցութեան համար , ինչպէս որ գրուած էր Բօիրօյի նամակին մէջ . Բայց, կադա՛չեմ , ընկերնե՛ր , ըսե՛ք , ո՞վ ստիպեց , ո՞վ բռնադատեց զինքը մեր մէջը մտնելու . հիմա՛յ է պատեհ առիթը , եթէ Բիւրօն կը դողայ անոր հեանքին համար , եթէ չուզէր անոր մասնակցութիւնը մեր վտանգաւոր գործին , հոգ չէ՛ , թո՛ղ ձեռք քաշէ , թո՛ղ մեր կողմէն ներկայացուցիչ երթայ Ժընէվ .մենք կրնա՛նք զլուխ հանել գործը , վարժուած ենք արդէն , չէ՞ ...

- Վերջապէս, ընդմիջեց Սաֆօ, ի՞նչ պիտի պատասխանենք Պիւրօյի նամակին.

- Պատասխանը պարզ է, պատասխանեց Թորգոմ, ինչպէս որ Ա՛նտ գիտեր , տուաւ , պետք է Բիւրօյին գրենք և խնդրենք որ նախ Քրիստափորի դիմուի , իր կամքը ձեռք բերուի , յետոյ մենք կը կարգադրենք մնացածը :

Բոլոր անդամները համաձայն էին, Սաֆօն խմբագրեց Օիւրօյի նամակին պատասխանը, գոր Վռամշապուհ ընդօրինակեց :

Եւ նակամը դրկուեցաւ նոյն օրը:

Կարելոյ կէտ մը :

Վիշապի Պատասխանատու Մարմինին պատասխան նամակը ստացող պարոնը՝ նոյն օրերը կը գտնուէր Պուլկարիա , Քրիստափորի մօտ : Մէկ քանի օր ետքը , Քրիստափորէն նամակ մը կը հասնի Վիշապի Մարմինին :

Այդ նամակին ոճը կը մտնէր անոր հոգեկան ներքին վիճակը , սաստիկ գրգռուած էր իր ընկերներուն դէմ , ինչ որ կ'ապացուցանէր թէ՝ տեղեկութիւն ունէր ինքը Բիւրօյի գրուած պատասխանագրին պարունակութենէն :

Այս նամակին վրայ , շատ զայրացան Վիշապի անդամները , սկսան մեղադրել իրենց պատասխան – նամակը ստացող պարոնը , որ , անտարակոյս , զայն կարդացած ըլլալու էր Քրիստափորի :

Ամէն ներկայացուցիչ , որ պիտի Ժընէվ երթար ներկայ գտնուելու Դաշնակցութեան Խորհուրդին , պարտաւոր էր իրեն հետ ունենալ իր պատկանած Պատասխանատու Մարմինին տեղեկագիրը . ուստի , Վիշապի անդամները , այդ նպատակով գումարեցին

արտասովոր նիստ մը , պատրաստեցին իրենց տեղեկագիրը , և իրենց կողմէն պատգամաւոր նշանակեցին Քէնտիրեան Վռամշապուհը , որուն յանձնեցին յիշեալ տեղեկագիրը :

Վռամշապուհ պատրաստուեցաւ մեկնիլ , Սաֆօյի ճամբով պիտի երթար Ժընէվ :

Կը մնար կարգադրել անցագրի խնդիրը , որ շատ կարեւոր էր , այլապէս , դժուարութեան պիտի բախէր պատգամաւորին մեկնումը :

Վռամշապուհ մտմտութի մէջ էր , ինչպէ՞ս պիտի կրնար ազատօրէն դուրս ելլալ Պոլիսէն առանց անցագրի , լրտեսները , ոստիկանները , ամէն քայլափոխի կը հսկէին , ամէն անկիւն կը դարանէին , թէ՛ քարափին երկայնքը , թէ՛ երկաթուղիներու կայարանները , ամէն տեղ , գրաւծ էին ասոնք .

- Աշո՛տ , ըսաւ Քէնտիրեան մտածկոտ դէմքով մը , ի՞նչպէս պիտի ընենք :

- Ի՞նչը ...

- Անցագրիւր , պատասխանեց Քէնտիրեան , շուները շրջապատած են , անկարելի է փախչիլ .

- Դիւրի՛ն է , Վռամ , անցագրի խնդիրը , յարեց Աշոտ ժպտելով , ես կը կարգադրեմ զայն , մի հոգ ընկեր .

- Չուշանա՛մ , կը թախանձէր Քէնտիրեան , գիտե՞ս Սօֆիյէն պիտի անդնիմ .

- Գիտե՛մ , գիտե՛մ , կրկնեց Աշոտ գլուխը ճօճելով , Սօֆիա պէտք է հանդիպիս , պէտք է տեսնես Քիրստափորը , պէտք է հասկնասթէ ի՛նչ վիճակի մէջ են փորձերը , թէ ո՛րքան լուրջ են պատրաստութիւնները .

- Անշո՛ւշտ պիտի գտնեմ Քրիստափորը , յարեց Քէնտիրեան , պիտի քննեմ կացութիւնը , և պիտի տեղեկագրեմ հոս , բայց ...

- Ի՞նչ .

- Անցագի՛րը , անցագի՛րը , կրկնեց Վռամշապուհ , գիտե՞ս որքան կ'աճապարեմ , կը փափագիմ ժամ առաջ գտնուիլ գործիս գլուխը , Թերեւս Սօֆիա մէջ պիտի ստիպուիմ մէկ քանի օր մնալ , մետեւաբար , պէտք է ժամ առաջ մեկնիմ , պէտք է փութացնեմ ճամբորդութիւնս , չէ՞ .

- Կը մեկնիս շուտով կը մեկնիս , խրախուսեց Աշոտ , անցագիրդ վաղը կըստանաս , ասոր վրայ բնաւ մի խորհիր .

- Ի՞նչպէս , ի՞նչպէս , հարցուց Վռամշապուհ , տենդագին շարժումով մը , յոյս մը կա՞յ .

- Ի՞նչու այդքան կը չարչրկես միոքդ , կշտամբեց Աշոտ , ինծի չե՞ս վստահիր . դուն լրացո՛ւր պատրաստութիւններդ , պայուսակդ շտկե՛ , կազմ ու պատրաստ եղիր , անցագիրը գրպա՛նդ է , գրպա՛նդ

Աշոտ ինքնավստահ շիշտով մը կ'արտասանէր վերջին բառը , որովհետև ապահով էր թէ պիտի կրնար տիրանալ Պելճիքացի Ժօրիսի անցագրին , կանխաւ տեսակցած և կարգադրած ըլլալով ամէնը . դարձաւ ըսաւ Վոամշապուհին .

- Վռա՛մ , անցագիւտ մը չէ՞ ուզածդ .
- Այո՛ , Աշոտճա՛ն , պատասխանեց Վոամշապուհ , ուրիշ հոգ մը չունիմ ատկէ գատ .
- Է՛հ ուրեմն , յարեց Աշոտ , վաղը կը յանձնեմ քեզի անցագիրդ .
- Որո՞ւն անցագիրը , հարցուց Վոամշապուհ .
- Ժօրիսի՛նը , Պելճիքացի Ժօրիսի՛նը , կրկնեց Աշոտ ժպտելով , այդ անցագիրը գրպանդ կը դնես , ազատօրէն կը մեկնիս մայրաքաղաքէն , կ'երթաս Սօֆիա .
- Օ՛ , օ՛ , բացազանչեց Վոամշապուհ , քանի որ այդպէս է , վաղուքն կրնամ մեկնիլ , և
- Անշո՛ւշտ , ընդմիջեց Աշոտ , բայց չըլլա՛յ թէ երկար ատեն տնտնաս Սօֆիայի մէջ .
- Ո՛չ , բողոքեց Քէնտիրեան , շա՛տ շատ երեք օր պիտի մնամ
- Երեք օրը շա՛տ է , Վռամ , առարկեց Աշոտ , մէկ օրը կը բաւէ , ի՞նչ պիտի ընես հոն .
- Պարոն Քրիստափորին հետ չպիտի՞ տեսակցիմ , չպիտի՞ տեղեկանամ այն դէղի գործերուն , չպիտի՞ քնեմ , չպիտի՞ հասկանամ թէ ո՛ւր հասած են պատրաստութիւնները , թէ՛ յաջող անցա՞ծ են փորձերը , վերջապէս , այս ամէն չպիտի՞ տեղեկագրեմ հոս , բոլոր այս գործողութիւնները կարելի՞ է գլուխ հանել միայն մէկ օրուան մէջ , Աշո՛տ .
- Որքան քիչ մնաս , ա՛յնքան լաւ է թէ՛ քեզի և թէ՛ գործին համար , դիտել տուաւ Աշոտ . անդին , Ժընէվի մէջ , Դաշնակցութեան Խորհուրդը պիտի գումարուի , և թերևս գումարուած է արդէն , պէտք է մասնակցիս վիճաբանութիւններուն , մանաւանդ , մեր Մարմինի տեղեկագիրը պիտի ներկայացնես Ժողովին , չէ՞ .
- Շա՛տ լաւ , Աշո՛տ , յարեց Քէնտիրեան , մէ՛կ օր միայն կը մնամ Քրիստափորի մօտ և տեսակցութեան արդիւնքը կը հաղորդեմ ձեզի :

Հետեւեալ օրը , Աշոտ գնաց գտաւ Պելճիքացի Ժօրիսը , գերմանական հպատակ , որ յօժարական յանձնեց իր անցագիրը :

Քէնտիրեան նոյն օրը մեկնեցաւ Պոլսէն , Ժօրիսի անցագիրը գրպանին մէջ :

Երկու օր ետքը , Քէնտիրեան կը հասնէր Սօֆիա և կ'երթար գտնել Քրիստափոր Միքայէլեանը , որ , ինչպէս կ'ըլլէր ընթերցողները , օրիօրդ Ռուպինայի հետ երեք ամիս առաջ Պոլսէն մեկնած , տակաւին հոն կը գտնուէր , ռումբերու փորձերը կատարելու և ուրիշ պատրաստութիւններ ամբողջացնելու համար :

Կը յիշեն անշուշտ ընթերցողները , Նեճիպ Մելիամէ բաշան , Հինքեարին իրատէին համաձայն , անձամբ կատարած էր խիստ քննութիւն մը Հարէմի մէկ քանի կասկածելի կիներուն ու ներքինիներուն վրայ և քննութեան արդիւնքը հաջորդած էր իր Մեծ Տէրոջ :

Ապտիւլ Համիտ , Բամագանի Տասնըհինգէն ի վեր կորսնցուցած էր իր մտքի հաւասարակշռութիւնը , թէն անվտանգ վերադարձած ` Այա Սօֆիայէն , ուր նաւով գացած էր համբուրելու Մարգարէին վերարկուն , սակայն , միշտ դողի մէջ էր , մահուան Ոգին կը սաւառներ իր եղեռնական գլխուն վերէն :

Պալասականները զիրար մատնելով միայն կրնային ապահովել իրենց գոյութիւնը Ճերմակ Դղեակին մէջ , որ Երլտըզ կը կոչուէր :

Իսկ Ոստիկանութեան նախարարը , գինով Յոյնին միջադէպէն ի վեր , ինկած էր Հինքեարին աչքէն և չէր համարձակեր այլեւս յաճախել Երլտըզ , ուր Նեճիպ Մելիամէն կ'իշխէր միայն :

Իրիկուն մը , կայսերական քարտուղարութեան Դիւանին մէջ , երեք պալատականներ , ամենէն ազդեցիկները , Նեճիպ Մելիամէ , Գարա Թահսին և Իզզէթ Ապիտ , որոնք Երլտըզի Երրորդութիւնը կը նկատուէին , գլուխ գլխի տեսակցէին :

Երեքին ալ դէմքերը լուրջ էին . երեքն ալ մտածկոտ , արտակարգ յուղման մը մատնուած :

- Թահսին բաշա' , կ'ըսէր Նեճիպ Մելիամէ , ի՞նչ պիտի ընենք , երկու ժամէն պիտի ներկայանամ Հինքեարին , ի՞նչ պատասխան պիտի տանիմ .

- Ինչո՞ւ այդքան շուարած ես , կը խրախուսէր Գարա Թահսին , մեր պարտականութեան մէջ բնաւ չենք թերացած , ո՛չ դուք , ո՛չ ալ մենք . մեր պաշտօնը չէ՛ր ատիկա .

- Բայց Հինքեարը կը հասկանա՞յ , առարկեց Նեճիպ Մելիամէ . հազարաւոր լրտեսներու վոհմակներ արձակած է կայսրութեան չորս անկիւնները , միլիոններ կը ծախսէ , և գարձեալ մե՛զ կը բռնէ պատասխանատու , չէ՞ք գիտէր .

- Բայց , բաշա' դիտել տուաւ Իզզէթ Ապիտ , Ոստիկանութեան նախարարին օձիքէն թո՛ղ բռնէ . ինչո՞ւ չէ կրցեր ժամանակին ձերբակալել տալ այդ անիշխանականները , երբ արձակ համարձակ կը պտըտէին մայրաքաղաքի փողոցներուն մէջ .

- Եւ յետոյ , շարունակեց Գարա Թահսին , ի՞նչպէս թողուցեր է որ մեկնին մայրաքաղաքէն ...

- Սիրելի՛ս , ըսաւ Նէճիպ Մէլիամէ , Իզգէթ Ապիտին , ի՞նչու միամիտ տղու մը խօսքեր կ'ընէք , նո՞ր պիտի ճաչնաք մեր Վեհափառին նկարագիրը .

- Իրաւունք ունինք , բաշա՛ , յարեց Գարա Թահսին , Հինքեարը , բարկութեան բռպէին երբէք չուզեր մտիկ ընել .

- Բայց մտիկ ընել տալու է , առարկեց Իզգէթ Ապիտ , ո՞վ է հիմա յանցաւորը , չէ՞ք կրնար խնդիրը բացատրել և համոզել Հինքեարը , ես այս գործին մէջ երեք գլխաւոր յանցաւորներ կը տեսնեմ , որոնց վրայ կը ծանրանայ պատասխանատւութիւնը .

- Որո՞նք են այդ երեք յանցաւորները , հարցուց Նէճիպ Մէլիամէ .

- Առաջինը , շարունակեց Իզգէթ Ապիտ , Շէֆիզ բաշան է , ոստիկանութեան նախարարը , որ թոյլ է տուեր , կամ , եթէ կուզէք , ա՛յլ է գոցեր այդ անիշխանականներուն ազատ մուտքին և ազատ ելքին , չէ՞

- Շատ լաւ , ընդմիջեց Նէճիպ Մէլիամէ , երկրորդ յանցաւորը .

- Երկրորդը , շարունակեց Իզգէթ Ապիտ , Ներքին Գործերու նախարարը չէ՞ .

- Երրորդը ...

- Արտաքին Գործերու նախարարը , շարունակեց կայսերական երկրորդ քարտուղարը , ահաւասիկ այս երեքեն վրայ կը ծանրանայ ..

- Ո՞վ է մտիկ ընողը , ընդմիջեց Նէճիպ Մէլիամէ տրտնջալով , պարապ խօսքեր են , Հինքեարը հիմա մենե՛ համար կը պահանջէ , մենե՛ .

- Արքունի լրտեսապետե՛ն թող պահանջէ , դիտել տուաւ Գարա Թահսին բաշան :

Այս խօսակցութիւնը կը դառնար զգայացունց լուրի մը շուրջը , որ մեծ իրարանցում ուր դորդում առաջ բերած էր Երլտըզի շրջանակներուն մէջ , հասած ըլլալով նոյնիսկ Ախտիւ Համիտի ականջը :

Ահաւասիկ եղելութիւնը , համառօտ . -

Մէկ օր առաջ ժուռնալ մը մատուցուած էր Հինքեարին , ազդարարող թէ՛ մօտ օրէն աննախընթաց Ադէտ մը պիտի պայթի մայրաքաղաքին մէջ , և թէ՛ այդ Ադէտը պատրաստողներէն անիշխանական ընկերներու հետ գաղտնի տեսակցութիւններ ունեցած է , և յետոյ , դարձեալ , առանց իր վրայ դոյզն կասկած մը հրաւիրելու , յաջողած է մեկնիլ մայրաքաղաքէն և այս պահուս կը գտնուի Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ , Սօֆիա , իր ընկերներուն մօտ :

Ժուռնալին տէրը մանրամասնօրէն կը պատմէր Ադէտին բնութիւնը , տեսակը , պարագաները , և , կը պնդէր թէ ահագին քանակութեամբ պայթուցիկ նիւթեր , ռումբեր , ուժանակներ մտցուած են ներս :

Սոսկալի սպառնալիքներու շարք մըն էր այդ ժուռնալը . Հինքեարին դէմ մահափորձ , Մեծ տէրութեանց դեսպանատունները , բոլոր պանքաները , բոլոր հանրային հիմնարկութիւնները , Բ . Դուռը , բոլոր պետական պաշտօնատունները օդի պիտի հանուէին , նոյնիսկ Գարաքէօյի Կամուրջը , ամբողջ մայրաքաղաքը մոխիր պիտի դառնար , բովանդակ բնակչութիւնը պիտի ոչնչանար , նն :

Ահա՛ այս ժուռնալի համա՛ր է որ Էճիպ Մէլիամէ բաշան կանչուած էր Հինքեարէն , և հրամայուած էր իրեն անպատճառ երեւան հանել դաւադրութիւնը , ձերբակալել հեղինակները , մէկ խօսքով , տակնուվրայ ընել մայրաքաղաքը :

Եւ Երլտըզի Երրորդութիւնը շուարած , զո՛ւր կը փնտռէր նշոյլ մը , այս աղջամուղջին մէջ .

- Նէշիպ բաշա , ըսաւ Գարա Թահսին , հիմա միտքըս ինկաւ , գիտե՞ք ի՛նչ կը խորհիմ .

- Ի՞նչ , հարցուց Նէճիպ Մէլիամէ .

- Եթէ կուզէք , շարունակեց Գարա Թահսին կերթանք հիմա՞ կը ներկայանանք Հինքեարին , ունկնդրութիւն մը խնդրենք , և

- Ի՞նչ կըսէք , Թահսի՛ն բաշա , ընդմիջեց Նէճիպ Մէլիամէ , ո՞ր տխմարը պիտի համարձակէր երեւնալ աչքին ...

- Ա՛յդքան բարկացած է ...

- Բարկացա՞ծ , շարունակեց Մէլիամէ ժպտելով , փորձեցէք անգամ մը , կերելայ թէ շուտով մոռցաք հարուածնե՛րը ... :

Նէճիպ Մէլիամէ կ'ականարկէր Հինքեարի ապտակներուն , որոնց համը յաճախ առած էր Գարա Թահսին :

- Շա՛տ աղէկ , ըսաւ կայսերական առաջին քարտուղարը , եթէ անկարելի կը կարծէք այս պահուս կայսերական ունկնդրութիւնը մը , հոգ չէ՛ , մենք , առանց աղմուկի , անձայն անշշուկ , պէտք է ժուռնալին խնդիրը պատմենք մեծ դեսպանին և խնդրենք միեւնոյն ժամանակ որ իր ազդեցութիւնը գործ դնէ Յինքեարին վրայ , կարեւորութիւն չը տալու համար այդպիսի ժուռնալներու , որոնք կրնան դիտումնաւոր եղած ըլլալ .

Նէճիպ Մէլիամէ բաշան յանկարծ ոգէւորուեցաւ .

- Թահսի՛ն բաշա , ըսաւ , գործնական գաղափար մըն է , շա՛տ լաւ կը խորհիք . բայց մ աւելի լաւ չէ՞ որ մենք , երեք պալատականներ , առանձինն դիմենք զանազան դեսպանատուններ .

- Ո՞ր դեսպանատունները , հարցուց Գարա Թահսին .

- Օրինակի համար , շարունակեց Նէճիպ Մէլիամէ , դուք , Թահսի՛ն բաշա , եթէ կ'ուզէք , գուշլուսարայը (գերմանական դեսպանատունը) կ'երթաք , իսկ դուք Իզզէ՛թ բաշա , անգլիական դեսպանատունը .

- Հապա դո՞ւք , ընդմիջեց Գարա Թահսին , դուք ո՞ր դեսպանատունը պիտի երթաք .

- Ֆրանսական՝նը , պատասխանեց Նեճիպ Մելիամէ , միւսները տեսնելու հարկ չը կայ .

- Ինչո՞ւ , հարցուց Իզգէթ Ապիտ .

- Ֆրանսականը տեսնելով , պատասխանեց Մելիամէ , ռուսական դեսպանը տեսած կը համարուիմ , չէ որ երկու դաշնակից տէրութիւններու ներկայացուցիչներ են .

- Ճիշդ է , հաստատեց Գարո Թահսին , ինչպէս որ ես ալ տեսնելով գերմանական մեծ դեսպանը , տեսած կ'ըլլամ թէ՛ . իտալական և թէ՛ աստրո-հունարական մեծ դեսպանները , քանի որ Երբեակ Զինակցութեան անդամները կազմող երկու մեծ տէրութեանց ներկայացուցիչներն են ասոնք .

- Ենթադրենք թէ ա՛յո իրիկուրնէ պիտի երթանք տեսնենք այդ մարդիկը , բաշա՛ , ըսաւ Իզգէթ Ապիտ ՝ Նեճիպ Մելիամէի , ի՞նչ արդիւնք կըսպասէք .

- Աիդիւնքը մեծ պիտի ըլլայ , պատասխանեց Մելիամէ . նախ պիտի թափանցենք այդ դիւանագէտներուն միտքը , պիտի տեղեկանանք թէ արդեօք իրենք ալ իմացա՛ծ են այսպիսի լուր մը , և թէ , եթէ իմացած են , ի՞նչպէս տրամադրուած են .

- Արդիւնքին մեծութիւնը կարօտ չէ՛ ապացոյցի , աւելցուց Գարա Թահսին . մեծ դեսպաններուն դիմելով ՝ առնուազն փրկած պիտի ըլլանք մեր մորթը .

- Ի՞նչպէս , հարցուց Իզգէթ Ապիտ .

- Հիւնքեարը , չէ՞ք գիտեր , շարունակեց Գարա Թահսին , մեր երդումներուն չի՛ հաւատար , բայց դեսպանի մը մէկ բառը պատգամ կ'նդունի .

- Մի՛ մեղադրէք Վեհափառը , յարեց Նեճիպ Մելիամէ քմծիծաղով մը , գիտէ՞ք ինչո՞ւ մեր երդորմներո՛ւն իսկ չը հաւատար .

- Գիտե՛մ , գիտե՛մ , յրկնեց Ապիտ , որովհետեւ ի՛նք ալ գիտէ թէ ՝ մեր հազար երդումը մէկ բարաշա՛րժեր , խօսքը մեջներիս , մեր խօսքերէն հարիւրին քանի՞ն ճշմարիտ է , չըսէ՞ք ...:

Երեքը միասին քրքիջներ փրցուցին :

- Հապա իր խօսքե՞րը , դիտել տուաւ Գարա Թահսին ...

- Իր հաւատարիմ աշակերտները չէ՞նք , յարեց Նեճիպ Մելիամէ .

- Կը կարծե՞ք թէ միայն մենք ենք որ սուտ կը խօսինք , հապա մեծ դեսպաննե՞րը , հարցուց Իզգէթ Ապիտ .

- Կ՛աղաչե՛մ , ժամավաճառ չըլլա՛նք ունայն խօսքերով , գիտել տուաւ Նեճիմ Մելիամէ , կատակի ժամանակը չէ՛ , հիմա , վարկենները կը սուրան , ստիպւած եմ երկու ժամ ետքը ներկայանալ Հիւնքեարին . դուք լաւ գիտէք , կըսպասէ , երբեք չի՛ մոռնար , թէրեւս հիմա նարեւտ , վայրկեանները կը համրէ .

- Իրաւունք ունիք , բաշա՛ , հաստատեց Գարա Թահսին , աճապարե՛նք ուրեմն , ժամ առաջ երթանք .

- Երթա՛նք , յարեց Իզգէթ Ապիտ , բայց ի՞նչ պիտի խօսինք , այդ մասին նախնական խորհրդակցութիւն մը չըրինք .

- Խորհրդակցութեան ի՞նչ հարկ կայ , առարկեց Նէճիպ Մէլիամէ , մինչն հիմա ի՞նչ կը խօսէինք արդէն , ի՞նչ էր մեր խօսակցութեան առանցքը կազմող նիւթը .

- Ժուռնա՛լը , յարեց գարա Թահսին բաշան , այդ ժուռնալի մասին պիտի խօսք բանանք և ջանանք թափանցել մեծ դեսպաններուն մտածումները , չէ՞

- Եւ յետոյ , շարունակեց Նէճիպ Մէլիամէ , չը մոռնանք յիշեցնել իրենց թէ ՝ Հիւնքեարը գերագրգռուած է , և թէ ՝ կը սպառնայ նոր անակնկալներ ստեղծել Եւրոպայի , եթէ այդ ժուռնալին պարունակութիւնը ստոյգ է , պէտք է մեծ դեսպաններուն ականջը դնենք այդ պարագան .

- Ո՞ր պարագան , հարցուց Իզգէթ Ապիտ .

- Եթէ , շարունակեց Նէճիպ Մէլիամէ , ժուռնալին պարունակած սպառնալիքները գործադրուին , պիտիտ ըսենք մեծ դեսպաններուն , այն ասէն , Վեհափառ Սուլթանը չպիտի կրնայ սանձել խուժանին մոլեռանդութիւնը , եւն .

- Հասկացա՛յ , հասկացա՛յ , կրկնեց կայսերական երկրորդը քարտուղարը , պէտք է մեծ դեսպաններուն աչքը վախճընենք բլոր քրիստոնեաներու ջարդի մղձաւանջովը , չէ՞ .

- Այո՛ , պատասխանեց Մէլիամէ , շատ լաւ ըմբռնեցինք միտքս .

- Բայց , առարկեց Կայսերական Առաջին Քարտուղարը , եթէ մեծ դեսպանները , մեր այս գիշերուան տեսակցութեան արդիւնքը հաւաքական դիմումով մը հաղորդեն Հիւնքեարին . այն ատե՛ն .

- Թո՛ղ հաղորդեն . յարեց Մէլիամէ , աւելի՛ լաւ , Հիւնքեարը գոհ պիտի մնայ , պիտի գնահատէ մեր հաւատարմութիւնը , պիտի վարձատրէ մեր ծառայութիւնները .

- Դժբաղդաբար չափազանց լաւատես կը գտնեմ զձեզ , բաշա՛ , ըսաւ Գարա Թահսին , իմ տրամաբանութիւնս ձերինին բոլորովին հակառակն է .

- Ի՞նչպէս , հարցուց Մէլիամէ , բացատրեցէ՛ք կաղաչեմ .

- Եթէ մեծ դեսպաններուն , շարունակեց Գարա Թահսին , ինչպէս որ դուք կը թելադրէք , զգացնենք թէ վեհափառ Սուլթանը գերագրգռուած է և թէ կը սպառնայ Եւրոպայի անակնկալներ ստեղծել , կը հասկընաք , ջարդին կ՛ականարկեմ , գիտե՞ք , այն ատեն ի՛նչ պիտի ընեն մեծ դեսպանները .

- Ի՞նչ պիտի ընեն , հարցուց Մէլիամէ ընդմիջելով :

- Մեր տեսակցութեան արդիւնքը պիտի հաղորդեն , ինչպէս ըսի քիչ առաջ , և այս արդիւնքը գիտէ՞ք ո՞րքան պիտի խոշորացնեն .

- Խնդրե՛մ , բաշա՛ , ընդմիջեց դարձեալ Մէլիամէ , պարզ խօսեցէ՛ք .

- Շա՛տ պարզ կը խօսիմ ես , շարունակեց Առաջին Քարտուղարը . մեծ դեսպանները բառ առ բառ և թերեւս յաւելումներով պիտի պատմեն Հիւնքեարին մեր բոլոր խօսքերը . մանաւանդ . անգլիական մեծ դեսպանէն ամէն բան կը յուսամ , չի՛ քաշուիր , տանք տունք կը խօսի , և

- Գուգո՛ւմ Թահսին բաշա , ընդմիջեց Մէլիամէ քիչ մը սրտնեղած , ի՞նչ պիտի խօսի Հիւնքեարին .

- Ձեր Վեհափառութեան ներկայացուցիչը , պիտի սէ , շարունակեց Գարա Թահսին , սպառնալիքներ ըրաւ Ձեր անունով . Վեհափիռ Սուլթանը գերադրբգոռա՛ծ է , կրնայ Եւրոպայի անակնկալներ ստեղծել , այսինքն , քրիստոնեաները ջարդել տալ , ևն . այս խօսքերը պիտի կրկնէ մեծ դեսպանը , բաշա՛ :

- Թո՛ղ այդ խօսքերը կրկնէ դեսպանը , յարեց Մէլիամէ , ի՞նչ կ'ըլլայ .

- Մեր գլո՛ւխը մէջ կը խաղայ , պատասխանեց Գարա Թահսին :

- Ինչո՞ւ ...

- Հիւնքեարին բնաւորութիւնը ծանօթ է , շարունակեց Առաջին Քարտուղարը , բացարձակապէս պիտի ուրանայ և մեզ քեփազէ պիտի ընէ անոնց առջև .

- Հոգ չէ՛ , յարեց Մէլիամէ , քեթազէ՛ թող ըլլանք , բաւական է որ չի դաչի մոր մորթին :

- Երանի՛ թէ ատով վերջանար , շարունակեց Թահսին , մեծ դեսպանները մը ճամբէ , յետոյ մեզի՛ կը փակչի՛ , գիտէք . այն ատեն ի՞նչպէս պիտի կրնանք ազատել մեր օձիքը . սօն փիւշմանըք աքչէ էթմէ՛զ ...

Նէճիպ Մէլիամէ լռեց , Գարա Թահսինի խօսքերը տպաւորիչ էին և համոզիչ , պահ մը լռութիւն պահեց , յետոյ , դառնալով կայսերական առաջին քարտուղարին .

- Բաշա՛ , ըսաւ , շա՛տ աղէկ , քանի որ այդ կասկածը կայ , բնաւ չերթանք մեծ դեսպաններուն քով .

- Չերթալ չ՛ըլլար , առարկեց Գարա Թահսին , պէտք է երթանք տեսակցինք , տեղեկութիւնները տանք , տեղեկութիւններ ստանանք , վերջապէս , մեծ օգտակարութիւն կունենայ մեր տեսակցութիւնը , միայն , հարկ չկայ սպառնալու Սուլթանին անունովը մենք ժուռնալին խնդիրը կը բանանք . պարունակութիւնը կը պատմենք , խորհուրդ կը հարցնենք , և միեւնոյն ժամանակ կը խնդրենք որ մեր Վեհափառ Սուլթանին յուզեալ միտքը հանդարտեցնեն ո՛ր և է կերպով . ասիկա՛ պիտի ըլլայ մեր այցելութեան նպատակը .

- Է՛հ ուրեմն , յարեց Մէլիամէ , բաշա՛ , աւելերդ է դիմել երեք մեշ դեսպաններուն . միայն գերմանականը տեսնելու է :

- Ինչո՞ւ կը փոխէք մեր նախընթաց որոշումը , բաշա՛ , բողոքեց Գարա Թահսին . դո՛ւք էիք Թելադրողը .

- Ես ալ աւելորդ կը գտնեմ , միջամտեց Իզգէթ Ապիտ , գերմանականը տեսնել կը բաւէ , ի՞նչ է մեր նպատակը , Հինքեարին բարկութիւնը մեղմել , յուզումը խաղաղել չէ՞ .

- Այո՛ , պատասխանեց Գարա Թահսին .

- Լա՛ւ , շարունակեց Երկրորդ Քարտուղարը , Հինքեարը վստահութիւն չունի , ո՛չ ֆրանսական դեսպանին , ո՛չ ալ անգլիականին վրայ . միա՛կ բարեկամը , միա՛կ խորհրդատուն , միա՛կ պաշտպանը՝ գերմանական մեծ դեսպանը չէ՞ .

- Ճի՛շդ է , հաստատեց Գարա Թահսին , գերմանական մեծ դեսպանը կրնայ կարգադրել այս խնդիրը .

- Ասկէ գատ , յարեց Մէլիամէ , ինչո՞ւ կնճռոտենք խնդիրը . դո՛ւք միայն կ'երթաք անձամբ , մտերմական տեսակցութեան մը մէջ կը պատմէք ժուռնալին եղելութիւնը , և իր ազդու միջամտութիւնը կը խնդրէք :

Գարա Թահսին , սիրիացի վաշխառուներու եզական տիպարներէն , իր աննշան ծառայութիւններն անգամ գիտցած էր արժանացել ահագին փոխարինումներով : Կը մտածէր շահագործել այդ ժուռնալը . և քաջարելուած՝ Նէճիպ Մէլիամէի և Իզգէթ Ապիտի տրամադրութիւններէն , ինք առանձին կ'ուզէր ստանձնել գործին ամբողջ պատասխանատւութիւնը . ինք վստահ էր թէ պիտի յաջողէր իր պատուիրակութեան մէջ , կը ճանշնար Վիլիէմ Բ. Ի ներկայացուցիչը , որուն հետ անձնական բարեկամութիւններ մշակած էր վաղուց . երկու քոյր հոգիներ էին , իրարմէ գաղտնիք չունէին : Ապտիլ Համիտի Առաջին Քարտուղարը լրատարի պաշտօն մըն ալ ունէր , Երլտըզի բոլոր գաղտնիքները ժամը ժամին կը հաղերդէր Այաս բաշա , գերմանական մեծ դեսպանին , որ իր կարգին , դիւանագիտական կարւեր գաղտնիքներ կը հաղորդէր անոր , և այսպէս , փոխադարձ վստահութիւններով , Երկու Օգոստափառ Եզրայրներու երկու արժանաւոր ներկայացուցիչները , Դեսպան ու Քարտուղար , տարիներով կը շահագործէին Ապտիլ Համիտի ... հիւանդութիւնը :

- Ինչո՞ւ չէք խօսիր , հարցուց Նէճիպ Մէլիամէ Գարա Թահսինի , ի՞նչ կը խորհիք , բանաւոր չէ՞ ք զըտներ առաջարկս .

- Բանաւո՛ր է , պատասխանեց գերմանական մեծ դեսպանին բարեկամը , շա՛տ բանաւոր է , կը մտածեմ միայն թէ՛ ի՞նչպէս պիտի բանամ ժուռնալին խընդիրը .

- Ճա՛նրմ բաշա , յարեց Նէճիպ Մէլիամէ չարաճճի ժպիտով մը , ինե՞ պիտի սովորէիք խորամանկութիւնը , ձեզի համա՞ր պիտի մտմտայի ...

- Ծաղրեցէք հա՛ , ծաղրեցէ՛ք , գանգատեցաւ Առաջին Քարտուղարը , գիշերային այցելութիւն մըն է , կը խորհիմ , անհանգիստ պիտի ընեմ զինքը .

- Վարժուա՛ծ է ան այդպիսի այցելութիւններու , դիտել տուաւ Իզգէթ Ապիտ , գիւանագէտներու աշխարհին մէջ ամէն վայրկեան , մէն մի քայլափոխի , անակընկալ մը կը

ծագի , դեսպաններուն համար ո՛չ գիշեր կայ , ո՛չ ցերեկ , օրուան քսանը չորս ժամե՛րը կը ճանչնան անոնք , չէ՞ .

- Բաշա՛ , կը պաղատէր Մելիամէ , եթէ կարելի է , աճապարեցե՛ք քիչ մը , ժամանակը շատ ուշ է .

- Հոգ մի՛ ընէք , յարեց Թահսին , դեռ սեղանէն չեն ելած , ինչո՞ւ կանուխ երթամ և սպասեմ . թող ընթարեն , յետոյ կ'երթամ .

- Բայց գիտե՞ք , առարկեց Մելիամէ , մէկ ժամ չը մնաց , Հիւնէտարը կըսպասէ , ի՞նչ պիտի ըսեմ երբ կանչուիմ .

- Մի՛ վախնաք , քաջալերեց Առաջին Քարտուղաւը , դեռ չէք կանչուիր , հակառակ պարագային , սենեկապետին միջոցաւ իմաց կուտանք թէ կարելոր գործով մը դուրս ելած էք Երլտըզէն .

- Ամա՛ն , սագը՛ն , բացագանչեց Նէճիպ Մելիամէ , չըլլայ թէ ատանկ , խօսք մը գլտորէք . ամենախիստ ահրցաքննութեան մը պիտի ենթարկուիմ , չէ՞ք յիշեր , քանի՛ քանի անդամներ անցուցած եմ այդ կարգի տագնապներ ... :

Այս միջոցին Քարտուղարութեան Դիւանին դռնէն ներս մտաւ սենեկապետ Արիֆ պէյը:

Դէմքը դակկահար , ամբողջ մարմինովը կը դողար տակաւին , սակալի տագնապի մը մէջէն անցած ըլլալ կը թուէր : Եկաւ նստաւ միւս երեք պալատականներուն քով , և հառաչելով.

- Ա՛խ ըսաւ , երանի՛ թէ մայրս քա՛ր մը ծնած ըլլար իմ տեղս , աս ի՛նչ կեանք է ...

- Ի՞նչ կայ , ի՞նչ կայ , կրկնեցին երեքը միասին , ի՞նչ ունիք , Արի՛ֆ պէյ .

- Աստուած պէլա՛ն տայ սա ժուռնալիճիներուն , անիծեց Ապտիւլ Համիտի սենեկապետը , մատուրնե՛րը վերքոտէին ու թափթփէին այդ ժուռնալը գրողին .

- Ո՞ր ժուռնալը , հարցուցին երեք պալատականները .

- Նէճիպ բաշան գիտէ , շարունակեց Արիֆ պէյ , ի՞նչ պիտնամ , մայրաքաղաքը պիտի կործանի , դեսպանատունները պիտի օ՛ղը հանուին , Գաժաքէօյի Կամուրջը պիտի քանդուի , Բ . Դուռը , բոլոր պետական շէնքերը , վերջապէս , բովանդակ Պոլիսը պիտի մոխի՛ր դառնայ . այսպէ՛ս է գրուեր այդ անիծեա՛լ ժուռնալին մէջ .

- Հիմակ ի՞նչ եղաւ , ի՞նչ պատահեցաւ , Արի՛ֆ պէյ , հարցուց անձկոտ դէմքով մը Նէճիպ Մելիամէ .

- Ի՞նչ պիտի ըլլայ , պատասխանեց սենեկապետը , սեղանը տարուցեաւ , կերակուրները նոյնութեամբ ետ ճամբուեցան .

- Ինչո՞ւ ...

- Զիս կանչեց , շարունակեց Արիֆ պէյ , երեսիս պօռաց .

- Ի՞նչ պօռաց , հարցուցին ներկաները սրտի դողով մը .

- Պալատիս մէջ օձե՛ր կը սնուցանեմ . թունաւոր օձե՛ր , պատասխանեց Արիֆ պէյ :
շարունակ կը պօռայ , ո՛չ ոք կը համարձակի երննալ , կատղա՛ծ է . կատղա՛ծ , կը զարնէ , կը
կոտրէ , կը թափէ , կը կանչէ , կը պօռայ , կը հայհոյէ , կ'անիծէ , կը ծեծէ ...

- Ի՞նչ , ընդմիջեց Նեճիպ Մէլիամէ , ապտակե՞ց ձեզ .

- Ապտակե՞լ , շարունակեց Արիֆ պէյ , միայն ապտակե՞ց , երեսիս , ոտքերուս , քիթիս
բերնիս , ամէն կողմերուս , աքացիներ տուաւ , սաքին տակ առաւ զիս ու ծեծեց՝ ... :

Եւ սկաւ հեծկլտալ :

Միւս երեք պալատականները ուսակումնահար , իրարու երես կը նայէին և
կ'արգահատէին սենեկապետին վիճակին վրայ :

- Արի՛ֆ պէյ , ըսաւ Առաջին Քարտուղարը , հիմակ ի՞նչ կ'ընէ , ո՞վ կայ քովը .

- Ո՞վ կրնայ մօտենալ , պատասխանեց սենեկապետը Քեօշկին մէջ ողջ կարասի մը չը
մնաց , բոլոր կոտրտեց , լամբ , աթոռ , սեղան , վարագոյրները պատրեց , չէ՛ք հաւատար ,
այլակերպ բան՝ մըն է դարձեր , կերպարանքը սոսկում կ'ազդէ , ճշմարիտ դիւահա՛ր մը ,
քանափէներուն վրայ կ'ելլէ , վար կը ցատկէ , վեր վեր դէպի ձեղունը կը նետուի , այսահարի
մը բոլո՛ր նշանները կը տեսնուին իրեն վրայ ... :

- Գուզո՛ւմ Արիֆ պէյ , հարցուց Իզգէթ Ապիտ , հիմակ ի՞նչ կ'ընէ , ո՞ւր է , ի՞նչ վիճակի
մէջ է .

- Չե՛մ գիտեր , պատասխանեց սենեկապետը , զինքը թողուցի այնպէս , նուղած
վիճակի մը մէջ , գիտէք , չէի կրնար մօտենալ , ընկուկները միշտ ձեռքը , մէկ քանի անգամներ
պարպեց . բարեբազդաբար օղին մէջ .

- Ուրեմն հիմա մարա՞ծ է , հարցուց Իզգէթ Ապիտ .

- Չե՛մ կարծեր , պատասխանեց սենեկապետը , որովհետս մէկէ աւելի անգամներ
տեսայ , ինկաւ , ելաւ , մարեցաւ սթափեցաւ , պահ մը պառկած մնաց փորին վրայ , բերնէն
լորձունքները կը վազէին , չը նմանցնե՛մ , կը հասկնա՛ք , մէկ խօսքով , կատղա՛ծ է կատղա՛ծ ,
և այս անգամ , վտանգաւոր տեսակէն ... : >>

Միւս երեք պալատականները վայրկենապէս մոռցան իրենց մտմտութիւնը ,
սենեկապետին երեսումը խանգարած էր արդէն իրենց խօսակցութիւնը , իր բերած վրդովիչ
տեղեկութիւնները տակնուվրայ ըրին իրենց ծրագիրը , ա՛լ չափտի կրնային գործադրել զայն ,
վայրկեանը տագնապալից էր : Առաջին Քարտուղարը հրաժարեցաւ գերմանական
դեսպանատունը դիմելու գաղափարէն , Հինքեարին վիճակը կ'արգիլէր զինք , թոյլ չէր տար
իրեն մէկ րոպէ հեռանալու Դիւանէն : Նոյն կը խորհէին Նեճիպ Բէլիամէ և Իզգէթ Ապիտ .

- Արի՛ֆ պէյ , ըսաւ Իզգէթ Ապիտ , բժշկապետ բաշան կանչուեցա՞ւ .

- Կը զարմանամ , յարեց սենեկապետը , Հինքեարին բնաւորութիւնը մոռացա՞ք . ո՞վ պիտի կրնար առնել այդ յանդուգն քայլը , չէ՞ք գիտեր , կարեւորութիւն կուտայ՝ թիշկներու .

- Բայց , Արի՛ֆ պէյ , ընդմիջեց Թահսին բաշան , կարելի՞ է այդպէս երեսի վրայ թողուլ վիհափառ հիւանդը .

- Մի վախնաք , մի՛ վախնաք , կրկնեց Արիֆ պէյ , թերեւս այս պահուս հանգարտած է և հիմա ոտքի վրայ է .

- Ճիշդ է , հաստատեց Նէճիպ Մէլիամէ , այս առաջին անգամը չէ՛ , մինչև ցարդ անցուցած ըլլալու է նօպան .

Եկէ՛ք երթա՛նք , յարեց Իզգէթ Ապիտ , տեսնէ՛նք ի՛նչ եղաւ .

- Դուք կրնաք երթալ , բարեկամնէ՛ր , ըսաւ սենեկապետը , ես մէ՛կ քայլ չեմ առներ . դուք ազատ էք , գացէ՛ք , փորձեցէ՛ք , ոս իմ բաժինս առի :

Նէճիպ Մէլիամէ միւսներէն աւելի ուսումնասիրած էր Ապտիւլ Համիտի հոգեբանութիւնը , և դառնալով սենեկապետին .

- Արիֆ պէյ , ըսաւ , եկէ՛ք , միասին երթանք , հոգ չէ , դուք մի՛ ներս մտնէք , սպասեցէ՛ք դուռը , ես առանձին կը ներկայանամ .

- Եթէ կ'ուզէք , յարեց Իզգէթ Ապիտ , ես ալ կ'ընկերանամ .

- Հասկցուեցա՛ւ , ըսաւ առաջին քարտուղարը , միասին կ'երթանք :

Եւ չորս պալատականները դուրս ելան քարտուղարութեան Դիւանէն և ուղղուեցան դէպի կայսերական քեօշկը :

Արիֆ պէյ , երբ հասան դրան առջեւ .

- Սպասեցէ՛ք , ըսաւ , ես ներս մտնեմ անգամ մը , տեսնեմ ի՛նչպէս է , յետոյ ներս կը մտնէք դուք ալ :

Երեք պալատականները դուրսը կեցան , իսկ սենեկապետը նեւս մտաւ :

Երկու վայրկեան ետքը , գուարթ դէմքով մը դուրս վազեց Արիֆ պէյ , և երկու ձեռքերովը կանչելով .

- Եկէ՛ք , եկէ՛ք , ըսաւ գոհունակ ժպիտով մը , վեհափառը ձեզ կը կանչէ :

Ամենքը միասին ներս մտան , Ապտիւլ Համիտ հանդարտաքայլ ման կուգար դահլիճին մէջ:

- Մօտեցէ՛ք նայիմ , հրամայեց Հինքեարը , դառնալով իր սիրական արքանեակներուն , պատմեցէ՛ք , ի՞նչ կայ :

Չորս պալատականները , շունչերնին բռնած , անխօս արձաններ , կարգով շարուած , ծունկի վրայ , կ'ըսպասէին :

Հիւնքեարին երկրորդ հրամայական ազդարարութեան վրայ Նէճիպ Հէլիամէն բացաւ բերանը.

- Վեհափա՛ն տէր , ըսաւ երկրպագելով , տիեզերքը կը հնազանդի Ձեր ամենայադթ սուրին , միլիոններու երախտագէտ սրտերը կը բաբախեն մէ՛կ զգացումով միայն . –
Հաւատարմութիւն Ձեր փառապանծ գահին ... :

- Ի՞նչ կայ , կ'ըսեմ , ձայնը բարձրացուց Ապտիւլ Համիտ :

Եւ պալատականները ցնցուեցան .

- Վեհափա՛ն տէր , ըսաւ Առաջին Քարտուղարը , մայրաքաղաքին մէջ անդորրութիւնը կատարեա՛լ է , կատարեա՛լ :

Դիւային քրքիշ մը , Ապտիւլ Համիտի թոքէն փրթած , ընդհատեց Կայսերական Առաջին Քարտուղարին խօսքերը :

- Կեղծաւորնե՛ր , կեղծաւորնե՛ր , գոռաց Հիւնքեարը , յօնքերը պռոտելով և աչքերքն բոցեր ժայթքելով , խաղի՞՞ւ ելեր էք ինծի հետ , մայրաքաղաքին մէջ անդորրութիւնը կատարեալ է , հա՞՞ :

Եւ հազիւ զսպուած կատաղութեան մը շարաշուք նշոյլը լուսնոտի աչքերուն մէջ , սաղայլական քրքիջներով թնդացուց դահլիճին ձեղունը , մինչ չորս արբանեակները , չորսն ալ հին աղուէսներ , կը զգուշանային ո՛ր և է շարժում ընելէ .

- Հէ՞՞ , շարունակեց Ապտիւլ Համիտ ակռաներու վայրագ կրճատումներով .
անդորրութիւնը կատարեալ է , հէ՞՞ . ո՞ր է այդ անդորրութիւնը , ցոյց տուէ՛ք ինծի . պալատի՞՞ս մէջ , ուր իմ սրտիս մխուելիք դաշոյնները կը սրուին ապերախտ քածերուս գոհարակուռ մատնիներով ծածկուած ոճրագործ ձեռքերուն մէջ ...

- Վեհախա՛ն տէր , ընդմիջեց Նէճիպ Մէլիամէ , իրատէ ըրէ՛ք .

- Ըրի՛ շեշտեց Հիւնքեարը , խօսէ՛ նայիմ , Նէճի՛պ :

Պալատականները քիչ մը սիրտ առին , մինչ Մէլիամէ կը պատրաստուէր խօսելու :

- Խօսէ՛ նայիմ , Նէճի՛պ բաշա , կրկնուեցաւ իրատէն .

- Վեհափա՛ն տէր , շարունակեց Մէլիամէ , կարելորութիւն մի՛ տաք ժուռնալներուն , շինծո՛ւ են .

- Ո՞ր ժուռնալները , հարցուց Հիւնքեարը զարմացական շեշտով մը .

- Բոլո՛րը , պատասխանեց Մէլիամէ , անդորրութիւնը կատարեալ է ո՛չ միայն
մայրաքաղաքին , այլ նաև կայսրութեան բոլոր նահանգներուն մէջ , և ասիկա հաստատուա՛ծ է .

- Ի՞նչպէս ...

- Մեր ձեռքեն ո՛չ մէկ ձագ կրնայ թռչիլ , շարունակեց Մէլհամէ , Օսմանեան յաւերժական կայսրութեան բոլոր մզկիթներուն , բոլոր եկեղեցիներուն և բոլոր սինականներուն և աղօթարաններուն մէջ տիւ և գիշեր աղօթքներ ու մաղթանքներ կը կարդացուին .

- Գիտե՛մ , ընդմիջեց Համիտ , ատոնք սովորական բաներ են , շրթունքները կ'աղօթեն , սրտերը կ'անիծեն , լոյսի մէջ մաղթանքները կը պոռչտան իմ արեւշատութեանս համար , իսկ մութի մէջ պատանքս կը կարեն ...

- Քա՛ւ լիցի , քա՛ւ լիցի , Վեհափա՛ռ տէր , մրմընջեցին պալատականները .

- Լռեցէ՛ք , կեղծաւորնե՛ր , շարունակեց Ապտիւլ Համիտ , այսքան տարի է , ցեխերուն մէջէ՛ն ժողովեցի ձեզ , բարձրացուցի մինչև Գահիս պատուանդանը , ականակուռ շքանշաններով զարդարեցի ձեր կուրծքերը , ապարանքներու , ամբաւ կալուածներու , անսպառ գանձերու սեփականատէր ըրի ձեզ , Հայերուն արիւնո՛վը ներկել տուի ձեր ամէն օր կանգնել տուած հսկայ շէնքերու պատերը , որբերուն , այրիներուն ժառանգութիւնը ձեզի՛ յատկացուցի , որպէս զի հո՛րս փորէք , աւպէս զի մահս փութացնէք , հէ՞ ... , դաւաճաններ , օձե՛ր , կախիճնե՛ր ... :

Պալատականները սահմակած , ա՛լ չէին համարձակեր խօսիլ . կըզգային , կը նշմարէին , Հիւնքեարին ջղային դրութիւնը գրգռուած , կատաղութիւնը զենիթը հասած էր , ամենափոքրիկ անխոհեմութիւնը մը , կասկածելի շարժումը մը , կրնար աղետաբեր ըլլալ իրենց համար . ուստի , ստորուկի համակերպող դիրքի մը մէջ , կը մարսէին անոր բերնէն ժայթքած լուտանքները :

Իսկ Հիւնքեարը , իր արբենեակներուն լռութիւնը կը մեկնէր իբրև խոստովանութիւն իրենց յանցանքներուն և մտովին կը դատապարտէր զանոնք :

- Ձեզի՛ եմ , ձեզի՛ , բացազանչեց յանկարծ , ապերախսնե՛ր , դաւաճաննե՛ր , կը պառկի՞ք , կը քնան:ք , մինչ թշնամիներս կը հսկեն , ո՞ւր էք , ո՞ւր , երբ անդին , երկիրներուս խաղաղութիւնը խանգարող անիշխանակներու վոհմակ մը կ'արշաւէ աջ ու ձախ , մայրաքաղաքիս ծոցը թէ նահանգներուս խորերը , ուժանակներու , ռումբեր և դեռ չեմ գիտեր ուրիշ ի՛նչ դժոխային նիւթեր կը փոխադրեն կայսրութեանս մէկ ծայրէն միւսը , և դուք իմ պահապան շուներս , կը քնանա՛ք ... :

Յոգնաբեկ ինկաւ կայսերական թիկնաթոռին վրայ , և քանի մը վայրկեան գանգիստ ընելէ յետոյ , գրպանէն թուղթ մը հանեց , և

- Ինծի նայեցէ՛ք , գոռաց սպառնական շարժումէնով մը , ստոր ի՞նչ պիտի ըսէք , Թահսի՛ն բաշա , առէք անգամ մը կարդացէ՛ք , հոգ չէ՛ , դուք ալ աչքէ անցուցէ՛ք :

Առաջին քարտուղարը մօտեցաւ , Հիւնքեարին ձեռքէն առաւ թուղթը , ծանօթ ժուռնալը:

Նեճիպ Մէլիհամէ , Իզգէթ Ապիտ ու Արիֆ պէյ թառեցան անոր վրայ , մինչ Թահսին բաշան շրթունքները կ'երեցներ , աչքերը պըտըցնելով ձիւնի պէս ճերմակ ու փայլուն թուղթին վրայի սեւ ու խիտ տողերուն վրայ :

Երբ աւարեց ընթերցումը , և կը պատրաստուէր գայն վերադարձնելու Հինքեարին , այս վերջինը ,

- Թահսի՛ն բաշա , ըսաւ , խօսէ՛ նայիմ , ի՞նչ հասկըցար , ի՞նչ կը նշանակէ այդ թուղթը , չը խօսի՞ս .

Գարա Թահսին , ինքզինք ամփոփելով .

- Վեհափա՛ռ տէր , թոթովեց , ժուռնալ մըն է , որուն պարունակութիւնը պէտք է ստուգուի ո՞վ է այդ ժուռնալին տէրը , ո՛չ որ գիտէ , անծանօթչ մը կողմէն գրուած ա՛յսքան ծանրակշիռ , ա՛յսքան զգայացունց տեղեկութիւններ առնուազն անհիմն են .

- Ինչէ՞ն գիտէք , հարցուց Համիտ .

- Քանի՛ քանի անգամներ փորձած ենք , Վեհափա՛ռ տէր , պատասխանեց Առաջին Քարտուղարը , հետըզհետէ քաջալերուելով Հինքեարին վարմունքէն , ո՞վ գիտէ ո՛ր անխիղճ սրիկան , ո՛ր շահամոլ դատակապորտը շլինէր է այդ թուղթը ...

- Հիմա կարեւորութիւն չիտա՞մ կ'ըսէք այս թուղթին , հարցուց Համիտ .

- Մի՛ տաք . Վեհափառ տէր , աղաղակեցին չորս պալատականները մէկ բերան , սո՛ւտ է սո՛ւտ , շինծո՛ւ է այդ թուղթը .

- Ի՞նչպէս պիտի կրնաք հաստատել թէ շինծու է , մէջտեղ դրէ՛ք ձեր փաստերը .

Նեճիպ Մէլիհամիի ըզեզին մէջ յանկարծ լոյս մը ծագեցաւ : Ճիշդ յարմար առիթը ներկայացաւ , կ'րտսէր ինքիրեն , Ոստիկանութեան Նախարարին հաշիւը մաքրելու ; Չ՞է որ Շէֆիզ բաշան իր անհաշտ հակառակորդն էր , իր վտանգաւոր մրցակիցը , թէն իր հայրենակիցը :

Եւ որովհետեւ խնդրիը ժուռնալի մը շուրջը կը դառնար , կը խորհէր Մէլիհամէ , պէտք էր Ոստիկանութեան Նախարարը մատնանիշ ընել և զանի պատասխանատու բըռնել : Ուստի,

- Վեհափա՛ռ տէր , ըսաւ , ոստիկանութեան նախարարին ձեռքին տակ պատկառելի , կազմակերպուած ոյժ մը կայ . ոստիկան զինորներուն թիւին հաւասար և թերեւս աւելի մեծ թիւով լրտեսներ դրուած են իր տրամագրութեան ներքեւ . արդեօք , եթէ ստոյգ են այդ ժուռնալին պարունակած տեղեկութիւնները , ինչպէ՞ս կըլլայ որ Շէֆիզ բաշան չ'ը գիտնար , ի՞նչ է իր պաշտօնը . արդեօք անիրա՞ւ է դիտողութիւնս .

- Վա՛ր անցնի Շէֆիզ բաշան , յարեց Ապտիւլ Համիտ , սիրիաձի չէ՞ ...

ԻԱ.

1905 Մարտի սկիզբները, Սաֆօիայի մօտակայ բլուրներուն գագաթները դեռ ճերմակ էին , ձիւնահալքը դեռ նւր կըսկսէր :

Մերթ արեւ , մերթ անձրեւ , յաճած մրրիկ , կճող ցուրտ մը , քանի մը բոպէ պայծառ օդ մը , քիչ յետոյ ամպամած երկինքը մը , մերթ ծիծաղկոտ , մերթ մելամաղձոտ համայնապատկեր մը : Սօֆիայի գլխաւոր պողոտաներուն երկայնքը ` մեռելային ամայութիւն մը , միւս փոքր ու նեղ գոեհներուն մէջ ` կանխազարթոյց կաթնավաճառներուն աղմուկը , շուկան դեռ փակ , մարդիկ իրենց բնակարաններուն ծոցը քաշուած , հոս ու հոն անցորդներ , մեծ մասը գեղջուկ երկրագործներէ կամ հովիւներէ բաղկացած , հազիւ կ'ոգեւորէին փոքրիկ մայրաքաղաքին գերեզմանային լռութիւնը :

Ձմեռանվերջի կամ աւելի ճիշդը , գարնանասկիզբի այս յարափոփոխ ամսուան մէջ , Սօֆիացիներուն մեծագոյն մասը քաղաքէն դուրս կը սկսէր ելլալ , դաշտի աշխատանքի օրերը կը մօտենային . ամէն մարդ , վերանորոգուող բնութեան հետ , նոր եռանդով ու ներ կորովով , կը վերսկսէր ձեռք առնել ընդհատուած աշխատութիւնները :

Ինչէս ամէն դասակարգի մարդիկ , նոյնպէս յեղափոխականները գործի վրայ էին , մերձեցող գարնան հետ նոր կեանքի մը վերածլիլը կը նշմարուէր դժգոհներու , անիրաւուններու և հալածուածներու հոգ ու կուռ շարքերուն մէջ :

Ամէն օր , յեղափոխականներու թիւը կ'աւելնար հոն , Եւրոպայի զանազան կեդրոններէն հոն կը դիմէին անոնք : Ասոնց կարգէն էր Դաշնակցութեան սիւներէն Քրիստափոր Միքայէլեան , որ , անտարակոյս կը յիշէն ընթերցողները , Պոլսոյ մէջ Սամուէլ Ֆայն կեղծանունան տակ երկու ամիս բնակելէ յետոյ , անցած էր Սօֆիա :

Չորս ամիսներ անցած էին այդ թուականէն ի վեր և Քրիստափոր օր մը չէր հանգիստ ըրած , ծանօթ փորձերը կատարելով անցուցած էր այդ բաւական երկար ժամանակամիջոցը : Հարկ չը կայ կրկնելու , ռումբերու փորձեր էին , որոնք , քանի՛ քանի անգամներ , յաջող արդիւնք մը ցոյց տուած էին :

Այդ ցուրտ օրերուն մէջ էր Վռամշապուհ Քէնտիրեան , Վիշապի Պատասխանատու Մարմինի անդամներէն , պատգամաւոր կարգուած , մեկնած էր Պոլսէն և կը հասներ Սօֆիա , ուր միայն մէկ օր մնալէ յետոյ , պիտի մեկնէր Ժընէվ :

Առտուան դէմ էր , ամբողջ գիշերը տեղատարափ , փոթորիկ , բուք , ձիւն , յորդ հեղեղներ , վրդոված էին բնակչութեան խաղաղ քունը . և Քրիստափոր , այդ գիշերը , իր բնակած յիւրանոցի փոքր սենեակին մէջ , մինչեւ կէս գիշեր , զլուխը գրասեղանին վրայ ծռած , ալճէպրայական հաշիւներու մէջ խորասուզուած էր , չարչրկելով իր բեղուն ըղեղը , մինչեւ որ յաջողած էր ի վերջոյ յաղթահարել ամեն դժուարութիւն :

Արդ . տակաւին կը պառկէր ան , երբ իր սենեակի դրան տրուած թեթեւ հարուածի մը ձայնը լսեց : Ընդ ոստ ելաւ անկողնէն ու դէպի դուռը գնաց , կանչելով .

- Ո՞վ է ան .

- Ե՛ս եմ , բա՛ց , պատասխանեց դրսէն փափուկ ձայն մը :

Ձայնը ծանօթ էր իրեն , առանց հարուածը կրկնել տալու , բացաւ դուռը :

Երկու ընկերները խանդակաթ համբոյրներով ողջագուրեցին զրիաի :

Քրիստափոր հինգ վայրկեանէն տուէլի կախուած մնաց իր նորեկ հիւրի վիզէն :

Վռամշապուհ Քէնտիրեանն էր :

- Վռա՛մ , ըսաւ Քրիստափոր , եկո՛ւր ինծի , քովս նստէ՛նայիմ , ի՛նչպէս են ընկերները .

- Աղէկ են , կը գործեն , պատասխանեց Վռամշապուհ .

- Աշոտ ի՞նչ կընէ , ի՞նչպէս են Սաֆօն , Թորգոմը , հարցուց Քրիստափոր .

- Շա՛տ աղէկ են ամենքն ալ , պատասխանեց Վռամշապուհ :

Մէկ կողմէ խօսակցելով ու Վիշապի գործերուն վրայ տեղեկութիւններ քաղելով , միւս կողմէ կը հագւէր Քրիստափոր :

Տասը վայրկեան չանցած , կազմ ու պատրաստ էր .

- Վռա՛մ , ըսաւ , դուն քիչ մը կեցի՛ր հոս , երթամ կանչեմ աղջիկս :

Օրիորդ Ռուպինան , Թիֆլիզցի Հայուհին էր , որ Պոլսոյ մէջ Ռուպինա Ֆայա անունով կ'ապրէր , և Սամուէլ Ֆայնի հետ մէկտեղ մեկնած էր , իբրև անոր աղջիկը : Հիմա կը գտնուէր Սօֆիա , նոյն հիւրանոցին մէջ , Քրիստափորի սենեակին կից ուրիշ սենեակ մը :

Ներս մտաւ Քրիստափորի հետ և տեսնելով Վռամշապուհը , մօտեցաւ , ձեռքը սեղմեց և սկսաւ հարցումներու տարափ մը տեղացնել .

- Ի՞նչ կ'ընեն ընկերները , Մառի Զայձը դեռ հո՞ն է , Սաֆօն ի՞նչ կ'ընէ , Աշոտը կ'աշխատի՞ , օժանդակ ընկերները կը գործե՞ն , եւն :

Վռամշապուհ բոլոր այս հարցումներուն պատասխանեց ը յագեցուց Ռուպինայի հետաքրքրութիւնը :

Ասկէ վրայ խօսակցելէ յետոյ , խնդիրը դարձաւ Ժընէվի Դաշնակցութեան Խորհուրդին վրայ .

- Քե՛զ ընտրեցին պատգամաւոր , չէ՞ , հարցուց Քրիստափոր .

- Այո՛ , պատասխանեց Քէնտիրեան . զիս ընտրեցին ընկերները , ես իմ քուէս քեզի տուած էի .

- եմ , Վռա՛մ , բայց , եթե զիս ընտրեի՛ք իսկ , չպիտի ընդունեի , պիտի մերժեի .
- Ինչո՞ւ պիտի մերժեիք , հարցուց Վռամշապուհ զարմացկոտ դեմքով մը .
- Որովհետև ես կը նախընտրեմ գործը քան թե խօսքը , պատասխանեց Քրիստափոր .
- Բայց ինչո՞ւ այդպես կը խորհիք , պարո՛ն Քրիստափոր , միթե անկարելո՞ր է Ժընեվի Խորհուրդը .

- Խի՞ստ կարելոր է , յարեց Քրիստափոր , բայց , ինչպես կ'երեւի , ես չը յաջողեցայ արտայայտել միտքս . ես քեզի ըսի թե՝ գործը կը նախընտրեմ ես քան թե խօսքը , ըսել ուզեցի թե՝ ես այս գործին փարած եմ հոգեւին , այնպես որ , ասկէ դուրս , ամէն պարապում անօգուտ կը նկատեմ , ինծի համար պատուի հարց մըն է ասիկա . գիտե՞ս , Վռա՛մ , ահա՛ չորս ամիս կայ , գրեթե ամէն օր կ'աշխատիմ կատարելագործել ծանօթութիւններս , բազմապատկել փորձառութիւններս , ամէն օր նոր գիւտ մը կ'ընեմ , այսօր կրնամ քեզի յայտարարել թե՝ գործը շատ առաջացած է .

- Ի՞նչպես , հարցուց Վռամ անձկանօք , կ'աղաչեմ , պատմե՛ , ծարաւի եմ խօսքերուդ .
- Մտիկ ըրե՛ , Վռա՛մ , շարունակեց Քրիստափոր , փորձերը չըսպասուած յաջողութիւններ ունեցան , այսօր վերջին փորձ մըն ալ պիտի ընեմ , ուրախ եմ որ դուն ներկայ պիտի ըլլաս .

- Իրա՞ւ կ'ըսես , գոչեց Վռամ խնդումէն , պիտի կրնա՞մ արդեօք ներկայ գտնուիլ փորձերուդ , գիտե՞ս , կ'աճապարեմ , այսօ՛ր միայն պիտի հիւր մնամ քեզի , վաղը կանուխ պիտի մեկնիմ .

- Հօս չե՛ս մնար , յարեց Քրիստափոր , անշուշտ պիտի մեկնիս , բայց պետք է մէկ քանի օր մնաս , աչքովդ տեսնես ձեռք բերուած արդիւնքը . մի՛ վախնար , չե՛ս ուշանար , տակաւին ժամանակ կա՛յ . Խորհուրդին ներկայացուցիչներէն շատերը դեռ չեն հասած , բացականերուն թիւը մեծամասնութիւն մը կը կազմէ .

- Բայց ես պետք է ժամանակիս գտնուիմ հոն , պարո՛ն Քրիստափոր , Վիշապի գործերը շատ փափուկ են , գիտես , զիս շուտով ճամբու դի՛ր , երթամ , շուտով վերադառնամ , և քեզի հետ միասին մտնենք Պոլիս .

- Հապա ե՞ս , միջամտեց Ռուպինան , պարո՛ն Վռամ , ես չպիտի՞ ընկերանամ ձեզի .
- Անտարակո՛յս , ըսաւ Վռամշապուհ , Սամուէլ Ֆայնի մէ՛կ հատիկ աղջիկը չե՞ս դուն , հայրդ ո՛ր դուն հո՛ն ...

- Բայց տակաւին ատեն ունի՛ք , պարո՛ն Վռա՛մ , թախանձեց օրիորդը , գոնէ շաբաթ մը Սօֆիա կեցի՛ր , պիտի տեսնես ո՛րքան յաջող են փորձերը , հաւատա՛ , աներեւակայելի գիրութիւններ ձեռք բերուած են , պուկար յեղափոխական ընկերները կ'ապշին կը մնան , երբ կը տեսնեն մեր ումբերուն ա՛յնքան կանոնաւոր արագութեամբ պայթումը , գիտե՞ս , ի՛նչ ահագին դժարութիւններ հարթուեցան .

- Մտիկ ըրէ՛ , Վռա՛մ , յարեց Քրիստափորը , մեկնելու խօսքը մոռցի՛ր առ այժմ , դուն հոս պիտի մնաս մէկ շաբաթ , պիտի ներկայ ըլլաս փորձերուս , ռումբ մըն ալ դո՛ւն պիտի պայթեցնես քո՛ւ ձեռքովդ , բաց աչքովդ պիտի տեսնես ուժանակին հրաշքնե՛րը ... :

Վռամշապուհ կ'անձկար , կը ցանկար ներկայ ըլլալ Քրիստափորի համբաւաւոր փորձերուն , սակայն , իր պատկանած Պատասխանատու Մարմինին պատուէրը միշտ մտքին մէջ էր , կ'արգիլէր իրեն Սօֆիա մնալու մէկ օրէ աւելի . և այդ մէկ օրուան մէջ պիտի պատրաստէր իր տեղեկագիրը Սօֆիայի պատրաստութիւններուն ու փորձերուն վրայ . սակայն , միւս կողմէ , կը մտածէր թէ ի՛նչպէս պիտի կրնար գաղափար մը կազմել այդ ամէնուն վրայ , առանց մօտէն տեսնելու .

- Պարո՛ն Քրիստափոր , ըսաւ , կ'աղաչեմ , ես ստիպուած եմ վաղը մեկնելու , ուստի , կը խնդրեմ որ , եթէ կարելի է , այսօր իսկ փորձ մը կատարէք , ես կը փափագիմ ներկայ ըլլալ .

- Շա՛տ աղէկ , յարեց Քրիստափոր , այսօր կ'երթանք կատարելու , արդէն մտադրած էի .

- Ուրիշ ո՞վ պիտի ներկայ գտնուի մենէ գատ , հարցուց Վռամշապուհ .

- Մէկ քանի մակեդոնացի ընկերներ , պատասխանեց Քրիստափոր , ազնիւ , պատուական ընկերներ , անոնք ալ շատ կը փափագին տեսնել . մէկէ աւելի անգամներ թախանձեցին .

- Ե՛րբ պիտի կատարես , հարցուց Վռամ անհամբեր շարժուձևով մը .

- Այսօր , պատասխանեց Քրիստափոր , եթէ կ'ուզես , մէկ ժամէն կը մեկնինք .

- Ո՞ւր , հարցուց Վռամ , շատ հեռո՞ւ է .

- Ո՛չ , պատասխանեց Քրիստափոր , մայրաքաղաքէն քանի մը քիլօմէդր հեռաւորութեան մը մէջ , Պիալիէֆէնտի անուն գիւղ մը կայ , Քնեաժօվա կոչուած բլուրին գագաթը պիտի ելլենք , ապահով , անկասկածելի , ամէն յարմարութիւն ունեցող տեղ մըն է , ո՛չ ոք պիտի տեսնէ , ո՛չ ոք պիտի լսէ . հոն պիտի երթանք , պիտի տեսնես , ի՛նչ հրաշքներ պիտի գործուին , մեր օրհնեալ պայթուցիկներուն շնորհիւ .

Վռամշապուհ կը խայտար :

Կէս ժամ ետքը , Քրիստափորի սենեակը նոր դէմքերով լեցուեցաւ , որոնց ամէնուն ալ ներկայացուցեալ Վռամշապուհ : կէս ժամուան միջոց մըն ալ խօսակցութիւնը շարունակուեցաւ և յետոյ , Քրիստափոր , Ռուպինա , Վռամշապուհ ոտքի ելան : Հոն գտնուող մակեդոնացի , հիւրերն ալ , որոնք Ներքին Կազմակերպութեան գլխաւոր անդամներէն էին . – Եօրկանճէֆ , Բանայօթ , Բայչէն , Պօրիս Բուլի , Քիէն Լիպաօֆ - , նոյնպէս Պուլկար յեղափոխականներէն երկու հռչակաւոր գործիչներ , անոնք ալ պատրաստուեցան ընկերանալու փորձարար Քրիստափորի , մոռցանք ըսելու , բացի վերև յիշուածներէն , կին հիւրեր ալ կը գտնուէին , Սիկին Սօֆի Արաշօ և Նատէժտա Աթալիան .

Թանձր ամպերու մէջէն արևը կը ճառագայթէր , երբ Քրիստափոր իր հիւրերով դուրս ելաւ սենեակէն :

Խօսակցելով վար իջան սանդուխներէն և խմբովին ուղղուեցան մօտակայ սրճարանը , ուր սովորաբար կը յաճախէր Քրիստափոր , Սօֆիա ոտք կոխած թրականէն ի վեր : Իր հիւրերուն հետ , այդ սրճարանին մէջ ուզեց ընել նախաճաշը :

Դեռ ուրիշ յաճախորդներու հետքը չէր նշմարուեր : Կարսօնը բերաւ Թէյի սպասները սեղանին վրայ շարեց , նոյնպէս պալքաններու ընտիր կարագ ու պանիր :

Շատ գուարթ էր Քրիստափոր . կը խօսէր , կը խնդար , կը կատակէր հիւրերուն հետ . մասնաւորապէս մեծ հաճոյք մը կը զգար Վոամշապուհ Քէնտիրեանի ներկայացութենէն :

Սեղանին վրայ խօսակցութեան միևնոյն նիւթը . պուկար , մակեղոնացի և հայ յեղափոխականներու այս հաւաքոյթին մէջ սրտաշարժ բան մը կար . դժբաղդութեան ու հալածանքի եղբայրակցութիւնը . բոլոր սիրտերը նոյն սեղանին շուրջը , միևնոյն զգացումով կը բաբախէին : Դիտելու կերելու բան մը կար . հոն . բոլոր ներկաներուն աչքերը սեւեռ ուած էին Քրիստափորի , ու նոյն պահուն Յեղափոխութեան անձնաւորումը , մարմնացումը կը թուէր .

Խանդավառ խօսակցութիւն մը կար շարունակուէր տակաւին անոնց միջև , մինչ դուրսը տտրեքները կը մարտնչէին , շառաչաձայն տեղատարափ մը , մրրիկ մը :

- Ընկերնե՛ր , ըսաւ Քրիստափոր , եթէ այս օդը շարունակէ , չեմ կարծեր թէ կարենանք փորձեր կատարել այսօր ,

- Մարտի օդ է , դիտել տուաւ Վոամշապուհ , երկու վայրկեան ետքը կը բացուի . կարելի չէ վստահութիւն ընել . չէ՞ք գիտեր , յարափոփոխ օդով սկսաւ , նոյն ձեւով պիտի վերջանայ այս ամիսը .

- Վռա՛մ , յարեց օրիորդ Ուուպինա , դուն այսօր հոս պիտի մնաս , տեսնենք ինչպէս պիտի անցնենք օրը , վաղն ալ պիտի մնաս հոս , լաւ գիտեմ , այս փոփոխական օդերով կարծեմ թէ քիչ մը դժուար է ճամբորդութիւնը :

- Օ՛ , օ՛ , օ՛ , ձայնարկեց Վոամշապուհ , կը ներես , օրո՛րդ , մէ՛կ բռայէ չեմ կրնար սպասել , այս քաղաքին մէջ , կ'աճապարեմ , գիտե՛ք , պէտք է շատով հասնիմ ու միանամ ընկերներուս , որոնք պէտք է մինչև ցարդ հասած ըլլան արդէն ,

- Ո՛չ , ո՛չ , Վռա՛մ , շեշտեց Քրիստափոր , սպասե՛ , տեսնենք , ի՛նչպէս կը դառնայ օդը , եթէ տեղատարափը դադրի և ամպերը փարատին , ա՛յսօր իսկ կ'ընենք փորձը .

Յաճախորդները ներս կը խուժէին , շատերը թրջուած , յորդ անձրեւէն կը փախչէին ու կ'ապաստանէին սրճարանին մէջ , որուն կեղդոնը կը վառէր խոշոր , հսկայ վառարան մը .

Մէկ ժամէն աւելի տեւեց խառնակ օդը , բութ , անձրև , ձիւն , կարկուտ , փոթորիկ , և յեղափոխականներուն խօսքը փակուած մնաց հոն , սրճարանին անկիւնը , իր վրայ հրաւիրելով միւս յաճախորդներուն հետաքրքրութիւնը :

Քրիստափոր Միքայելեանը , չորս ամիսներէ ի վեր հաստատուած Պուլկարիոյ մէջ , գրեթէ կը ճանչնար բոլոր կարենոր դէմքերը , պետական թէ՛ քաղաքային և թէ՛ զինուորական շրջանակներուն մէջ . կը սիրուէր , կը յարգուէր , կը պաշտուէր գրեթէ բոլոր դասակարգերէն , որոնք իրմով կը ճանչնային հայկական յեղափոխութիւնը , և իր մէջ մարմնացած կը կարծէին բովանդակ հայ ցեղին ծառացած Վրէժը , դեռ անպատիժ արիւնեանց գահին ծառաց Վրէժը , դեռ անպատիժ , արիւնեանց գահին վրայ սոնքացող աննման դահիճին դէմ :

- Պարո՛ն Քրիստափոր , ըսաւ Եօրկանճէֆ , կ'երեւայ այսօր չպիտի կրնաք կատարել փորձերը . չէ՞ :

- Տեսնենք . յարեց Քրիստափոր , վայրկեանէ վայրկեան կրնայ բացուիլ , տեղատարափը չափազանց տեւեց , կը յուսամ թէ պայծառ , գեղեցիկ երկինք մը պիտի յաջորդէ այս տարերքներու խառնակութիւններուն .

- Այնպէս է , յարեց Վոամշապուհ , ե՛ս ալ կը յուսամ թէ շուտով պիտի բացուր օդը , մարտը չը գիտեր թէ ճամբորդ եմ ես և թէ՝ վայրկեան չեմ կրնար սպասել :

Ներկաները , որոնք թէյի սեղանին շուրջը հաւաքուած էին , միահամուռ խնդացին :

- Վռա՛մ , ըսաւ Ռուպինա , մարտի հո՛գը հասեր էր , ճամբորդութի՞ւնդ պիտի մտածէր :

- Կը տեսնե՞ս , յարեց Քէնտիրեան , հի՛մա պիտի բացուի :

Նոյն պահուն երկինքը գոռաց , ուժգին տեղատարափ մը , սրճարանը խուժեցին ուրիշ նոր յաճախորդներ , գրեթէ զիրար կոխկոտելով , շատերը՝ առանց անձրեւնոցի .

- Տեսա՞ր , Վռա՛մ , ծաղրեց Ռուպինա , ի՞նչպէս բացուեցաւ օդը .

Վոամշապուհի սիրաւ կը սեղմուէր , կը մտածէր թէ ինք չպիտի կրնար շարունակել ճամբորդութիւնը , եթէ օդերը չը փոխուէին : Կամաց կամաց կը համակեցաւ սակայն . կը խոնարհէր հարկին առջև , որ կը ներկայանար , կապելով զինք այսպէս Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ , ուր յատկապէս եկած էր արդէն մօտէն տեղեկանալու համար գործերու վիճակին : Սակայն , միւս կողմէ , կը խորհէր , եթէ պիտի ստիպուէր օրերով արգիլուած փակուած մնալ , զօնէ պէտք էր ժընել ինքզինքը և բացատրէր իր յապաղումին պարագաները .

- Պարո՛ն Քրիստափոր , ըսաւ , ես այս քաղաքին ձմեռը չեմ տեսած , արդեօք երկար պիտի տեւե՞ն այս անբարեխառնութիւնները .

- Ինչո՞ւ այդքան կը մտահոգուիս . Վռա՛մ , կը շտամբեց Քրիստափոր , այսօր չեմ յուսար թէ բացուի օդը , հետևաբար , փորձերը վաղուան կը ձգենք , հոգ չէ՛ , այս գիշեր ինծի հիւր պիտի մնաս , վաղը պտոյտի կ'ելլենք ընկերներով և փորձ մը կը կատարենք , կը տեսնես , ո՛րքան առաջադիմած է գործը ...

Սեղանին շուրջը բոլորուած , ժամերով կը խօսակցէին այսպէս , սպասելով որ տեղատարափը դադրէր և իրենք դուրս նետուէին սրճարանէն , ուր ապականուած էր մթնոլորտը մարդկային արտաշնչումներէն ու գարշահոտ բուրումներէն :

Սակայն օդը խառնակ էր , բառքուելու ո՛ր և է յոյս չը կար դեռ . պահ մը կը գաղբեր անձրևը , կը լռեր քամին ու կը հանդարտեր փոթորիկը , բայց քիչ յետոյ , դարձեալ կըսկսէր աւելի՛ կատաղի , աւելի՛ ուժգին , այնպէս որ ո՛չ ոք կրնար ոտքը սրճարանէն դուրս նետել :

Այս վիճակը տևեց երկու ժամէն աւելի , յանկարծ դադարեցաւ անձրևը , լռեցին քամիները , մեղմացաւ փոթորիկին թափը :

Յաճախորդներէն շատերը , գործի տէրեր , ակամայ բանտարկուած ժամերէ ի վեր , հապճեղով դուրս կը վազէին , և սրճաճանը տակաւ կը պարպուէր և մթնոլորտը կը մաքրուէր շոգիներէն :

Կը մնար դեռ Քրիստափոր իր ընկերներուն ու հիւրերուն հետ , սպասելով որ բոլորովին բացուէր օդը :

Հիւրերը հետզհետէ մեկնեցան և սեղանին շուրջը մնացին միայն Քրիստափոր , Վոամշապուհ և Ռուպինա :

Վոամշապուհ , ճամբորդութեան յոգնութենէն քիչ մը տկարացած կըզգար ինքդինք , թէ մըն ալ ուզեց :

- Կառսօ՛ն , կանչեց Քրիստափոր , մեզի երեք թէյ ալ բե՛ր :

Եւ Կառսօնը նորոգեց գաւաթները :

Խօսակցութիւնը թէյին հետ նորոգուեցաւ :

- Վռա՛մ , ըսաւ Քրիստափոր , իր արդէն լուրջ դէմքին տալով աւելի լուրջ արտայայտութիւն մը , շիտակը պիտի խօսիս , քեզի բան մը պիտի հարցնեմ :

Յետեյ , դառնալով օրիորդ Ռուպինային .

- Կը լսե՞ս , Ռուպինա՛ , ըսաւ շեշտելով , այս խօսակցութիւնը պէտք է գաղտնի պահուի , մտերմական հանգամանքէն պէտք չէ՛ դուրս ելլէ :

- Պարո՛ն Քրիստափոր , բողոքեց Ռուպինա , ջղայնոտ շարժումով մը , մինչև զարդ իմացա՞ծ էք թէ Ռուպինայի բերնէն գաղտնիք մը դուրս ելած ըլլայ .

- Մի՛ նեղանար , աղջի՛կս , դիտել տուաւ Քրիստափոր , գաղտնապահութիւնը , մանաւանդ , դաւադրական գործողութիւններու մէջ , ինչպէս է մերինը , անհրաժեշտ , էական պայման մըն է յաջողութեան :

- Իրաւունք ունի պարոն Քրիստափորը , օրիո՛րդ , յարեց Քէնտիրեան , առանց գաղտնիքի ո՛չ մէկ կազմակերպութիւն կրնայ ապրիլ ու պահել իր վարկը .

- Հետեւաբար , շարունակեց Քրիստափոր , ինչպէս ըսի , մեր միջեւ գաղտնի մնալու պայմանաւ , քեզի բան մը պիտի հարցնեմ Վռա՛մ .

- Հարցո՛ւր , պարո՛ն Քրիստափոր , յարեց Վոամշապուհ , եթէ գիտեմ , օտարաստ եմ գոհացընել հետաքրքրութիւնդ .

- Պէտք է գիտնաս , շարունակեց Քրիստափոր , որովհետեւ Վիշապի Պատասխանատու Մարմինին կը վերաբերի , գուտ ներքին խնդի՛ր մը .

- Խօսէ՛ , պարո՛ն Քրիստափոր , խնդրեց Վռամշապուհ .

- Դաշնակցութեան Խորհուրդին հրաւիրագիրը ըստացաք , չէ՞ .

- Այո՛ , ստացանք . պատասխանեց Քէնտիրեան , և այդ հրաւիրագրին պատասխանը պատրաստելու նպատակով ժողով մը գումարեցինք . Սաֆօն կարդաց նամակը , նոյնպէս ուրիշ նամակներ ալ .

- Ուրիշ ի՞նչ նամակներ . ընդմիջեց Քրիստափոր .

- Բարեկամներէ , ընկերներէ , պատասխանեց Քէնտիրեան , արտասահմանի զանազան կենդրոններէն .

- Շա՛տ լաւ , յարեց Քրիստափոր , յետո՛յ ի՛նչ անդրադառնանք այդ նամակներուն . Արեւմտեան Բիւրօն ինծի համար ի՞նչ գրած էր , արդեօք կրնա՞մ իմանալ .

- Ինչո՞ւ չէ , յարեց Վռամշապուհ , չէ՞ եր անդամ ես , իրաւո՛ւնք ունիս գիտնալու , չէ՞ .

- Ո՛չ , ընդմիջեց Քրիստափոր , իբրեւ անդամ չէ՛ որ կը փափագիմ գիտնալ նամակին պարունակութիւնը , այլ իբրեւ պարզ ընկեր մը .

- Բիւրօն , շարունակեց Քէնտիրեան , Դաշնակցութեան Խորհուրդին մօտալուտ գումարումը ծանուցանելէ յետոյ , յանձնարարած էր մեր կողմէն ներկայացուցիչ մը կարգել , միեւնոյն ժամանակ թելադրած էր այդ ընտրութիւնը կատարել քու անձին վրայ .

- Կը յիշե՞ս այդ վերջին հատուածը , հարցուց Քրիստափոր , ի՞նչ առիթով կամ ի՞նչ պարագաներու տակ իմ անունս առաջարկած էր Բիւրօն .

- Ներկայացուցիչի բոլոր հանգամանքները կրող , միակ արժանաւոր անձնաւորութիւնը կը ներկայացնէր զքեզ , և կը յորդորէր որ քեզ ընտրէինք . պատասխանեց Քէնտիրեան . որովհետեւ , կը գրէր Բիւրօն , Քրիստափոր արտասահմանի մէջ կը գտնուի արդէն , դիրքին է անոր փոխադրութիւնը ժընէվ , ևն .

- Շա՛տ լաւ , հարցուց Քրիստափոր , շահագրգիռ դէմքով մը , Բիւրօյին այդ թելագրանքին հանդէպ ի՛նչ վերաբերում ցոյց տուաւ Վիշապի Պատասխանատու Մարմինը .

- Գիտես արդէն , պատասխանեց Քէնտիրեան , չուս անդամներ էինք , Սաֆօն , Աշոտը , Թորգոմ ու ես , նամակը նկատի առնուեցաւ րաւական երկար տեւող վիճաբանութենէ մը վերջ . պատգամաւորին ընտրութիւնը կատարուեցաւ , և զիս ընտրեցին , իսկ ես իմ քուէս քեզի համար տուած էի :

Քրիստափոր Միքայէլեան լռեց , կը խոկար :

- Պարո՛ն Քրիստափոր , յարեց Վռամշապուհ , ո՛ր և է թագուն դիտում կամ յետմտածում մի՛ ենթադրէր այս գործին մէջ , արդար ըլլալու համար , պէտք է խոստովանիմ թէ՛ մեր

ընկերներէն Աշոտ ու Թորգոմ կը փափագէին Դաշնակցութեան Խորհուրդին գրկել թրքահայ պատգամաւոր մը , և թէ՛ այդ փափագին միացաւ նոյնիսկ Սաֆօն , ինք որ ռուսահայ մըն է . մի՛ երբեք կարծեք թէ քու անձիդ դէմ հակակրանք մը կամ ո՛ր և է յոռի նկատում մը գոյութիւն ունեցած ըլլայ ընկերներուն մէջ . հաւատա՛ , պարո՛ն Քրիստափոր , քանի՛ քանի անգամներ ողբացած ենք բացակայութիւնդ , գիտե՛ս , դժուար պարագաներու մէջ յաճախ յիշած ենք քեզ և քու ներկայութիւնդ միշտ փափագւած է մեր ժողովներուն մէջ ... :

- Ես արդէն չպիտի ընդունէի Ժընէվ երթալ , եթէ նոյնիսկ իմ վրայ կայացած ըլլար ընտրութիւնը , յարեց Քրիստափոր , չես գիտեր , Վոա՛մ , ո՛րքան փարած եմ այս գործին , քանի՛ կրկնեմ փորձերը , ա՛յնքան կ՛աւելնայ , կը բազմապատկուի գէրս դէպի անձիս , իմ անուանս շուրջը չափազանց թափառած է Պատասխանատու Մարմինը . կրնայիք երկտողել մը խնդիրը հաղորդել ինծի և ես կը կարգադրէի վայրկենապէս , առանց ձեզի յոգնութիւն տալու :

- Մտածեցինք գրել քեզի , յարեց Քէնտիրեան , ընկերներէն Աշոտը նիստին մէջ յայտարարեց թէ՛ Բիւրօն պէտք էր Քրիստափորի գրէր , նախապէս ստանար անոր կամքը , և յետոյ ընէր այդ թելադրութիւնը Վիշապի Պատասխանատու Մարմինին .

- Հոգ չէ՛ մ հոգ չէ՛ , կրկնեց Քրիստափոր գլուխը ճօճելով , ուրախ եմ որ քեզ ընտրէր են պատգամաւոր , Վոա՛մ , ինչպէս ըսի , եթէ զիս ընտրէիք , պիտի մերժէի . իմ բոլոր մտասէւեռումս , իմ բոլոր մտատիխարս կենդրոնացուցած եմ Վիշապի Ձեռնարկին մէջ , կը հասկընաս թէ ի՛նչ ըսել կ՛ուզեմ .

- Ա՛խ , հառաչեց Վոամշապուհ , պիտի հասնի՞նք արդեօք այդ օրուան , պիտի տեսնեն՞ք մեր աչքերով Դահիճը պատծուած ... :

- Վոա՛մ , շարունակեց Քրիստափոր նոյն դ օնով , Ձեռնարկը , վստահ եմ , պիտի պսակուի փառաւոր յաջողութեամբ մը , պիտի իրագործուի Գաղափարը , որ ինը տարիներէ ի վեր կը չարաչարէ մեր բովանդակ էութիւնը , պիտի պատժուի Մեծ Մարդասպանը , սակայն , ինդիի չէ՛ մեր կեանքը , եթէ մենք մեռնինք , ապրողները պիտի տեսնեն .

- Բայց ինչո՞ւ մեռնինք մենք , յարեց Վոամշապուհ .

- Վոա՛մ , ըսաւ Քրիստափոր , անձը կարելորութիւն չունի գաղափարին քով . մարդիկ կ՛անցնին , գործը կը մնայ , անձերը կը մեռնին , գաղափարը կ՛ապրի , չէ՞ .

- Անշո՛ւշտ , հաստատեց Վոամշապուհ , եթէ այդ հաւատքը չըլլայ , Յեղափոխութիւնը չի կրնար ապրիլ , ամէն անհատ , ամէն ցեղ , ամէն ազգ . ամէն ժողովուրդ , իր հաւատքո՛վ միայն կրնայ պահպանել իր գոյութիւնը . ի՞նչ են կրօնքները .

- Յեղափոխութիւնը կրօնք մը չէ՞ , ընդմիջեց Քրիստափոր , Մարդկութեան վերջին Կրօ՛նը , որուն հաւատացեալներուն թիւը պիտի բազմանայ և երկրագընտիս բոլոր մասերուն վրայ պիտի ճիւղեր արձակէ , Վոա՛մ , երբեմն կը խորհի թէ՛ Ապտիւլ Համիտի գոյութիւնը հարկաւոր է մե՛ր իսկ գոյութեան համար .

- Ի՞նչպէս ...

- Գիտե՞ս , շարունակեց Քրիստափոր , ինչի՞ կը նմանի այդ Բռնաւորը .

- Ինչի՞ ...

- Հովահարի մը , պատասխանեց Քրիստափոր , եթէ յեղափոխութիւնը նմանացնենք հրաշէկ ածուխին , Ապտիւլ Համիտ հովահարի դէր մը կը կատարէ , չէ՞ . շարունակ հրահարելով կրակը , և վառ պահելով զայն . եթէ չըլլար իր բռնութիւնը , եթէ չըլլային իր բարբարոսութիւնները , չը պիտի ծնէր յեղափոխութիւնը , և , ծնելէ յետոյ , չպիտի կընար ապրիլ .

- Ուրեմն , դիտել տուաւ Վռամշապուհ , ինչո՞ւ այս պատրաստութիւնները , ինչո՞ւ մահափորձի ծրագի՛րը ... :

- Վռա՛մ , յարեց Քրիստափոր , գիտե՞ս ինչո՞ւ , եթէ մէկ քանի տարի ալ տրէ այս րեժիմը , համիտական կառավարութեան կ'ակնարկեմ , եթէ մէկ քանի տարի ալ շարունակէ այս կանոնաւոր վիճակը , հաւատա՛ , մէ՛կ հայ չպիտի մնայ հայրենի հողին ծոցը . կը տեսնես , գունդագունդ կը գաղթեն արտասահման , ուր կ'այլասերին , կը կորսնցնեն իրենց ասանդութիւնները , լեզուն , պատմութիւնը , կրօնքը , կը կապկեն , կ'ընդօրինակեն ուրիշ ժողովուրդներու յոռի սովորոյթները , մէկ խօսքով , կը ձուլուին . ահա՛ գաղթողներուն վիճակը . իսկ անոնք որ կը յամառին ապրիլ այն դժոխքին մէջ , որ թուրքիա կը կոչուի , անոնք որ կը կառչին իրենց հայրենիքի լեռներուն , ժայռերուն , սրբազան ւաւերակներուն ու իրենց նախահայրերու գերեզմաններուն , պիտի փճանա՛ն , պիտի մէկիկ մէկիկ անհետանան , պիտի բնաջնջուին . արդ , Դաշնակցութեան նուիրական պարտականութիւնը պիտի ըլլայ մէջտեղէն վերցընել Չարիքը , նոր դարերու Ներո՛նը , Կարմիր Գազա՛նը ... :

Քրիստափոր նոյն պահուն կը նմանէր ներշնչեալ առաքեալի մը , մարգարէի մը , որ ապագան կը քարոզէր յուսահատ ժողովուրդներուն , և լուծի տակ հեծողներուն կ'աւետէր նոր կեանքի մը թագաւորութիւնը , Ազատութեան , Հաւասարութեան և Եղբայրութեան երրորդութիւնը , Արդարութեան Արևին տա՛կ ծաղկած ու բարգուաճած ... :

ԻԲ

Քէնտիրեան այն օրը Սօֆիա մնաց , Քրիստափորի հիւր , գիշերը միասին անցուցին , որոշեցին յաջորդ օրը կատարել փորձը , եթէ օդը թոյլատրէր :

Արևը ծագեցաւ , զարնանային գեղեցիկ արև մը , եռուզեռ սկսաւ Սօֆիայի փողոցներուն մէջ , զբօսասէր ընտանիքներ , ամիսներով բանտարկուած իրենց բնակարաններուն մէջ , դուրս կը հոսէին , կառքերը կը խաչաձևէին զիրար :

Նորածագ արևի մը գաղջ շողերուն տակ , կեանքը կը վերընձիւղէր :

Քրիստափոր ու Վոսմապուհ , ընթերցողներուն ծանօթ հիւրերուն և ընկերներուն հետ , նոյն օրը պատրաստուած էին երթալ Քնեաժօվա բլուրը , Պալի էֆէնտի գլիւղին մօտ , ուր պիտի կաարէին ռումբի փորձը :

Շրջակայ դաշտերը , բլուրները ծածուած էին ձիւնի վերմակով մը , տեղ տեղ միայն , ձորերուն մէջ ու լեռներու ստորոտները , սև բոլորակներ կը տեսնուէին , սպիտակ շրջանակներով . ամիսներէ ի վեր ձիւնին ներքև մնացած սև հողերը , որոնց շուրջը դեռահալ ձիւնը կը ժպտէր տակաւին :

Ճամբայ ելաւ յեղափոխականներուն թափորը : Քրիստափոր ` պայուսակի մը մէջ դրած էր քանի մը ռումբեր , ամէն մէկը տասը սանդիմէզր տրամագծով : Խմբովին դուրս ելան քաղաքէն և գուարթ խօսակցութիւններով կը համառօտէին ճամբուն երկայնութիւնը :

Երբ մէկ երկու քիլօմէդր հեռացան մայրաքաղաքէն , ռազմաշունչ երգերով սկսան օդը թնդացնել , մանաւանդ Մակեդոնացիները , որոնք չափազանց խանդավառ կ'երեւային այդ օրը :

Հասան վերջապէս Քնեաժ Օվա բլուրին գանգաթը , ուրկէ պիտի նետէին ռումբերը : Ճամբան , Քէնտիբեան կը թախանձէր ինք իր ձեռքով նետել ռումբին մէկը , բայց Քրիստափոր կ'ընդդիմանար առարկելով թէ ` դեռ խակ էր ինք և անվարժ , նոյն թախանձանքը ` Ռուպինայի կողմէն , որ , ինչպէս պիտի տեսնենք առաջիկային , արտակեղորոն , ջղայնոտ , խիզախ ու յաւակնոտ աղջիկ մըն էր :

Տակաւին փորձին չէր ձեռնարկուած , երբ ներկաներուն միջեւ բանավեճ մը ծագեցաւ :

Ներկաներէն շատերը մասնակցեցան բանավեճին , որ շատ երկար տեւեց : Կոստան , ուրիշ անունով Արշակ , կովկասահայ ընկերներէն , նոյնպէս Ստեփան Այվազեան , Պետօյի (Պետրոս Սերէմճեան) հօրողբայրը , պուկարահայ ընկերներէն , և քանի մը մակեդոնացիներ , գրեթէ բոլոր հակառակ էին փորձին :

Ստեփան Այվազեան , խիստ վտանգաւոր կը գտնէր փորձը կատարել այդ բլուրին վրայ , տեղը շատ անյարմար է կ'ըսէր , ու կը պաղատէր .

- Պարո՛ն Միքայէլեան , հրաժարէ՛ այսօր այդ փորձէն , խնայէ՛ կեանքիդ . մի՛ գործեր այդ անխոհեմութիւնը .

- Կը խնդրեմ որ , կ'ըսէր Քրիստափոր որդողած , չը խառնուիք իմ գործիս , ես քննած ու փորձած եմ , պէտք չունիմ ուրիշի խորհուրդներուն :

- Բայց , կը պաղատէր Ստեփան Այվազեան : տեղը շատ անյարմար է կ'ըսեմ :

- Տեղը շա՛տ յարմար է , կը պնդէր Քրիստափոր :

- Ո՛չ , ներեցէ՛ք , պարո՛ն Քրիստափոր , մե՛նք ալ քիչ շատ տեսած ենք այդ ռումբերը . կ'աղաչեմ . կարելորութիւն տուէ՛ք պարոն Այվազեանի դիտողութեան , որ շատ բանաւոր է . ե՛ս ալ վտանգաւոր կը գտնեմ այս տեղին վրայ փորձ կատարելու ձեր գաղափարը , մի յամառիք , վարժուեցէ՛ք ուրիշի խօսքը չ'արհամարդելու :

- Պարո՛ն Արշակ , հեզնեց Քրիստափոր , ձեր այդ խելքը , ձեր այդ փիլիսոփայի մտածումները , ձեր թանկագին փորձառությունները ձեզի՛ վերապահեցե՛ք . կ՛աղաչեմ , լո՛կ գիտեցե՛ք , միջամուխ մի՛ ըլլաք իմ գործիս :

Բանավեճ կը տաքնար , միւս կողմէ , Մակեդոնացիներէն քանի մը կարեւոր դէմքեր , փորձ յեղափոխականներէն , Ստեփան Այվազեանի դիտողությունները կը հաստատէին իրենց միջև :

- Պարո՛ն Քրիստափոր , ըսաւ ռուսերէն այդ յեղափոխականներէն մէկը , մի՛ գործէք այս անձնասպանութիւնը , կը տեսնէք , ամէն կողմէ դիտողություններ կը տեղան , եկե՛ք այսօր մի՛ կատարէք այս փորձը .

Քրիստափոր , մուխ նկարագրի , երկաթէ մարդը , կը յամառէր , և քանի՛ կրկնուէին իրեն դէմ յարձակումները , այնքան կ՛արմատանար իր մէջ յամառութիւնը , հպարտ հոգի , չէր հանդուրժէր լսելու դիտողություններ անոնցմէ , որոնց ապիկարութիւնը կը տեսնէր իր կարողութեան քով :

Սակայն Ստեփան Այվազեան ալ ո՛չ նուազ յամառ մըն էր , մանաւանդ երբ բացարձակ համոզում գոյացուցած էր , մանաւանդ երբ բացարձակ համոզում գոյացուցած կ՛ըլլար իր կարծիքներուն առողջութեան ու ճշմարտութեան մասին : Կը ճանչնար , կը յարգէր Միքայէլեանը , իբրեւ անկեղծ յեղափոխական մը , բայց , միեւնոյն ժամանակ , կ՛ատէր անոր յամառութիւնները , որոնք յաճախ աղետալի հետեւանքներ կ՛ունենային . ինք կը շօշափէր , աչքովը կը տեսնէր վտանգը , որուն առաջքը կը փափագէր առնել ամէն անարգանքի գնով .

- Պարոն Միքայէլեան , ըսաւ դարձեալ աղերսագին ձայնով մը , կը տեսնէք , ամէն կողմէ դիտողությունները կը տարափին , մի՛ յամառեք , ահա նորէն կըսեմ , տեղը չի՛ յարմարիր , և յետոյ , ռումբին բնութիւնը դեռ չէ՛ քննուած , կեանքի հետ կատակ չըլլար ...

- Օ՛ , Բացազանչեց Քրիստափոր , թոյլ տու էք , բարեկամներ , ես մեռնի՛լ կ՛ուզեմ , մեռնի՛լ .

Ստեփան Այվազեան , Քրիստափորի այս խօսքերուն վրայ , մոլտալով առաւ քալեց , ետնէն ուրիշներ , և ուրիշներ , ներկաներէն կարևոր մաս մը ձգեցին գացին : Վռամշափուհ , երբ Քնեաժօվա բլուրը պարպուած տեսաւ հետաքրքիր այդելուներէ և մէկ քանի ընկերներէ , որոնք Կոստանի և Ստեփանի հետ հեռացած էին , մօտենալով պարոն Միքայէլեանի .

Քրիստափո՛ր , ըսաւ , ե՛ս պիտի նետեմ ռումբը , չէ՞ .

- Կեանքիդ մէջ գործածե՞ր ես երբէք , հարցուց Միքայէլեան .

- Ո՛չ , պատասխանեց Վռամշափուհ ,

- Ուրեմն , յարեց Միքայէլեան , ի՞նչպէս կ՛ուզես փորձել , ռումբ է ասիկա , ռո՛ւմբ , մահուան հետ խաղա՛լ է , սիրելի՛ս , այս անգամ լո՛կ դիտող եղի՛ր , ուրիշ անգամ դո՛ւն կը նետես :

Վռամշապուհ այն ա՛ստիճան աղաչեց , պաղատելով խնդրեց , որ Միքայելեան պարտաւորուեցաւ ռումբին մէկը յանձնել անոր , պատուիրելով միևնոյն ժամանակ սպասել իր ազդանշանին զսպանակը ճնշելու համար :

Վռամշապուհ , բլուրին գագաթը կեցած , ռումբը ձեռքին մէջ , աչքերը յառած Քրիստափորի որ հեռուն , եօթը մէդր խոր ու ցած գետնի մը վրայ կը կենար , կըսպասէր ազդանշանին :

Արևը կը բարձրանար հորիզոնէն և կէս օրը կը մօտենար , ցրտաշունչ զեփիւտ մը կը թռչէր բլուրին գագաթէն . բովանդակ բնութիւնը կը ծիծաղէր այն օրը :

Միքայելեան , ազդանշանը տալէ առաջ , ազդարարեց ներկաներուն հեռանալ , աւելի հեռանալ , հեռուէն դիտել միայն :

Օրիորդ Ռուպինա , և իր քոյրը , որ ներկաներուն մէջ կը գտնուէր , նոյնպէս մակեդոնացի յեղափոխականները , ինչպէս նաև ուրիշ ընկերներ , ետ ետ քաշուեցան , բաւականաչափ հեռաւորութեան մը մէջ :

Վայրկեանէ վայրկեան կըսպասէին , բոլոր աչքերը ՝ յառած ռումբին , որ Վռամշապուհի ափին մէջ կը գտնուէր :

Անէր զգուշութիւններ ձեռք առնուած էին , կը մնար նետել ռումբը :

Վռամշապուհ տեսաւ , Միքայելեան տուած էր ազդանշանը :

Ռումբը բռնող ձեռքը հեռացնելով ու պարզելով օդին մէջ , զսպանակը կոխեց ... :

ԻՂ

Սօֆիա սարսափի մէջ էր :

Փողոցներուն մէջ արտասովոր եռուզեռ մը , մարդկային ալեկոծութիւն մը , գլխաւոր հրապարակներուն մէջ խումբ խումբ հաւաքօյթներ , խորհրդաւոր ակնարկներ , փսփսուքներ , ժանտարմաները կը վազվզէին , Քաղաքապետութեան պալատին առջև կառքեր կեցած , խանութները սովորականէն կանուխ գոցուած , բովանդակ մայրաքաղաի բնակչութիւնը խուճապի մատնուած էր այն օրը :

- Ի՞նչ եղած է, կը հարցնէին իրարու.

- Ոճի՛ր մը , սոսկալի տռա՛մ մը , կը փսփսային :

Եւ ամբոխային վետվետումը կը ծաւալանար , հակասական շշուկներ , բերնէ բերան պատմուած , կը փոխադրուէին բոլոր խաւերուն մէջ , Պուկկարիոյ մայրաքաղաքին մէկ եզերէն միւսը :

Կառավարական պալատին դուռը կեցած .

- Իմացա՞ք , կ'ըսէր պետական յայտնի անձնաւորութիւն մը , իր շուրջի պաշտօնէաներուն , լսեցի՞ք Քնեաժօվայի եղերական դէպքը :

- Սօսկալի՛ է , սոսկալի՛ , կը կրկնէին պաշտօնէաները , պատմելով իրարու օրուան դէպքը :

Ահաւասիկ իրողութիւնը :

Օրիորդ Ռուպինան , իր քոյրը , և միւս յեղափոխականները , որոնք ներկայ եղած էին Քրիստափորի և Վռամշապուհի կողմէն կատարուած ռումբի փորձին , երբ հեռուէն տեսած էին ռումբին պայումը Քէնտիրեանի ձեռքին մէջ և վայրկեանական անջատումը հեք զոհի աջ թեւին , և զարհուրելի ջախջախումը , տարտըզումը ` անոր գլխուն կիսամասին , երբ անդին , եօթը մէկը ցած գետնին վրայ դիաթաւալ անկումը տեսած էին Քրիստափորին , անմիջապէս վազած էին քաղաք և աղէտը հաղորդելով Քաղաքապետութեան բժիշկներ ուզած էին , տանելու համար Դէպքին վայրը :

Եւ այս բօթը հինգ վայրկեանի մէջ ըրած էր Սօֆիայի շրջանը , և այս բօթին արձագանգն էր որ թաղէ թաղ , ականջէ ականջ հնչելով , ահաբեկած էր երկսեռ բնակչութիւնը :

Իսկոյն , ոստիկանութեան կողմէն հեծեալ թէ հետեւակ զինուորներ , ինչպէս նաև Քաղաքապետութեան կողմէն քանի մը բժիշկներ փութացին Քնեաժ Օվա , Ռուպինայի քրոջը , և միւս ականատես վկաներուն առաջնորդութեամբը :

Հասան բլուրին գագաթը :

Քստմնելի՛ տեսարան ... :

Քաղաքապետութեան բժիշկները ձեռնարկեցին անմիջապէս քննութեան : Նախ դիագնոսթիկն կատարեցին Քրիստափոր Միքայէլեանի վրայ , որ աչքերը բաց , անշնչացած , փռուած էր գետին :

- Զարմա՛նք , գոչեց բժիշկներէն մէկը , Միքայէլեանի ծանօթ յեղափոխականներէն , անհաւատալի՛ է մահը , նուաղա՛ծ ըլլալու է միայն :

Միւս բժիշկը մօտեցաւ և միեւնոյն զարմանքը յայտնեց :

Սակայն Քրիստափոր մեռած էր , ձիւներուն վրայ պառկած ` անկենդան :

Բժիշկները , զարմանահար , աւելի առաջ տարին իրենց գննութիւնը :

- Աւա՛զ , բացագանչեց յեղափոխական բժիշկը , գոհի դիակին վրայ հակած , ահա՛ , ահա՛ , փոքրիկ վերք մը կայ , ճիշդ սրտին վրայ . ռումբէն ամենամանր մասնիկ մը ցատկած , սահած անցած է արծաթէ ծխատուփին մակերեսէն և ծակելով կուրծքը , մխրճուած է ներսը , և հասած պատռած է սրտին մէկ երակը , ահա՛ , ահա՛ ... :

Երկրերդ բժիշկը հաստատեց միեւնոյն դժբաղդ իրականութիւնը :

Յետոյ անցան տարաբազդ Քէնտիրեանի անճանաչ դիակին : Աջ թելը փրթած զատուած էր ուսէն , գլխուն կէսը չը կար մէջտեղ , իսկ ինքը , Վռամշապուհ , ձիւնին վրայ ինկած յօշոտուած , ջարդուփշուր , ա՛լ չէր շինչեր ... :

Քանի մը քայլ անգին , բլուրին վարի կողին վրայ , պայուսակ մը կը նշմարուէր , Քրիստափորի ռումբերուն պայուսակը :

Եղերական , զարհուրելի եղելութիւնը հաստատուած էր , այդ օրուան ռումբի փորձին գոհերն էին անոնք , երկու Դաշնակցականները , Քրիստափոր ու Վռամշապուհ :

Անսահման եղաւ սուգը Պուլկարիոյ մայրաքաղաքի բովանդակ բնակչութեան , մանաւանդ , մակեդոնացի յեղափոխականներուն և հասարակ ժողովուրդի խաւերուն մէջ :

Հեռագրական գործակալութիւնը վայրկենապէս աշխարհիս գլխաւոր կեդրոններուն հաղորդեց օրուան զարհուրելի դէպքը :

Ժընեվի մէջ , նոյն իրիկունը հասած ըլլալով հեռագրական գոյժը , Արեւմտեան Բիւրօյին համար շանթահարիչ եղաւ :

Նկար Կարօ (Վիշապի օժանդակներէն)

Լոնտոն , Բարիզ , Պերլին , Վիեննա , Բեկթերսպուրլ , Թիֆլիզ , բոլոր մայրաքաղաքները , գրեթէ միեւնոյն բոպքին , ստացան լուրը :

Ամերիկայի , Պոնկարիոյ , Եգիպտոսի և արտասահմանի միւս գաղթային հայաշատ կեդրոններուն մէջ այս կրկնակի մահերուն սուգը մեծ եղաւ և անհուն , սգահանդէսները յաջորդեցին իրարու ետեւէ :

Պալքանեան Գօմիթէն գիշերուընէ ծածկագիր հեռագիր մը ստացաւ Ժընեվէն . Արեւմտեան Բիւրօն կը խնդրէր յետաձգել գոհերուն թաղումը , սպասելով Դաշնակցութեան պատգամաւորներուն , որոնք Սօֆիա պիտի հասնէին առաջին շոգեկառքով , ներկայ ըլլալու յուղարկաւորութեան , որ արտակարգ , աննախընթաց շքեղութեամբ մը պիտի կատարուէր :

Ժընեվէն հասան Դաշնակցութեան ներկայացուցիչները , ինչպէս նաեւ Ֆիլիպպէն , Վառնայէն և Պուլկարիոյ միւս արեւեր քաղաքներէն , բոլոր ` ներկայ գտնուելու ռումբի գոհերուն յեղարկաւորութեան հանդէսին :

Արդարեւ , ինչպէս մենչեւ ցարդ կը պատմուի , Պուլկարիոյ մայրաքաղաքը , անյիշատակ դարերէ ի վեր , երբէք չէր տեսած այսքան վեհաշուք , այսքան հոյակապ և այսքան սրտառու յուղարկաւորութիւն մը :

Պետական հոչակաւոր մարդեր , պաշտօնի վրայ թէ անպաշտօն , նախկին նախարարներ , երեսփոխաններ , փաստաբան , բժիշկ , երկրաչափ , մտաւորական թէ առնտըրական , քաղքենի թէ գեղջուկ , ազնուական թէ ռամիկ , ժողովուրդը բովանդակ , մայրաքաղաքը , քաղաքային թէ զինւորական իշխանութիւնները . բոլոր քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները , հազարներէ , տասնեակ հազարներէ բաղկացած թափուր մը , առաջեւէն ու ետեւէն նուագախումբեր , քաղաքային թէ զինւորական , Սօֆիայի գլխաւոր պողոտաներէն անցնելով , պատուհաններէն անթիւ ծաղկեփունջեր կը նետուէին երկու դագաղներուն վրայ , որոնք ծածկուած , գրեթէ անտեսանելի եղած . կորսուած էին պսակներու տակ :

Ժընէվի Արեւմտեան Բիւրօն , Դաշնակցութեան Խորհուրդին որոշումով , հինգ հազար ֆրանգէն աւելի գումար մը յատկացուցած էր երկու զոհերուն յուղարկաւորութեան ծախքերուն համար :

Յուղարկաւորութեան շքեղութեան վրայ աւելի յըստակ գաղափար մը կազմելու համար կը բաւէ լոկ յիշել թէ՝ այդ օրը՝ Սօֆիայի բոլոր կառքերը տրամադրուած էին հանրութեան : Սօֆիա այդ օրը փոխադրուեցաւ գերեզմանատունը :

Եւ այդ օրը , անգամ մըն ալ կնքուեցաւ ու նուիրագործուեցաւ հայ – մակեդոնական միութեան և Դաշնակցութեան Սուրբ Ուխտը :

Յուղարկաւորութեան աւարտումէն անմիջապէս յետոյ , Սօֆիայի Օսմանեան Կայսերական Գօմիսէրը հեռագրով Պոլիս հաղորդեց Քնեաժօվայի եղերական դէպքին բոլոր մանրամասնութիւնները , չը մոռնալով հեռագրել նաև յուղարկաւորութեան արտակարգօրէն հանդիսաւոր հանգամանքը :

Եւ սակայն , Վիշապի Պատասխանատու Մարմինը , տակաւին ո և է տեղեկութիւն մը չէր ստացած իր պաշտօնական աղբիւրէն , միայն տարտամ և իրարու հակասական լուրեր առած էր հեռագրական գործակալութիւններէն :

Քնեաժ Օվայի Աղէտին յաջորդ օրը , տարաբազդ Քէնտիրեանի մեկնումէն հազիւ չորս հինգ օր ետքը , Վիշապի Մարմինը Բարիդէն կըստանար հետեւեալ ծածկագիր հեռագիրը . -

<< Քրիստափոր ու վռամ , փորձի միջոցին , Սօֆիայի մէջ մեռան ... : >>

Աննկարագրելի , անբացատրելի սոսկում մը , սուգ մը , անհուն թախիժ մը , յուսահատութիւն մը պատեց Վիշապի Պատասխանատու Մարմինը : Երեք անգամները – միւս երկուքը՝ մե՛կ բոպէի մէջ ռումբի մահաբեր պայթումի մը զոհ եղած ըլլալով – սահմոյեցան այս շանթահարող գուժին առջեւ , պահ մը չը հաւատացին , չուզեցին , չը համարձակեցան հաւատալ անգութ իրականութեան ... :

Արտասահմանի հայաշատ կեդրոնները , մասնաւորապէս Ամերիկա , Եգիպտոս ու Պուլկարիա , ինչպէս յիշեցինք քիչ առաջ , անթիւ համակիրներու և լացողներու երկսեռ բազմութիւններ , գունդագունդ դիմեցին եկեղեցիները , ուր սգահանդէսներ սարքուեցան այս երկու նահատակներու յիշատակին :

Երկար պիտի ըլլար մի առ մի թուել հոս բանախօսութիւնները , դամբանականները , քերթուածները , որոնք արտասանուեցան այդ սգահանդէսներուն մէջ : Այն օրերու բոլոր թերթերը սեւ , սգաւոր սիւնակներու մէջ հրատարակեցին երկուքին կենսագրութիւնները : Դպրոցները փակուեցան ի նշան սուգի , նոյնպէս , շատ տեղերու մէջ , խանութները գոցուեցան , ա՛յնքան մեծ եղաւ վիշտը , և ընդհանուր ` ազգաին սուգը ... :

Ահաւասիկ քերթուած մը , որ այդ առթիւ արտասանուեցաւ դպրոցական աղջկան մը կողմէն , Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոսի տաճարին մէջ , ուր Սօֆիայի Աղետին բօթը հասնելէն հազիւ մէկ շաբաթ ետքը կազմակերպուած էր սգահանդէսներուն թերեւս ամենէ՛ն սրտաշարժը , հազարաւոր երկսեռ բազմութեան մը ներկայութեան .

Այս Էջերուն մէջ կը զետեղենք այդ քերթուածը , ներկայ վէպիս հեղինակին կուրծքէն ժայթքած առաջին հառաչանքը . -

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Քու անունիդ շուրջը ` Մե՛ծ Մարդ,
Որ կը ննջես պըսակազարդ,
Թո՛ղ լըռէ կիրքը գետնաքարշ,
Ա՛լ չես ապրիր այս կեանքը գարշ ... :

Դուն Քրիստափո՛ր Միքայէլեան,
Մին աստղերէն Դաշնակցութեան,
Յանկարծ Թըռար ու Թոցուցիր
Մեր վարդ յոյսերը ցանուցիր:

Վռամ Քէնտիրեան , Վիշապորդիք,
Քրիստափորի հետ ուխտեցիք
Արդար պատժի գործիք կերտել,
Հինը քանդել , նորը կանգնե :

Ստրկութեան տաճարներուն
Կամարները բարձրաձեղուն,
Տապալէին պիտի շուտով
Ձեր պողպատէ բազուկներով:

Մեր փարելի Բաբկէն Սինին
Սերովք Սղբիւր, վեհ Գնունին,
Ձե՛զ կըսպասեն հոն , գրկաբաց,
Ո՛վ հերոսներ դուք Հայրենեաց:

Ողջո՛յն տարէք , տըլ՛ք համբոյր
Հոգիներուն հազահամբոյր,
Ռազմիկներուն Ազատութեան
Որոնք յաւէտ անմահացան:

Ըսէ՛ք իրենց , - Մե՛ծ է մեր Յաւ,
Ջարչարանքը չը վերջացա՛ւ,
Բայց սուրբ ուխտն է Դաշնակցութեան,
Փորել փոսը վատ Բենութեան ... :

Երկրագնտի զանազան կողմերէն ցաւակցութեան հեռագիրներ տեղեցին Ժընէվ,
Արևմտեան Բիւրօյին, ողբալով կրկնակի կորուստը թանկագին կեանքերու, ողբալով ա՛յնքան
բեղուն էին զոհաբերութիւններով:

Պաշտե՛լի՛ հոգիներ Քիրստափորի ու Վոամշապուհի, սաւառնաթն կսկեցէ՛ք երկինքէն
հայկական մաքառումներու կարմիր անդաստանին վրայ, տեսէք ձեր ցանած սերմերը պիտի
տան արդեօք ցանկալի հունձքը, նայեցէ՛ք վերէն, տեսէ՛ք, ձեզի արժանի՛ է սերունդը, որ այսօր
կ'ապրի նոյն Դրօշակի տակ, այն Դրօշակին, որ միշտ բարձր մնաց ձեր մաքուր ձեռքերուն մէջ
... :

Երանելի՛ հոգիներ, հանգի՛ստ ձեր սրբազան նշխարներուն . Թո՛ղ ձեր եղերական մահուն յիշատակը, թարմ ու վառ մնայ միտքերուն մէջ անոնց, որոնք ուխտած են քալել արիւնտ ու փշոտ ճամբան, բարձր ճակատով, հաստատ ոտքերով ու հանդարտ խիղճով: Թո՛ղ ձենէ օրինակ առնեն խաղաղութեան մէջ յեղափոխութիւնը շահագործող հերոսները որոնք, ձեր սուրբ անունը կը յեղյեղեն անդադար, որոնք, ձեր անունով կ'երդնուն, մակաբոյծնէ՛րը, ժողովուրդ անունը կրող ամբոխի մը ճակատագրին վարիչնէ՛րը ... :

ԻԴ

Ժամանակին սրարչաւ հեղեղը, իր ամեհի ու մոլեգին վազքին մէջ, կ'ընդաբռնէ կը տանի կեանքի բոլոր ձևերը, պատկերները . իրեն, դէպքեր, դէմեր, վրէժներ ու գութեր . մարդկութեան բազմազան անդամները, դահիճ ու զոհ . բռնաւոր ու գերի , տէր ու ծառայ, մէկ խօսքով . ինչ որ կ'ապրի արևին տակ: Նոյն հոսանքին մէջ կընկղմին երջանկութիւնները թշուառութեան հետ, հաճոյքները տառապանքներուն հետ, ուրախութիւնները վիշտերուն հետ, մինչև որ վերանորոգուի կեանքը, տարբեր ձևերու, տարբեր երևոյթներու տակ . և այսպէս կը գլորուի, կը խառնուի ամէն ինչ անհունին անդունդներուն մէջ ... :

Տիեզերքի, Բնութեան այս անողորմ օրէնքը զարտուղութիւն կամ բացառութիւն չի՛ ճանչնար, ինչպէս կայսրերը, նոյնպէս կայսրութիւնները, ինչպէս անհատները, նոյնպէս ժողովուրդները, ամէնը կը հպատակի այդ օրէնքին:

Քրիստափոր ու Վոսմշապուհ, Դաշնակցութեան այս երկու նահատակները, չէին կրնար գերծ մնալ ընդհանուր օրէնքին ազդեցութենէն, ժողովուրդը սգաց ու ողբաց օրէնց կորուստը, և յետոյ, հազիւ մէկ քանի օր յետոյ, մոռցաւ Սօֆիայի եղերական արկածը ... :

Յեղափոխութեան մէջ անհատը զրօ է, նշանակութենէ գուրկ . բոլոր շահերը, բոլոր նկատումները, բոլոր կամայակութիւնները կը նսեմանան, կը խոնարհին Մայր – Գաղափարին առջև, որուն շուրջը կը թաւալին ամէն երկիրներու և ամէն դարերու յեղափոխութիւնները:

Դաշնակցութեան շարքերուն մէջ սողոսկած կարգ մը տիրացուներ, որոնք հսկայ կազմակերպութեան մը - ինչպէս էր հայ յեղափոխական Դաշնակցութիւնը – իր գոյութիւնը կախուած ըլլալ կը կարծէին Քրիստափորի կեանքէն, կը պնդէին թէ՛ այս վերջինի կորուստը Դաշնակցութեան կորուստը կը նշանակէր, հիասթափեցան, երբ տեսան թէ սուգը սուգ էրև գործը գործը:

- Ժընէվի մէջ Դաշնակցութեան Խորհուրդը պիտի գումարուէր, ինչպէս կը յիշեն ընթերցողները, և Պատասխանատու Մարմինները հրաւիրագրէր ստացած էին Արևմտեան Բիւրօյէն, ներկայացուցիչ գրկելու յիշեալ Խորհուրդին: Յայտնի է թէ Վիշապի ներկայացուցիչը նոյնինքն Քէնտիքեան թէ, որուն մահուան հետեւանքով ուրիշ ներկայացուցիչ մը կարգելու և

օր առաջ ժընէվ դրկելու պատճառով յետաձգելու Մահափորձի ծրագրին արդէն սկսուած և առաջ տարուած պատրաստութիւնները:

Վիշապի մնացեալ երեք անդամները, Սաֆօ, Աշոտ ու Թորգոմ, իրենց կողմէն ներկայացուցիչ մը կարգելու համար խորհրդակցութիւն մը կատարեցին և որոշեցին Սաֆօն զրկել ժընէվ, որպէս զի մասնակցէր Դաշնակցութեան Խորհուրդին, և միեւնոյն ժամանակ, լրացներ փորձերը, որոնք այնպէս երեսի վրայ թողուած էին Քրիստափորի անսպասելի մահով:

1905 Մարտի 9ին Սաֆօ մեկնեցաւ Պոլսէն դէպի ժընէվ, իր կնոջ՝ Մառի Չայձի հետ, առանց անսալու իր ընկերներուն դիտողութիւններուն, առանձին, առանց իր կնոջը կատարելու ճամբորդութիւնը: Կինս, կըսէր Սաֆօ, պէտք է ինծի ընկերանայ . ոստիկանութեան կասկածը չի հրաւիրելու համար իր վրայ: Խոստացաւ Մառի Չայձը Ֆիլիպպէ թողուլ . և ինք անցնիլ դէպի Զուիցերիա:

Սաֆօ ուրիշ կարելոր պաշտօն մըն ալ ուներ . պիտի գաղտնի տեսակցէր քիմիագէտ գիտուններու հետ, և ստոյգ ծանօթութիւններ պիտի քաղէր ասոնցմէ, ծրագրուած մահափորձի կառքը պատրաստելու համար:

Մառի Չայձ, հակառակ Սաֆօյի խոստումին, Ֆիլիպպէ չը մնար, ճամբան կը շարունակէ Սաֆօյի հետ . իբրեւ ասոր անբաժանելի պոչը:

Մէկ քանի օրէն, Վիշապի երկու անդամները, որոնք Պոլիս կը մնային, Սաֆօյէն նամակ մը կըստանան, որուն մէջ մանրամասնօրէն նկարագրուած էին Քրիստափորի և Վռամշապուհի եղերական մահուան պարագաները, ականատեսներու և դէպքին վայրին վրայ քննութիւն կատարող քաղաքապետութեան բժիշկներուն վկայութիւններէն քաղուած:

Այս նամակը նորոգեց Վիշապի անդամներուն կսկիծները, դժնդակօրէն ազդելով մանաւանդ օժանդակ ընկերներու հոգեկան դրութեան վրայ, որոնք արդէն, մօտաւորապէս տարի մը թափառելէ և անգործ ապրելէ զգուած, վիատումի նշաններ ցոյց կուտային իրենց վրայ:

Դժբաղդութիւնները զոյգ զոյգ կ'ուսանին, կը հասնին, կըսէ արեւելեան առած մը: Ճիշդ այդ օրերուն մէջ էր, երբ պայթեցան Կովկասի մէջ հայաթաթար ընդհարումները, որոնց արձագանգը ցնցեց երկրագնդիս զանազան անկիւնները ցանցնուած հայ ազգին բեկորները:

Ահաւոր կացութեան մը կը մատնուէր Վիշապի Պատասխանատու Մարմինը: Օժանդակ ընկերներէն շատերը, այդ կռիւներուն արձագանգը հազիւ թէ առած, Կովկաս երթալու բռն իղձեր սկսան արտայայտել . փոխանակ Պոլսոյ մէջ անգործ նստելու և ծախքեր ընելու, կըսէին , կ'երթանք հոն, մեր եղբայրներուն օգնութեան և գոնէ պատուի դաշտին վրայ կ'իյնանք կռուելով:

Կարօն ու տիկին Անչքովան շատ դժգոհ էին իրենց անորոշ դրութենէն, և կը փափագէին ժամ առաջ մեկնիլ Կովկաս, ու կը յուսային, գործել: Աղաչեցին Վիշապի

անդամներուն ճամբայ դնել զիրենք, խոստանալով անմիջապես վերադառնալ, երբ ստանային պատասխանատու Մարմինին հեռագիրը:

Աշոտ ու Թորգոմ բանաւոր գտան այդ երկու օժանդակներուն առաջարկը . երկուքն ալ օրինաւոր անցագրեր ունէին, ռուսական դեսպանատունէն վաւերացուած, և արդէն ոչինչ ունէին կասկածելի, Ռուսի դիմագծեր ունէին:

- Թորգոմ՝ մ, ըսաւ Աշոտ, կը տեսնես, անօգուտ է ասոնք հոս վար դնել .գիտես, մեր գործին վախճանը դեռ յայտնի չէ՛ . երկուքն ալ երկրին տգէտները, անծանօթները, ո՛չ լեզուն կը հասկնան, ո՛չ ալ բարքերը գիտեն . մինչև ե՞րբ պիտի դեգերին հոս, աւելորդ ծախքերու դուռ պիտի բացած ըլլանք, եթէ շարունակենք տակաւին պահել զիրենք .

- Բայց, Աշո՛տ, մոռցա՞ր, առարկեց Թորգոմ. Սաֆօյի խօսք տուած են հոս սպասելու մինչև իր վերադարձը:

Սակայն, ի վերջոյ, Թորգոմ ալ համոզուեցաւ թէ փութացնելու էր անոնց մեկնումը, քանի որ պատճառ մը չիկար վար դնելու զանոնք . ուստի, որոշուեցաւ անմիջապէս ճամբու ծախքի դրամը տալ իրենց, և շուտով ճամբայ հանել զիրենք դէպի Կովկաս:

Նկար | Մահափորձին Կառքը Պատրաստուած

Սակայն , տիկին Մառի Անչքովայի անունին վարձուած էր Ադա Ճամիի բնակարանը , ուր Աշոտի հետ միասին կը բնակէին և ուր 250 քիլոյի մօտ ապրանք՝ կը պահէին . պէտք էր նախ այդ բնակարանի խնդիրը կարգադրել և ապրանքները փոխադրել այլուր: Ասկէ զատ, Աշոտի կացութիւնը դժուարացած էր, Ուստիկանութեան կեղմէն կը փնտռուէր, քանի՛ քանի անգամներ ծնողքին տուն լրտեսներ ու ոստիկան զինուորներ եկած հարցուցած էին զանի:

Աշոտի մայրը, օր մը Թորգոմին հանդիպելով, Թախանձած էր ասոր որ իր տղուն իմաց տար , զգուշութիւններ ձեռք առնելու համար . խեղճ կիներ, ահու դողի մէջ էր ամէն օր .

- Ամա՛ն, թո՛ղ չերեւնայ, պաղատած էր Թորգոմին . իմացո՛ւր իրեն, կը փնտռեն կոր:

Աշոտ մէկ քանի օր ինքզինք պահեց . յետոյ, Թորգոմին հետ խորհրդակցելով . որոշեցին պայթուցիկ նիւթերը փոխադրել ուրիշ ապահով թագստոց մը , և յետոյ մայրաքաղաքէն հեռացնել տիկին Անչքովան ու Կարօն: Ուստի, Աշոտ ու տիկինը գացին Ժօրիսը գտան և աղաչեցին ապրանքները փոխադրել անոր տունը:

Ժորիս յօժարեցաւ և Աշոտ ու տիկին Անչքովա սկսան մաս առ մաս ապրանքները փոխադրել անոր տունը . բայց, գրացիներուն կասկածը չը հրաւիրելու համար, Աշոտ մտածեց Կարօն դրկել Թորգոմի քով և անոր աջակցութիւնը խնդրել.

Վերջապէս, ահագին դժուարութիւններու դիմագրաւելով է որ յաջողեցան անվտանգ գլուխ հանել փոխադրութեան գործողութիւնը:

Կարօն ու Մառի Անչքովան մեկնեցան և Աշոտ, Ադա Ճամիի բնակարանին կահ կարասիքը ծախելով ելաւ գնաց գիշերօթիկ մտաւ Եւմէնիճի փողոց , թիւ 38 տունը, ու հինգ

ամիս ապրեցաւ առանց կասկածուելու իբրև հայ, որովհետև ինքզինք ներկայացուցած էր իբրեւ ռուս . Լիփա Դիփսի գործակատարը:

Օրերը կ'անցնէին, և Վիշապի երկու անդամները, մնացեալ օժանդակ ընկերներուն հետ անհամբեր լուրերու կըսպասէին Եւրոպայէն, ուրկէ տակաւին չէր վերադարձած Սաֆօ:

Օր մը միայն, երբ Պօմոնթիի գարեջրատունը գացած էր Աշոտ իր նոր տանտիրոջ ընտանիքին հետ, մազ մնաց որ պիտի ձեռք տար օձիքը , իր վաղեմի դպրոցական ընկերներէն Էքիշիեան Միքայէլ անուն երիտասարդի մը հանդիպած ըլլալով: Այդ երիտասարդը կը ճանչնար Աշոտի ընտանիքը, անոր անցեալ յեղափոխական գործունէութիւնը, նաև անոր փախստական վիճակը: Բարեբաղդաբար, իր ճարպիկութեան շնորհիւ, այդ օրն ալ անցուց առանց միջադէպի:

ԻԵ

Ժընէվը Դաշնակցութեան Խորհուրդին նիստերը վերջացած և Սաֆօ վերադարձած էր Պոլիս:

Վիշապի Պատասխանատու Մարմինը տենդոտօրէն առաջ կը տանէր իր պատրաստութիւնները:

Վիեննայէն Պոլիս դրկուած էր արդէն մահափորձի կառքը, որուն արկղը կը մնար շինել, այն արկղը , որուն մէջ պիտի տեղաւորուէին պայթուցիկ նիւթերը:

Սաֆօ իր ընկերներուն պատմեց բոլոր մանրամասնութիւնները Եւրոպայի զանազան կեդրոններուն մէջ իր կատարած պիտական ուսումնասիրութիւններուն, որոնց փառաւոր արդիւնքը կը ջատագովէր:

Ժընէվի մէջ ռուս յեղափոխականներէն մեծանուն քիմիագետի մը դիմած էր հասկնալու համար թէ ` որքան քիլօ մէլինիթը կրնար աւեր գործը ա'յսքան տարածութեամբ աւելի մը մէջ, եթէ պայթէր: Ռուս յեղափոխական գիտունը ի կզբան վարած էր Սաֆօյի հարցումին պատասխանելու, բայց երբ համոզուած էր թէ հայ յեղափոխական Դաշնակցութեան գործիչի մը հետ կը գտնուէր ինք, անմիջապէս կատարած էր անոր խնդրանքը: Սակայն Սաֆօ աւելի ապահով ըլլալու համար, Ժընէվէն գացած էր Բարիզ և դիմած էր գիտութեան փառքերէն ֆրանսացի մեծահռչակ բրօֆէսօրի մը, որ լաւ մը ստուգելէ յետոյ իրեն դիմող անձին ինքնութիւնը, ինչպէս նաև խնդրին լուրջ հանգամանքը խօստացած էր հետևեալ օրը խատասխանը բերել:

Վիշապի միւս անդամները կը լափէին Սաֆօյի պատմութիւնը, ու խիստ շահեկան ըլլալ կը թուէր:

Եւ Սաֆօ շարունակեց .

<< Ընկերներն՝ ր, ըսաւ, ֆրանսացի մեծ գիտունը, որուն ներկայացայ հետեւեայ օրը, որոշուած ժամուն, յայտարարեց ինծի թէ՝ երեսուն քիլօ մելինիթը կրնայ, օդի ճնշումին ուժովը, մինչեւ քառասունըինգ մէդր տրամագծով տարածութեան մը վրայ քանդել ոչնչացնել , ամեն առարկայ, ամեն շնչաւոր էակ, եթէ խարդախուած չըլլայ նիւթը:

<< Երեւակայեցէ՛ք, շարունակեց Սաֆօ, ապշեցայ մնացին բրօֆէսէօրին այս յայտարարութեան առջև, որ պատգամ էր ինծի համար, որովհետեւ, ընկերներն՝ ր ճիշդ նո՛յն յայտարարութիւնը լսած էի Ժընէվի ռուս յեղափոխական քիմիագէտի բերնէն: Շնորհակալութեամբ բաժնուեցայ ֆրանսացի պատկառելի գիտունէն, յաջորդ օրը մեկնեցայ Բարիզէն և անցայ Վիեննա, ինչպէս գիտէք, գնելու համար կառք մը, որուն մէջ կարելի ըլլար գետեղել մեր մահաբեր ապրանքները: Գտայ կառքերու գործարանատէր մը, նոյնինքն հայթայթիչը Կայսերական Տան, առաջարկեցի շինել ինծի կառք մը, որուն կառապանին նստարանը սովորականէն աւելի բարձր ըլլար: Չարաճճի քմծիծաղով մը, մարդը մերժեց առաջարկս, դիտել տալով թէ այդ ձեւով կառք մը՝ սահմանագլխէն մաքսանենգ ապրանքներ փախցնօղներու գործին պիտի կրնար ծառայել, և թէ հետեւաբար, ինքը չէր կրնար աղարտել իր համբաւը մէ՛կ կառքի համար: Ի՞նչ կրնայ ըսել, չը պնդեցի, ուրիշ պատրաստ կառք մը կար, անոր գնորդ եղայ և միայն խնդրեցի որ ընեն փոքրիկ փոփոխութիւն մը, կառապանին նստարանին վրայ:

Նկար | Աշոտ, Մառի Չայձ եւ Սաֆօ (Կառքին մէջ)

<< Յոժարեցան, գնեցի կառքը, դրկեցի, ինչպէս որ տեսաք.

- Ի՛նչ սոսկալի փորձանքներով, ընդմիջեց Աշոտ, կարելի եղաւ մաքսէն դուրս հանել զայն:

Բնակա՛ն է, շարունակեց Սաֆօ, յետոյ անցայ Սօֆիա, ուզեցի մելինիթի հրաշքը փորձել անձամբ . տասներինգ քիլօ մելինիթ դրի բացաստանի մը մէջ, և տասը մէդր հեռաւորութեան մը վրայ կեցուցի ձեր ձի մը, զոր այդ նպատակին համար գնած էի 500 գրուշի . մելինիթը պայթեցաւ և ձիուն աղիքները վայրկենապէս դուրս թափուեցան, առանց անոր մարմինին դաշելու . միայն գլուխը զատուած էր ու մորթի բարակ շերտով մը կախուած էր անոր վիզին ետեւի մասէն:

Սաֆօ վերջացուց իր ողիսականը, և Վիշապի անդամները բացարձակապէս վստահացուց թէ՝ մահափորձին կառքը պահանջուած կատարելութիւններով օժտուած էր և թէ մօտ օրէն պիտի կրնային գործադրութեան դնել այնքան երկար ժամանակէ ի վեր փայփայած իրենց ծրագիրը:

Արդէն, կառքը մաքսէն հանուելէ առաջ, անոր լծուելու համար, երկու ընտիր ձիեր գնուած էին դերասան Հասան Էֆէնտիէն: Եւ այդ երկու ձիերը զրզրլ Թօփրագէն փոխադրուած էին Շիշլի, մասնաւոր ախոռի մը մէջ, նախապէս վարձուած, և ձիադարման նշանակած էին

Խասգիւղցի Երուանդ Ֆրանկիւլեանը, Պոլսոյ տեղական խումբերէն անձնուէր ու խիզախ պատանի մը, վաղուց վարժուած այդ արհեստին:

Այս Խասգեղցի տղան սիրալոյսով բերած էր իր մասնակցութիւնը, որովհետեւ ինք տարիներէ ի վեր խմորուած վրէժ մը պիտի լուծէր անով. սուրբ վրէժը իր դժբաղդ հօր, որ, իննսունվեցի չարաչուք օրը, ջարդարար խուժանէն սպաննուած էր Խասգիւղի Հայոց գերեզմանատունը տանող փողոցին մէջ:

Կառքը 1905 մայիսի 23ին Պոլիս յանձնուած էր մաքսատունը, իսկ Սաֆօն ու Մառք Զայձը հինգ օր ետքը հասած էին:

Նկար | Կրուանդ Ֆրանկիւլեան (Ձիադարմանը)

Թէ՛ այդ կառքին և թէ՛ իր յարակից մասերուն և ուրիշ պատրաստութեանց վաւերական տեղեկատւութիւնը կարելի է գտնել Վիշապի կարենորագոյն անդամներէն Գառլօ Եովաննովիչի յիշողութիւններու գրիքին մէջ (Արիւնի ճամբուն վրայ), որմէ անհրաժեշտ է վերարտագրել հետեւեալ տողերը. -

<< Կառքը սովորական կառք մըն էր, իր գաւուչուէ անիւներովը միայն կը տարբերէր, ուրիշ ոչինչ ունէր հետաքրքրական:

<< Թորգոմին հետ դիտել տուինք.

- Սաֆօ՛, ինչո՞ւ տնիւները գաւուչուէ շինել տուիր.

- Այս տեղի կառքերը գաւուչուէ չե՞ն, պատասխանեց Սաֆօ:

<< Բայց երբ ուշադրութեամբ դիտեց, ինք ալ տեսաւ թէ Պոլսոյ մէջ, գաւուչուէ ըլլալով, միայն երկու կառքեր կը գտնուէին. մէկը բրիտանական դեսպանատան կը պատկանէր, միւսը՝ քաշայի մը: Սակայն մեր կառքի լաստիկները միւսներէն կը տարբերէին. մերինը դատարկ էր. մինչ միւսներունը՝ լեցուն օդով և աւելի ձեւաւոր:

<< Սաֆօ վերստին սկսաւ բացատրութիւններ տալ իր ըրած փորձերուն յաջողութեան մասին: Ա՛լ իրաւունք չունէինք ո՛ր և է կասկած մը յայտնելու, որովհետեւ, եթէ ճիշդ էր իր պատմածը, կատարեալ յաջողութիւն կը խոստանար, և այդ պատճառով է որ ձեռքի ռումբի փորձերը չէր ըրած, ինչ որ Քրիստափոր կիսատ էր թողուած:

<< Մեր ընկերը (Սաֆօ) պարտաւոր էր կառքին մէջի բոլոր պիտանի առարկաները շինել տալ արտասահմանի մէջ, որովհետեւ Պոլսոյ մէջ կասկածառիթ պիտի ըլլար ո՛ր և է պատրաստութիւն. իսկ ան, առանց նկատի առնելու մեր նախկին որոշումները, սովորական կառք մը կը դրկէր մեզի, ինչպէս եթէ Պոլսոյ մէջ կառքի սով եղած ըլլար, ստոյգ է, մեր Սաֆօյի կառքը տարբերութիւններ ունէր, օրինակի համար, անիւները գաւուչուէ էին և կառապանին նստած տեղը սովորականէն մէկ քանի սանդիմ ալ բարձր էր:

<< Հիմա նո՛ր պիտի ձեռնարկուէր գործի, կառապանի նստարանին մէջ երկայթէ սնտուկ մը շինել տալու էր, և այդ գործը յանձնուեցաւ ինծի, իսկ ես ուրախութեամբ ստանձնեցի զայն:

<< Մեր մասնագետ ընկերոջ խորհրդով, որոշուեցաւ սնտուկին երկաթ տախտակը մէկուկէս միլիմէր թանձր շինել որովհետեւ, կ'ըսէր, ո՛րքան հաստ ըլլայ տախտակը, ա՛յնքան կը պակսի ոյժը: Երկաթի կտորները չէին որ գործ պիտի տեսնէին, այլ մեր ճնշումը, ինչպէ՞ս որ Պուլկարիոյ մէջ հաստատուած էր փորձով և մասնագէտներն ալ նոյն կարծիքը յայտնած էին:

Այդ սնտուկին մէջ 100-120 քիլօ մէլինիթ պիտի դրուէր ...

<< Յաջորդ օրը, մեր ընկեր Զարեհին հետ կառքը նստանք ու գնացինք Պէոյիւք Տէրէի կոնակի անտառները: Զարեհ կառապանութիւն տրած էր ժամանակին, քիչ թէ շատ գիտէր կառք վարել: Մեզի հետ առած էինք հաստ խաւաքարտեր ու գործիքներ, սնտուկին ներքին կաղապարը գծեցին, որչափ որ կրցայ:

<< Կառքի սնտուկին մէկ անկիւնը, չորս հինգսանդիմ բարձրութեամբ ներկուած հաստ կտոր մը կար, կարծեցին թէ փայտ էր այդ կտորը, և խորհեցայ ուրիշ անգամ մը տաշել դայն մասնաւոր գործիքով մը, չը հետաքրքրուեցայ գիտնալու փա՞յտ էր թէ երկաթ:

<< Վաղեմի բարեկամներէս երկաթագործ մը կը ճանչնայի, Երուանդ Յակոբեանը: Նախ այս տղուն հետ սակարկեցի, իմ ներկայացուցած չափերուս վրայ, սնտուկ մը պատրաստելու: Խօստացաւ երեք չորս օրէն շինել զայն և յանձնել ինձի: Նտտուկը կը բաղկանար կտոր կտոր երկաթներէ, որոնք պտուտակներով պիտի միացուէին և ագուցուէին իրենց տեղը:

<< Երկաթագործը, հետաքրքիր դէմքով մը, գիտնալ ուզեց թէ ինչ բան էր, բայց երբ լսեց բացատրութիւններս, երբեք չը շահագործուեցաւ, որովհետեւ իր շինելիքը՝ կասկած առթելու թէ՛ յանձնարարած եմ սնտուկի շինութիւնը:

<< Մեր մէջ խնդիր ծաղեցաւ կրակ տալու վայրկեանի մասին: Յարմարգոյն ժամանակը համարեցինք մզկիթէն դուրս ելլելու վայրկեանը, որովհետեւ թէ ամբոխը քիչ մը կը քաշուէր ու կը պակսէր և թէ միջոց կը տրուէր կառքերուն առաջանալու:

<< Մենք, առանձին ուսումնասիրութիւններով, ամենքնիս ալ միեւնոյն ժամանակը, միեւնոյն չափը յարմար գտած էինք :

<< Սուլթանը մզկիթէն դեռ դուրս չելած, քիչ առաջ, զինուորական նշան մը տրուէր: Այդ նշանը տրուած ըողպէն սկսեալ մինչեւ սուլթանին՝ մզկիթին մեծ դռնէն դուրս ելլելը՝ հաշուած էինք . 1 վայրկեան և 42 երկվայրկեան: Եւ այս փորձերը 8-10 անգամ կատարուած էին զանազան ընկերներու կողմէ, և միշտ միեւնոյն ժամանակը գտած էինք:

<< Խնդիրը կը մնար հիմայ կրակ տալուն :

<< Սաֆօ միջոց մը գտած էր կրակ տալու, այսինքն պատրոյգը . բայց պատրոյգով մէկ ու կէս վայրկեանի մէջ կրակ տալը շատ դժուար էր . նախ՝ ահագին աղմուկով իր ֆշֆշուքը կը ձգէր, և երկրորդ՝ քանի՛ քանի փորձերով տեսնուած էր որ միեւնոյն չափի վրայ չէր կենար, օրինակի համար, երբ նախապէս երկու սանդիմի վրայ կեցաւ . երկրորդ փորձին՝ երեք սանդիմի կը փոխուէր: Եւ ասիկա եղած էր ամենամեծ մը տատանջութիւն պատճառող բանը,

որովհետեւ մեր գործին վրայ այնպէս համոզում ունէինք թէ օղի միջոցով մինչեւ 40-50 մէդր տարածութեան վրայ պիտի ոչնչացնէր ամէն ինչ և Երլտըզի պալատը գերեզմանի մը պիտի ծառայէր Ապտիւլ Համիտի և իր ոճրագործ արբենեակներուն համար: Ուստի չէինք ուզեր ո՛չ մէկ զոգ տալ մենէ այդ գարշելի Արարածին համար, քանի որ հաստատապէս համոզուած էինք թէ՝ հարիւր առ հարիւր պիտի յաջողի գործը: Նախընտրէինք տեղնուտեղը տալ կրակը, որովհետեւ պատրոյցով շատ դժուար էր և ուրիշ միջոց ալ չունէինք :

<< Այդ միջոցին է որ ելեկտրականութեամբ պայթեցնելու հարցը մէջտեղ ելաւ, բայց ընկերներէս ո՛չ մէկը գաղափար ունէր ելեկտրականութեան վրայ :

<< Սաֆօն ըսաւ ինծի .

<< - Է՛հ ուրեմն, եկո՛ւր Բան մը խորհէ՛ :

<< Սաֆօն դիտէր թէ ես վաղուց ի վեր շատ մը փորձեր ըրած էի ժամացոյցով ուժանակ պայթեցնելու, և վերջերը Յունաստանի մէջ շատ մը ժամացոյցներ շինել տուած էի ընտիր և կատարելագործեալ տեսակէն: Թէ և կային այն տեսակ ժամացոյցներ, բայց իմ շինել տրւած էի ընտիր և կատարելագործեալ տեսակէն: Թէ և կային այն տեսակ ժամացոյցներ, բայց իմ շինել տրւածս՝ թէ՛ տոկուն էր և թէ՛ անվտանգ: Մէկ քանի ամիսներ առաջ, պուլկար յեղափոխականի մը փորձ կատարելու միջոցին, քիչ մնաց որ մեր ընտրելագոյն ընկերներէն վեց հոգի զոհ պիտի տայինք:

<< Սաֆօյի առաջարկին վրայ քիչ մը խորհիլ սկսայ, մտածեցին թէ՝ մենք, գրպանի համար վայրկենաչափեր ունինք: Այդ վայրկենաչափին ամբողջ շրջանը՝ մէկ վայրկեանի վրայ էր . իսկ մեզի պէտք էր մէկ վայրկեան 42 երկվայրկեան ժամանակի միջոց . եթէ այն ժամացոյցին վրայ շինէինք, կես վայրկեան առաջ պիտի պայթէր:

<< Ժողովը դեռ չը ցրուած,

- Սպասեցէ՛ք քիչ մը, ընկերնե՛ր, ըսի, ես շուտով կուգամ :

<< Անմիջապէս դուրս ելայ, Թէփէ Պաշի, Բերա-Բալսի դիմացի կարգը, փութին քով, յայտնի յոյն ժամանգործ մը կար, որ ինծի ծանօթ էր: Վայրկենաչափը ցոյց տալով իրեն, ըսի

<< - Արդեօք կարելի՞ է այս վայրկենաչափը վերածել 2 վայրկեանի, այսինքն, վրայ սպասքը փոխանակ մէկ վայրկեանէն դառնալու բոլորակին շուրջը, երկու վայրկեանէն դառնայ:

<< - Այո՛, կարելի է, ըսաւ յոյն ժամագործը .

<< Խնդրե՛մ, անմիջապէս շինեցէ՛ք ըսի, քանի՛ որուշ որ կ'ուզեք, ես կը վճարեմ .

<< Ժամագործը խոստացաւ հետևեալ օրը տալ:

<< Անմիջապէս վերադարձայ ընկերներուս քով, որոնք նստած, կը սպասէին .

<< - Ընկերնե՛ր, ըսի, վաղը ժամացոյցը պատրաստ կ'ըլլայ, մնացեալ մասերը պատրաստել կուտամ ես առանձին, ուրիշ տեղեր:

<< Յանձն առի ժամացոյցներն ալ ելեքտրականութեամբ պատրաստել և տեղադրել կառքի մէջ: Երկու ժամացոյց ալ Թիւնէլի դիմացը, Ղալաթիա, ժամագործ Մայէիրն շինել տուի:

<< Սաֆօն տսաւ .

<< Աշո՛տ, եթէ այս տեղ կարելի չէ այդ բանը գլուխ հանել, արտասահման գնա՛, հոֆ չէ՛, այդ բանին համար 100 ոսկի մըն ալ թող ծախսուի, որովհետև մեր ձեռնարկին յաջողութիւնը՝ ասկէ կախուած է.

<< Հարկ չը կա՛յ արտասահման երթալու, պատասխանեցի ես, ամէն բան հոս կը պատրաստեմ:

<< Այդ ժողովին մէջ որոշեցինք ուրիշ տուն մը գրնել , որպէս զի Սաֆօն իր կնոջ հետ Թէփէ Պաշրի Օթէլ Ռուայալը ձգէ և այն տունը փոխադրուին միասին:

<< Ինչպէս վերը յիշեցի, Քրիստափորի մահուընէն ետքը, երեք հոգի միայն կը մնայինք Պատասխանատու մարմինի անդամներէն . – Սաֆօ, Աշոտ . Թորգոմ . և օժանդակ ընկերներէն Էին Զարեհ, Քրիս , Արամ և Մառի Զայձ, գերմանացի օրիորդը:

<< Սաֆօյի համար կահաւորուած սենեակ մը վարձեցինք բրիտանական դեսպանատան կարգը, Մատամ Աթինայի 12 թիւ տունը, որ կը գումարէինք մեր ժողովները:

<< Հետևեալ օրը յոյն ժամագործին գնացի, ժամացոյցը պատրաստ էր ճի՛շդ իմ ուզած ձևովս : Ընկերներուս ցոյց տուի, հաւնեցան:

<< Կը մնար հիմակ ելեքտրականութեան յարմարցընել ժամացոյցը և լարել զայն 1 վայրկեան 42 երկվայրկեանի վրայ: Այդ բոլորը ե՛ս պիտի գլուխ հանէի:

<< Սենեկաս վերադարձայ, առանձին նստած, լաւ մը խորհեցայ և յետոյ սկսայ ամէն պէտք եղած մասերը զատ զատ և իրենց բնական մեծութեամբը գծել . որովհետև ամէնը մէկտեղ մէկ վարպետի չը պիտի շինել տայի: Նախ պէտք էր ժամացոյցին ամբողջ շրջանակը նոր շինել տալ, ուզած ձևովս:

<< Պոլսոյ կողմը, Զուհաճի խանի քով, յոյն մը գտայ, որ այդ տեսակ բաներ կը շինէր: Ժամացոյցիս հին շրջանակը հետս առած, գացի մարդուն և ըսի .

<< - Ճի՛շդ այս շրջանակին մեծութեամբ, բայց միայն 4 միլիմէտր աւելի բարձր ըլլայ ասկէ. և այս կէտին վրայ փոքրիկ ծակ մը, և կրկին պէտք է վրան անցընէք .

<< Շա՛տ լաւ, ըսաւ մարդը:

<< Եւ խոստացաւ երկու օրէն յանձնել, երեք հատ պիտի շինէր միեւնոյն չափով:

<< Ատկէց գացի ուրիշ տեղ մը, բարակ գաւուչու գտնելու, որպէս զի փոքրիկ խողովակ մը շինուէր, որուն մէջէն ելեքտրականութիւնը պիտի անցնէր:

<< Ամբողջ Պոլիսը տակնուվրայ ըրի, վերջապէս Եիւքսէք Գալտրըմի պահականոցին քով Ֆրանսացիի մը խանութը գտայ: Ֆրանսացին ելեքտրական փոքրիկ լամբարներ ու փոքրիկ փիլեր կը ծախսէր:

<< Սակայն իր փնառածս՝ ասոր քով ալ չը կար: Ֆրանսացին տափակ կտոր մը ցոյց տուաւ, և այդ կտորը գնեցի, խողովակներս շինել տալու համար:

<< Ղալաթիա, քանի մը վարպետներու տարի, որոնք Թօնոյի վրայ կ'աշխատէին . փորձեցին, բայց չը շաջողեցան դուրս բերել գաւուչուէ վինդ մը, որ իմ ուզած բարակութիւնն ունենար: Վերջապէս, Պոլսոյ մոզմը, Ջրըզճըլար ըստած շուկային մէջ, թուրք մը գտայ . մարդը յանձն առաւ շինել ուզածիս պէս: Այդ մարդը սաթի մէջ անցընելու բարակ խողովակներ կը շինէր արդէն, խնդրեցի որ անմիջապէս ձեռնարկէ շինելու:

<< - Շատ գործ ունիմ, առարկեց Թուրքը, այսօր չեմ կրնար շինել:

<< Մարդուն խոստացայ աւելի դրամ վճարել:

<< Երբ դրամին ձայնը լսեց, մրթմրթալով քիթին տակէն, առաւ ձեռքը, կէս ժամուան մէջ, ուզած ձեւովս, շինեց ութը տասը հաս:

<< Հանեցի մարդուն կէ'ս մէճիտ տուի:

<< - Պէրէքէ'թ վերսին, չօրպաճի', ըսաւ ու դրամը գրպանը դրաւ:

<< Ամենէն կարելոր ու դժուար գործը վերջացուցած էի, վստահ էի, պիտի կրնայ միւս մասերը շինողներ գտնել:

Գիմա կը մնար այդ խողովակին մէջ անցընել բարակ վինդ մը, որպէս զի ուզած ատենս զայն քշեմ առաջ, և սլաքին հետ միանալով, անմիջապէս տեղը կրակ առնէ:

<< Այդ բարակ գաւուչուէ խողովակը ձեռքս բռնած, անդին ասդին վարպէս կը փնտռեմ:

<< Դարձեալ Չուխաճի խանին տակ, ձեր յոյն վարպետ մը գտայ: Այս մարդը երբէք յայտնի չէր ըներ թէ յոյն էր ինք, կարծես Սամաթիացի հայ մըն էր, շուրջ 68 տարու:

<< Ակնոցը քթին վրայ անցուց:

<< - Նէ' իսթէյօրսըն, ըսաւ մեր ծերուկը:

Ցոյց տալով փոքրիկ խողովակը .

<< - Ասոր թէ' ներսէն թէ դրսէն վինդի պտուտակներ շինելու է, ըսի, պէտք է մեծ զգուշութեամբ շինել, որ խողովակը չը կոտրի:

<< Ծերուկը, հին աղուէս մըն էր, ամենէն առաջ ուզեց գիտնալ թէ ի'նչ բանի պիտի ծառայէր, թէ՝ ի'նչ էր էութիւնը: Կ'ուզէր զիս համոզել թէ ինքը կրնար ուրիշ աւելի բան մը հանել, եթէ ու իրեն յայտնեմ գործին էութիւնը:

<< Սակայն օգուտ չըրաւ ծերուկին պնդումը:

<< - Ես ալ վարպետ եմ , ըսի . իմ գործս է, եթէ կրնաս շինել , շինե՛, եթէ չես կրնար, աւելորդ խօսք պէտք չէ՛, ես գիտեմ ի՛նչ շինել տալս:

<< Մարդը պատասխանեց .

- Օ՛ղլում, պանա պա՛գ, եաչըմ ալթմըչ սէքիդոփր, էլիմտէն գուշ ուշմագ, պէն ուսթայըմ, եափաճաղըմ չէյի պիլմէլիյիմ էի, օնա կէչրէ իչ եափայըմ:

ՆԿԱՐ Դէպի Երլտըզ ...

<< Տեսայ որ մարդը շատախօսութեան սկսաւ, ուզեցի դուրս ելլել խանութէն:

<< Մի՛ երթար, ըսաւ, տո՛ւր շինեմ .

<< Քանի՞ պարա պիտի տամ, հարցուցի .

<< Ի՛նչ բան է որ սակարկութիւն պիտի ընենք, ըսաւ, մեծ բան մը չէ .

<< Ո՛չ, ըսի . իմ սովորութիւնս է նախապէս գիտնալ շինել տուած բանիս գինը .

<< - Տասը զրո՛ւշ է, ըսաւ.

<< Ու վերէն վար սկսաւ գննել դիմագծերս, չարաճճի ու խորհրդաւոր նայուածքով մը:

<< - Վարպէ՛տ, ըսի ժպտելով, շա՛տ դրամ ուզեցիր.

<< - Շատ չէ՛, ըսաւ .

<< Մէկ քանի հատ պիտի շինել տամ, ըսի, և չորս հատին մէկ մէճիտ կը վճարեմ:

<< Յէյնը 30 զրուշի իջաւ:

<< Կառքին արկղին շինութեան պայմանաժամը վերջացած էր, գացի ստանալ: Երկաթագործը պատրաստած էր, ինծի կը սպասէր արդէն:

<< Արկղը կառքի մը մէջ դրի ու փոխադրեցի Շիչլիի մեր ախոռը: Հոն սկսանք Զարեհին հետ կառքին մէջ տեղաւորել արկղը, բայց կարելի չեղաւ նստեցնել մէջը. կառքին մէջ տափակ կտոր մը կար, որուն ուշադրութիւն չէինք դարձուցած: Ես կը կարծէի թէ փայտ է այդ կտորը, սկսայ տաշել և տեսայ որ հաստ երկաթ մըն էր. վերջապէս այդ սնտուկը բանի մը չպիտի ծառայէր, իմ անզգուշութեանս պատճառով:

<< Ժամացոյցին բոլոր մասերը պատրաստուած էին: Մենեակը տարի, երկու ելեքտրական փիլերով փորձեցի, շատ յաջող եղաւ, խիստ կոկին բան մը: Ընկերներուս տարի, ցոյց տուի, շատ զօհ մնացին, որովհետև մեր կատարելիք գործին դէկը, ամենէն կենսականը, հոգի՛ն էր.

<< Այդ օրը Սաֆօն ըսաւ .

<< - Աշո՛տ, խորհեցայ որ արկղին երկաթները քիչ մըն ալ հաստ շինել տանք, լաւ կ'ըլլայ .

<< - Սաֆո՛ւ, ըսի, արդէն երկաթագործը գործի սկսած է, ի՞նչպէս կ'ըլլայ .

<< - Հոգ չէ՛, ըսաւ, գնա՛ խօսէ՛ :

<< Սպիտակուեցայ երթալ երկաթագործին և խնդրել որ աւելի հաստցնէ երկաթները, եթէ կարելի .

<< - Երկաթները կտրուած են արդէն և գործի սկսած ենք, առարկեց մարդը .

<< - Հոգ չէ՛, ըսի, նորը շինէ՛, ես կը վճարեմ ծախսը:

<< Եւ վարպետը յանձն առաւ նորը շինել:

<< Նախապէս հաշուած էինք, արկղին ամբողջ երկաթի ծանրութիւնը 22 օխան չափտի անցնէր: Մեր ընկեր Սաֆօն, ինչպէս կարելի, վստահ չէր իր դնած կառքին տոկոսնութեանը, չըլլայ յ թէ կառքին անիւները չը կրնան աւելի ծանրութիւն վերցնել և կառքը չըլլայ թէ կտորի, նն:

<< Երբ ունեցանք այս կասկածը, ստիպուցանք կառքը տանիլ Քեաղըտ Հանէ և մէջը պէտք եղած չափով քար լեցնել, որպէս զի հասկանանք, պիտի դիմանա՞ յ թէ ոչ: Իսկ մենք երեքնիս, կառքը նստած, վարէն դէպի վեր բարձրացուցինք:

<< Անվտանգ բարձրացանք, ոչ մէկ կասկած մնաց կոտրելու մասին, և ուրախ զուարթ վերադարձանք այդ օրը:

<< Մէկ շաբաթ անցած էր և երկաթները դեռ պատրաստուած չէին: Երկաթագործին գացի և խնդրեցի որ շուտով յանձնէ արկղը: Մէկ քանի օր ալ անցաւ, և արկղը պատրաստուած էր: Երկաթները տարինք ախոռէտ, ինչ որ ըրինք, չկրցանք տեղաւորել և ստիպուեցանք վերստին ետ բերել զանոնք երկաթագործին: Իսկապէս վարպետին համար շատ դժուար էր գործել սոսկ խաւաքարտի վրայ, առանց իսկական տեղը տեսած ըլլալու, խեղճ երկաթագործը չէր գիտեր իսկ թէ ի՛նչ բան էր իր շինածը:

<< Մարդը դարձաւ ըսաւ ինծի .

<< - Տեղը տեսնեմ անգամ մը, և այնպէս շինեմ .

<< - Այս երկաթին տէրը խենդուկ Անգիլացի մըն է ըսի, չուգեր մարդ տեսնել, ի՛նք ալ չը գիտեր ի՛նչ ըլլալը:

<< Երկաթագործին ցոյց տուի պէտք եղած կողմերը, որպէս զի զանոնք ծեծելով կարգի բերէ:

<< Սաֆօյի յայտնեցի թէ արկղը վերստին տարած էի երկաթագործին:

<< Այս անգամ Սաֆօն ուրիշ բան մը սկսաւ աւելցը, նել:

<< Աւելի լաւ է, ըսաւ, որ արկղին առաջաքի երկաթները քիչ մըն ալ աւելի հաստ ըլլան, երկաթին վրայ քառակուսի գործեր դրուին, երկաթը փորուած ըլլայ, նն:

<< Յետոյ աւելցուց .

<< - Սնտուկին ամբողջ երկայնքը, բարակ երկաթի ձողեր պէտք է կարգով շարուած ըլլան, որպէս զի պայթած ատեն, այդ կտորներն ալ ահագին աւերներ գործեն:

<< Ալ հատաւ համբերութիւնս, բարկութենէս պիտի ճաթէի:

<< - Աս ի՛նչ է, պօռացի Սաֆօյի երեսին, ամէն օր մէկ նորութիւն կը ստեղծես, երկաթագործը մեր ընկերը չէ՛, ոչ ալ եղբայրս. ինչ որ պիտի շինէինք, առաջուրնէ թոզ ըսէիր որ անոր համեմատ շինել տայինք, նն:

<< Այս վարմունքս շատ ախորժ չեկաւ Սաֆօյին. սա կը կարծէր թէ իր բոլոր պատգամները պարտաւոր էինք խմել իբրև հալած իւղ: Քիչ մը նեղացանք, իրարու առինք տուինք, և ես բարկացած, դուրս ելայ, գացի ուղղակի երկաթագործին և խնդրեցի որ արկղին առջևի և քովի երկաթները փոխէ, առելի հաստերէն շինէ :

<< Հոս ետսնել պէտք էր երկաթագործին դիմագիծերուն ծամածռումները, բարկացած, երեսս ր վեր պօռաց .

<< - Ի՞նչ, խաղալո՞ւ ելեր էք, ի՞նչ կ'ուզէք, վերջնականապէս ըսէ՛ք, որ անոր համեմատ շինենք:

<< Քաղաքավար կերպով մը դիտել տուի մարդուն թէ իր գործը շինել էր, վերադիր դրամ մը պահանջելով, ինչ որ ուզէր, ես պատրաստ էի վճարել, նն :

<< Մարդը բարկացաւ .

<< Գնա՛, բարեկա՞մս, ուրիշ տեղ մը շինել տո՛ւր, ըսաւ, պէտք չէ՛ դրամդ:

<< Աշխատեցայ, աղաչեցի, վերջապէս բաւական համոզեցի մարդը .

<< Հիմա գործերս խիստ շատ են, ըսաւ, մէկ քանի օրէն եկուր նայինք:

<< Իսկ ես զայրացած մեկնեցայ խանութէն և ընկերներուս պատմեցի այս միջադէպը:

<< Վերջապէս, երկաթագործը վերջացուց. սնտուկը տարինք ախորը, փորձեցինք, դարձեալ չը յարմարեցաւ:

<< Սոսկալի յուսահատութիւն մը պատեց. խենդի նման եղած էի. ի՞նչ ընեմ, արհեստս չէ որ , ես շինեմ, հազար անգամ գոջացի այդ գործը ստանձնած ըլլալուս համար. բայց անօգուտ էր գոջումը .

<< Դարձեալ վերցուցի արկղը Շինշիէն, գացի շիտակ Ղալաթիա, երկաթագործին խանութը : Այս անգամ, երկաթագործը պօռաց երեսին և խանութէն դուրս վոնտեց զիս, ներս չառաւ: Իսկ յանձնուի օր մը վերջը . կարծես թէ պայմանագրութիւն կնքած էի իրենց հետ:

<< Ճարահատ, Թօփհանէի մօտ, ուրիշ հրկաթագործ մը գտայ և խոստացայ վճարել իրեն ինչ որ ուզէ, պայմանաւ միայն որ մինչեւ առաւ պատրաստած ըլլայ: Այս երկաթագործը յանձն առաւ հետեւեալ օրը յանձնելու, զիշերն ալ պիտի աշխատէր մարդը:

<< Հետեւեալ առտու պատրաստ էր արկղը, երկաթները կոչել տուինք . 66 քելօ կոչեց ամբողջ երկաթին զանգուածը:

<< Տարինք ախտոր, ուրկէ, մեր կառքով, Քեազըտ Հանէի կողմը, ամայի տեղ մը փոխադրեցինք: Երկաթները նստան իրենց տեղը, ո՛ր և է թերութիւն մը չը կար:

<< Փա՛ռք քեզ, Աստուա՛ծ, վերջացա՛ւ, ըսի, և ազատ շունչ մը քաշեցի:

<< Ամէն ուրբաթ օրեր, մեր կառքը Սելամլըզին կըղրկէինք, երբեմն մէջը մարդ նստած, երբեմն ալ պարապ:

<< Երկաթ արկղը տեղաւորելէ մէկ շաբաթ առաջ, Սելամլըզի հրապարակին վրայ, կառքին ձողը կը կոտորի, հոն ներկայ եղող կառապանները շուտով կը հասնին, կ'օգնեն և կառքը կոտորած վիճակի մէջ ախտոր կը վերադառնայ:

<< Անմիջապէս նորոգել տուինք, առանց ո՛ր և է կասկածի տեղի տալու:

<< Մնաց հիմայ ելեքտրականութեան թելեր ու փիլեր հաստատել իրենց տեղերը: Այդ գործն ալ ինծի կը վերաբերէր: Ամէն բան պատրաստեցի, շիտա՛կ մեր աշխատանոցը, Քեազըտ Հանէի և Պէօյիւք Տէրէի մութ անկիւնները . թելերը կանոնուոր կերպով տեղաւորեցին իւրաքանչիւրն իր տեղը :

<< Հետեւեալ օրը, Սաֆօ և Ռուպինա միասին, գացինք դարձեալ Քեազըտ Հանէ, անձայն գաբսիւլներով փորձեր կատարելու համար: Կառքին մէջ երկու ժամացոյցներ շինած էի, մէկը կառապանին քով, միւսը կառքին մէջ: Երբ նշանը ռեսնուէր, երկուքը միասին պիտի լարուէին : Ասիկա ըրած էինք բոլորովին վստահ ըլլալու համար, որպէս զի, եթէ մէկ փիլը կրակ չառնէ . գոնէ միւսը առնէ : Հոն, 8-9 փորձեր կատարեցինք, բոլորն ալ յաջող : Ժամացոյցը լարուելէն մինչև պայթիլը՝ կարելի էր առանց վտանգի, հանդարտօրէն հեռանալ 100 մետրէն արելի: Արդէն այդ նպատակի՛ն համար ստեղծած էինք ժամացոյցը, ո՛չ մէկ գոհ չը տալու համար:

<< Յաջողութեան մասին ա՛լ կասկած մը չէր մնացել, ուրիշ փորձեր ընելու պէտք չը կար, միայն կը մնար մելինիթը կառքին մէջ լեցունել:

<< Երեքշաբթի, Յուլիս 18ի առտուն, Թորգոմ ու Զարեհ միասին լեցուցին մելինիթը կառքի երկաթ արկղիին մէջ, միայն գաբսիւլներուն տեղը բաց ձգուած էր, որոնք պիտի դրուէին արկղին ճի՛շդ կեդրոնը : Քանի մը ժամ վերջը, կառքին մէջ 123 քիլօ մելինիթ լեցուած էր : Այդ տեղ, վտանգաւոր գործ մը կը մնար դեռ ինծի համար . որովհետև, իսկական սնդիկ գաբսիւլները՝ ելեքտրական թելերով միացուած նիւթին մէջ պէտք էր տեղաւորել, փոքրիկ անզգուշութիւն մը կ'ոչընչացներ ամէն բան :

<< Հետեւեալ օրը, առտուն կանուխ, Սաֆօզի հետ գացինք Շիշլիի մեր ախտոր, մեզի հետ ունենալով 500 հատ սնդիկ գաբսիւլներ, որովհետև մելինիթը չը՛ պայթիր ուրիշ բանով, եթէ կրակի մէջ ալ նետես, ծծումբի պէս կը վառի, իր ամէնէն վտանգաւոր ժամանակը՝ սնդիկին՝ գաբսիւլին միացած ատենն է:

<< Ամբողջ գաբսիւլները, առանձին թիթեղէ տուփի մը մէջ տեղաւորուած, միացուցինք մելինիթի մէջ: Այս տեղ, Սաֆօ ուզեց անգամ մըն ալ կատարել փորձը կեղծ գաբսիւլի վրայ .

<< - Սաֆօ՛, դիտել տուի, հոս կատակ ընելու տեղը չէ՛, պէտք ալ չը կայ ըսի, փորձանք մը չը հանենք:

<< Սակայն Սաֆօ յամառեցաւ, պնդեց որ անպատճառ կատարենք փորձը:

<<Կեղծ գաբսիւլները միացուցինք՝ ելեքտրականութեան, կրակ չառաւ, կրկին փորձ, դարձեալ կրակ չառաւ .

<< - Տեսա՞ր, ըսաւ Սաֆօ, ես չըսի՞:

<< Սոսկալի դրութեան մը մատնուեցայ, քրտինքներու մէջ կը լողայի, շուարած էի, որովհետեւ ժամանակ չը կար, պէտք էր ամբողջ լեցուածները պարապելով իմանալ պատճառի:

<< Կառքէն վար իջայ, աչքէ անցնելու համար ժամացոյցը, և թելերը . դիտեցի թէ՛ ժամացոյցին քովի կոճակը բաց մնացած էր և հաղորդակցութիւնը խզուած: Ուրախացայ քիչ մը, անմիջապէս միացուցի և սկսանք նոր փորձի, պարզուեցաւ գաղտնիքը, հասկցանք պատճառը, երկու գաբսիւլ ալ պայթեցուցինք, շատ յաջող անցաւ :

<< Աւելի ապահով ըլլալու համար, կոճակը նորէն բաց ձգեցի և թելերը միացուցի իսկոյն գաբսիւլներուն, տասը օխայի չափ ալ երկաթի մանր կտորներ լեցուցինք կառքի մնացած մասերը և ուժեղ վինդերով ամրապնդեցինք վրայ հաստ կափարիչը :

<< Մեր հարիւր հազարաւոր անմեղ գոհերուն մարմնացեալ Վրէժը մեր հոգիներուն խորը կը մոնչէր .

<< Անէ՛ծք անգութ Բռնաւորին .

<< Մա՛հ հայակեր Հրէչին, գոչեցինք :

<< Եւ մեր Տապանակ Ուխտին համբուրելով դուրս ելանք : >>

Ջ

Մահափորձին պատրաստութիւնները վերջացած էին, մնար միայն գործադրութիւնը .

Մնտուկի պատրաստութեան պատճառով, կը յիշեն ընթերցողները, Սաֆօյի և Աշոտի միջեւ անհամաձայնութիւն ծագած էր, ատկէ ի վեր, երկու ընկերներուն միջեւ ձգտումը կը շեշտուէր օեր օր : Սաֆօ կը խորհէր թէ՛ վճռական գործողութեան պահուն՝ Աշոտ իրեն դէմ պիտի ցցուէր և չպիտի թոյլ տար իր հասկցած և ուզած ձեւովը վարել մահափորձին գործը,

թէեւ Թորգոմին վրայ վստահ էր : Ուստի, Աշոտը չէզոքացնելու թագուն դիտումով մը, Վիշապի երկու պակսած անդամներուն տեղ ուրիշ ընկերներ ընտրելու պատրուակով, ուզեց ժողով մը գումարել, կը յուսար այդ միջոցով ընտրել տալ երկու համախոհներ :

Յունիս ամսուան մէջ էր, ամբողջ օրը կրակ տեղացած էր երկինքէն, և իրիկուան դէմ գովուկ հով մը սկսած էր փչել : Բերայի երկսեռ բնակչութեան դիւրակեցիկ դասակարգը, հեղձուցիչ տապէն իրենք զիրենք պողետաները նետած, կը գոցէին անցքերը :

Իրիկուան այդ պահուն, Բերայի Թէփէ Պաշիի կողմը, բրիտանական դեսպանատան մօտ, մատամ Աթինայի Թիւ 12 տունը կը գումարուէր Վիշապի Պատասխանատու Մարմինին արտասովոր նիստը, որուն ներկայ էին բաց ի բուն անդամներէն, միւս օժանդակ ընկերները, ինչպէս նաև օժանդակ ընկերուհի օրիորդ Ռուպինան, որ, Սօֆիայի եղերական դէպքէն ետքը Ժընէվ անցած էր, և վերջերը վերադարձած էր Պոլիս, ուխտած ըլլալով մահափորձին մէջ ստանձնել խիստ կաւետր դեր մը :

Թիւ 12 տունը կը բնակէր Լիփա Բիփա (Սաֆօ) իր կնոջ՝ Մառի Չայձի հետ, և ասոնց սենեակին մէջ տեղի կ'ունենար նիստը:

Ահաւասիկ ներկաները .

Սաֆօ (Լիփա Բիփա)

Աշոտ (Քարլ Եուվանովիչ)

Թորգոմ (Թրասա Եուվանովիչ)

Վիշապի այս երեք անդամներէն զատ, հոն էին նաև օժանդակ ընկերները, և ընկերուհիները

Մառի Չայձ,

Ժօրիս, Պելճիքացին

Ջարեհ (Ճօրճ Վարշամովիչ)

Քրիս (Սիլվիօ Բիչչի)

Ռուպինա

Արամ, Մանիսացին

Սաֆօն յաջողեցաւ կատարել տալ երկու պակսած անդամներու յաջորդներուն ընտրութիւնը , և Վիշապի նոր անդամներ հռչակուեցան Քրիս ու Ռուպինա , հակառակ Աշոտի բողոքին ու որինատր դիտողութեան թէ՝ առանց Հ . Յ . Դ . Խորհուրդին , ո՛ր և է Պատասխանատու Մարմին իրաւասութիւն չունէր ինքնագլուխ նոր անդամներ կարգելու;

Օրիորդ Ռուպինան, անձնուէր կովկասահայ յեղափոխական մըն էր, հիւանդոտ, սաստիկ ջղային, բայց միևնոյն ժամանակ, սրտոտ, խիզապ, ամէն վտանգ ծաղրող աղջիկ մը :

Իսկ Քրիս, նոյնինքն Սիլվիօ Ռիչչի, ուրիշ անունով Քէօսէ Արիսթիտի, բաւական օգտակար եղած էր իր ծառայութիւններով, արտասահմանէն Պոլիս դրկուած ուժանակները յաջողած էր մաքսէն դուրս հանել, ինչպէս նաև մահափորձի կառքը: Լիփա Բիփոի բացակայութեան միջոցին, իրեն անունին կը դրկուէին ֆրամական գումարներ, ինքը կը գանձէր և կը յանձնէր զանոնք Վիշապի Մարմինին: Եւ այս գործողութիւնները կը կատարէր առանց վտանգի:

Միւս օժանդակ ընկերները նոյնպէս ո՛չ նուազ օգտակար հանդիսացած էին մահափորձի պատրաստութիւններուն մէջ:

Թէփէ Պաչիի ժողովին մէջ, Սաֆօ սկսաւ իր ընկերներուն պարզել իր տեսութիւնները .

- Ընկերներ, ըսաւ հպարտ շեշտով մը, Եւրոպայէն կուգամ ես, աշքերովս տեսայ մասնագէտները, որոնց գլխաւորներուն, թերեւս ամենէն հեղինակաւորներուն կարծիքները լսեցին, փորձերը ձեռքովս կատարեցի, վերջապէս, խորունկ ուսումնասիրութիւններով զինուած, պարտք կըզգամ հոս յայտարարել թէ՝ հաստատած եմ ձեռքով ռումբ նետելու անպատեհութիւնները .

- Ի՞նչպէս, ընդմիջեց Թրասա Եուվանովիչ, կը հաճի՞՞ք բացատրել և մեզի ցոյց տալ այդ անպատեհութիւններէն գոնէ մէկ երկունքը:

- Սի՛րով, շարունակեց Լիփա Բիփա, նաժ, եթէ նոյնիսկ ընդունինք պահ մը ռումբ նետելու օգտակարութիւնը, ունի՞՞ք արդեօք յարմար մարդիկ, կայսերական տաղաւարը կեցնելու . երկրորդ, այսօր մեր տրամադրութեան տակ պատրաստ ունինք մահաբեր պայթուցիկ նիւթ մը , որուն դժոխային առջև ո՛չինչ կրնայ դիմանալ . Համիտիյէ մզկիթը պիտի քարուքանդ ըլլայ, և ամէն առարկայ թէ էակ պիտի որնչանան, անէանա՛ն ... :

- Եթէ իրոք, յարեց Գառլ Եուվանովիչ, վստահ և ապահով էք մեր նիւթի հրաշագործ ուժին վրայ, հրաժարելու է ձեռքով ռումբ նետելու գաղափարէն, և յետոյ, թողո՛ւնք որ ձեռքի ռումբերուն յաջողութիւնը կասկածելի է, կայսերական տաղաւարը մտնելու համար մեզի մարդեր կը պակսին, չէ՞ .

- Ինքո՞ւ, գոռաց անդիէն Ճօրճ Վարշամովիչ, մեր ընթերցողներուն արդէն ծանօթ Մանկալճի Զարեհը, ե՛ս կը մտնեմ, ե՛ս, և իմ ձեռքերովս կը նետեմ ռումբը .

- Սիրելի՛ս, դիտել տուաւ Գառլ Եուվանովիչ ժպտելով, զիտե՛մ, դուն ամէ՛ն բան կընես, բայց, կրնա՞նք քեզի համար ռուսական, կամ ֆրանսական և կամ անգլիական դեսպանատունէն տոմս առնել և Երլտըզ դրկել քեզ .

- Յարմարագոյնը մեր մէջէն, յարեց օրիորդ Ռուպինա, մեր Սաֆօն է, Սաֆօ՛ն .

- Մառի Զայճին հե՛տ, աւիցուց Թրասա Եուվանովիչ .

- Բայց ինչո՞ւ կը յոգնիք, ընկերներ՝, կշտամբեց Լիփա Բիփս տիրական շեշտով մը . ես ձեզի ըսի թէ մզկիթը հիմնայատակ պիտի ընենք մեր մելինիթներուն շնորհիւ .

- Հետեւաբար, հաստատեց Գառլ Եովանովիչ, խնդիրը փակուած նկատենք, ընկերներ՝, ռումբ նետելու հարկ չը կայ, մեր կառքը կը բաւէ գլուխ հանելու մեր առաջադրած նպատակը .

- Այո՛, այո՛, կրկնեցին ներկաները, կառքը կը բաւէ .

- Կառքին սնտուկը, յարեց Լիփա Բիփս, մելինիթով լեցուած, կը պայթեցնենք .

- Կը պայթեցնենք, կրկնեցին ներկաները .

- Եւ ողը կը հանենք մզկիթը, օդի ճնշումով կոչընչացնենք բոլո՛րը:

Եւ ժողովը միաձայնութեամբ ընդունեց կառքը պայթեցնելու գաղափարը, իբրեւ միակ գործնականը:

- Ուրեմն, շարունակեց Լիփա Բիփս, ընկերներ, կը մնայ հիմա կարգել անձը, բնականաբար, մեր մէջէն, որ պիտի ընկերանայ կառքին:

- Ե՛ս, ե՛ս պիտի ընկերանամ, գոչեց Ճօրճ Վաշշամովիչ, չէ՞ որ ե՛ս եմ կառապանը .

- Ո՛չ, բողոքեց անդիէն Ռուպինա, ե՛ս պիտի ընկերանամ կառքին և ե՛ս պիտի տամ կրակը .

- Կառապանը Վերչամովիչ է, միջամտեց Գառլօ Եովանովիչ, ա՛յսքան ժամանակ է կը վարժուի վարելու կառքը, այդ օրուան կը սպասէ խեղճ տղան:

- Քանի որ ե՛ս պիտի վարեմ կառքը մինչեւ Երլտըզի մզկիթը, յարեց Զարեհ խանդավառօրէն, ես պէտք է տեղնուտեղը կրակը տամ:

Այս մասին կարծիքները կը տարբերէին:

Վիշապի անդամները կը խորհէին, խնդիրը լուծել վիճակ ձգելով ընկերներու մէջն:

Յետոյ ժողովը զբաղեցաւ ուրիշ կարեւոր խնդիրով մը, կըակ տալու եղանակը:

Նախապէս որոշուած էր պատրոյգով բռնկցնել, բայց յետոյ փոխուեցաւ և ընդունուեցաւ ելեքտրականութեան կիրառումը:

- Մինչև որ կառքին մէջ երկու ժամացոյց չը դըրուի, գոչեց Վարշամովիչ սպառնացայտ դէմքով մը , ահա՛ կ'ըսեմ, տեղէս չե՛մ շարժիր .

- Ինչո՞ւ, հարցուց Լիփա Բիփս .

- Չէ՞ որ, շարունակեց Վարշամովիչ, օրիորդ Ռուպինա կը պնդէ իմ հետս գտնուիլ .

- Շա՛տ լաւ, ի՞նչ կ'ըլլայ, հարցուց Լիփա Բիփս .

- Ես երբեք չեմ ներեր որ, շարունակեց Վարշամովիչ, օրիորդ մը կառքին մէջ նստի ու կրակ տայ .

- Ի՞նչպէս ընենք ուրեմն, հարցուց Թրաստ Եուվանովիչ .

- Երկո՛ւք ըրէք ժամացոյցը, շէշտեց Վարշամովիչ, մէկը քովս, որպէս զի ես անձամբ լարեմ . միւսը հոգ չէ կառքին մէջ թո՛ղ զետեղուի, ո՛վ կ'ուզէ, ան թող լարէ:

Վերջապէս, պարտաւորութեան ընդունիլ Վարշամովիչի առաջարկը:

Լիփա Բիփս, կը յիշեն ընթերցողները, սկիզբէն ի վեր կ'ատէր Գառլ Եուվանովիչը, կ'ուզէր միտքերը նախապաշարել ասոր դէմ . ուստի , ժողովին մէջ առաջարկեց վիճակարկութեան մասնակից չընել զանի, որովհետեւ, ըսաւ, Պոլսոյ մէջ կասկածուած և վտանգաւոր ճանչցուած է, և, կառքին ընկերանալու պարագային, եթէ վտանգ մը պատահի, մեր բոլոր աշխատութիւնները կը վիժին:

Ընկերներէն շատերը համամիտ գտնուեցան Լիփա Բիփսի և Գառլ Եուվանովիչի պարտաւորութեամբ ինքզինք պաշտպանել .

- Սաֆօ՛, ըսաւ , մինչև հիմա ո՞ւր էր այդ խելքդ, ամենէն վտանգաւոր գործերը կատարել տուիր իմ ձեռքովս, մինչև ներկայ թոյլս .

- Իրաւունք ունիս, յարեց Լիփա Բիփս, քեզի յանձնուեցան կենսական գործերը, Բայց քենէ զատ ունէի՞նք ուրիշ ընկեր մը, որ քեզի չափ ընդունակ ըլլար:

Պելճիքացի Ժօրիսը, որ ներկայ էր ժողովին, հետաքրքրութեամբ և ուզեց զիտնալ թէ ի՛նչ բանի շուրջը կը դառնար վէճը: Մառի Զայձի գերմաներէն բացատրութիւնները լսելէ յետոյ, ինք ալ իրաւացի գտաւ Լիփա Բիփսի առարկութիւնները:

Ու Գառլ Եուվանովիչ պարտաւորեցաւ համակերպիլ և հնազանդիլ մեծամասնութեան որոշման:

- Անդիէն, օրիորդ Ռուպինան կը պաղատէր, կը պահանջէր ոի վիճակ չը ձգուի, այլ ինք առանձին երթայ կառքին մէջ նստած և իր ձեռքովը կրակը տայ:

Ժողովը մերժեց Ռուպինայի խնդրանքը, և վիճակարկութիւն կատարուեցաւ Լիփա Բիփսի, Թորգոմի, Քրիսի և Արամի վրայ: Այս վերջինին ինկաւ վիճակը, և Ռուպինան բարկութենէն սկսաւ լալ:

Ժողովը չէր կրնար գոհացում տալ օրիորդի փափագին, որովհետեւ գործողութիւնը վերջացած էր, սակայն, այն աստիճան լացաւ , ողբաց, թախանձեց, որ ընկերները պարտաւորեցան խնդրել Արամէն, հրաժարիլ իր իրաւունքէն և օրիորդին յանձնել իր գործը:

Արամ մերժեց:

Բայց Ռուպինան կուլար շարունակ:

Ժողովը վերստին վիճակարկության ձեռնարկեց, Արամին ու Ռուպինային միջև միայն. և այս անգամ վիճակը դարձեալ ինկաւ Արամի :

Օրիորդը բարկութենէն նուաղած ինկաւ: Յետոյ, երբ ինքզինք վերստին գտաւ, սկսաւ սպառնալ .

- Ինքնասպա՛ն կ'ըլլամ, կը հեծէր , եթէ ինծի չը յանձնէք այդ գործը:

Վերջապէս, Վիշապի անդամները միացած, աշխատեցան, համոզեցին Արամը, գործը յանձնելու օրիորդին:

Օրիորդ Ռուպինան հասաւ իր նպատակին:

Վիճակարկութենէն անմիջապէս ետքը, ժողովը, մահափորձին գործադրութենէն առաջ, ուզեց որոշել իւրաքանչիւրի դերը:

Բաւական երկար ատեն կարծիքներ փոխանակուեցան, մինչև որ միաձայնութեամբ ընդունուեցան հետևեալ կարգադրութիւնները:

Լիփա Բիփա և իր կինը Մառի Ձայձ, գերծ ըլլալով ամէն կասկածէ, իբրև ռուս և գերմանացի, երկուքն ալ պիտի Պոլիս մնային մահափորձը շարունակելին Արևմտեան Բիւրօյին հետ և գործին ստանալիք զանազան փուլերը ժամանակին տեղեկագրելին անոր:

Յետոյ, Վիշապի անդամներէն Թորգոմ և Քրիս, ինչպէս նաև օժանդակ ընկերներէն Արամ, այս երեքը, մինչև մահափորձին օրը, ազատ էին մեկնիլ մայրաքաղաքէն, իրենց ներկայութիւնը բոլորովին աւելորդ էր և անօգուտ:

Իսկ Աշոտ պարտաւոր էր գլուխ հանել դժոխային մեքենան պարունակող կառքին յարակից պատրաստութիւնները, յետոյ, ազատ էր մեկնիլ երբ և ո՛ր որ ուզէր:

Վերջին անգամ մըն ալ գումարուելու պայմանով, մեկնեցան ժողովականները Լիփա Բիփսի սենեակէն:

Բերայի պողոտաներուն ու սրճարաններուն մէջ դէռ չէր դադրած եռուզեռը:

ԻԷ

Յուլիս 7, հինգշաբթի իրիկունը, վերջին գիշերաժողովը կը գումարուէր Բերա, Ենի Ջարչը, Ճեզայիր փողոց, Սաֆօյի տունը , որ վերջերը վարձուած էր :

Մէկ քանի ընկերներ, ինչպէս Մկրտիչ Ղարիպեանը, որ նախապէս կառապան էր, և մանիսացի Արամը, որ բաւական կարելոր ծառայութիւններ ըրած էր, մեկնած էին Պոլսէն. իսկ

միւս ընկերներէն շատերը պիտի մեկնէին հետեւեալ օրը . Զարեհ ու Ռուպինա, Դէպքին օրը շոգեկառք նստէին և փախչէին արտասահման. իսկ Սաֆօն ու Մառի Ձայձը, ինչպէս որոշուած էր նախընթաց ժողովին մէջ, պիտի մնային Պոլիս:

Զարեհին ու Ռուպինային անցագրերը վիզէ ընել տրուած էին ռուսական հիւպատոսարանէն:

Հետեւեալ օրը՝ սէլամըզի օր էր, ուրբաթ, և այդ օրը պիտի վճռուէր ճակատագիրը Թակագիր Աւագակապետին, որ Ապտիւլ Համիտ կը կոչուէր. այդ օրը, պիտի պայթէր ռումբը, և այդ օրը, պիտի փրկուէր Օսմանեան կայսրութիւնը Բոնաւորէ մը, որ գրեթէ 30 տարիներէ ի վեր կը շարունակէր անպատիժ թափել իր հպատակներուն արիւնը ... :

Ժողովը մասնաւորապէս զբաղեցաւ խիստ կարեւոր խնդրով մը, Վեց Մեծ Տէրութեանց մեծ դեսպաններուն յանձնուելիք նամակներուն խնդիրը:

- Ընկերներ, կ'ըսէր Սաֆօ , այդ նամակները պէտք է այս գիշերուընէ խմբագրուին և Մահափորձին օրը բաժնուին , շատ կարեւոր է ... :

- Սխալ է, սխալ է, պարոն Սաֆօ, գոչեց Գառլ Եուվանովիչ, աղետաբեր հետեւանքներ կ'ունենան այդ նամակները.

- Ի՞նչպէս ...

- Մեծ դեսպանները նու չէ՛ որ պիտի ճանչնանք, շարունակեց Դառլ Եուվանովիչ. Գիտեք ի՞նչ ճիւղեր եւ, պիտի առնեն նամակները, և գիտէ՞ք ինչ պիտի ընեն.

- Ի՞նչ պիտի ընեն, հարցուց Լիփա Բիփա.

- Պիտի տանին ցոյց տան Համիտի՛, շարունակեց Գառլ Եուվանովիչ.

- Ա՛յդ աստիճան վա՞տ են, հարցուց զարմանքով Սաֆօ.

- Այո՛, պնդեց Դառլ Եուվանովիչ և թերեւս աւելի՛ ...

- Պարոն Սաֆօ, ըսաւ Թրասա Եուվանովիչ, մեր ընկեր Դառլ Եուվանովիչ իրաւունք ունի, ե՛ս ալ կը խորհիմ թէ վտանգաւոր է նամակներ յանձնել մեծ դեսպաններուն.

- Կը զարմանամ, պարոն Սաֆօ, խելքիդ վրայ, յարեց անդիէն Քրիս, ենթադրենք թէ նամակները դէպքին օրը յանձնուեցան, ի՞նչ պիտի ընեն կը կարծէք անոնք.

- Ամէն պարագայի մէջ, պատասխանեց Լիփա Բիփա, օգտակար են այդ նամակները, մեծ դեսպանները թո՛ղ գիտնան թէ կիսյկական խնդիրը դեռ վառ է, և թէ՛ իրենց անտարբեր ընթացքը դատապարտելի է.

- Բայց ի՞նչ է մեր նպատակը, դիտել տուաւ Գառլ Եուվանովիչ, Ապտիւլ Համիտի անձը մէջտեղէն վերցնել չէ՞.

- Այո՛, վերցնե՛լ է, կրկնեց Լիփա Բիփա, բայց, միեւնոյն ժամանակ, հայկական խնդիրը լուծո՞ղ է, լուծե՛լ.

- Կը ներե՛ս, Սաֆօ՛, յարեց անդիէն Թրասա Եուվանովիչ, ես քեզի պէս չեմ խորհիր, երբէք չեմ կրնար վայրկեան մը յուսալ թէ՝ մահափորձի անմիջական արդիւնքը լուծում ըլլայ, և հայկականին պէս այնքան կնճռոտ խնդրի մը լուծումը, մեճ դեսպաններուն նամակ ցրուելու գաղափարը տղայական կը գտնեմ ես, և բանաւանդ, վտանգաւոր.

-Ինչո՞ւ, մոլտաց Լիփա Բիփս, չէ՞ որ այս մահափորձով շարժման մէջ դնել կ'ուզենք անդամալոյծ Եւրոպայի դիւանագիտութիւնը, այն Եւրոպային, եր, ահա՛ դար մըն է, վարժուած է շահագործելու Հիւանդ Մարդուն հոգեվա՛րքը.

- Այո՛, այո՛, կրկնեց օրիորդ Ռուպինա, Ժընէվի մէջ խօսուեցաւ այդ մասին, Բիւրօն մասնաւորապէս յանձնարարեց մեծ դեսպաններուն յանձնել այդ ազդարարագրերը, որոնք, քանիցս կրկնեցին Բիւրօյ անդամները, խիստ կարելոր են եղեր...

- Այո՛, խիստ կարելոր են եղեր, հեզնեց Քրիս, նոյնինքն Սիլվիօ Ռիչչին, Ժընէվի մէջ նստիլ ու պատգամներ արձակել, Զուիցերիոյ ապահով անկիւնէ մը մեր Մայր Հայրենիքի ճակատագիրը վարել, ասկէ դիւրին ի՞նչ կայ...

- Քրի՛ս, կշտամբեց Սաֆօ, հրապարակով կը յանդըգնիս նախատել Արեւմտեան Բիւրօն, առանց հաշուելու հետեւանքները.

- Սաֆօ՛, գոռաց Գառլ Եուվանովիչ, այդ նամակները ցրելու աճապարտնքը անմեկնելի կը գտնեմ. Կարծեմ թէ, ինը տարի առաջ ալ, այդ իմաստով նամակներ ստացան Պոլսոյ մեծ դեսպանները ...

- Ե՛րբ, ընդմիջեց Սաֆօ.

- Պանքայի Դէպքի՛ն, շարունակեց Գառլ Եուվանովիչ, բայց գիտե՛ս, ի՛նչ արդիւնք ունեցան.

- Ի՞նչ ...

- Մայրաքաղաքին մէջ, երեք ցերեկ, երեք գիշեր, պատասխանեց Գառլ Եուվանովիչ, մեր հայրերը, մեր եղբայրնե՛րը ջարդուեցան.

- Այն ատեն, առարկեց Լիփա Բիփս, Ապտիւլ Համիտ ո՛ղջ էր, ո՛ղջ...

- Կրնա՞ս երաշխաւորել թէ վաղը պիտի ճողի՛, դիտել տուաւ Քառլ Եուվանովիչ.

- Զարմա՛նք, բացագանչեց Լիփա Բիփս, դեռ կը տարակուսի՞ս այդ մասին, կառքին մահաբեր ոյժը չէ՞ս կաշուեր. Երբ Համիտիյէ մզկիթը հիմնայատակ կործանի. Ո՛ւր կը մնայ Ապտիւլ Համիտ:

Ներկաները լռեցին, Լիփա Բիփս տիրական ձայնը համոզիչ էր, և ո՛չ ոք կը համարձակէր հակառակը պնդել:

Ժողովը միաձայնութեամբ ընդունեց մեծ դեսպաններուն ցրուել խնդրոյ նիւթ եղող նամակները, մահափորձէն գէթ երկու օր ետքը, երբ բացարձակապէս ըստուգուած պիտի ըլլար մահափորձին յաջողութիւնը :

Եւ այս որոշումը, նոյնութեամբ գործադրելու համար, ժողովին ատենագրութեան մէջ անցաւ, և պաշտօն տրուեցաւ Լիփա Բիփսի և Մառի Չայձի- որոնք չը պիտի հեռանային մայրաքաղաքէն, յարաբերութիւնները շարունակելու համար- , այդ նամակները ցրելու մեծ դեսպաններուն:

Որիշ կարելոր խնդիր մը մնար կարգադրել, մահափորձի դերակատարներու պարագաներուն կանխաւ ազդարարել, իրենց գլխուն ճարը նայելու:

- Ընկերնէ՛ր, ըսաւ Գառլ Եուվանովիչ, մահափորձին հետեւանքով, շատերու գլուխը պիտի ցաւ. կ'առաջարկեմ հիմակուրնէ Պոլսէն հեռացնել, օրինակի համար, Ճօնսըն աբարթըմանի դռնապանը, Մանուկ Իմէտեա՛նը.

- Այո՛, այո՛, կրկնեց Թրասա Եուվանովիչը, իրաւունք ունի մեր ընկերը, պէտք է անմիջական կապ ունեցողները հեռացնել մայրաքաղաքէն, օրինակի համար, Աշոտի ծնո՛ղքը...

- Ընկերնէ՛ր, բողոքեց Լրփա Բիփս, արդէն ո՛ւշ է ժամանակը, վաղը սելամըզի արարողութիւնը պիտի կատարուի, կառքը պատրաստ է, սնտուկին մէջ դժոխային մեքենան գետեղուա՛ծ է արդէն, Գառլ Եուվանովիչի առաջարկը չեմ կրնար ընդունիլ, գործը վիժեցնելու բնոյթ ունի ան, ի՞նչ կ'ըսէք...:

Միաձայնութեամբ մերժուեցաւ Գառլ Եուվանովիչի այս առաջարկը:

- Ընկերնէ՛ր, գոչեց այս վերջինը, հոգ չէ՛, մեր ժեցէ՛ք, բայց, գիտցա՛ծ ըլլաք, իմ ծնողքս զոհ պիտի տամ ձեզի համար, զոնէ խեղճ դռնապա՛նը փրկենք...:

Կէս գիշերը կէս ժամ անցած էր, նիստը փակուեցաւ և ժողովականները մեկնեցան:

Գառլ Եուվանովիչ, հակառակ իր ընկերներու թախանձանքին, իր ծողքին հանդուպելու և զգուշացնելու զանոնք, ուղղակի վերադարձաւ իր սենեակը:

Քունը չէր տաներ, իր չարչարուած երևակայութեան առջև կը պատկերանային քստմնելի տեսարաններ: Քանափէի մը վրայ երկնցած, կը յիշեր 95ի և 96ի սարսափելի կոտորածները, և կը լողար քրտինքներու մէջ:

Իսկ անդին, Լիփա Բիփս ու Ռուպինա, երկու կովկասահայ ընկերները, գիշերով կ'երթան գտնել իրենց հայրենակիցներէն ու Ռոստոմի բարեկամներէն Գէորգոֆ անուն վաճառական մը, և կը զգուշացնեն զինքը, նոյն գիշեր թագստոց մը գտնելու և իր մորթը, փրկելու մահար, մեկնելու մայրաքաղաքէն...

Գիշերուն ճիշդ այդ պահերուն, մահափորձի կառքին կառապանը Ճորճ Վարշամովիչ, ճրադարման Խասգիւղցի Երուանդ Ֆրանկիւլեանի հետ, Շիչլիի ախոռը կը պառկէր, իր սիրական կառքին մէջ, անքուն հսկելով, և սպասելով Վաղորդայնի Արեւին, որ պիտի ծագէր ազատագրուած ժողովուրդներուն վրայ, որոնք մինչեւ այդ նուիրական օրը, կը հեծէին Մեծ Մարդասպանի լուծին տակ ... :

Յուլիսի 8ի Ուրբաթը:

Մայրաքաղաքին զօրանոցները կը պարպուէին և տիգազէն, տապարազէն և ուրիշ վաշտեր, գունդագունդ կ'առաջանային, իւրաքանչիւր վաշտ իր նուագախումբով, Համիտիյէ Քայլերգը հնչեցնելով, կերթային դէպի Երլտըզ, ուր տեղի պիտի ունենար ուրբաթի սէլամըզի մեծաշուք արարողութիւնը:2

Ապտիւլ Համիտ իր ուրբաթ նամազը պիտի կատարէր Համիտիյէ մզկիթին մէջ:

Օտար, յանձնարարեալ հիւրերու տաղաւարը լեփլեցուն էր արդէր, մեծ տէրութեանց դեսպաններէն մէկ քանինը, իրենց թարգմաններուն հետ, գրաւած էին իրենց տեղը:

Հետաքրքիր ամբոյս մը կը հետեւէր վաշտերուն և Երլըզի մերձակայքը, փողոցներուն երկու եզերքները, զինուորական շգթայ մը կ'երկարաձգուէր:

Կէս օրը մը մօտենար, և պողոտաներում մէջ, կառքերը զիրար կը խաչաձեւէին, բոլորը կ'աճապարէին ժամանակին հասնիլ և գրաւել իրենց տեղերը:

Լրտեսներու վոհմակները կը շրջապատէին ամբոյսը. և կասկածելի այցելուները մէկիկ մէկիկ ձերբակալել կուտային:

Այդ պահուն երեւցաւ հոյակապ գոյգ մը ձիերով, շքեղ կառք մը, որ ամբոյսային կոհակները ճողքելով կ'առաջանար:

Հետաքրքիրներուն հիացիկ աչքերը կը յառէին այդ կառքին:

- Տեսէ՛ք, կը փսփսային իրարու, ի՞նչ փառաւոր ձիեր են...:

Եւ կառքը վեհափառօրէն կը մօտենար ու կանգ կ'առնէր միւս մասնաւոր կառքերու կարգերուն մէջ. Համիտիյէ մզկիթին մօտ:

Կառապանը կը բազմէր բարձր նստարանի մը վրայ, և կառքին մէջ մէկ անձ միայն կար, քսանըհինգ տարու, նիհարակազմ աղջիկ մը:

Հար՞կ է ըսել թէ այդ կառքը մահափորձի կառքն էր:

Ճօրձ Վարշամովիչ իր տեղը բազմած, դժոխային սնտուկին կափարիչին վրայ, անխռով դէմքով մը կ'դիտէր տեսարանը, ակնապիչ սպասելով շեփորին, որ պիտի ազդարարէր Սուլթանին երևումը, իսկ, օր. Ռուպինան, երկու աչքերը սեւեռած՝ ժամացոյցին, վայրկեանները կը համրէր, անձառելի արբշտանքի մը մէջ...:

- Վերջապէս երեւցաւ կայսերական կառքը, և աղաղակները բարձրացան.

- Փատիշահմըչօզեաշա՛....:

Ապտիւլ Համիտ վար իջաւ կառքէն, և իր հետեւորդներով մտաւ մզկիթը:

Վայրկեանները դանդաղասահ կ' թուէին օրիորդ Ռուպինային և Ճօրճ Վարշամովիչին, որոնք, անթարթ յառած՝ ժամացոյցներուն, կըսպասէին լսել շեփորին ձայնը, որ պիտի ազդարարէր Սուլթանին ելքը մզկիթէն: Ազդարար փողը հնչեց . երկու դաւագիրները վայրկենապէս լարեցին երկու ժամացոյցները, մէկվայրկեան և քառասուն երկու երկվայրկեան ետքը պիտի պայթէր դժոխային մեքենան ... :

Նկար | Վերադարձը ... Ռուպինա Եւ Վարշամովիչ

Ճօրճ Վարշամովիչ և օրիորդ Ռուպինա իրենց դերը կատարած վերջացուցած ըլլալով, առանց նշմարելու, կառքը հոն թաղուցին և իրենք, ամբոխին ու կառքերուն մէջէն սողոսկելով, հանդարտաքայլ հեռացան և դիմացի բարձր պատի մը տակ կեցան, հեռուն դիտելու համար տեսարանը, որ իսկոյն պիտի պարզուէր:

Սակայն- հակառակ շեփորին ազդարարութեան, Ապտիւլ Համիտ չերեւացաւ տակաւին, խօսքի բռնուած էր Շէխիւլիսլամին հետ:

Մզկիթին դուռին առջև կայսերական վիզթօրիան կըսպասէր, և սակայն, Սուլթանը տակաւին ներսը կը մնար:

Տարօրինակ՝ կ, նախախնամակա՛ն յապաղում մը. ո՛չ մէկ սէլամըզի միջոցին, այդպիսի շեղումի մը տեղի չէր ունեցած- ինչպէս որ հաստատուած էր Վիշապի Պատասխանատու Մարմինին կողմէն կատարուած մանրակրկիտ զննութիւններով, և ասիկա՝ մէկէ աւելի անգամներ. Սուլթանը, շեփորին ազդարարութենէն ճի՛շդ մէկ վայրկեան և քառասուն երկու երկվայրկեան ետքը դուրս կ'ելլէր մզկիթէն...:

Բայց ինչո՞ւ այս յապաղումը, արդեօք Ապտիւլ Համիտ հո՞տ առած էր, արդեօք դիպուածակա՛ն յապաղում մըն էր...:

Մահափորձի կառքին շարքը, քսանէ աւելի ուրիշ մասնաւորներու կառքեր կըսպասէին իրարու քով, և հատաքրքիրներուն համբերութիւնը՝ տակաւ կըսպառէր:

- Ինչո՞ւ դուրս չ'ելլէր, կ'ըսէին իրարու, ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ արդեօք:

Այս տենդոտ սպասումին, այս ընդհանուր անձկութեան մէջ, երբ բոլոր աչքերը համիտիյէ մզկիթին կողմը դարձած էին, իրենց սիրեցեալ (.) Փատիշահին պաշտելի (.) երեսները տեսնելու համար, և ահա՛ խլացուցիչ պայթում մը, զարուրհելի որոտում մը- տարտաբորային դղրդում մը, փլուզում մը պատռեց ականջները...:

ԵԸԻՏԸԶԻ ՊՕՄՊԱ՛Ն էր- դժոխային մեքենա՛ն պայթած էր...:

Մթնոլորտը մթագնեցաւ, փռշիներու ամպ մը, թանձր աղջամուղջ մը պատեց շուրջանակի, և աչքերէն ծածկեց բոլոր իրերը, մարդերը, կենդանիները, գետինը սահիլ, խուսել սկսաւ հոն խոնուած սոսկումնահար ամբոխին ոտքերուն տակէն. ահաւոր խուճապ մը, աննկարելի, աներևակայելի տագնապ մը, անկարելի էր շնչել, հեղկուցիչ, զարշելի հոտ մը բռնած էր չորս կողմը:

Վերեն վար թաւագլոր կը թափուէին յօշատուած, փշրուած մարդկային մարմիններ,
ձիերու գլուխներ, ոտքեր, կառքերու բեկորներ, խառնի խումն:

Եւ երբ դադրեցաւ այս կենդանի տեղատարափը, և օդը բացուեցաւ, մարդ մը դուրս
կ'ելլէր մզկիթէն, քիչ մը գալկահար դէմքով, պահելով սակայն իր պաղարիւնը:

Ապտիւլ Համի՛տ էր, ՝ վիզթօրի ային մէջ նետուեցաւ....: